

**Council of Europe Treaty Series – No.197
+ Explanatory Report
Non official translation in Armenian**

ԵԱՀԿ-Ի ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ

ՈՉ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ

**Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին Եվրոպայի Խորհրդի
Կոնվենցիա**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Նախաբան.....
- Գլուխ I Նպատակները, գործողության ոլորտը, խտրականության բացառման սկզբունքը
և սահմանումները.....
- Գլուխ II Կանխարգելում, համագործակցություն և այլ միջոցներ.....
- Գլուխ III Միջոցներ՝ ուղղված զոհերի իրավունքների պաշտպանությանը և խթանմանը՝
երաշխավորելով գենդերային հավասարությունը
.....
- Գլուխ IV Քրեական իրավունք.....
- Գլուխ V Քննություն, քրեական հետապնդում և դատավարական
իրավունք.....
- Գլուխ VI Միջազգային համագործակցություն և համագործակցություն քաղաքացիական
հասարակության հետ.....
- Գլուխ VII Մոնիտորինգի մեխանիզմ.....
- Գլուխ VIII Կապը այլ միջազգային փաստաթղթերի հետ.....
- Գլուխ IX Փոփոխություններ Կոնվենցիայի տեքստում.....
- Գլուխ X Եզրափակիչ դրույթներ.....

(Ընդունվել է Նախարարների Կոմիտեի կողմից 2005 թ. մայիսի 3-ին Փոխնախարարների 925-րդ նիստում)

Նախաբան

Եվրոպայի Խորհրդի անդամ պետությունները և սույն Կոնվենցիայի մյուս Ստորագրյալ պետությունները,

հաշվի առնելով, որ Եվրոպայի Խորհրդի նպատակը նրա անդամների միջև առավել սերտ միասնության ձեռքբերումն է,

նկատի ունենալով, որ մարդկանց թրաֆիքինգը հանդիսանում է մարդու իրավունքների խախտում և ոտնձգություն անձի արժանապատվության ու անձեռնմխելիության դեմ,

հաշվի առնելով, որ մարդկանց թրաֆիքինգը կարող է հանգեցնել զոհերի ստրկության,

գիտակցելով, որ զոհերի իրավունքների հարգումը, նրանց պաշտպանությունը և մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարը պետք է լինեն առաջնակարգ նպատակներ,

հաշվի առնելով, որ մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի բոլոր միջոցներն ու նախաձեռնությունները պետք է կրեն ոչ խտրական բնույթ, բխեն զենդերային հավասարությունից, ինչպես նաև կողմնորոշված լինեն դեպի երեխաների իրավունքների պաշտպանությունը,

հիշատակելով Նախարարների Կոմիտեի 112-րդ (2003 թ. մայիսի 14-15) և 114-րդ (2004 թ. մայիսի 12-13) նստաշրջաններում անդամ պետությունների արտաքին գործերի նախարարների Եվրոպայի Խորհրդի կողմից մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի ուժեղացման վերաբերյալ հայտարարությունները,

նկատի ունենալով Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան (1950 թ.) և դրան կից արձանագրությունները,

նկատի ունենալով Նախարարների Կոմիտեի կողմից Եվրոպայի Խորհրդի անդամ պետություններին տրված հետևյալ ռեկոմենդացիաները. Ռեկոմենդացիա No. R (91) 11 երեխաների ու երիտասարդ չափահասների սեռական շահագործման, պոռնկագրության ու մարմնավաճառության և թրաֆիքինգի մասին; Ռեկոմենդացիա No. R (97) 13 վկաների ահաբեկման և պաշտպանության կողմի իրավունքների մասին; Ռեկոմենդացիա No. R (2000) 11 սեռական շահագործման նպատակով մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին և Ռեկոմենդացիա Rec (2001) 16 սեռական շահագործումից երեխաների պաշտպանության մասին; Ռեկոմենդացիա Rec (2002) 5 բռնությունից կանանց պաշտպանության մասին,

նկատի ունենալով Եվրոպայի Խորհրդի Խորհրդարանական Ասամբլեայի հետևյալ ռեկոմենդացիաները. Ռեկոմենդացիա 1325 (1997) Եվրոպայի Խորհրդի անդամ պետություններում կանանց թրաֆիքինգի և հարկադրաբար մարմնավաճառությամբ զբաղվելու մասին; Ռեկոմենդացիա 1450 (2000) Եվրոպայում կանանց դեմ բռնության մասին; Ռեկոմենդացիա 1545 (2002) կանանց թրաֆիքինգի դեմ պայքարի արշավ կազմակերպելու մասին; Ռեկոմենդացիա 1610 (2003) կանանց թրաֆիքինգի և մարմնավաճառության հետ կապված միզրացիայի մասին;

Ռեկոմենդացիա 1611 (2003) Եվրոպայում մարդու օրգանների առևտրի մասին; Ռեկոմենդացիա 1663 (2004) Տնային ստրկություն. ստրկական, կախյալ վիճակ, դայակներ և փոստով պատվիրված հարսնացուներ,

նկատի ունենալով Եվրամիության Խորհրդի 2002 թ. հուլիսի 19-ի մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասին շրջանակային որոշումը, Եվրամիության Խորհրդի 2001 թ. մարտի 15-ի քրեական դատավարությունում տուժողների կարգավիճակի մասին շրջանակային որոշումը և Եվրամիության Խորհրդի 2004 թ. ապրիլի 29-ի դիրեկտիվը կացության թույլտվություն տալու երրորդ պետության այն քաղաքացիներին, ովքեր հանդիսանում են թրաֆիքինգից զոհեր կամ, ովքեր ենթարկվել են ապօրինի ներգաղթին նպաստող գործողությունների և համագործակցում են իրավասու մարմինների հետ,

կարևորելով Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ Միավորված Ազգերի Կազմակերպության Կոնվենցիան և դրան կից՝ Մարդկանց, հատկապես կանանց ու երեխաների թրաֆիքինգի կանխարգելման, կանխման և դրա համար պատժի մասին Արձանագրությունը՝ այդ փաստաթղթերով նախատեսված պաշտպանության մեխանիզմը բարելավելու և դրանցում ամրագրված չափանիշները զարգացնելու նպատակով,

կարևորելով նաև մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի բնագավառի այլ համապատասխան միջազգային իրավական փաստաթղթերը,

հաշվի առնելով թրաֆիքինգից տուժած անձանց իրավունքներն ամրագրող և մոնիտորինգի հատուկ մեխանիզմ սահմանող համապարփակ միջազգային իրավական փաստաթուղթ մշակելու անհրաժեշտությունը,

համաձայնության են եկել հետևյալի շուրջ.

Գլուխ I Նպատակները, գործողության ոլորտը, խտրականության բացառման սկզբունքը և սահմանումները

Հոդված 1

Կոնվենցիայի նպատակները

1. Սույն Կոնվենցիայի նպատակներն են.

ա) կանխարգելել ու պայքարել մարդկանց թրաֆիքինգի դեմ՝ երաշխավորելով գենդերային հավասարությունը,

բ) պաշտպանել թրաֆիքինգից զոհերի մարդու իրավունքները, մշակել զոհերի ու վկաների պաշտպանության և օգնության համապարփակ մեխանիզմ՝ երաշխավորելով գենդերային հավասարությունը, ինչպես նաև ապահովել արդյունավետ քննություն և քրեական հետապնդում,

գ) նպաստել մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի բնագավառում միջազգային համագործակցության զարգացմանը:

2. Կոնվենցիայի դրույթների արդյունավետ իրականացման ապահովման նպատակով, սույն կոնվենցիան նախատեսում է ստեղծել մոնիտորինգի հատուկ մեխանիզմ:

Հոդված 2

Գործողության ոլորտը

Սույն Կոնվենցիան կիրառվում է մարդկանց թրաֆիքինգի բոլոր ձևերի նկատմամբ, անկախ դրանց ազգային կամ անդրազգային բնույթից, անկախ կազմակերպված հանցավորության հետ ունեցած կամ չունեցած կապից:

Հոդված 3

Խտրականության բացառման սկզբունք

Սույն Կոնվենցիայի դրույթները, մասնավորապես այն դրույթները, որոնք վերաբերում են գոհերի իրավունքների պաշտպանությանն ու ապահովմանը, պետք է իրականացվեն առանց որևէ խտրականության՝ կապված սեռի, ռասայի, մաշկի գույնի, լեզվի, դավանանքի, քաղաքական կամ այլ հայացքների, ազգային կամ սոցիալական ծագման, ազգային փոքրամասնությանը պատկանելության, ծննդի, գույքային կամ այլ դրության հետ:

Հոդված 4

Սահմանումներ

Սույն Կոնվենցիայի նպատակների համար.

ա) «մարդկանց թրաֆիքինգ» է շահագործման նպատակով մարդկանց հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ընդունելը՝ ուժի սպառնալիք կամ ուժ գործադրելու կամ հարկադրանքի որևէ այլ ձև կիրառելու, առևանգման, խարդախության, խաբեության, իշխանությունը կամ վիճակի խոցելիությունը չարաշահելու, կամ այլ անձնավորության նկատմամբ որոշակի վերահսկողություն իրականացնող որևէ անձի համաձայնությունը ձեռք բերելու նպատակով դրամական միջոցներ կամ այլ օգուտներ տրամադրելու կամ ստանալու եղանակով: Շահագործումը ներառում է այլ անձանց մարմնավաճառության կամ սեքսուալ այլ շահագործումը, հարկադիր աշխատանքները կամ ծառայությունները, ստրկությունը կամ ստրկությանը հավասարազոր վիճակը, տաժանակիր աշխատանքները կամ օրգանների հեռացումը.

բ) սույն հոդվածի «ա» կետում նշված շահագործման այս կամ այն ձևի կիրառման վերաբերյալ թրաֆիքինգից տուժած անձի համաձայնությունը որևէ նշանակություն չունի այն դեպքում, երբ կիրառվել է այդ կետում նախատեսված եղանակներից որևէ մեկը.

գ) շահագործման նպատակով երեխային հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ընդունելը համարվում է «մարդկանց թրաֆիքինգ» նույնիսկ այն դեպքում, երբ դա կապված չէ սույն հոդվածի «ա» կետում նախատեսված եղանակներից որևէ մեկի կիրառման հետ.

դ) «երեխա» է համարվում տասնութ տարին չլրացած ցանկացած անձ.

ե) «տուժած» է համարվում սույն հոդվածում սահմանված ձևով թրաֆիքինգի մեջ ներքաշված ցանկացած ֆիզիկական անձ:

Գլուխ II Կանխարգելում, համագործակցություն և այլ միջոցներ

Հոդված 5

Մարդկանց թրաֆիքինգի կանխարգելումը

1. Յուրաքանչյուր կողմ պետք է միջոցներ ձեռնարկի մարդկանց թրաֆիքինգի կանխարգելման ու դրա դեմ պայքարի համար պատասխանատու տարբեր մարմինների միջև պետական մակարդակով համագործակցություն հաստատելու և ամրապնդելու ուղղությամբ:

2. Յուրաքանչյուր կողմ պետք է մշակի և/կամ զարգացնի մարդկանց թրաֆիքինգի կանխարգելմանն ուղղված արդյունավետ քաղաքականություն և համապատասխան ծրագրեր՝ կիրառելով այնպիսի միջոցներ, ինչպիսիք են հետազոտությունները, տեղեկատվությունը, իրազեկության մակարդակի բարձրացումը, կրթական միջոցառումները, սոցիալ-տնտեսական նախաձեռնությունները և վերապատրաստման ծրագրերը, մասնավորապես թրաֆիքինգի մեջ ներքաշվելու տեսակետից անձանց առավել խոցելի կատեգորիաների և մարդկանց թրաֆիքինգի խնդիրներով զբաղվող մասնագետների համար:

3. Յուրաքանչյուր կողմ 2-րդ մասում նշված քաղաքականությունը և ծրագրերը մշակելիս, իրագործելիս և գնահատելիս պետք է հանդես գա մարդու իրավունքների ապահովման, գենդերային խնդիրների առաջնայնության և երեխաների շահերի պաշտպանության դիրքերից:

4. Անհրաժեշտության դեպքում յուրաքանչյուր կողմ պետք է ձեռնարկի համապատասխան միջոցներ միգրացիայի օրինականությունն ապահովելու ուղղությամբ՝ օրինական ճանապարհով իր տարածք մուտք գործելու և այդտեղ գտնվելու պայմանների մասին անհրաժեշտ տեղեկատվություն տարածելու եղանակով, մասնավորապես համապատասխան մարմինների միջոցով:

5. Յուրաքանչյուր կողմ պետք է ձեռնարկի հատուկ միջոցներ երեխաների շրջանում թրաֆիքինգը նվազեցնելու ուղղությամբ, հատկապես նրանց համար պաշտպանությունն ապահովող միջավայր ստեղծելու միջոցով:

6. Սույն հոդվածին համապատասխան ձեռնարկված միջոցառումներին անհրաժեշտության դեպքում պետք է ներգրավվեն հասարակական կազմակերպությունները, ուրիշ կազմակերպություններ և քաղաքացիական հասարակության այլ տարրեր, որոնց

գործունեությունն նպատակաուղղված է մարդկանց թրաֆիքինգի կանխարգելմանը և թրաֆիքինգից տուժած անձանց պաշտպանությանն ու օժանդակությանը:

Հոդված 6

Թրաֆիքինգի պահանջարկի նվազեցմանն ուղղված միջոցներ

Մարդկանց, մասնավորապես կանանց և երեխաների շահագործման բոլոր ձևերին նպաստող պայմանների նվազեցման համար, որոնք հանգեցնում են թրաֆիքինգի, յուրաքանչյուր կողմ պետք է ձեռնարկի կամ զարգացնի օրենսդրական, վարչական, կրթական, սոցիալական, մշակութային և այլ միջոցներ, որոնք ներառում են.

ա) հետազոտություններ լավագույն փորձի, մեթոդների ու ռազմավարությունների բնագավառում,

բ) մարդկանց թրաֆիքինգի պահանջարկի, որպես թրաֆիքինգի արմատական պատճառներից մեկի, բացահայտման հարցում զանգվածային լրատվության միջոցների ու քացաքացիական հասարակության պատասխանատվության և կարևոր դերի վերաբերյալ իրազեկության մակարդակի բարձրացում,

գ) նպատակային տեղեկատվական արշավների կազմակերպում՝ անհրաժեշտության դեպքում, ներառյալ նաև՝ պետական մարմինների և քաղաքականություն մշակողների մասնակցությամբ,

դ) կանխարգելիչ միջոցներ, ներառյալ կրթական ծրագրեր դպրոցական տարիքի տղաների ու աղջիկների համար, որոնք ընդգծում են սեռի հիմքով խտրականության անթույլատրելիությունը և դրա կործանարար հետևանքները, զենդերային հավասարության և յուրաքանչյուր մարդու արժանապատվության ու ամբողջական կերպարի կարևորությունը:

Հոդված 7

Սահմանային միջոցառումներ

1. Չխախտելով ազատ տեղաշարժման իրավունքի ապահովման հարցում ստանձնած միջազգային պարտավորությունները՝ կողմերը պետք է հնարավորինս ուժեղացնեն սահմանային վերահսկողությունը՝ մարդկանց թրաֆիքինգի բացահայտման ու կանխարգելման համար:

2. Յուրաքանչյուր կողմ պետք է ձեռնարկի օրենսդրական կամ այլ անհրաժեշտ միջոցներ սույն կոնվենցիայում նախատեսված հանցավոր արարքների կատարման ժամանակ առևտրային փոխադրումներ իրականացնող ընկերությունների տրանսպորտային միջոցների օգտագործումը կանխելու ուղղությամբ:

3. Չխախտելով համապատասխան միջազգային կոնվենցիաները՝ այդ միջոցների կիրառումը ընդգրկում է առևտրային փոխադրումներ իրականացնող ընկերությունների, այդ թվում՝

ցանկացած տրանսպորտային ընկերության կամ ցանկացած տրանսպորտային միջոց շահագործողի կամ դրա սեփականատիրոջ կողմից բոլոր ուղևորների մոտ ընդունող պետություն մուտք գործելու համար պահանջվող բոլոր ճամփորդական փաստաթղթերի առկայության հավաստման պարտականության ստանձնում:

4. Յուրաքանչյուր կողմ իր ներքին օրենսդրությանը համապատասխան պետք է ձեռնարկի անհրաժեշտ միջոցներ սույն հոդվածի 3-րդ մասում ամրագրված պարտականության խախտման դեպքում համապատասխան սանկցիաների կիրառման ապահովման ուղղությամբ:

5. Յուրաքանչյուր կողմ պետք է ձեռնարկի այնպիսի օրենսդրական կամ այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ են իր ներքին օրենսդրությանը համապատասխան սույն կոնվենցիայում նախատեսված հանցավոր արարքների կատարման մեջ մասնակցած անձանց մուտքն արգելելու կամ մուտքի արտոնագրերը չեղյալ հայտարարելու համար:

6. Կողմերը պետք է ամրապնդեն համագործակցությունը սահմանային վերահսկողության մարմինների միջև, այդ թվում նաև՝ նրանց միջև ուղիղ կապ հաստատելու և պահպանելու միջոցով:

Հոդված 8

Փաստաթղթերի անվտանգությունն ու հսկումը

Յուրաքանչյուր կողմ, անհրաժեշտության դեպքում, պետք է ձեռնարկի այնպիսի միջոցներ, որոնք պետք է ապահովեն.

ա) նրա կողմից տրված ճամփորդական կամ անձը հաստատող փաստաթղթերի այնպիսի որակը, որը թույլ չի տա դրանք ապօրինի օգտագործել և հեշտությամբ կեղծել կամ ապօրինի փոփոխել, կրկնօրինակել կամ տրամադրել, և

բ) նրա կողմից կամ նրա անունից տրված ճամփորդական կամ անձը հաստատող փաստաթղթերի ամբողջականությունն ու անվտանգությունը և կանխեն դրանց ապօրինի պատրաստումը և տրամադրումը:

Հոդված 9

Փաստաթղթերի օրինականությունը և վավերությունը

Կողմերից որևէ մեկը մյուս կողմի պահանջով իր ներքին օրենսդրությանը համապատասխան պետք է որոշակի ողջամիտ ժամկետի ընթացքում հավաստի այն ճամփորդական կամ անձը հաստատող փաստաթղթերի օրինականությունը և վավերությունը, որոնք տրվել կամ իբրև թե տրվել են իր անունից, և ենթադրաբար օգտագործվել են մարդկանց թրաֆիքինգի նպատակով:

Գլուխ III Միջոցներ՝ ուղղված զոհերի իրավունքների պաշտպանությանը և ապահովմանը՝ երաշխավորելով գենդերային հավասարությունը

Հոդված 10

Տուժածների բացահայտումը

1. Յուրաքանչյուր կողմի իրավասու մարմինները պետք է համալրված լինեն մարդկանց թրաֆիքինգի կանխարգելման ու դրա դեմ պայքարի, ինչպես նաև զոհերի, ներառյալ երեխաների, բացահայտման ու նրանց օգնություն ցուցաբերելու բնագավառի վերապատրաստված և որակյալ մասնագետներով և համագործակցեն ինչպես միմյանց, այնպես էլ աջակցություն ցուցաբերող համապատասխան կազմակերպությունների հետ՝ զոհերի բացահայտման՝ հաշվի առնելով կանանց և երեխաների շարքից զոհերի առանձնահատկությունները, և անհրաժեշտության դեպքում սույն Կոնվենցիայի 14 հոդվածով սահմանված կարգով նրանց կացության կարգավիճակ տրամադրելու նպատակով:

2. Անհրաժեշտության դեպքում յուրաքանչյուր կողմ պետք է ձեռնարկի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք հարկավոր են զոհերի բացահայտման համար՝ համագործակցելով մյուս կողմերի և համապատասխան կազմակերպությունների հետ: Այն դեպքում, երբ իրավասու մարմինները հիմքեր ունեն ենթադրելու, որ այս կամ այն անձը թրաֆիքինգից տուժած է, յուրաքանչյուր կողմ պետք է ապահովի, որպեսզի այդ անձը գտնվի իր տարածքում այնքան ժամանակ, քանի դեռ իրավասու մարմինը չի ավարտել որպես սույն Կոնվենցիայի 18 հոդվածով նախատեսված հանցավոր արարքից տուժածի անձի հաստատման գործընթացը, և որպես այդպիսին օգտվի 12 հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված օժանդակությունից:

3. Այն դեպքում, երբ տուժածի տարիքն անհայտ է, և հիմքեր կան ենթադրելու, որ նա երեխա է, մինչև նրա տարիքը որոշելը, նա պետք է համարվի երեխա և օգտվի պաշտպանության հատուկ միջոցներից:

4. Այն դեպքում, երբ հաստատվում է չուղեկցվող երեխայի թրաֆիքինգից տուժած լինելու հանգամանքը, յուրաքանչյուր կողմ պետք է.

ա) ապահովի երեխայի շահերի ներկայացուցչությունը օրինական խնամակալի, այլ կազմակերպության կամ լիազորության կողմից, որը լավագույնս կգործի՝ ելնելով այդ երեխայի լավագույն շահերից,

բ) անհրաժեշտ միջոցներ ձեռնարկի նրա անձը և ազգությունը հաստատելու ուղղությամբ,

գ) ջանքեր գործադրի նրա ընտանիքը հայտնաբերելու ուղղությամբ, եթե դա բխում է երեխայի լավագույն շահերից:

Հոդված 11

Մասնավոր կյանքի պաշտպանությունը

1. Յուրաքանչյուր կողմ պետք է պաշտպանի զոհերի անձը և մասնավոր կյանքը: Նրանց անձնական տվյալները պետք է պահպանվեն և օգտագործվեն Անձնական բնույթի տվյալների ավտոմատացված մշակման առնչությամբ անհատ անձանց պաշտպանության մասին կոնվենցիայի դրույթներին համապատասխան (Եվրոպական պայմանագրերի ժողովածու No. 108):

2. Յուրաքանչյուր կողմ պետք է, մասնավորապես, ապահովի, որպեսզի թրաֆիքինգից տուժած երեխայի անձի կամ անձնական տվյալների վերաբերյալ տեղեկատվությունը չհրապարակվի զանգվածային լրատվության կամ այլ միջոցներով, բացառությամբ այն դեպքերի, երբ դա անհրաժեշտ է նրա ընտանիքի անդամներին հայտանաբերելու կամ որևէ այլ կերպ երեխայի բարեկեցությունը և պաշտպանությունը ապահովելու համար:

3. Յուրաքանչյուր կողմ, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 10 հոդվածի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մեկնաբանություններին համապատասխան, պետք է ի նկատի ունենա ձեռնարկելու միջոցներ՝ ուղղված զանգվածային լրատվության միջոցների գործունեության խրախուսմանը՝ ինքնակարգավորման միջոցով կամ կարգավորիչ կամ համակարգավորիչ միջոցներ գործադրելով զոհերի անձի և մասնավոր կյանքի պաշտպանության համար:

Հոդված 12

Օժանդակությունը զոհերին

1. Յուրաքանչյուր կողմ պետք է ձեռնարկի այնպիսի օրենսդրական կամ այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ են զոհերի ֆիզիկական, հոգեբանական և սոցիալական վերականգնման համար: Այդպիսի օժանդակությունը պետք է առնվազն ներառի.

ա) գոյատևման համար անհրաժեշտ կենսապայմաններ, մասնավորապես, պատշաճ և ապահով կացարան, հոգեբանական ու նյութական օգնություն,

բ) շտապ բուժ. օգնություն ստանալու հնարավորություն,

գ) անհրաժեշտության դեպքում բանավոր և գրավոր թարգմանության ծառայություններ,

դ) իրենց հասկանալի լեզվով խորհրդատվության և տեղեկատվության տրամադրում,

մասնավորապես իրենց իրավունքների ու այն ծառայությունների վերաբերյալ, որոնցից կարող են օգտվել,

ե) քրեական դատավարության համապատասխան փուլերի ընթացքում ընդդեմ իրավազանցի իրենց իրավունքների ու շահերի ներկայացման հարցում օժանդակություն,

զ) երեխաների համար կրթություն ստանալու հնարավորություն:

2. Յուրաքանչյուր կողմ պետք է պատշաճ ուշադրություն դարձնի տուժածի անվտանգության և պաշտպանության կարիքներին:

3. Դրա հետ մեկտեղ յուրաքանչյուր կողմ պետք է անհրաժեշտ բժշկական և այլ օգնություն տրամադրի իր տարածքում օրինական հիմքով բնակվող այն զոհերին, որոնք այդպիսի օգնության կարիք ունեն, սակայն չունեն բավարար միջոցներ դրա համար:

4. Յուրաքանչյուր կողմ պետք է սահմանի կանոններ, որոնց համապատասխան իր տարածքում օրինական հիմքով բնակվող զոհերին կընձեռվի աշխատուժի շուկայից օգտվելու, ինչպես նաև մասնագիտական պատրաստման ու կրթության հնարավորություն:

5. Անհրաժեշտության դեպքում և իր ներքին օրենսդրությամբ սահմանված կարգով յուրաքանչյուր կողմ պետք է ձեռնարկի միջոցներ զոհերին օժանդակության խնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունների, այլ համապատասխան կառույցների և քաղաքացիական հասարակության մյուս տարրերի հետ համագործակցության ուղղությամբ:

6. Յուրաքանչյուր կողմ պետք է ձեռնարկի օրենսդրական կամ այլ անհրաժեշտ միջոցներ, որոնք կբացառեն որպես վկա հանդես գալու պատրաստակամության պայմանով տուժածին օգնություն տրամադրելու հնարավորությունը:

7. Սույն հոդվածում ամրագրված դրույթների իրականացման նպատակով յուրաքանչյուր կողմ պետք է ապահովի, որպեսզի զոհերին ծառայությունները մատուցվեն նրանց համաձայնության և իրազեկության պայմաններում՝ հաշվի առնելով խոցելի իրավիճակում հայտնված անձանց հատուկ կարիքները և երեխաների իրավունքները՝ հարմարությունների, կրթության և առողջության պահպանման հարցերում:

Հոդված 13

Վերականգնման և խորհրդածության, կշռադատման ժամանակահատված

1. Յուրաքանչյուր կողմ իր ներքին օրենսդրության մեջ տուժած համարվող անձանց համար պետք է սահմանի առնվազն 30 օր տևողությամբ վերականգնման և խորհրդածության, կշռադատման ժամկետ, եթե ողջամիտ հիմքեր կան ենթադրելու, որ տվյալ անձը տուժված է: Այդ ժամկետը պետք է բավարար լինի տվյալ անձի վերականգնման և թրաֆիքինգով զբաղվողների ազդեցությունից ազատվելու և/կամ իրավասու մարմինների հետ համագործակցության վերաբերյալ իրազեկ որոշում ընդունելու համար: Այս ժամանակահատվածի ընթացքում նրա նկատմամբ չի կարող կիրառվել վտարման մասին որևէ որոշում: Այս դրույթը չպետք է խոչընդոտի իրավասու մարմինների գործունեությանը ազգային օրենսդրությամբ սահմանված ընթացակարգի որևէ փուլում և, մասնավորապես, հանցագործությունների քննության և հետապնդման ընթացքում:

Այս ժամանակահատվածի ընթացքում կողմերը պետք է այդ անձանց թույլատրեն գտնվել իրենց տարածքում:

2. Այս ժամանակահատվածի ընթացքում սույն հոդվածի 1-ին մասում նշված անձանց վրա պետք է տարածվեն 12 հոդվածի 1-ին և 2-րդ մասերում նախատեսված միջոցները:

3. Կողմերը պարտավոր չեն պահպանել այս ժամկետը, եթե դա կարող է հանգեցնել հասարակական կարգի խախտման կամ եթե պարզվի, որ տուժածի կարգավիճակ ստանալու վերաբերյալ պահանջն անհիմն է:

Հոդված 14

Կացության կարգավիճակի թույլտվություն

1. Յուրաքանչյուր կողմ պետք է զոհերին երկարաձգվող կացության կարգավիճակ տրամադրի հետևյալ դեպքերից մեկի կամ մյուսի դեպքում, կամ երկու դեպքերում էլ.

ա) երբ իրավասու մարմինը գտնում է, որ զոհերի գտնվելն իր պետության տարածքում անհրաժեշտ է՝ կապված նրանց անձնական բնույթի հանգամանքների հետ,

բ) երբ իրավասու մարմինը գտնում է, որ զոհերի գտնվելն իր պետության տարածքում անհրաժեշտ է հանցագործությունների քննության ընթացքում իրավասու մարմինների հետ նրանց համագործակցության նպատակով:

2. Տուժած երեխաներին կացության կարգավիճակը պետք է տրամադրվի և անհրաժեշտության դեպքում երկարաձգվի, երբ դա իրավաբանորեն անհրաժեշտ է՝ ելնելով երեխայի շահերից:

3. Կացության կարգավիճակի երկարաձգման մերժումը կամ դրանից զրկելու հետ կապված հարցերը կարգավորվում են տվյալ կողմի ներքին օրենսդրությամբ:

4. Երբ տուժածը դիմում է ներկայացնում այլ կացության կարգավիճակ ստանալու վերաբերյալ, տվյալ կողմը պետք է հաշվի առնի, որ նա սույն հոդվածի 1-ին մասի համաձայն ունի կամ ունեցել է կացության կարգավիճակ:

5. Հաշվի առնելով սույն Կոնվենցիայի 40 հոդվածում ամրագրված պարտավորությունները՝ յուրաքանչյուր կողմ պետք է ապահովի, որ այս դրույթին համապատասխան կարգավիճակի տրամադրումը չխախտի ապաստան փնտրելու և դրանից օգտվելու իրավունքը:

Հոդված 15

Փոխհատուցում և իրավական վերականգնում

1. Յուրաքանչյուր կողմ պետք է ապահովի զոհերի համար իրավասու մարմինների հետ առաջին իսկ շփումից հետո համապատասխան դատական և վարչական ընթացակարգերի վերաբերյալ իրենց համար հասկանալի լեզվով տեղեկատվության մատչելիությունը:

2. Յուրաքանչյուր կողմ իր ներքին օրենսդրության մեջ պետք է ամրագրի զոհերի՝ իրավաբանական օգնություն, իսկ օրենքով նախատեսված դեպքերում անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը:

3. Յուրաքանչյուր կողմ իր ներքին օրենսդրության մեջ պետք է ամրագրի զոհերի՝ հանցագործից փոխհատուցում ստանալու իրավունքը:

4. Յուրաքանչյուր կողմ պետք է ձեռնարկի օրենսդրական կամ այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ են ներքին օրենսդրությանը համապատասխան զոհերի վնասների փոխհատուցումը երաշխավորելու համար, օրինակ, զոհերի վնասների փոխհատուցման հիմնադրամ ստեղծելու կամ այնպիսի միջոցառումներ կամ ծրագրեր իրականացնելու միջոցով, որոնք ուղղված են զոհերի սոցիալական օգնությանը և սոցիալական ինտեգրացիային և որոնք կարող են ֆինանսավորվել 23 հոդվածում նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած միջոցների հաշվին:

Հոդված 16

Տուժածների հայրենադարձությունը և վերադարձը

1. Այն կողմը, որի քաղաքացին է տուժածը կամ որի տարածքում մշտական բնակության իրավունք ունի, վերջինիս ընդունող պետության տարածք մուտք գործելու դեպքում պետք է օժանդակի առանց անհարկի և ան- ընդունելի ձգձգումների նրա վերադարձին՝ պատշաճ կերպով հաշվի առնելով տուժածի իրավունքները, անվտանգությունն ու արժանապատվությունը:

2. Երբ կողմերից մեկը տուժածին վերադարձնում է մեկ այլ պետության, անհրաժեշտ է հաշվի առնել այդ անձի իրավունքները, անվտանգությունն ու արժանապատվությունը և այն իրավաբանական ընթացակարգերը, որոնք կապված են անձի տուժած լինելու փաստի հետ: Նախընտրելի է, որ վերադարձը լինի կամավոր:

3. Ընդունող կողմի պահանջով մյուս կողմը պետք է հաստատի, որ ընդունող կողմի տարածք մուտք գործելու ժամանակ տվյալ անձը իր քաղաքացին էր կամ իր տարածքում մշտական բնակության իրավունք ուներ:

4. Անհրաժեշտ փաստաթղթեր չունեցող տուժածի վերադարձմանը օժանդակելու նպատակով այն կողմը, որի քաղաքացին է նա կամ որի տարածքում մշտական բնակության իրավունք ունի

ընդունող պետության տարածք մուտք գործելու ժամանակ, պետք է համաձայնի ընդունող կողմի պահանջով նրան տրամադրել համապատասխան ճամփորդական փաստաթղթեր կամ այլ թույլտվություն իր պետության տարածք կրկին մուտք գործելու համար:

5. Յուրաքանչյուր կողմ պետք է ձեռնարկի այնպիսի օրենսդրական կամ այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ են հայրենադարձության ծրագրեր մշակելու համար՝ ներգրավելով համապատասխան ազգային կամ միջազգային կառույցներ ու հասարակական կազմակերպություններ: Այդ ծրագրերը ուղղված են խուսափելու կրկնակի գոհականացումից (վիկտիմիզացիայից): Յուրաքանչյուր կողմ պետք է բոլոր հնարավոր միջոցներով նպաստի զոհերի՝ վերադարձնող պետության հասարակության մեջ վերաինտեգրմանը, այդ թվում կրթական համակարգից և աշխատուժի շուկայից օգտվելու հնարավորությունների տեսակետից, մասնավորապես մասնագիտական հմտություններ ձեռք բերելու և դրանք բարելավելու միջոցով: Այդ ծրագրերը երեխաների համար պետք է նախատեսեն կրթության իրավունքից օգտվելու հնարավորություն, ինչպես նաև անհրաժեշտ խնամքի ապահովմանը, կամ ընտանիքներ կամ համապատասխան հաստատություններ նրանց ընդունելուն ուղղված միջոցներ:

6. Յուրաքանչյուր կողմ պետք է ձեռնարկի այնպիսի օրենսդրական կամ այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ են զոհերին այն կառույցների վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու համար՝ առանձին դեպքերում համագործակցելով նաև ցանկացած այլ կողմի հետ, որոնք կարող են նրանց օգնություն ցույց տալ այն երկրում, ուր նրանք վերադարձել կամ հայրենադարձվել են, այն է՝ իրավապահ մարմիններ, հասարակական կազմակերպություններ, իրավաբանական մասնագետներ, որոնք ի վիճակի են կատարելու խորհրդատվություն և սոցիալական օգնության մարմիններ:

7. Տուժած երեխաները չպետք է վերադարձվեն որևէ պետություն, եթե, գնահատելով ռիսկերն ու անվտանգության խնդիրները, հիմքեր կան ենթադրելու, որ դա չի բխում նրանց լավագույն շահերից:

Հոդված 17

Գենդերային հավասարություն

Յուրաքանչյուր կողմ սույն գլխում նշված միջոցները ձեռնարկելիս պետք է ապահովի գենդերային հավասարությունը և դրանց մշակման, իրականացման ու գնահատման հարցում հանդես գա գենդերային առաջնության դիրքերից:

Գլուխ IV Քրեական իրավունք

Հոդված 18

Մարդկանց թրաֆիքինգի քրեականացումը

Յուրաքանչյուր կողմ պետք է ձեռնարկի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ են սույն Կոնվենցիայի 4 հոդվածում նախատեսված արարքները քրեորեն պատժելի դարձնելու համար, երբ դրանք կատարվել են դիտավորությամբ:

Հոդված 19

Տուժածի ծառայություններից օգտվելու քրեականացումը

Յուրաքանչյուր կողմ պետք է նախատեսի ձեռնարկել այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ են ներքին օրենսդրությամբ քրեորեն պատժելի դարձնել սույն Կոնվենցիայի 4 հոդվածի «ա» կետում թվարկված՝ շահագործման առարկա դարձած ծառայություններից օգտվելու հանգամանքը եթե կատարողն իմացել է անձի թրաֆիքինգից տուժած լինելու մասին:

Հոդված 20

Ճամփորդական կամ անձը հաստատող փաստաթղթերի հետ կապված արարքների քրեականացումը

Յուրաքանչյուր կողմ պետք է ձեռնարկի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ են հետևյալ արարքները քրեորեն պատժելի դարձնելու համար, եթե դրանք կատարվել են դիտավորությամբ և մարդկանց թրաֆիքինգի նպատակով.

- ա) Ճամփորդական կամ անձը հաստատող փաստաթուղթ կեղծելը,
- բ) այդպիսի փաստաթուղթ ձեռք բերելը կամ տրամադրելը,
- գ) մեկ այլ անձի պատկանող Ճամփորդական կամ անձը հաստատող փաստաթուղթը պահելը, տեղափոխելը, թաքցնելը, վնասելը կամ ոչնչացնելը:

Հոդված 21

Հանցավորձ և օժանդակում կամ դրդում

1. Յուրաքանչյուր կողմ պետք է ձեռնարկի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ են սույն Կոնվենցիայի 18 և 20 հոդվածներում նախատեսված հանցավոր արարքների կատարման կամ դրդման օժանդակությունը քրեորեն պատժելի դարձնելու համար, եթե դրանք կատարվել են դիտավորությամբ:

2. Յուրաքանչյուր կողմ պետք է ձեռնարկի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ են սույն Կոնվենցիայի 18 հոդվածում և 20 հոդվածի «ա» կետում նախատեսված

հանցավոր արարքների կատարման փորձը քրեորեն պատժելի դարձնելու համար, եթե դա կատարվել է դիտավորությամբ:

Հոդված 22

Իրավաբանական անձանց պատասխանատվությունը

1. Յուրաքանչյուր կողմ պետք է ձեռնարկի այնպիսի օրենսդրական և այլ անհրաժեշտ միջոցներ, որոնք կապահովեն սույն Կոնվենցիայով նախատեսված այնպիսի հանցավոր արարքների համար իրավաբանական անձի պատասխանատվությունը, որոնք կատարվել են վերջինիս օգտին ցանկացած ֆիզիկական անձի կողմից՝ գործելով կամ անհատականորեն, կամ որպես իրավաբանական անձի որևէ մարմնի մաս, որն այդտեղ ղեկավար պաշտոն է զբաղեցնում և.

- ա) լիազորված է ներկայացնել այդ իրավաբանական անձը,
- բ) իրավասու է իրավաբանական անձի անունից ընդունել որոշումներ,
- գ) իրավասու է իրավաբանական անձի ներսում իրականացնել վերահսկողություն:

2. Բացի 1-ին մասում նշված դեպքերից, յուրաքանչյուր կողմ պետք է ձեռնարկի անհրաժեշտ միջոցներ, որոնք կապահովեն սույն Կոնվենցիայով նախատեսված այնպիսի հանցավոր արարքների համար իրավաբանական անձի պատասխանատվությունը, որոնք կատարվել են այդ իրավաբանական անձի օգտին իր լիազորությունների շրջանակներում գործող՝ 1-ին մասում նշված ֆիզիկական անձի կողմից՝ հսկողության կամ վերահսկողության բացակայության հետևանքով:

3. Կախված տվյալ կողմի իրավական համակարգի առանձնահատկություններից, իրավաբանական անձի պատասխանատվությունը կարող է լինել քրեական, քաղաքացիական կամ վարչական:

4. Պատասխանատվության այս ձևը չի բացառում տվյալ հանցավոր արարքը կատարած ֆիզիկական անձանց քրեական պատասխանատվությունը:

Հոդված 23

Սանկցիաներ և միջոցներ

1. Յուրաքանչյուր կողմ պետք է ձեռնարկի օրենսդրական և այլ անհրաժեշտ միջոցներ 18 - 21 հոդվածներում նշված հանցավոր արարքների համար արդյունավետ, համամասնական և (տար)համոզիչ նշանակություն ունեցող պատիժներ նախատեսող սանկցիաներ սահմանելու համար: 18 հոդվածում նշված ֆիզիկական անձանց կողմից կատարված հանցավոր արարքների համար սանկցիաները պետք է նախատեսեն տարբեր պատիժներ, ներառյալ ազատազրկում, որը կարող է առաջացնել հանձնում:

2. Յուրաքանչյուր կողմ պետք է 22 հոդվածի համաձայն պատասխանատվության ենթարկված իրավաբանական անձանց համար սահմանի արդյունավետ, համամասնական և տարհամոզիչ նշանակություն ունեցող քրեական կամ ոչ քրեական բնույթի պատիժներ, այդ թվում՝ դրամական սանկցիաներ:

3. Յուրաքանչյուր կողմ պետք է ձեռնարկի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ են սույն Կոնվենցիայի 18 հոդվածում և 20 հոդվածի «ա» կետում նախատեսված հանցավոր արարքների կատարման գործիքների և հանցավոր ճանապարհով ձեռք բերված եկամուտների կամ գույքի, որի արժեքը համապատասխանում է այդ եկամուտների չափին, բռնագրավումը կամ որևէ այլ եղանակով առգրավումն ապահովելու համար:

4. Յուրաքանչյուր կողմ պետք է ձեռնարկի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ են, առանց օրինավոր, բարեխիղճ երրորդ անձանց իրավունքները խախտելու, մարդկանց թրաֆիքինգով զբաղվող ցանկացած հաստատության գործունեությունը ժամանակավորապես կամ մշտապես դադարեցնելու, կամ հանցավորին ժամանակավորապես կամ մշտապես այնպիսի գործունեությամբ զբաղվելն արգելելու համար, որը նպաստել է այդ հանցավոր արարքի կատարմանը:

Հոդված 24

Ծանրացնող հանգամանքներ

Յուրաքանչյուր կողմ պետք է ապահովի, որ սույն Կոնվենցիայի 18 հոդվածում նախատեսված հանցավոր արարքների կատարման համար պատիժները որոշելիս հետևյալ հանգամանքները համարվեն ծանրացնող.

- ա) դիտավորությամբ կամ մեծ անփութությամբ կատարված հանցավոր արարքը սպառնալիք է ստեղծել տուժածի կյանքի համար,
- բ) հանցավոր արարքը կատարվել է երեխայի նկատմամբ,
- գ) հանցավոր արարքը կատարվել է պետական պաշտոնյաի կողմից՝ իր պաշտոնական պարտականությունները կատարելիս,
- դ) հանցավոր արարքը կատարվել է հանցավոր կազմակերպության շրջանակներում:

Հոդված 25

Նախկին դատվածություններ

Յուրաքանչյուր կողմ պետք է ձեռնարկի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք հնարավորություն կտան սույն Կոնվենցիայում նախատեսված հանցավոր արարքների

կատարման համար պատիժները որոշելիս հաշվի առնել մեկ այլ կողմի դատարանների կայացրած դատավճիռները:

Հոդված 26

Պատիժ չկիրառելու հնարավորությունը

Յուրաքանչյուր կողմ, ելնելով իր իրավական համակարգի հիմնական սկզբունքներից, պետք է նախատեսի զոհերի նկատմամբ նրանց ապօրինի գործողությունների համար պատիժ չկիրառելու հնարավորություն այն դեպքում, երբ նրանց նկատմամբ հարկադրանք է գործադրվել այդպիսի վարքագիծ դրսևորելու համար:

Գլուխ V Քննություն, քրեական հետապնդում և դատավարական իրավունք

Հոդված 27

Շահագրգիռ կողմից (Ex parte) և իրավասու մարմնի պաշտոնյայի կողմից (ex officio) դիմումներ

1. Յուրաքանչյուր կողմ պետք է ապահովի, որ սույն Կոնվենցիայում նախատեսված հանցավոր արարքների քննությունը կամ դրանցով իրականացվող քրեական հետապնդումը կախված չլինի միայն տուժածի ցուցմունքներից կամ նրա հարուցած մեղադրանքներից, համենայն դեպս այն ժամանակ, երբ հանցավոր արարքն ամբողջովին կամ մասամբ կատարվել է իր տարածքում:

2. Յուրաքանչյուր կողմ պետք է ապահովի, որ թրաֆիքինգից զոհերը, գտնվելով կողմերից որևէ մեկի տարածքում, որտեղ նրանք չեն բնակվում, հնարավորություն ունենան գանգատ ներկայացնել իրենց պետության իրավասու մարմիններին: Այն դեպքում, երբ համապատասխան մարմինը, որին ներկայացվել է գանգատը, իրավասու չէ տվյալ հարցում, նա պետք է անհապաղ գանգատը փոխանցի այն կողմի իրավասու մարմնին, որի տարածքում կատարվել է հանցանքը: Գանգատի հետ կապված հարցերը կարգավորվում են այն կողմի ներքին օրենսդրությամբ, որի տարածքում կատարվել է հանցանքը:

3. Յուրաքանչյուր կողմ, համաձայն իր ներքին օրենսդրությամբ նախատեսված պայմանների, պետք է ձեռնարկի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի կամ մարդու իրավունքների պաշտպանության հարցերով զբաղվող ցանկացած խմբին, հիմնադրամին, ընկերակցությանը կամ հասարակական կազմակերպություններին հնարավորություն կտան տուժածի համաձայնությամբ օգնել և/կամ աջակցել նրան սույն Կոնվենցիայի 18 հոդվածում նախատեսված հանցավոր արարքների վերաբերյալ գործերի դատական քննության ընթացքում:

Հոդված 28

*Տուժածների, վկաների և քննությանը օգնություն ցույց տվող անձանց պաշտպանությունը
դատական մարմինների կողմից*

1. Յուրաքանչյուր կողմ պետք է ձեռնարկի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ են հետևյալ կատեգորիայի անձանց վրեժի հնարավոր հատուցումից կամ սպառնալիքից արդյունավետ պաշտպանելու համար, մասնավորապես հանցանքը կատարած անձանց վերաբերյալ քննության և քրեական հետապնդման ընթացքում և դրանից հետո.

ա) գոհեր,

բ) նրանք, ովքեր հայտնել են սույն Կոնվենցիայի 18 հոդվածում նախատեսված հանցավոր արարքների մասին կամ որևէ այլ կերպ համագործակցել են քննությունը վարող կամ քրեական հետապնդման մարմինների հետ,

գ) սույն Կոնվենցիայի 18 հոդվածում նախատեսված հանցավոր արարքների վերաբերյալ ցուցմունք տված վկաներ,

դ) անհրաժեշտության դեպքում՝ «ա» և «գ» կետերում նշված անձանց ընտանիքի անդամները:

2. Յուրաքանչյուր կողմ պետք է ձեռնարկի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ են տարբեր տեսակի օգնություն ապահովելու ու տրամադրելու համար: Դա կարող է ներառել ֆիզիկական պաշտպանությունը, բնակության վայրի ու անձնական տվյալների փոփոխությունը և շախատանքի տեղավորելու հարցում օժանդակությունը:

3. Տուժած երեխայի համար, նրա շահերից ելնելով, պետք է ապահովվեն հատուկ պաշտպանության միջոցներ:

4. Յուրաքանչյուր կողմ պետք է ձեռնարկի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ են 27 հոդվածի 3-րդ մասում նշված գործունեությամբ զբաղվող խմբերի, հիմնադրամների, ընկերակցությունների կամ հասարակական կազմակերպությունների անդամներին վրեժի հնարավոր հատուցումից կամ սպառնալիքից արդյունավետ պաշտպանելու համար, մասնավորապես հանցանքը կատարած անձանց վերաբերյալ քննության և քրեական հետապնդման ընթացքում և դրանից հետո:

5. Յուրաքանչյուր կողմ պետք է քննարկի սույն հոդվածի կիրառումն ապահովելու նպատակով այլ պետությունների հետ համաձայնագրեր կնքելու կամ պայմանավորվածություններ ձեռք բերելու հնարավորությունը:

Հոդված 29

Մասնագիտացված մարմիններ և համակարգող կառույցներ

1. Յուրաքանչյուր կողմ պետք է ձեռնարկի այնպիսի միջոցներ, որոնք անհրաժեշտ են թրաֆիքինգի դեմ պայքարի և զոհերի պաշտպանության ոլորտում մասնագիտացած անձանց պատրաստման կամ կառույցների ստեղծման համար: Այդ անձինք կամ կառույցները տվյալ կողմի իրավական համակարգի հիմնարար սկզբունքներին համապատասխան պետք է օժտված լինեն բովանդակազան ինքնուրույնությամբ իրենց գործառնություններն արդյունավետ և որևէ ճնշման բացակայության պայմաններում իրականացնելու համար: Նշված անձինք կամ այդ կառույցների անձնակազմի անդամները պետք է պատշաճ կերպով պատրաստված լինեն և ունենան բավարար ֆինանսական միջոցներ իրենց խնդիրներն իրագործելու համար:

2. Յուրաքանչյուր կողմ պետք է ձեռնարկի այնպիսի միջոցներ, որոնք անհրաժեշտ են գործադիր իշխանության մարմինների և պետական այլ հաստատությունների՝ մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի ծրագրերը և գործողությունները համակարգելու համար՝ անհրաժեշտության դեպքում համակարգող կառույցներ ստեղծելու միջոցով:

3. Յուրաքանչյուր կողմ պետք է կազմակերպի համապատասխան պաշտոնատար անձանց ուսուցումը մարդկանց թրաֆիքինգի կանխարգելման և դրա դեմ պայքարի, այդ թվում նաև մարդու իրավունքների բնագավառում: Ուսուցումը կարող է հարմարեցված լինել տվյալ կառույցի գործունեության առանձնահատկություններին և պետք է վերաբերի թրաֆիքինգի կանխարգելման, թրաֆիքինգով զբաղվող անձանց քրեորեն հետապնդելու և զոհերի իրավունքների պաշտպանության, ներառյալ թրաֆիքինգով զբաղվողներից զոհերի պաշտպանության մեթոդներին:

4. Յուրաքանչյուր կողմ պետք է քննարկի ազգային զեկուցողներ նշանակելու կամ այլ մեխանիզմներ ստեղծելու հնարավորությունը՝ պետական հաստատությունների հակաթրաֆիքինգային գործունեությունը վերահսկելու և ազգային օրենսդրության պահանջները կատարելու համար:

Հոդված 30

Դատական քննություն

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի, մասնավորապես դրա 6 հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր կողմ պետք է ձեռնարկի այնպիսի օրենսդրական կամ այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ են դատական քննության ընթացքում

ա) զոհերի մասնավոր կյանքը և համապատասխան դեպքերում անձի ինքնությունը պաշտպանելու համար,

բ) զոհերի անվտանգությունն ապահովելու և նրանց սպառնալիքից պաշտպանելու համար,

իսկ այն դեպքում, երբ գոհերը երեխաներ են՝ նրանց կարիքները հատուկ հոգալու և հատուկ պաշտպանության միջոցներից օգտվելու նրանց իրավունքն ապահովելու համար, համաձայն ներքին օրենսդրությամբ սահմանված պայմանների:

Հոդված 31

Իրավագործությունը

1. Յուրաքանչյուր կողմ պետք է ձեռնարկի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ են սույն Կոնվենցիայում նախատեսված ցանկացած հանցավոր արարքի վրա իր իրավագործությունը տարածելու համար, եթե այն կատարվել է.

ա) իր տարածքում, կամ

բ) իր դրոշի ներքո նավարկող նավի վրա, կամ

գ) իր օրենսդրությանը համապատասխան գրանցված օդանավում, կամ

դ) իր քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի կողմից, որն իր տարածքում ունի կանոնավոր բնակության վայր, եթե այդ արարքը քրեորեն պատժելի է համարվում այն պետության քրեական օրենսդրության համաձայն, որտեղ կատարվել է, կամ եթե այն կատարվել է որևէ պետության տարածքային իրավագործությունից դուրս,

ե) իր քաղաքացու նկատմամբ:

2. Յուրաքանչյուր կողմ կարող է Կոնվենցիայի ստորագրման, կամ վավերագիրը, Կոնվենցիան ընդունելու, հաստատելու կամ դրան միանալու մասին փաստաթուղթն ավանդապահին հանձնելու ժամանակ վերապահում անել սույն հոդվածի 1-ին մասի «դ» և «ե» կետերում սահմանված իրավագործության կանոնները չկիրառելու կամ միայն հատուկ դեպքերում կիրառելու վերաբերյալ՝ այդ մասին ծանուցելով Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարին:

3. Յուրաքանչյուր կողմ պետք է ձեռնարկի այնպիսի միջոցներ, որոնք անհրաժեշտ են սույն Կոնվենցիայում նախատեսված հանցավոր արարքների վրա իր իրավագործությունը տարածելու համար, այն դեպքում, երբ հանցանքը կատարելու մեջ մեղադրվող անձը գտնվում է իր տարածքում, և հանձնման մասին պահանջը ստանալուց հետո ինքն այդ անձին չի հանձնում մեկ ուրիշ կողմի բացառապես նրա քաղաքացիության հիմքով:

4. Երբ սույն Կոնվենցիայով նախատեսված որևէ հանցավոր արարքի վրա իրենց իրավագործությունը տարածելու հավակնություն ունեն մեկից ավելի կողմեր, նրանք անհրաժեշտության դեպքում պետք է խորհրդակցեն՝ քրեական հետապնդման համար ամենապատշաճ իրավագործությունը որոշելու նպատակով:

5. Չխախտելով միջազգային իրավունքի ընդհանուր նորմերը՝ սույն Կոնվենցիան չի բացառում կողմերից որևէ մեկի կողմից իր ներքին օրենսդրությանը համապատասխան քրեական իրավագործություն իրականացնելու հնարավորությունը:

Գլուխ VI Միջազգային համագործակցություն և համագործակցություն քաղաքացիական հասարակության հետ

Հոդված 32

Միջազգային համագործակցության ընդհանուր սկզբունքները և եղանակները

Կողմերը պետք է համագործակցեն միմյանց հետ սույն Կոնվենցիայի դրույթներին համապատասխան և լայնորեն կիրառելով համապատասխան միջազգային ու տարածաշրջանային փաստաթղթերը, միասնական կամ փոխադարձաբար պարտավորեցնող օրենսդրության հիման վրա ձեռք բերված պայմանավորվածությունները

- մարդկանց թրաֆիքինգը կանխարգելելու և դրա դեմ պայքարելու,
- զոհերին պաշտպանելու և օգնություն տրամադրելու,
- սույն Կոնվենցիայով նախատեսված հանցավոր արարքների վերաբերյալ գործերը քննելու և դատավարելու նպատակով:

Հոդված 33

Վտանգի ենթարկված կամ անհայտ կորած անձանց վերաբերյալ ձեռնարկվող միջոցներ

1. Երբ կողմերից որևէ մեկն իր տրամադրության տակ եղած տեղեկատվության հիման վրա ողջամիտ հիմքեր ունի ենթադրելու, որ 28 հոդվածի 1-ին մասում նշված անձի կյանքին, ազատությանը կամ ֆիզիկական անվտանգությանը մեկ այլ կողմի տարածքում անմիջական վտանգ է սպառնում, նա նման արտակարգ իրավիճակում պետք է անհապաղ մյուս կողմին փոխանցի այդ տեղեկատվությունը՝ նշված անձի պաշտպանության համար համապատասխան միջոցներ ձեռնարկելու նպատակով:

2. Սույն Կոնվենցիայի կողմերը կարող են քննարկել անհայտ կորած անձանց, մասնավորապես անհայտ կորած երեխաների որոնման հարցում իրենց համագործակցությունն ուժեղացնելու հնարավորությունը, եթե առկա տեղեկատվությունը հիմք է տալիս ենթադրելու, որ այս կամ այն անձը թրաֆիքինգից տուժած է: Այս նպատակով կողմերը կարող են միմյանց հետ կնքել երկկողմ կամ բազմակողմ պայմանագրեր:

Հոդված 34

Տեղեկատվությունը

1. Կողմերից որևէ մեկը պետք է մյուս կողմի պահանջով հնարավորինս սեղմ ժամկետներում նրան տեղեկացնի սույն գլխի դրույթներին համապատասխան ձեռնարկված միջոցների վերջնական արդյունքի մասին: Նա պետք է մյուս կողմին տեղեկացնի նաև այն հանգամանքների մասին, որոնք անհնարին են դարձնում համապատասխան միջոցների ձեռնարկումը կամ զգալիորեն դրանք հետաձգում են:

2. Կողմերից որևէ մեկը կարող է իր ներքին օրենսդրությանը համապատասխան առանց նախնական պահանջի մյուս կողմին տրամադրել տեղեկատվություն, որը ձեռք է բերվել իր կողմից իրականացված քննության ընթացքում, եթե հիմքեր կան ենթադրելու, որ այդ տեղեկատվության հրապարակումը կարող է օգնել մյուս կողմին սույն Կոնվենցիայով նախատեսված հանցավոր արարքների վերաբերյալ գործերի քննությունը կամ դատավարությունը նախաձեռնելու կամ իրականացնելու հարցում կամ կարող է այդ կողմի հետ սույն գլխի դրույթներին համապատասխան համագործակցության հիմք հանդիսանալ:

3. Նախքան տեղեկատվության տրամադրումը տեղեկատվությունը տրամադրող կողմը կարող է պահանջել, որ այն պահվի գաղտնի կամ օգտագործվի որոշակի պայմանների պահպանմամբ: Եթե տեղեկատվությունը ստացող կողմը չի կարող կատարել այդ պահանջները, նա այդ մասին պետք է հայտնի տեղեկատվությունը տրամադրող կողմին, որն էլ պետք է որոշի՝ տրամադրի այն, թե՛ ոչ: Եթե մյուս կողմն ընդունում է այդ տեղեկատվությունը, նա պարտավոր է կատարել դրա օգտագործման համար սահմանված պայմանները:

4. 13, 14 ու 16 հոդվածների վերաբերյալ ամբողջ տեղեկատվությունը, որն անհրաժեշտ է այդ հոդվածներով նախատեսված իրավունքներն ապահովելու համար, պետք է առանց հետաձգելու տրամադրվի այն կողմին, որը պահանջել է այդ տեղեկատվությունը, հաշվի առնելով սույն Կոնվենցիայի 11 հոդվածի պահանջները:

Հոդված 35

Համագործակցությունը քաղաքացիական հասարակության հետ

Յուրաքանչյուր կողմ պետք է խրախուսի պետական մարմինների ու պաշտոնատար անձանց համագործակցությունը հասարակական կազմակերպությունների, այլ համապատասխան կառույցների և քաղաքացիական հասարակության անդամների հետ սույն Կոնվենցիայի նպատակին հասնելու համար ռազմավարական գործընկերություն հաստատելու հարցում:

Գլուխ VII Սոնիտորինգի մեխանիզմ

Հոդված 36

Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի հարցերով փորձագետների խումբ

1. Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի հարցերով փորձագետների խումբը (այսուհետ՝ ՄԹՊՓԽ) պետք է իրականացնի սույն Կոնվենցիայի կատարման մոնիտորինգ:
2. ՄԹՊՓԽ-ն պետք է կազմված լինի նվազագույնը 10 և առավելագույնը 15 անդամներից՝ հաշվի առնելով գենդերային և աշխարհագրական հավասար ներկայացուցչության սկզբունքը, ինչպես նաև բազմապրոֆիլ փորձաքննության հնարավորությունը: Նրանք ընտրվում են Կողմերի կոմիտեի կողմից, 4 տարի ժամկետով, մեկ անգամ վերընտրվելու հնարավորությամբ՝ սույն Կոնվենցիայի անդամ պետությունների քաղաքացիների թեկնածությամբ:
3. ՄԹՊՓԽ-ի անդամների ընտրությունը պետք է հիմնված լինի հետևյալ սկզբունքների վրա.
 - ա) նրանք պետք է ընտրվեն բարձր բարոյական հատկանիշներ ունեցող, մարդու իրավունքների, մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի և զոհերի իրավունքների պաշտպանության ու դրանց օժանդակության բնագավառում հեղիանկություն վայելող կամ սույն Կոնվենցիայի գործողության ոլորտներում մասնագիտական փորձառություն ունեցող անձանց թվից,
 - բ) նրանք պետք է հանդես գան անձնապես, իրենց գործառույթներն իրականացնելիս լինեն անկախ ու անկողմնակալ և կարողանան արդյունավետ կատարել իրենց պարտականությունները,
 - գ) միևնույն պետության երկու քաղաքացիներ չեն կարող լինել ՄԹՊՓԽ-ի անդամներ,
 - դ) նրանք պետք է ներկայացնեն հիմնական իրավական համակարգերը:

4. ՄԹՊՓԽ-ի անդամների ընտրության ընթացակարգը պետք է սահմանվի Նախարարների կոմիտեի կողմից, սույն Կոնվենցիայի կողմերի հետ խորհրդակցելուց և նրանց միաձայն համաձայնությունը ստանալուց հետո, Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուն հաջորդող մեկ տարվա ընթացքում: ՄԹՊՓԽ-ը պետք է ընդունի իր իսկ կանոնակարգը:

Հոդված 37

Կողմերի կոմիտե

1. Կողմերի կոմիտեն պետք է կազմված լինի Նախարարների կոմիտեում՝ սույն Կոնվենցիայի կողմ հանդիսացող Եվրոպայի Խորհրդի անդամ պետությունների և սույն Կոնվենցիայի Եվրոպայի Խորհրդի անդամ չհանդիսացող կողմերի ներկայացուցիչներից:

2. Կողմերի կոմիտեն հրավիրվում է Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարի կողմից: Առաջին նիստը գումարվում է սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուն հաջորդող մեկ տարվա ընթացքում՝ ՄԹՊՓԽ-ի անդամներին ընտրելու նպատակով: Հաջորդ նիստերը գումարվում են կողմերի 1/3-ի, ՄԹՊՓԽ-ի նախագահի կամ Գլխավոր քարտուղարի պահանջով:

3. Կողմերի կոմիտեն ընդունում է իր կանոնակարգը:

Հոդված 38

Ընթացակարգ

1. Գնահատման ընթացակարգը վերաբերում է սույն Կոնվենցիայի կողմերին և բաժանվում է փուլերի, որոնց տևողությունը սահմանվում է ՄԹՊՓԽ-ի կողմից: Յուրաքանչյուր փուլի սկզբում ՄԹՊՓԽ-ն պետք է ընտրի այն կոնկրետ դրույթները, որոնց շուրջ պետք է իրականացվի գնահատման ընթացակարգը:

2. ՄԹՊՓԽ-ն պետք է որոշի գնահատումն անցկացնելու համար ամենահարմար միջոցները: Մասնավորապես, ՄԹՊՓԽ-ն կարող է գնահատման յուրաքանչյուր փուլի համար մշակել հարցաշար, որը կարող է հիմք ծառայել սույն Կոնվենցիայի կողմերի կողմից դրա պահանջների կատարումը գնահատելու համար: Այդ հարցաշարը պետք է ներկայացվի բոլոր կողմերին: Կողմերը պետք է պատասխանեն այդ հարցաշարին, ինչպես և ՄԹՊՓԽ-ի կողմից արվող ցանկացած այլ տեղեկատվության հարցումներին:

3. ՄԹՊՓԽ-ն կարող է տեղեկատվություն պահանջել նաև քաղաքացիական հասարակությունից:

4. ՄԹՊՓԽ-ն կարող է պետական մարմինների և դրանց կողմից նշանակված պատասխանատու անձի հետ միասին և անհրաժեշտության դեպքում նաև անկախ ազգային փորձագետների

աջակցությամբ լրացուցիչ կազմակերպել այցեր առանձին պետություններ: Այդ այցերի ընթացքում ՄԹՊՓԽ-ին կարող են օգնություն ցույց տալ առանձին ոլորտների մասնագետներ:

5. ՄԹՊՓԽ-ն պետք է պատրաստի զեկույցի նախագիծ, որը կբովանդակի համապատասխան դրույթների կատարման գնահատման վերաբերյալ իր վերլուծությունը, ինչպես նաև տվյալ Կողմին ուղղված իր առաջարկությունները բացահայտված խնդրները լուծելու վարաբերյալ: Այդ նախագիծը պետք է ներկայացվի գնահատվող կողմին մեկնաբանությունների համար: Նրա մեկնաբանությունները ՄԹՊՓԽ-ի կողմից հաշվի են առնվում զեկույցում:

6. Սրա հիման վրա ՄԹՊՓԽ-ն պետք է ընդունի իր զեկույցը և ներկայացնի իր եզրակացությունն այն միջոցների վերաբերյալ, որոնք համապատասխան կողմը ձեռնարկել է սույն Կոնվենցիայի դրույթները կատարելու համար: Այդ զեկույցը և եզրակացությունը պետք է ներկայացվեն գնահատվող կողմին և Կողմերի կոմիտեին: ՄԹՊՓԽ-ի զեկույցը և եզրակացությունը, համապատասխան կողմի հնարավոր մեկնաբանությունների հետ միասին, ընդունումից հետո պետք է հրապարակվեն:

7. Չխախտելով սույն հոդվածի 1-6 մասերում սահմանված ընթացակարգը՝ Կողմերի կոմիտեն ՄԹՊՓԽ-ի զեկույցի և եզրակացության հիման վրա կարող է ընդունել գնահատվող կողմին հասցեագրված ռեկոմենդացիաներ. ա) այն միջոցների մասին, որոնք պետք է ձեռնարկվեն ՄԹՊՓԽ-ի եզրակացությունները կենսագործելու համար՝ անհրաժեշտության դեպքում սահմանելով կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկություններ ներկայացնելու ժամկետ, և բ) ուղղված այդ կողմի հետ համագործակցության խրախուսմանը սույն Կոնվենցիայի պատշաճ կատարման համար:

Գլուխ VIII Կապը այլ միջազգային փաստաթղթերի հետ

Հոդված 39

Կապը Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ Միավորված Ազգերի Կազմակերպության Կոնվենցիային կից Մարդկանց, հատկապես կանանց ու երեխաների թրաֆիքինգի կանխարգելման, կանխման և դրա համար պատժի մասին Արձանագրության հետ

Սույն Կոնվենցիան չի ազդում Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ Միավորված Ազգերի Կազմակերպության Կոնվենցիային կից Մարդկանց, հատկապես կանանց ու երեխաների թրաֆիքինգի կանխարգելման, կանխման և դրա համար պատժի մասին Արձանագրությունից բխող իրավունքների ու պարտականությունների վրա և ուղղված է դրանում նախատեսված պաշտպանության մեխանիզմի ամրապնդմանն ու սահմանված չափանիշների զարգացմանը:

Հոդված 40

Կապը այլ միջազգային փաստաթղթերի հետ

1. Սույն Կոնվենցիան չի ազդում այլ միջազգային փաստաթղթերից բխող իրավունքների ու պարտականությունների վրա, որոնց մասնակցում են կամ կարող են մասնակցել սույն Կոնվենցիայի կողմերը և որոնք պարունակում են սույն Կոնվենցիայով կարգավորվող հարցերին վերաբերող դրույթներ, ու որոնք թրաֆիքինգից զոհերի համար նախատեսում են ավելի լայն պաշտպանություն և օժանդակություն:
2. Կողմերը կարող են միմյանց հետ կնքել երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրեր Կոնվենցիայով կարգավորվող հարցերի վերաբերյալ՝ վերջինիս դրույթները լրացնելու կամ ամրապնդելու կամ նրանում ամրագրված սկզբունքների կիրառմանը նպաստելու համար:
3. Եվրամիության անդամ կողմերը իրենց փոխհարաբերություններում պետք է կիրառեն Միության և Եվրոպական Համայնքի նորմերը այնքանով, որքանով խնդրո մասնավոր առարկան կարգավորող Եվրամիության կամ Համայնքի այդպիսի նորմեր գոյություն ունեն և կիրառելի են տվյալ դեպքում՝ չխախտելով սույն Կոնվենցիայի առարկան ու նպատակը և չխոչընդոտելով դրա ամբողջական կիրառմանը մյուս կողմերի հետ հարաբերություններում:
4. Սույն Կոնվենցիայի ոչ մի դրույթ չի ազդում պետությունների ու անհատների իրավունքների ու պարտականությունների վրա, որոնք սահմանված են միջազգային իրավունքով, ներառյալ միջազգային մարդասիրական իրավունքով և միջազգային մարդու իրավունքների իրավունքով, և, մասնավորապես, կիրառելիության դեպքում, Փախստականների կարգավիճակի մասին 1951 թ.

Կոնվենցիայով և դրան կից 1967 թ. Արձանագրությամբ, և դրանցում ամրագրված ետ չվերադարձնելու (non-refoulement) սկզբունքով:

Գլուխ IX Փոփոխություններ Կոնվենցիայի տեքստում

Հոդված 41

Փոփոխություններ

1. Սույն Կոնվենցիայի մեջ որևէ փոփոխություն կատարելու մասին ցանկացած առաջարկություն պետք է ներկայացվի Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարին և նրա կողմից ուղարկվի Եվրոպայի Խորհրդի անդամ պետություններին, բոլոր ստորագրող կողմերին, բոլոր մասնակից պետություններին, Եվրոպական Համայնքին, բոլոր այն պետություններին, որոնք 42 հոդվածի դրույթներին համապատասխան հրավիրված են ստորագրելու սույն Կոնվենցիան, և բոլոր այն պետություններին, որոնք 43 հոդվածի դրույթներին համապատասխան հրավիրված են միանալու սույն Կոնվենցիային:
2. Կողմերից որևէ մեկի կողմից առաջարկվող փոփոխությունը պետք է ներկայացվի ՄԹՊՓԽ-ին, որը Նախարարների կոմիտեին պետք է ներկայացնի իր կարծիքը առաջարկվող փոփոխության վերաբերյալ:
3. Նախարարների կոմիտեն պետք է քննարկի առաջարկվող փոփոխությունն ու ՄԹՊՓԽ-ի ներկայացրած կարծիքը և, խորհրդակցելով սույն Կոնվենցիայի կողմերի հետ ու ստանալով նրանց միաձայն համաձայնությունը, կարող է ընդունել այն:
4. Նախարարների կոմիտեի կողմից սույն հոդվածի 3-րդ մասին համապատասխան ընդունված ցանկացած փոփոխության տեքստը պետք է ներկայացվի կողմերի ընդունմանը:
5. Սույն հոդվածի 3-րդ մասին համապատասխան ընդունված ցանկացած փոփոխություն ուժի մեջ է մտնում այն օրից հետո մեկամսյա ժամկետի ավարտին հաջորդող ամսվա առաջին օրը, այն ամսաթվից հետո, երբ բոլոր կողմերը Գլխավոր քարտուղարին տեղեկացրել են փոփոխությունն ընդունելու մասին:

Գլուխ X Եզրավակիչ դրույթներ

Հոդված 42

Ստորագրումը և ուժի մեջ մտնելը

1. Սույն Կոնվենցիան բաց է ստորագրման համար Եվրոպայի Խորհրդի անդամ պետությունների կողմից, այն պետությունների կողմից, որոնք, չլինելով Եվրոպայի Խորհրդի անդամ, մասնակցել են դրա մշակմանը, և Եվրոպական Համայնքի կողմից:
2. Սույն Կոնվենցիան ենթակա է վավերացման, ընդունման կամ հաստատման: Վավերագրերը, ընդունելու կամ հաստատելու մասին փաստաթղթերն ի պահ են հանձնվում Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարին:
3. Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում այն օրից հետո եռամսյա ժամկետի ավարտին հաջորդող ամսվա առաջին օրը, երբ 10 մասնակից, այդ թվում Եվրոպայի Խորհրդի առնվազն 8 անդամ պետություն, նախորդ մասի դրույթներին համապատասխան իրենց ստորագրությամբ արտահայտել են համաձայնություն Կոնվենցիայի պարտադիր լինելու վերաբերյալ:
4. 1-ն մասում նշված այն պետությունների կամ Եվրոպական Ընկերակցության համար, որոնք հետագայում են արտահայտել իրենց համաձայնությունը Կոնվենցիայի պարտադիր լինելու վերաբերյալ, այն ուժի մեջ է մտնում այն օրից հետո եռամսյա ժամկետի ավարտին հաջորդող ամսվա առաջին օրը, երբ ավանդապահին են հանձնվել վավերագրերը, ընդունելու կամ հաստատելու մասին փաստաթղթերը:

Հոդված 43

Կոնվենցիային միանալը

1. Սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո Եվրոպայի Խորհրդի Նախարարների կոմիտեն Կոնվենցիայի կողմերի հետ խորհրդակցելուց և նրանց միաձայն համաձայնությունը ստանալուց հետո կարող է Եվրոպայի Խորհրդի անդամ չհանդիսացող ցանկացած պետությանը, որը չի մասնակցել Կոնվենցիայի մշակմանը, առաջարկել միանալ դրան՝ Եվրոպայի Խորհրդի Կանոնադրության 20 d հոդվածում սահմանված ծայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ և Նախարարների կոմիտեում ներկայացված Պայմանավորվող պետությունների ներկայացուցիչների միաձայն քվեարկությամբ:
2. Միացող պետության համար Կոնվենցիան ուժի մեջ է մտնում այն օրից հետո եռամսյա ժամկետի ավարտին հաջորդող ամսվա առաջին օրը, երբ Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարին ի պահ է հանձնվել միանալու մասին փաստաթուղթը:

Հոդված 44

Տարածքային կիրառելիություն

1. Ցանկացած պետություն կամ Եվրոպական Ընկերակցությունը Կոնվենցիան ստորագրելու կամ վավերագրերը, ընդունելու, հաստատելու կամ միանալու մասին փաստաթղթերն ավանդապահին հանձնելու ժամանակ կարող են նշել այն տարածքը կամ տարածքները, որտեղ պետք է գործի սույն Կոնվենցիան:

2. Ցանկացած պետություն դրանից հետո ցանկացած ժամանակամիջոցում ,կարող է Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարին ուղղված հայտարարության միջոցով սույն Կոնվենցիայի գործողությունը տարածել հայտարարությունում նշված որևէ այլ տարածքի վրա, որի անունից հանդես գալու կամ միջազգային հարաբերություններ իրականացնելու իրավունք ունի: Այդ տարածքի համար սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում այն օրից հետո եռամսյա ժամկետի ավարտին հաջորդող ամսվա առաջին օրը, երբ Գլխավոր քարտուղարը ստացել է հայտարարությունը:

3. Որևէ տարածքի վերաբերյալ նախորդ երկու մասերում ամրագրված դրույթներին համապատասխան արված հայտարարությունները կարող են ետ վերցվել Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարին ծանուցելու միջոցով: Հայտարարությունը համարվում է ետ վերցված այն օրից հետո եռամսյա ժամկետի ավարտին հաջորդող ամսվա առաջին օրը, երբ Գլխավոր քարտուղարը ստացել է ծանուցումը:

Հոդված 45

Վերապահումներ

Սույն Կոնվենցիայի դրույթների վերաբերյալ որևէ վերապահում չի կարող արվել, բացառությամբ 31 հոդվածի 2-րդ մասում նախատեսված դեպքերի:

Հոդված 46

Չեղյալ հայտարարելը

1. Ցանկացած կողմ ցանկացած ժամանակ կարող է Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարին ծանուցելու միջոցով չեղյալ հայտարարել սույն Կոնվենցիան:

2. Չեղյալ հայտարարումն ուժի մեջ է մտնում այն օրից հետո եռամսյա ժամկետի ավարտին հաջորդող ամսվա առաջին օրը, երբ Գլխավոր քարտուղարը ստացել է ծանուցումը:

Հոդված 47

Ծանուցում

Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարը Եվրոպայի Խորհրդի անդամ պետություններին, բոլոր ստորագրող կողմերին, բոլոր մասնակից պետություններին, Եվրոպական Համայնքին, բոլոր այն պետություններին, որոնք 42 հոդվածի դրույթներին համապատասխան հրավիրվել են ստորագրելու սույն Կոնվենցիան, և բոլոր այն պետություններին, որոնք 43 հոդվածի դրույթներին համապատասխան հրավիրվել են միանալու դրան, պետք է ծանուցի.

ա) ցանկացած ստորագրման մասին,

բ) վավերագիր, ընդունման, հաստատման կամ միանալու մասին փաստաթուղթ ի պահ հանձնելու մասին,

գ) 42 և 43 հոդվածներին համապատասխան սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու օրվա մասին,

դ) 41 հոդվածին համապատասխան ընդունված ցանկացած փոփոխության և դրա ուժի մեջ մտնելու օրվա մասին,

ե) 46 հոդվածին համապատասխան չեղյալ հայտարարելու մասին,

զ) սույն Կոնվենցիայի վերաբերյալ ցանկացած ակտի, ծանուցման կամ հայտարարության մասին,

է) 45 հոդվածին համապատասխան արված ցանկացած վերապահման մասին:

Ի հաստատումն որի, ներքոստորագրյալ ներկայացուցիչները, պատշաճորեն լիազորված լինելով, ստորագրել են սույն Կոնվենցիան:

Կատարված է Վարչավայրում, 2005 թվականի մայիսի 16-ին, մեկ օրինակով՝ անգլերեն և ֆրանսերեն լեզուներով, ընդ որում երկու տեքստերը հավասարապես վավերական են և ի պահ են հանձնվում Եվրոպայի Խորհրդի արխիվ: Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարը պետք է սույն Կոնվենցիայի հաստատված պատճեններն ուղարկի Եվրոպայի Խորհրդի յուրաքանչյուր անդամ պետությանը, Եվրոպայի Խորհրդի անդամ չհանդիսացող պետություններին, որոնք մասնակցել են սույն Կոնվենցիայի մշակմանը, Եվրոպական համայնքին և սույն Կոնվենցիային միանալու հրավիրված ցանկացած պետությանը:

**Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին
Եվրոպայի Խորհրդի կոնվենցիային կից
Պարզաբանող զեկույց**

I. ԼԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ա. Մարդկանց թրաֆիքինգը. երևույթը և դրա համատեքստը

1. Մարդկանց թրաֆիքինգն այսօր սուր խնդիր է ներկայացնում Եվրոպայում: Յուրաքանչյուր տարի հարյուրավոր մարդիկ, հատկապես կանայք և երեխաները, դառնում են սեռական շահագործման և այլ նպատակներով թրաֆիքինգի զոհեր ինչպես իրենց սեփական երկրներում, այնպես էլ արտասահմանում: Բոլոր ցուցանիշները մատնացույց են անում զոհերի թվի աճ: Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարին ուղղված գործունեությունը ուշադրության է արժանանում ամբողջ աշխարհում, քանի որ թրաֆիքինգը սպառնում է մարդու իրավունքներին և ժողովրդավարական հասարակությունների հիմնարար արժեքներին:

2. Մարդկության նկատմամբ այս շարունակական ոտնձգության դեմ ուղղված պայքարի ոլորտը մեկն է այն մի շարք ճակատներից, որտեղ Եվրոպայի Խորհուրդը պայքարում է մարդու իրավունքների և մարդկային արժանապատվության համար:

3. Մարդկանց թրաֆիքինգը՝ զոհերի մոլորեցմամբ, հանդիսանում է նախկինում ողջ աշխարհում տարածված ստրուկների առևտրի ժամանակակից ձևը: Այն մարդկանց վերաբերվում է որպես ապրանքի, որը կարող է գնվել և վաճառվել, օգտագործվել հարկադիր աշխատանքում՝ սովորաբար սեռական շահագործման ոլորտում, բայց նաև գյուղատնտեսական սեկտորում, օրինակ ծանր աշխատանքը շահագործող լեզալ կամ անլեզալ ձեռնարկություններում՝ չնչին վարձատրության դիմաց կամ առանց որևէ վարձատրության: Թրաֆիքինգի բացահայտված զոհերի մեծ մասը կանայք են, սակայն երբեմն տղամարդիկ նույնպես մարդկանց թրաֆիքինգի զոհեր են դառնում: Ավելին, զոհերից շատերը երիտասարդ են, երբեմն երեխաներ: Նրանք բոլորը հուսահատ ջանք են գործադրում ապրուստի խղճուկ միջոցներ հայթայթելու համար և կործանում իրենց կյանքը՝ դառնալով շահագործման ու ազախության զոհեր:

4. Արդյունավետ լինելու համար մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի ռազմավարությունը պետք է որդեգրի համալիր մոտեցում, ներառելով թրաֆիքինգի կանխարգելումը, զոհերի մարդու իրավունքների պաշտպանությունը և թրաֆիքինգով զբաղվողների քրեական հետապնդումը՝ միաժամանակ փորձելով համապատասխանության բերել ազգային օրենքները և ապահովել դրանց միասնական ու արդյունավետ կենսագործումը:

5. Ողջ աշխարհում տարածված՝ մարդկանց թրաֆիքինգի երևույթը կարող է ունենալ ազգային կամ ամերիկացային դրսևորումներ: Քանի որ թրաֆիքինգը հաճախ կապված է լինում կազմակերպված հանցավորության հետ, որի համար այն ներկայումս հանդիսանում է ամենաշահութաբեր գործունեություններից մեկը, ապա Եվրոպայում անհրաժեշտ է դրա դեմ պայքարել նույնքան վճռականորեն, որքան թմրադեղերի առևտրի և փողերի լվացման դեմ: Որոշ գնահատումների համաձայն, շահույթի ստացմանն ուղղված ապօրինի ձեռնարկումներից մարդկանց թրաֆիքինգը աշխարհում երրորդ տեղն է զբաղում զենքերի և թմրադեղերի առևտրից հետո:

6. Այս առումով *Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ Միավորված Ազգերի Կազմակերպության Կոնվենցիային կից Մարդկանց, հատկապես կանանց ու երեխաների թրաֆիքինգի կանխարգելման, կանխման և դրա համար պատժի մասին Արժանագրությունը* (այսուհետև՝ «Պալերմոյի արձանագրություն») հիմքեր ստեղծեց թրաֆիքինգի դեմ միջազգային գործողություններ ձեռնարկելու համար: Եվրոպայի Խորհրդի Կոնվենցիան, որպես սկզբնական դարձնելով Պալերմոյի

արձանագրությունը և հաշվի առնելով մարդկանց թրաֆիքինգին առնչվող այլ միջազգային ու տարածաշրջանային իրավական փաստաթղթերը, ձգտում է ամրապնդել այդ փաստաթղթերով նախատեսված պաշտպանության մեխանիզմն ու բարելավել դրանցով ամրագրված չափանիշները:

7. Պալերնոյի արձանագրությունը պարունակում է «Անձանց թրաֆիքինգ» տերմինի առաջին համաձայնեցված և միջազգայնորեն պարտադիր սահմանումը (որն ընդգրկվել է Եվրոպայի Խորհրդի կոնվենցիայում) (Կոնվենցիայի Յոթված 4-ի վերաբերյալ մեկնաբանությունները տե՛ս ստորև): Այստեղ կարևոր է ընդգծել, որ մարդկանց թրաֆիքինգը պետք է զանազանվի ներգաղթողների ապօրինի փոխադրումներից: Վերջինս հանդիսանում է *Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ Միավորված Ազգերի Կազմակերպության Կոնվենցիային կից մի առանձին արձանագրության (Անդրազգային հանցավորության դեմ Միավորված Ազգերի Կազմակերպության Կոնվենցիային կից Վերգետնյա, ծովային և օդային տրանսպորտով ներգաղթողների ապօրինի փոխադրման դեմ արձանագրության)* առարկա: Եթե ներգաղթողներին ապօրինի արտասահման փոխադրելու նպատակը ուղղակիորեն կամ անուղղակիորեն ֆինանսական կամ այլ նյութական օգուտ ստանալն է, ապա մարդկանց թրաֆիքինգի նպատակը շահագործումն է: Ավելին, պարտադիր չէ, որ մարդկանց թրաֆիքինգն անպայմանորեն ներառի անդրազգային տարրեր. այն կարող է գոյություն ունենալ նաև ազգային մակարդակում:

8. Ընդունվել են նաև մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարին և թրաֆիքինգի զոհերի պաշտպանությանը նպաստող այլ միջազգային փաստաթղթեր: Միավորված Ազգերի Կազմակերպության փաստաթղթերից կարելի է նշել հետևյալը.

- 1930թ. հունիսի 28-ի Յարկադիր աշխատանքի մասին կոնվենցիան,
- 1949թ. դեկտեմբերի 2-ի Մարդկանց թրաֆիքինգի և այլ անձանց մարմնավաճառության շահագործման կանխման կոնվենցիան,
- 1951թ. հուլիսի 28-ի Փախստականների կարգավիճակի մասին Կոնվենցիան և դրան կից՝ Փախստականների կարգավիճակի մասին Արձանագրությունը,
- 1979թ. դեկտեմբերի 18-ի Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան,
- 1989թ. նոյեմբերի 20-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան,
- Աշխատանքի միջազգային կազմակերպության 1999թ. հունիսի 17-ի Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի արգելման և դրանց վերացման ուղղությամբ անհետաձգելի գործողությունների ձեռնարկման կոնվենցիան,
- Երեխայի իրավունքների մասին կոնվենցիային կից՝ 2000թ. մայիսի 25-ի երեխաների վաճառքի, երեխաների մարմնավաճառության և պոռնկագրության մասին կանոնադրարձանագրությունը:

9. Փորձը ցույց է տվել, որ տարածաշրջանային մակարդակում իրավական փաստաթղթերի առկայությունը եականորեն ուժեղացնում է համաշխարհային մասշտաբով ձեռնարկվող գործողությունները: Եվրոպական համատեքստում, *Եվրամիության Խորհրդի 2002թ. հուլիսի 19-ի Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի շրջանակային որոշումը* և *2004 թ. ապրիլի 29-ի 2004/81/EC դիրեկտիվը* երրորդ պետության այն քաղաքացիներին կացության թույլտվություն տալու մասին, ովքեր հանդիսանում են թրաֆիքինգի զոհեր կամ ենթարկվել են ապօրինի ներգաղթին նպաստող գործողությունների և համագործակցում են իրավասու մարմինների հետ, կանոնակարգում են մարդկանց թրաֆիքինգին վերաբերող որոշ

հարցեր: *Եվրամիության Խորհրդի 2001 թ. մարտի 15-ի քրեական դատավարությունում տուժողների կարգավիճակի մասին շրջանակային որոշումը* նույնպես զգալի առնչություն ունի մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի ոլորտի հետ:

բ. Եվրոպայի խորհրդի պայքարի միջոցառումները

10. Նկատի ունենալով, որ Եվրոպայի խորհրդի առաջնահերթ խնդիրներից մեկը մարդու իրավունքների և մարդկային արժանապատվության ապահովումն ու պաշտպանությունն է, իսկ մարդկանց թրաֆիքինգը սասանում է այն արժեքները, որոնց վրա հիմնված է Եվրոպայի խորհուրդը, ապա տրամաբանական է, որ նշված խնդրի լուծումը առաջնակարգ կարևորություն է ներկայացնում Կազմակերպության համար: Խնդիրն առավել արդիական է դառնում այն առումով, որ Եվրոպայի խորհրդի 46 մասնակից պետությունների շարքում կան զոհերի թրաֆիքինգի ծագման, տարանցիկ և նպատակային երկրներ:

11. Ուստի, սկսած 1980-ականների վերջերից մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարին ուղղված աշխատանքները, բնականաբար, կենտրոնացած են եղել Եվրոպայի խորհրդում:¹ Թրաֆիքինգը առնչվում է Եվրոպայի Խորհրդի մտահոգության առարկա հանդիսացող մի շարք հարցերի հետ, ինչպիսիք են, օրինակ, կանանց և երեխաների սեռական շահագործումը, կանանց պաշտպանությունը բռնությունից, կազմակերպված հանցավորությունը և միգրացիան: Եվրոպայի Խորհուրդը բազմաթիվ նախաձեռնություններ է ունեցել այս և հարակից բնագավառներում: Նա, ի թիվս այլ բաների, հրապարակել է իրավական փաստաթղթեր, մշակել ռազմավարություններ, իրականացրել հետազոտություններ, ներգրավվել իրավական ու տեխնիկական համագործակցության մեջ և իրականացրել մոնիտորինգ:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն

12. 1991թ. Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն ընդունել է *No. R(91)11 Հանձնարարականը Երեխաների ու երիտասարդ չափահասների սեռական շահագործման, պոռնկագրության ու մարմնավաճառության և թրաֆիքինգի մասին*, որը հանդիսանում է նշված հարցերը համակողմանիորեն քննության առնող առաջին միջազգային փաստաթուղթը: 1999թ. ստեղծվել է Երեխաներին սեռական շահագործումից պաշտպանելու հարցերով փորձագետների կոմիտե՝ մասնավորապես No. R(91)11 Հանձնարարականը վերանայելու նպատակով:

13. Կանանց թրաֆիքինգի դեմ պայքարի հարցերով փորձագետների խմբի (1992-93թթ.) միջոցով, որը հաշվետու էր Կանանց և տղամարդկանց հավասարության հարցերով ղեկավար կոմիտեին, Խորհուրդը տարբերակեց ամենահրատապ գործողություններ պահանջող ոլորտները, ինչի հիման վրա խորհրդատուներից մեկը մշակեց կանանց թրաֆիքինգի դեմ ուղղված գործողությունների ընդհանուր ծրագիր:² Ծրագրում առաջարկվում էին մտահոգող և հետազոտության ենթակա ոլորտները՝ թրաֆիքինգի օրենսդրական, դատական և պատժի հետ կապված հարցերի, թրաֆիքինգի զոհերին օժանդակության, աջակցության ցուցաբերման ու նրանց վերականգնման, ինչպես նաև թրաֆիքինգի հարցերով ուսուցման և դրա կանխարգելման ծրագրերի վերաբերյալ մասնակից պետություններին հանձնարարականներ տալու նպատակով:

¹ Կանանց և տղամարդկանց հավասարության հարցերով ղեկավար կոմիտեի կողմից կազմակերպված 1991թ. Ստրասբուրգի սեմինարը՝ Մարդու իրավունքների ու մարդկային արժանապատվության խախտում համարվող կանանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին:

² Կանանց թրաֆիքինգի դեմ ուղղված գործողությունների ծրագիր (փաստ. EG (96) 2), Ms Michèle HIRSCH (Belgium):

14. 1997թ. հոկտեմբերին կայացած Ստրասբուրգի վեհաժողովում թրաֆիքինգի խնդիրն առաջ բերեց Եվրոպայի խորհրդի մասնակից պետությունների ու կառավարությունների ղեկավարների ընդհանուր մտահոգությունը. եզրափակիչ հայտարարությամբ կանանց շահագործման բոլոր ձևերը պարզորոշ կերպով ճանաչվեցին որպես Եվրոպայում քաղաքացիների անվտանգությանն ու ժողովրդավարությանը սպառնացող վտանգ:

15. Վեհաժողովից հետո բազաբնույթ գործունեություններ են իրականացվել: Առաջին տեսակի գործունեությունն ուղղված էր իրազեկության մակարդակի բարձրացմանը և պայքարի միջոցների մշակմանը: Կազմակերպվեցին սեմինարներ ստրկության այս նոր ձևի³ մասին կառավարությունների և քաղաքացիական հասարակության իրազեկության մակարդակը բարձրացնելու և տարբեր գործիչներին (քաղաքական, դատական, սոցիալական ոլորտի աշխատողներ, դեսպանատան աշխատակազմ, ուսիցիչներ և այլն) թրաֆիքինգի զոհերի հետ կապված իրենց դերի և որոշ անհատներին սպառնացող վտանգների մասին զգուշացնելու նպատակով:

16. Ի լրումն դրա, մասնակից պետություններին խրախուսվեց մշակել թրաֆիքինգի դեմ պայքարի ազգային գործողությունների ծրագրեր: Այդ նպատակով Խորհուրդը 1996թ. մշակեց կանանց թրաֆիքինգի դեմ ուղղված վերոհիշյալ օրինակելի գործողությունների ծրագիրը, որից հետո խրախուսեց ինչպես ազգային, այնպես էլ տարածաշրջանային գործողությունների ծրագրերի մշակումը, հատկապես Հարավարևելյան Եվրոպայում⁴ և Հարավային Կովկասում:⁵

17. Իրականացվել են նաև ուսումնասիրություններ ու հետազոտություններ՝ թրաֆիքինգի խնդիրն իր բազմաթիվ տարբեր տեսանկյուններից ըմբռնելու նպատակով: Մասնավորապես, Տղամարդկանց և կանանց հավասարության հարցերով ղեկավար կոմիտեն պատրաստել է ուսումնասիրություն *սեռական շահագործման նպատակով մարդկանց թրաֆիքինգի վրա նոր տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման ներգործության* վերաբերյալ:⁶

18. Ավելին, որոշ մասնակից պետություններում տեղի են ունեցել փորձագետների նպատակային սեմինարներ ու հանդիպումներ, որոնք փորձագետներին ապահովել են ինչպես խնդրո առարկա ոլորտին առնչվող օրենսդրության մշակման կամ վերանայման համար անհրաժեշտ տեխնիկական օգնություն, այնպես էլ օժանդակել են այս աղետի դեմ պայքարի այլ անհրաժեշտ միջոցառումների ձեռնարկման հարցում:

19. Վերջին նախաձեռնություններից մեկն էլ հանդիսացել է 2002թ. հուլիսին սկսված և 2003թ. նոյեմբերին ավարտված LARA նախագիծը, որի նպատակն էր

³ Օրինակ, Միջազգային սեմինար Սեռական շահագործման նպատակով մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին. ԴԿ-ների դերը (Ստրասբուրգ, հունիս 1998թ.), և Սեմինար սեռական շահագործման նպատակով մարդկանց թրաֆիքինգի առնչությամբ լրատվամիջոցների կողմից կանանց ներկայացման բացասական և դրական արակտիկաների մասին (Ստրասբուրգ, սեպտեմբեր 1998թ.):

⁴ Հարավարևելյան Եվրոպայի համար Կայունության պակտի շրջանակներում Եվրոպայի Խորհուրդը կազմակերպեց միջազգային սեմինար «Մարդկանց թրաֆիքինգի դեմ ուղղված համաձայնեցված գործողություններ Հարավարևելյան Եվրոպայում. տարածաշրջանային գործողությունների ծրագիր» թեմայով: Հունաստանի պետական մարմինների առաջարկությամբ սեմինարն անցկացվեց Աթենքում՝ 2000թ. հունիսի 29-ից մինչև հուլիսի 1-ը: Այն կազմակերպվեց Միավորված Ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների հարցերով զեռագույն հանձնակատարի, ԵԱՀԿ/Ժողովրդավարական ինստիտուտների և մարդու իրավունքների գրասենյակի և Միգրացիայի միջազգային կազմակերպության համագործակցությամբ և ճապոնիայի աջակցությամբ:

⁵ «Մարդկանց թրաֆիքինգի դեմ ուղղված համաձայնեցված գործողություններ Հարավային Կովկասում. տարածաշրջանային գործողությունների ծրագիր» թեմայով սեմինարն անցկացվել է Թբիլիսիում 2002թ. նոյեմբերի 6-ին և 7-ին:

⁶ EG-S-NT (2002) 9 Fin.

աջակցել Հարավարևելյան Եվրոպայում քրեական օրենսդրության բարեփոխմանը՝ որպես մարդկանց թրաֆիքինգի կանխարգելման և դրա դեմ պայքարի միջոցի: Եվրոպայի Խորհրդի այս նախագիծը, որն իրականացվել է Կայունության պակտի Մարդկանց թրաֆիքինգի հարցերով նպատակային խմբի շրջանակներում, խնդրո առարկա երկրներին հնարավորություն ընձեռեց համապատասխանեցնելու և վերանայելու այս ոլորտին առնչվող իրենց ներքին օրենսդրությունները: Նախագծի կենսագործման արդյունքում այդ երկրներից գրեթե բոլորն ընդունեցին մարդկանց թրաֆիքինգի դեմ ուղղված գործողությունների համակողմանի ազգային ծրագրեր, որոնք ներառում են թրաֆիքինգի կանխարգելումը, թրաֆիքինգով զբաղվողների քրեական հետապնդումը և թրաֆիքինգի զոհերի պաշտպանությունը:

20. Իրագելության մակարդակի բարձրացմանը նպատակաուղղված գործունեությունը հանգեցրեց մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի իրավական դաշտի ստեղծմանը: Հրապարակվեց Եվրոպայի Խորհրդի երկու իրավական փաստաթուղթ, որոնք հատուկ վերաբերում են սեռական շահագործման նպատակով մարդկանց թրաֆիքինգին, որոնց զոհերի մեծ մասը կանայք և երեխաներ են:

- Նախարարների Կոմիտեի կողմից Եվրոպայի Խորհրդի անդամ պետություններին տրված No. R(2000)11 Հանձնարարականը սեռական շահագործման նպատակով մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին.
- Նախարարների Կոմիտեի կողմից Եվրոպայի Խորհրդի անդամ պետություններին տրված No. Rec(2001)16 Հանձնարարականը սեռական շահագործումից երեխաների պաշտպանության մասին.

21. Դրանք նպաստեցին սահմանումների, ընդհանուր միջոցառումների, մեթոդաբանական շրջանակների, գործողության շրջանակների, կանխարգելման, զոհերին օժանդակության ու պաշտպանության, քրեական միջոցների, դատական համագործակցության և միջազգային համագործակցությանն ու կորրոկցիանացմանն ուղղված միջոցառումների հետ կապված պան-Եվրոպական ռազմավարության ընդունմանը:

22. Ի վերջո, հարկ է ընդգծել, որ «Ժողովրդավարայնացում, կոնֆլիկտների կանխում և խաղաղության հաստատում» թեմային նվիրված՝ Եվրոպայի Խորհրդի Կանանց և տղամարդկանց հավասարության հարցերով 5-րդ նախարարական կոնֆերանսի (Սկոպյե, 22-23 հունվարի, 2003թ.) ժամանակ Եվրոպայի Խորհրդի նախարարները համաձայնության եկան այն հարցի շուրջ, որ կանանց մարդու իրավունքների պաշտպանությանն ու ապահովմանն ուղղված՝ Եվրոպայի Խորհրդի կողմից նախաձեռնված գործունեության կենտրոնական խնդիրներից մեկը պետք է լինի կանանց նկատմամբ բռնության և մարդկանց թրաֆիքինգի կանխարգելումն ու դրանց դեմ պայքարը:

23. Մարդկանց թրաֆիքինգի մեջ կարող են ներգրավված լինել կազմակերպված հանցավոր խմբերը, որոնք հաճախ կոռուպցիան օգտագործում են օրենքը շրջանցելու, իսկ փողերի լվացումը՝ իրենց եկամուտները թաքցնելու համար, սակայն այն կարող է տեղի ունենալ նաև այլ իրավիճակներում: Հետևաբար, Եվրոպայի Խորհրդի այլ իրավական փաստաթղթերը նույնպես առնչություն ունեն թրաֆիքինգի երևույթի հետ, մասնավորապես նրանք, որոնք վերաբերում են մարդու իրավունքների, երեխայի իրավունքների, սոցիալական իրավունքների, զոհերի իրավունքների և անձնական տվյալների պաշտպանությանը, նրանք, որոնք նախատեսված են կոռուպցիայի, փողերի

լվացման և ինտերնետային հանցագործությունների դեմ պայքարելու համար, ինչպես նաև քրեական հարցերով միջազգային համագործակցության վերաբերյալ համաձայնագրերը: Ուստի, Եվրոպայի Խորհրդի ստորև թվարկված կոնվենցիաները կարող են որոշակի դեր խաղալ մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի և թրաֆիքինգի զոհերի պաշտպանության գործում.

- 1950թ. նոյեմբերի 4-ի Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան [Եվրոպական պայմանագրերի ժողովածու No 5];
- 1957թ. դեկտեմբերի 13-ի Հանձնման մասին եվրոպական կոնվենցիան [Եվրոպական պայմանագրերի ժողովածու No 24] և դրան կից արձանագրությունները.
- 1959թ. ապրիլի 20-ի Քրեական հարցերում փոխադարձ օգնության մասին եվրոպական կոնվենցիան [Եվրոպական պայմանագրերի ժողովածու No 30] and և դրան կից արձանագրությունները.
- 1961թ. հոկտեմբերի 18-ի Եվրոպական սոցիալական խարտիան [Եվրոպական պայմանագրերի ժողովածու No 35] և Եվրոպական սոցիալական խարտիայի 1996թ. մայիսի 3-ի վերանայված տարբերակը [Եվրոպական պայմանագրերի ժողովածու No 163].
- 1983թ. նոյեմբերի 24-ի Ծանր հանցագործությունների զոհերին փոխհատուցում վճարելու մասին եվրոպական կոնվենցիան [Եվրոպական պայմանագրերի ժողովածու No 116].
- 1990թ. նոյեմբերի 8-ի Հանցավոր գործունեությունից ստացված եկամուտների լվացման, բացահայտման, առգրավման և բռնագանձման մասին կոնվենցիան [Եվրոպական պայմանագրերի ժողովածու No 141].
- 1996թ. հունվարի 25-ի Երեխաների իրավունքների իրականացման մասին եվրոպական կոնվենցիան [Եվրոպական պայմանագրերի ժողովածու No 160].
- 1999թ. հունվարի 27-ի Կոռուպցիայի համար քրեական պատասխանատվության մասին կոնվենցիան [Եվրոպական պայմանագրերի ժողովածու No 173] և 1999թ. նոյեմբերի 4-ի Կոռուպցիայի համար քաղաքացիական պատասխանատվության մասին կոնվենցիան [Եվրոպական պայմանագրերի ժողովածու No 174].
- 2001թ. նոյեմբերի 23-ի Ինտերնետային հանցագործությունների մասին կոնվենցիան [Եվրոպական պայմանագրերի ժողովածու No 185]:

Եվրոպայի Խորհրդի Խորհրդարանական Ասամբլեան

24. Կանանց թրաֆիքինգի դեմ պայքարի արշավ կազմակերպելու մասին 1545 (2002) Հանձնարարականում Եվրոպայի Խորհրդի Խորհրդարանական Ասամբլեան առաջարկում էր, որ Նախարարների կոմիտեն, ի թիվս այլ բաների, մշակեր կանանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասին եվրոպական կոնվենցիա, որը բաց կլիներ Եվրոպայի Խորհրդի անդամ չհանդիսացող պետությունների կողմից ստորագրվելու համար և հիմնված կլիներ *Սեռական շահագործման նպատակով մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին No. R (2000)11 Հանձնարարականում* պարունակվող թրաֆիքինգի սահմանման վրա:

25. Ասամբլեան այդ հարցին կրկին անդրադարձավ 2003 թվականին՝ *Կանանց թրաֆիքինգի և մարմնավաճառության հետ կապված միգրացիայի մասին 1610 (2003) Հանձնարարականով*: Դրանով առաջարկվում էր, որ Նախարարների կոմիտեն.

“i. հնարավորինս շուտ սկսի մարդկանց թրաֆիքինգի մասին Եվրոպայի Խորհրդի կոնվենցիայի մշակումը, որը հավելյալ արժեք կհաղորդի այլ միջազգային փաստաթղթերին՝ մարդու իրավունքների և զոհերի պաշտպանության իր հստակ կողմնորոշվածությամբ և գեներային տեսանկյան ընդգրկմամբ.

ii. ապահովի, որ մարդկանց թրաֆիքինգի մասին Եվրոպայի Խորհրդի կոնվենցիան ներառի դրույթներ, որոնք նպատակաուղղված կլինեն.

ա. Եվրոպայի Խորհրդի անդամ պետությունների քրեական օրենսդրություններում թրաֆիքինգի հանցագործության ընդգրկմանը,

բ. թրաֆիքինգի նկատմամբ կիրառելի պատժամիջոցների համապատասխանեցմանը,

գ. թրաֆիքինգով զբաղվողների կամ թրաֆիքինգում ներգրավված լինելու մեջ կասկածվող անձանց նկատմամբ իրավագործության արդյունավետ հաստատմանը՝ մասնավորապես թրաֆիքինգին վերաբերող բոլոր գործերում հանձնումը և *aut dedere aut judicare* (հանձնում կամ հետապնդում) սկզբունքի կիրառումը խթանելու միջոցով»:

26. *Եվրոպայում մարդու օրգանների առևտրի մասին 1611 (2003)*

Հանձնարարականում Խորհրդարանական Ասամբլեան առաջարկում էր համապատասխան կազմակերպությունների հետ համագործակցությամբ մշակել մարդու օրգանների առևտրի դեմ պայքարի եվրոպական ռազմավարություն, իսկ Եվրոպայի Խորհրդի *Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին* ապագա կոնվենցիան մշակելիս ընդգրկել դրան կից՝ *Մարդկային օրգանների ու հյուսվածքների առևտրի մասին արձանագրություն*.

27. Խորհրդարանական Ասամբլեայի *Տնային ստրկություն. ստրկական կախյալ վիճակ, դայակներ և փոստով պատվիրված հարսնացուներ 1663 (2004)* Հանձնարարականով առաջարկվում էր մշակել տնային ստրկության բոլոր ձևերի դեմ պայքարի անհրաժեշտ միջոցներ: Ի լրումն դրա, Խորհրդարանական Ասամբլեան գտնում էր, որ Եվրոպայի Խորհուրդը պետք է բացարձակ անհանդուրժողականություն ցուցաբերի ստրկության նկատմամբ, և հանդիսանալով մարդու իրավունքները պաշտպանող միջազգային կազմակերպություն, այն պետք է պայքարի ստրկության և մարդկանց թրաֆիքինգի բոլոր ձևերի դեմ: Ասամբլեան ընդգծում էր, որ Եվրոպայի Խորհուրդը և նրա անդամ պետությունները պետք է խթանեն ու պաշտպանեն զոհի մարդու իրավունքները և ապահովեն, որ նման հանցանք գործողները կանգնեն արդարադատության առջև, որպեսզի ստրկությունը վերջնականապես վերանա Եվրոպայում: Ի վերջո, Խորհրդարանական Ասամբլեան արտահայտում էր իր աջակցությունը *Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին Եվրոպայի Խորհրդի կոնվենցիայի* մշակմանը:

գ. Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին Եվրոպայի Խորհրդի կոնվենցիան

28. Վերոհիշյալ բազմաբնույթ գործունեությունների հետ մեկտեղ, ինչպես նաև հետևելով Նախարարների կոմիտեի *No. R (2000) 11 Հանձնարարականին*, Կանանց և տղամարդկանց հավասարության հարցերով ղեկավար կոմիտեն քայլեր նախաձեռնեց այս բնագավառում Եվրոպայի Խորհրդի կողմից կատարվող աշխատանքին նոր խթան հաղորդելու ուղղությամբ և պատրաստեց Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին կոնվենցիայի մշակման իրագործելիության վերաբերյալ ուսումնասիրություն:

29. Եվրոպայի Խորհուրդը գտնում էր, որ անհրաժեշտ է մշակել առաջարկություններից կամ կոնկրետ գործողություններից ավելի հեռուն գնացող իրավաբանորեն պարտադիր փաստաթուղթ: Եվրոպայում բարձրացել է թրաֆիքինգի երևույթի հանրային ընկալումը և դրա դեմ արդյունավետ պայքարի միջոցներ մշակելու կարևորության գիտակցությունը՝ այդպիսով անհրաժեշտ դարձնելով զոհերի մարդու իրավունքների պաշտպանությանը և մարդու իրավունքները հարգելուն ուղղված, ինչպես նաև մարդու իրավունքներին և քրեական հետապնդմանը վերաբերող հարցերի միջև պատշաճ հավասարակշռություն ապահովելու նպատակ հետապնդող իրավաբանորեն պարտադիր փաստաթղթի մշակումը:

30. Չնայած այս բնագավառին վերաբերող այլ միջազգային փաստաթղթերի գոյությանը, Կոնվենցիան շահում է Եվրոպայի Խորհրդի ավելի սահմանափակ ու միասնական համատեքստից, պարունակում է առավել ճշգրիտ դրույթներ և կարող է դուրս գալ այլ միջազգային փաստաթղթերով համաձայնեցված նվազագույն ստանդարտների շրջանակներից: Միջազգային իրավունքի զարգացումը վկայում է այն մասին, որ տարածաշրջանային փաստաթղթերը հաճախ անհրաժեշտ են լինում միջազգային նախաձեռնությունները լրացնելու համար: Երեխաների իրավունքների պաշտպանության⁷, փողերի լվացման կամ թմրադեղերի առևտրի⁸ բնագավառներին վերաբերող եվրոպական փաստաթղթերը խիստ դրական ներգործություն են ունեցել միջազգային նախաձեռնությունների իրականացման վրա: Եվրոպայի Խորհրդի կոնվենցիայի մշակումը նպատակ է հետապնդում ոչ թե մրցակցել միջազգային կամ տարածաշրջանային մակարդակում ընդունված այլ փաստաթղթերի հետ, այլ բարելավել դրանցով նախատեսված պաշտպանության մեխանիզմը և զարգացնել դրանցում պարունակվող ստանդարտները, մասնավորապես նրանք, որոնք առնչվում են թրաֆիքինգի զոհերի մարդու իրավունքների պաշտպանությանը:

31. 2003թ. փետրվարի 14-ին ժնկում կայացած եռակողմ հանդիպման ժամանակ Եվրոպայի Խորհրդի, Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) և Միավորված Ազգերի Կազմակերպության բարձրաստիճան ներկայացուցիչներն արտահայտեցին [իրենց](#) հավանությունը մարդկանց թրաֆիքինգի մասին Եվրոպայի Խորհրդի կոնվենցիայի մշակման վերաբերյալ, որը կբարելավեր զոհերի պաշտպանության մեխանիզմը և կընդուներ հանցավոր գործունեության այս չափազանց լուրջ տեսակի դեմ պայքարի պան-եվրոպական մոտեցում, ինչպես նաև աջակցեցին թրաֆիքինգի դեմ պայքարին ուղղված ազգային օրենսդրությունների մշակման գաղափարին:

32. Եվրոպայի Խորհրդի կողմից իրականացվող պայքարն ուժեղացնելու անհրաժեշտությունն ընդգծվեց Արտաքին գործերի նախարարների կողմից՝ Նախարարների կոմիտեի 112-րդ (14-15 մայիսի, 2003թ.), 113-րդ (5-6 նոյեմբերի, 2003թ.) և 114-րդ (12-13 մայիսի, 2004թ.) նստաշրջանների ժամանակ: Ուստի, Եվրոպայի Խորհուրդը ձեռնամուխ եղավ Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին կոնվենցիայի մշակմանը: Կոնվենցիան պետք է նպատակաուղղված լիներ թրաֆիքինգի զոհերի իրավունքների պաշտպանությանը և մարդու իրավունքները հարգելուն, ինչպես նաև մարդու իրավունքներին և քրեական հետապնդմանը վերաբերող հարցերի միջև պատշաճ հավասարակշռություն ապահովելուն:

⁷ 1996թ. հունվարի 25-ի Երեխայի իրավունքների իրականացման մասին Եվրոպական կոնվենցիան [Եվրոպական պայմանագրերի ժողովածու No.160] (կապված 1989թ. Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի հետ):

⁸ 1996թ. հունվարի 25-ի Երեխայի իրավունքների իրականացման մասին Եվրոպական կոնվենցիան [Եվրոպական պայմանագրերի ժողովածու No. 160] (կապված 1989թ. Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի հետ):

33. Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին Եվրոպայի Խորհրդի կոնվենցիայի մշակման վերաբերյալ առաջարկությունը Նախարարների կոմիտեի կողմից հավանության արժանացավ 2003թ. ապրիլի 30-ին կայացած Նախարարների տեղակալների 838-րդ նիստի ժամանակ, երբ ընդունվում էին Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների հարցերով Հատուկ կոմիտեի ստեղծման իրավասությունների շրջանակները: Այս բազմապրոֆիլ կոմիտեի առաջադրանքն էր մշակել մի կոնվենցիա, որի կենտրոնում կգտնվեր թրաֆիքինգի զոհերի մարդու իրավունքների պաշտպանությունը և այդ խնդրի հետ համակշռված՝ թրաֆիքինգով զբաղվողների քրեական հետապնդումը:

34. 2003թ. սեպտեմբերին Եվրոպայի Խորհուրդը սկսեց բանակցությունները Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին կոնվենցիայի շուրջ: Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների հարցերով Հատուկ կոմիտեն ութ նիստ անցկացրեց 2003թ. սեպտեմբեր և դեկտեմբեր ամիսներին, 2004թ. փետրվար, մայիս, հունիս, հուլիս, սեպտեմբեր, հոկտեմբեր, դեկտեմբեր ամիսներին և 2005թ. փետրվարին՝ Կոնվենցիայի տեքստը վերջնական տեսքի բերելու համար:

35. Կոնվենցիայի նախագծի տեքստը Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների հարցերով Հատուկ կոմիտեի կողմից հաստատվեց իր 2004թ. դեկտեմբերին կայացած նիստի ժամանակ և փոխանցվեց Նախարարների կոմիտեին՝ Խորհրդարանական Ասամբլեայի քննարկմանը ներկայացնելու համար: 2005թ. հունվարին Խորհրդարանական Ասամբլեան տվեց Կոնվենցիայի նախագծի վերաբերյալ իր կարծիքը (Կարծիք No. 253 (2005), 26 հունվարի 2005թ.), որը Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների հարցերով Հատուկ կոմիտեի կողմից քննարկվեց 2005թ. փետրվարին կայացած իր 8-րդ և վերջնական նիստի ժամանակ:

36. Եվրոպայի Խորհրդի Կոնվենցիայի հավելյալ արժեքը առաջին հերթին կայանում է նրանում, որ մարդկանց թրաֆիքինգը սահմանվում է որպես մարդու իրավունքների խախտում և անձի արժանապատվության ու անձեռնմխելիության դեմ ոտնձգություն, հետևաբար ճանաչվում է թրաֆիքինգի զոհերի համար ավելի մեծ պաշտպանության անհրաժեշտությունը: Երկրորդը, Կոնվենցիայի շրջանակներում ընդգրկվում են թրաֆիքինգի բոլոր (ազգային, անդրազգային, կազմակերպված հանցավորության հետ կապված կամ չկապված և շահագործման նպատակով իրականացվող) ձևերը՝ հատկապես զոհերի պաշտպանության միջոցների ապահովման և միջազգային համագործակցության նկատառումներով: Երրորդը, Կողմերի կողմից Կոնվենցիայի դրույթների արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով Կոնվենցիայով նախատեսվում է մոնիտորինգի մեխանիզմի ստեղծում:

37. Կոնվենցիան կազմված է Նախաբանից և տաս Գլուխներից: Գլուխը I-ը ներկայացնում է Կոնվենցիայի նպատակն ու գործողության ոլորտը, խտրականության բացառման սկզբունքը և սահմանումները: Գլուխը II-ը վերաբերում է թրաֆիքինգի կանխարգելմանը, համագործակցությանը և այլ միջոցներին: Գլուխը III-ը նախատեսում է զոհերի իրավունքների պաշտպանությանն ու ապահովմանն ուղղված այլ միջոցներ՝ երաշխավորելով զենդերային հավասարությունը: Գլուխ IV-ը վերաբերում է քրեական իրավունքին, Գլուխ V-ը՝ քննությանը, քրեական հետապնդմանը և դատավարական իրավունքին, Գլուխ VI-ը՝ միջազգային համագործակցությանը և համագործակցությանը քաղաքացիական հասարակության հետ: Գլուխ VII-ով նախատեսվում է մոնիտորինգի մեխանիզմի ստեղծում, և վերջապես Գլուխներ VIII-ը, IX-ը և X-ը

վերաբերում են Կոնվենցիայի և այլ միջազգային փաստաթղթերի միջև եղած կապին, Կոնվենցիայի տեքստում փոփոխությունների կատարմանը և եզրափակիչ դրույթներին:

II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍԵՎՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վերնագիրը

38. Վերնագիրը պարունակում է Եվրոպայի Խորհրդի բոլոր նոր համաձայնագրերի համար սահմանված նոր պաշտոնական անվանումը: Գլխավոր Քարտուղարի որոշման հիման վրա, ցանկացած նոր համաձայնագրի պաշտոնական անվանումը պետք է լինի.

« ... մասին Եվրոպայի Խորհրդի Կոնվենցիա [կամ համաձայնագիր]»: Ուստի, Կոնվենցիայի համար ընդունված է այս նոր վերնագիրը:

39. Բացի դրանից, Կոնվենցիայի վերնագրում ընդգրկված է «պայքարի միջոցներ» տերմինը՝ ընդգծելու համար, որ Կոնվենցիան նախատեսում է ոչ միայն օրենսդրական միջոցներ, այլև նաև մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի այլ միջոցառումների ձեռնարկում: «Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցներ» հասկացությունը պետք է ըմբռնվի որպես թրաֆիքինգի կանխարգելում, թրաֆիքինգի զոհերին օգնության ցուցաբերում և թրաֆիքինգի դեմ պայքարի համար նախատեսված քրեական իրավունքի միջոցներ ընդգրկող հասկացություն:

Նախաբանը

40. Նախաբանը վերահաստատում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին Կոնվենցիայի ստորագրյալ պետությունների պարտավորությունը: Ավելին, այն ընդգծում է, որ Կոնվենցիան բաց է ստորագրման համար նաև Եվրոպայի Խորհրդի անդամ չհանդիսացող պետությունների կողմից:

41. Կոնվենցիան հիմնված է Նախարարների Կոմիտեի կողմից Եվրոպայի Խորհրդի անդամ պետություններին տրված՝ *Սեռական շահագործման նպատակով մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին No. R(2000)11 Հանձնարարականի* 5-րդ կետում ներկայացված Նախաբանում արդեն պարունակվող այն ճանաչման վրա, որ մարդկանց թրաֆիքինգը հանդիսանում է մարդու իրավունքների խախտում և անձի արժանապատվության ու անձեռնմխելիության դեմ ոտնձգություն: Թրաֆիքինգի ճանաչումը որպես մարդու իրավունքների խախտում կներգործեր որոշ օրենսդրությունների վրա, որոնցով նախատեսվում էին պաշտպանության հատուկ միջոցներ՝ հիմնարար իրավունքների խախտման դեպքում:

42. Մարդկանց թրաֆիքինգի ճանաչումը որպես մարդու իրավունքների խախտում ուղղակիորեն կամ անուղղակիորեն արտացոլվում է զգալի թվով միջազգային իրավական փաստաթղթերում և միջազգային հռչակագրերում: Նախարարների Կոմիտեի կողմից Եվրոպայի Խորհրդի անդամ պետություններին տրված *Բռնությունից կանանց պաշտպանության մասին Rec(2002)5 Հանձնարարականում* «կանանց նկատմամբ բռնություն» հասկացության սահմանման մեջ ընդգրկվում է նաև թրաֆիքինգը և նշվում է, որ կանանց նկատմամբ բռնությունը ինչպես ոտնահարում, այնպես էլ թուլացնում կամ անհնարին է դարձնում նրանց մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների իրականացումը: *Կանանց նկատմամբ բռնության կանխարգելման, պատժման և վերացման մասին միջաամերիկյան կոնվենցիայի* Նախաբանում հաստատվում է, որ կանանց նկատմամբ բռնությունը հանդիսանում

է նրանց մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խախտում: Սույն Կոնվենցիայի 3-րդ հոդված 2-ում պարունակվող կանանց նկատմամբ բռնության սահմանման մեջ թրաֆիքինգն ընդգրկվում է որպես կանանց նկատմամբ բռնության մի ձև: Եվրամիության Խորհրդի 2002 թ. հունիսի 19-ի Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասին շրջանակային որոշման մեջ նշվում է, որ «մարդկանց թրաֆիքինգը հանդիսանում է մարդու իրավունքների և մարդկային արժանապատվության կոպիտ խախտում...» (կետ 3): Միավորված Ազգերի Կազմակերպության պայմանագրերի կատարման նկատմամբ մոնիտորինգ իրականացնող մարմինները, այդ թվում՝ Մարդու իրավունքների հանձնաժողովը և Կանանց նկատմամբ խտրականության վերացման հարցերով հանձնաժողովը, նույնպես մարդկանց թրաֆիքինգը ճանաչել են որպես մարդու իրավունքների խախտում:⁹

43. Ավելին, Քրեական գործերով միջազգային դատարանի *Չոունեական կանոնադրության* 3-րդ հոդված 7-ում նշվում է. «Սույն Կանոնադրության նպատակներով «մարդկության դեմ հանցագործություն» նշանակում է հետևյալ գործողություններից ցանկացածը, երբ դրանք գիտակցաբար իրականացվում են որպես որևէ քաղաքացիական բնակչության դեմ ուղղված լայնատարած կամ կանոնավոր ոտնձգություն. [...] (գ) Ստրկացում. [...] որը «նշանակում է որևէ անձի նկատմամբ ունեցած սեփականության իրավունքի հետ կապված բոլոր իրավասությունների իրականացումը և ներառում է այդ իրավասությունների իրականացումը անձանց, մասնավորապես կանանց և երեխաների թրաֆիքինգի ընթացքում»»:

44. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի հորիզոնական կիրառումը շատ տարիներ բանավեճի առարկա է հանդիսացել: Այնուամենայնիվ, Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի Նախադեպի իրավունքը պարունակում է հստակ նշում հոգուտ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին կոնվենցիայի կիրառելիությանը անհատ անձանց միջև հարաբերությունների նկատմամբ՝ այն իմաստով, որ Դատարանը ճանաչել է Պայմանավորվող պետությունների պատասխանատվությունը անհատ անձանց կամ անձանց խմբերի կողմից կատարված գործողությունների համար, եթե այդ Պետությունների կողմից պաշտպանության պատշաճ միջոցներ չեն ձեռնարկվել: Այդ հարցին վերաբերող առաջին որոշումը կայացվել է «*X and Y v. The Netherlands*»¹⁰ գործով, որի առնչությամբ Դատարանը եզրակացրել է, որ պետությունն ունի անհատների արդյունավետ պաշտպանությունն ապահովելու նպատակով քրեական իրավունքի դրույթներ ընդունելու պարտավորություն: Հետևաբար, պետության կողմից այդ պահանջին համապատասխան չգործելը կարող է առաջ բերել Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին կոնվենցիայի խախտում: «*Young, James and Webster v. The United Kingdom*»¹¹ գործում Դատարանը նշել է, որ «Կոնվենցիայի 3-րդ հոդված 1-ի (հոդ. 1) համաձայն, յուրաքանչյուր Պայմանավորվող պետություն «պետք է [իր] ընդդատության տակ գտնվող յուրաքանչյուր անձի համար ապահովի Կոնվենցիայում սահմանված իրավունքներն ու ազատությունները». հետևաբար, եթե այդ իրավունքներից կամ

⁹ *Տես*, ի թիվս այլ բաների, ՄԱԿ-ի փաստաթղթերը, CCR/CO/79/LVA, 06/11/2003թ. և A/53/38/rev.1. *Տես նաև* ԵԱԳՎ Մշտական խորհրդի 2003թ. հունիսի 24-ի No 557 «Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի գործողությունների ծրագիր» որոշումը., և 2003թ. մարտի 19-20-ի Մոնթեպասիոյան և մարդկանց թրաֆիքինգի մասին Բուդապեշտի հռչակագիրը: *Տես նաև* Տարածաշրջանային համագործակցության հարավասիական միության (SAARC) Մարմնավաճառության համար կանանց և երեխաների թրաֆիքինգի կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին կոնվենցիայի Նախաբանի երկրորդ կետը:

¹⁰ Մարդու իրավունքների եվրոպական դատարան. «*X and Y v. The Netherlands*» գործով որոշումը, 26 մարտի, 1985թ., Սերիա Ա, no. 91, կետ 23:

¹¹ Մարդու իրավունքների եվրոպական դատարան. «*Young James and Websters v. The United Kingdom*» գործով որոշումը, 13 օգոստոսի, 1981թ., Սերիա Ա, no. 44, կետ 49:

ազատություններից որևէ մեկի խախտումը տեղի է ունենում ազգային օրենսդրությունն ընդունելիս վերոհիշյալ պարտավորության չկատարման արդյունքում, ապա Պետությունը պատասխանատվություն է կրում այդ խախտման համար: Չնայած գործին սկիզբ դնող իրադարձությունների անմիջական պատճառը «Բրիթիշ Ռեյլ»-ի (Բրիտանական երկաթուղային ցանցերի վարչության) և երկաթուղային արհմիությունների միջև 1975թ. կնքված պայմանագիրն էր, սակայն տվյալ ժամանակ ուժի մեջ գտնվող օրենսդրությունն էր օրինական դարձնում այն վերաբերմունքը, որի դեմ դիմողները բողոք էին ներկայացրել: Ուստի, այս հիմքով պատասխանող Պետությունը պատասխանատվություն է կրում դրա արդյունքում առաջացած Կոնվենցիայի ցանկացած խախտման համար [...]: Այդ ժամանակից ի վեր¹² ճանաչվել է Պայմանավորվող պետությունների պատասխանատվությունը անհատ անձանց կամ անձանց խմբերի այն գործողությունների համար, որոնք կատարվել են ի խախտումն Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի:

45. Մարդկանց թրաֆիքինգը դարձել է Եվրոպայի խոշոր աղետներից մեկը: Տղամարդկանց, կանանց և երեխաներին վնաս պատճառող այս երևույթը հասել է այնպիսի աննախադեպ մակարդակի, որ կարող է դիտվել որպես ստրկության մի նոր ձև: Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 3-րդ և 4-րդ արգելում է ստրկությունն ու հարկադիր աշխատանքը. «1. Ոչ ոք չպետք է պահվի ստրկության կամ ստրկական կախման մեջ. 2. Ոչ մեկից չպետք է պահանջվի հարկադիր աշխատանք կատարել [...]»: Սույն Կոնվենցիայի 3-րդ և 4-րդ արգելումն «մարդկանց թրաֆիքինգի» սահմանումը վերաբերում է հատկապես «ստրկությանը» (ստորև տե՛ս 3-րդ և 4-րդ արգելիչ մեկնաբանությունները):

46. Սույն Կոնվենցիայի հիմնական հավելյալ արժեքը մյուս միջազգային փաստաթղթերի համեմատությամբ կայանում է նրանում, որ այն միտված է դեպի մարդու իրավունքների ապահովումը և որպես իր կենտրոնական խնդիր սահմանել է զոհերի իրավունքների պաշտպանությունը: Ուստի, Նախաբանի 5-րդ պարբերությունում նշվում է, որ զոհերի իրավունքների հարգումը, նրանց պաշտպանությունը և մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարը պետք է լինեն առաջնակարգ նպատակներ:

47. Ինչ վերաբերում է խտրականության բացառման սկզբունքին, հարկ է հիշել Եվրոպայի խորհրդի խորհրդարանական Ասամբլեայի *Կանանց թրաֆիքինգի դեմ պայքարի արշավ կազմակերպելու մասին 1545 (2002) Հանձնարարականը*, որը կոչ է անում ապագա Կոնվենցիայում ընդգրկել խտրականության բացառման մասին դրույթ՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիային կից թիվ 12 Արձանագրության վերաբերյալ խորհրդարանական Ասամբլեայի Կարծիք 216 (2000)-ում պարունակվող դրույթի հիման վրա (ստորև տե՛ս 3-ի վերաբերյալ մեկնաբանությունները):

48. Կոնվենցիայի Նախաբանը վկայակոչում է նաև Նախարարների Կոմիտեի 112-րդ, 113-րդ և 114-րդ նստաշրջաններում անդամ պետությունների Արտաքին գործերի նախարարների կողմից կատարված հայտարարությունները:

¹² *Տե՛ս, ի թիվս այլ բաների, հետևյալ որոշումները*. Մարդու իրավունքների եվրոպական դատարան. «*A v. The United Kingdom*» գործով որոշումը, 23 սեպտեմբերի, 1998թ., 4ճիռների և որոշումների մասին հաշվետվություններ 1998-VI, կետ 22; Մարդու իրավունքների եվրոպական դատարան. «*Z and others v. The United Kingdom*» գործով որոշումը, 10 մայիսի, 2001թ., 4ճիռների և որոշումների մասին հաշվետվություններ 2001-V, կետ 73; Մարդու իրավունքների եվրոպական դատարան. «*M.C. v. Bulgaria*» գործով որոշումը, 4 դեկտեմբերի, 2003թ.; Դիմում no. 39272/98:

49. Նախաբանումն թվարկվում են ամենակարևոր միջազգային իրավական փաստաթղթերը, որոնք Եվրոպայի խորհրդի, Եվրամիության և Միավորված Ազգերի Կազմակերպության շրջանակներում ուղղակիորեն գործ ունեն մարդկանց թրաֆիքինգի երևույթի հետ: Մասնավորապես անհրաժեշտ է ընդգծել, որ Եվրոպայի խորհուրդը, ինչպես արդեն նշվել է, իր Նախարարների խորհրդի և խորհրդարանական Ասամբլեայի միջոցով մշակել է տարբեր տեսանկյուններից մարդկանց թրաֆիքինգի ուսումնասիրությանն ու դրա դեմ պայքարին վերաբերող զգալի թվով փաստաթղթեր: Այն կարևոր տեղը, որ սույն Կոնվենցիան հատկացնում է *Միավորված Ազգերի Կազմակերպության Կոնվենցիային կից Մարդկանց, հատկապես կանանց ու երեխաների թրաֆիքինգի կանխարգելման, կանխման և դրա համար պատժի մասին Արձանագրությանը*, արտացոլվում է այդ Արձանագրությամբ համաձայնեցված՝ մարդկանց թրաֆիքինգի սահմանման ընդունման մեջ: Լրացնելով և զարգացնելով Միավորված Ազգերի Կազմակերպության այս Արձանագրությունը, որտեղ ընդգծվում է թրաֆիքինգի գործընթացում հանցագործության կանխարգելման տեսանկյունը, Եվրոպայի խորհրդի Կոնվենցիան թրաֆիքինգը հստակ սահմանում է առաջին հերթին որպես մարդու իրավունքների խախտման խնդիր և ընդգծում է թրաֆիքինգի մեջ զոհերի պաշտպանության տեսանկյունը: Նպատակը Արձանագրությամբ նախատեսված պաշտպանության մեխանիզմի բարելավումն է և դրանում ամրագրված չափանիշների զարգացումը:

50. Սույն Կոնվենցիայի շուրջ բանակցությունների անցկացման ընթացքում, ինչպես արդեն նշվել է, հաշվի են առնվել նաև այս ոլորտին առնչվող մյուս միջազգային իրավական փաստաթղթերը:

51. Որպես ամփոփում կարելի է ասել, որ Եվրոպայի խորհրդի այս նոր փաստաթղթի հավելյալ արժեքը՝ համեմատած գոյություն ունեցող մյուս միջազգային իրավական փաստաթղթերի հետ, կայանում է հետևյալում.

- մարդկանց թրաֆիքինգի ճանաչումը որպես մարդու իրավունքների խախտում.
- զոհերին օգնության ցուցաբերման և նրանց մարդու իրավունքների պաշտպանության կարևորումը.
- կիրառման համակողմանի շրջանակները.
 - ներառում է թրաֆիքինգի բոլոր ձևերը. ազգային, անդրազգային, կազմակերպված հանցավորության հետ կապված կամ չկապված.
 - ներառում է թրաֆիքինգի ենթարկված բոլոր անձանց. Կոնվենցիան կիրառվում է թրաֆիքինգից տուժած բոլոր անձանց նկատմամբ, լինեն նրանք կանայք, երեխաներ, թե տղամարդիկ.
- զոհերի և վկաների պաշտպանության համապարփակ իրավական դաշտի ստեղծումը՝ հատուկ և պարտադիր միջոցների հետագա ընդունմամբ.
- արդյունավետ և անկախ մոնիտորինգի մեխանիզմի ստեղծումը: Փորձը ցույց է տվել, որ անդամ Պետությունները բարձր վստահությամբ են վերաբերվում այն ոլորտներին, որտեղ գործում են մոնիտորինգի նման անկախ համակարգեր (օրինակ՝ խոշտանգումների դեմ պայքարի և փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության ոլորտները), և նման մեխանիզմների համագործակցային բնույթը լիովին ըմբռնվում ու ճանաչվում է.
- Եվրոպայի խորհրդի Կոնվենցիան շահում է Եվրոպայի խորհրդի ավելի սահմանափակ ու միասնական համատեքստից, պարունակում է առավել ճշգրիտ դրույթներ և կարող է դուրս գալ այլ միջազգային փաստաթղթերով համաձայնեցված նվազագույն ստանդարտների շրջանակներից:

Գլուխ I. Նպատակները, գործողության ոլորտը, խտրականության բացառման սկզբունքը և սահմանումները

Հոդված 1 – Կոնվենցիայի նպատակները

52. Հոդված 1-ում շարադրվում են Կոնվենցիայի նպատակները: Կետ 1-ով այդ նպատակները սահմանվում են հետևյալ ձևով.

ա) կանխարգելել ու պայքարել մարդկանց թրաֆիքինգի դեմ՝ երաշխավորելով գենդերային հավասարությունը,

բ) պաշտպանել թրաֆիքինգի զոհերի մարդու իրավունքները, մշակել զոհերի ու վկաների պաշտպանության և օգնության համապարփակ մեխանիզմ՝ երաշխավորելով գենդերային հավասարությունը, ինչպես նաև ապահովել արդյունավետ քննություն և քրեական հետապնդում,

գ) նպաստել մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի բնագավառում միջազգային համագործակցության զարգացմանը:

53. Կետ 1(ա)-ում սահմանվում է ինչպես մարդկանց թրաֆիքինգի կանխարգելման, այնպես էլ դրա դեմ պայքարի միջոցների անհրաժեշտությունը: Միաժամանակ պետք է չնոռանալ զոհերի հատուկ կարիքները, լինեն նրանք կանայք, երեխաներ, թե տղամարդիկ: Կիրառվելով կանանց, երեխաների և տղամարդկանց նկատմամբ, Կոնվենցիան միաժամանակ ճանաչում է, որ թրաֆիքինգի կանխարգելման և դրա դեմ պայքարի միջոցները պետք է նաև երաշխավորեն գենդերային հավասարություն և ունենան երեխաների իրավունքների պաշտպանության կողմնորոշում:

54. «Գենդերային հավասարություն» նշանակում է երկու սեռերի հավասար հնարավորություններ, իրավասություններ և հավասար մասնակցություն հասարակական ու մասնավոր կյանքի բոլոր ոլորտներում: Գենդերային հավասարության հակամիջը գենդերային անհավասարությունն է, այլ ոչ թե գենդերային տարբերությունը: Դա նշանակում է կանանց ու տղամարդկանց կոմպլեմենտարության և հասարակության մեջ նրանց ունեցած տարբեր դերերի հավասար ընդունում ու գնահատում: Կանանց և տղամարդկանց հավասարությունը ենթադրում է ոչ միայն գենդերային հիմքով նրանց նկատմամբ խտրականության բացառում, այլ նաև կանանց և տղամարդկանց միջև հավասարության ապահովմանն ուղղված դրական միջոցառումների ձեռնարկում: Հավասարությունը պետք է խթանվի կանանց կողմնորոշված հատուկ քաղաքականություններին աջակցելու միջոցով, որոնք առավել հավանականություն ունեն ենթարկվելու որպես «խոշտանգում» կամ «անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք» որակվող պրակտիկաներին (ֆիզիկական բռնություն, բռնաբարություն, սեռական օրգանների հեռացում կամ սեռական խոշտանգում, սեռական շահագործման նպատակով թրաֆիքինգ): Կանանց մարդու իրավունքների մասն խախտումները դեռևս լայնորեն տարածված են, իսկ Եվրոպայի որոշ շրջաններում կտրուկ աճել են: Հարկ է նշել, որ Նախարարների Կոմիտեի կողմից Եվրոպայի Խորհրդի անդամ պետություններին տրված՝ *Բռնությունից կանանց պաշտպանության մասին Rec(2002)5 Հանձնարարականում* մարդկանց թրաֆիքինգը համարվում է որպես կանանց նկատմամբ բռնության մի ձև: Նախարարների կոմիտեի՝ Կանանց և տղամարդկանց հավասարության մասին հռչակագիրը (16 նոյեմբերի, 1988թ.) շրջադարձային կետ հանդիսացավ: Այն հաստատեց, որ սեռերի հավասարությունը մարդու իրավունքների անքակտելի մաս է կազմում, և որ սեռային հիմքով

խտրականությունը խոչընդոտում է հիմնարար ազատությունների իրականացմանը:

55. Այստեղ հարկ է նշել, որ գենդերային հավասարության հասկացությունը չպետք է նույնականացվի խտրականության բացառման սկզբունքի հետ (ինչպես սահմանված է Հոդված 3-ում), և որ Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների հարցերով Հատուկ կոմիտեի իրավասության շրջանակները սահմանող փաստաթղթում պահանջվում էր հաշվի առնել գենդերային հավասարությունը: Մյուս կարևոր հարցն այն է, որ գենդերային հավասարությունը կազմում է մարդու իրավունքների անբաժանելի մասը, և սեռական հիմքով խտրականությունը խոչընդոտում է հիմնարար ազատությունների իրականացմանը:

56. 1(բ) ենթակետում արտացոլվում է բազմապրոֆիլայնության անհրաժեշտությունը մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի արդյունավետության ապահովման համար: Բազմապրոֆիլայնությունն ընկած է Կոնվենցիայի հիմքում, սակայն այն պետք է ընկած լինի նաև մարդկանց թրաֆիքինգին ուղղված պայքարի ցանկացած ազգային միջոցի հիմքում:

57. Այս Կոնվենցիայի Հոդված 1-ում շարադրված հիմնական նպատակներից երկուսը հանդիսանում են թրաֆիքինգի ենթարկված անձանց իրավունքների պաշտպանությունը և թրաֆիքինգի համար պատասխանատու անձանց քրեական հետապնդումը: Կոնվենցիայի մշակողները ճանաչել են այս երկու նպատակների առնչությունը միմյանց հետ:

58. 1(գ) ենթակետը վերաբերում է միջազգային համագործակցությանը. միայն ուժերի համախմբման միջոցով երկրները կարող են հաղթահարել թրաֆիքինգի երևույթը. ինքնուրույն գործելու դեպքում նրանք հաջողության չեն հասնում: Կոնվենցիայում հիշատակված միջազգային համագործակցությունը չի սահմանափակվում միայն քրեական բնույթի հարցերով (մի բնագավառ, որի առնչությամբ Եվրոպայի Խորհուրդն արդեն մի շարք փաստաթղթեր է ընդունել – տե՛ս Գլուխ VI-ի վերաբերյալ մեկնաբանությունները), այլ ընդգրկում է նաև թրաֆիքինգի կանխարգելման ու զոհերի օգնության ու պաշտպանության ոլորտները և նպատակ է հետապնդում այդ երևույթները դարձնել այն երկրների հիմնական մտահոգության առարկան, որոնք հանդիսանում են թրաֆիքինգի ծագման, տարանցիկ և նպատակային երկրներ:

59. Հոդված 1(2)-ում նշվում է, որ Կոնվենցիայի կողմ հանդիսացող պետությունների կողմից Կոնվենցիայի դրույթների արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով նախատեսվում է ստեղծել մոնիտորինգի հատուկ մեխանիզմ՝ «Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի հարցերով փորձագետների խումբ («ՄԹՊՓԽ»): Սա Կոնվենցիայի արժեքավորության էական գործոններից մեկն է: ՄԹՊՓԽ-ն հանդիսանում է Կոնվենցիայի կողմ հանդիսացող պետությունների կողմից Կոնվենցիայի պահանջների կատարումն ապահովող միջոց և Կոնվենցիայի երկարաժամկետ արդյունավետության երաշխիք (տե՛ս Գլուխ VII-ի վերաբերյալ մեկնաբանությունները):

Հոդված 2 – Գործողության ոլորտը

60. Այս Հոդվածը սահմանում է Կոնվենցիայի գործողության ոլորտը: Նախ և առաջ, այն նշում է, որ Կոնվենցիան տարածվում է մարդկանց թրաֆիքինգի բոլոր ձևերի նկատմամբ: Ուստի Կոնվենցիան կիրառվում է թրաֆիքինգի բոլոր զոհերի՝ տղամարդկանց, կանանց և երեխաների նկատմամբ:

61. Երկրորդը, Կոնվենցիան մշակողները ցանկացել են հստակեցնել, որ Կոնվենցիան կիրառվում է թե՛ ազգային, և թե՛ անդրազգային թրաֆիքինգի նկատմամբ՝ անկախ կազմակերպված հանցավորության հետ դրանց ունեցած կամ չունեցած կապից: Այսինքն, Կոնվենցիայի գործողության ոլորտն ավելի լայն է՝ համեմատած Պալերմոյի արձանագրության հետ և, ինչպես նշված է 39-ում, Կոնվենցիան նպատակ է հետապնդում ուժեղացնել Պալերմոյի արձանագրությամբ նախատեսված պաշտպանությունը: Պալերմոյի արձանագրության 3(2)-ում նշվում է, որ Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ Միավորված Ազգերի Կազմակերպության կոնվենցիայի դրույթները, համապատասխան փոփոխություններ կատարելու դեպքում, կիրառվում են արձանագրության նկատմամբ, քանի դեռ արձանագրությամբ այլ բան չի նախատեսված, իսկ Միավորված Ազգերի Կազմակերպության կոնվենցիայի 3(1)-ը նշում է, որ այն կիրառվում է անդրազգային բնույթի¹³ որոշ հանցագործությունների նկատմամբ և ներառում է կազմակերպված հանցավոր խմբերը:¹⁴ Հետևաբար, Կոնվենցիայի 3(1)-ը համաձայն, II-ից մինչև VI գլուխները կիրառվում են անգամ այն դեպքում, երբ թրաֆիքինգը տեղի է ունենում զուտ ազգային մակարդակով և կազմակերպված հանցավոր խմբեր չի ներառում:

62. Վերջապես, անդրազգային թրաֆիքինգի դեպքում Կոնվենցիան կիրառվում է ինչպես այն անձանց նկատմամբ, որոնք օրինականորեն են մուտք գործել կամ գտնվում ընդունող Կողմի տարածքում, այնպես էլ անօրինականորեն մուտք գործած և այդ տարածքում գտնվող անձանց նկատմամբ: Որոշ դեպքերում թրաֆիքինգի զոհերն ապօրինի են փոխադրվում որևէ երկիր, սակայն այլ դեպքերում նրանք երկիր են մուտք գործում օրինականորեն՝ որպես զբոսաշրջիկներ, ապագա անուսիններ, նկարիչներ, տնային աշխատողներ, դայակներ կամ քաղաքական ապաստան փնտրողներ՝ կախված կոնկրետ երկրի օրենքներից: Կոնվենցիան կիրառվում է վերոհիշյալ երկու իրավիճակների նկատմամբ: Այնուհանդերձ, որոշ առանձնահատուկ դրույթներ (3(1) և 14) կիրառվում են միայն երկրի տարածքում անօրինականորեն գտնվող զոհերի նկատմամբ:

Յոթերորդի 3 – Խտրականության բացառման սկզբունքը

63. Այս Յոթերորդի 3-ը արգելվում է խտրականությունը Կողմերի կողմից սույն Կոնվենցիայի դրույթների, մասնավորապես Գլուխ III-ում շարադրված՝ զոհերի իրավունքների պաշտպանությանն ու ապահովմանը վերաբերող միջոցների իրականացման ժամանակ: 3-ում «խտրականություն» տերմինն օգտագործվում է միևնույն նշանակությամբ, որը սահմանված է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին կոնվենցիայի 3-ում:

¹³ Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ Միավորված Ազգերի Կազմակերպության կոնվենցիայի 3(2)-ում նշվում է, որ «հանցանքը հանդիսանում է անդրազգային, եթե.

ա) այն կատարվել է ավելի քան մեկ Պետությունում.

բ) այն կատարվել է մեկ Պետությունում, բայց դրա նախապատրաստման, ծրագրման, ղեկավարման և հսկողության էական մասը տեղի է ունենում մեկ այլ Պետությունում.

գ) այն կատարվել է մեկ Պետությունում, բայց դրանում ներգրավված է ավելի քան մեկ Պետությունում հանցավոր գործունեությամբ զբաղվող որևէ կազմակերպված հանցավոր խումբ.

դ) այն կատարվել է մեկ Պետությունում, բայց էական հետևանքներ ունի մեկ այլ Պետությունում»:

¹⁴ Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ Միավորված Ազգերի Կազմակերպության կոնվենցիայի 3(1)-ում նշվում է. «Կազմակերպված հանցավոր խումբ» նշանակում է երեք կամ ավելի անձանցից բաղկացած խումբ, որը գոյություն ունի որոշակի ժամանակահատվածում և գործում է փոխադարձ համագործակցությամբ՝ ուղղակիորեն կամ անուղղակիորեն ֆինանսական կամ այլ նյութական օգուտ ստանալու նպատակով սույն Կոնվենցիայով սահմանված մեկ կամ մի քանի հանցանքների կամ հանցավոր արարքների կատարման համար»:

64. «Խտրականություն» հասկացությունը Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի Յոթերորդ 14-ի առնչությամբ հետևողականորեն մեկնաբանվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից՝ իր նախադեպի իրավունքում: Մասնավորապես, նախադեպի իրավունքում պարզորոշ նշվել է, որ վերաբերմունքի ամեն մի տարբերություն չէ, որ խտրականություն է հանդիսանում: Օրինակ, ինչպես Դատարանը եզրակացրել է «*Abdulaziz, Cabales and Balkandali v. the United Kingdom*» գործով կայացրած որոշման մեջ, «վերաբերմունքի տարբերությունը խտրական է, եթե «այն չունի որևէ օբյեկտիվ և հիմնավոր արդարացում», այսինքն եթե այն չի հետապնդում «որևէ ողջամիտ նպատակ» կամ երբ բացակայում է «համաչափության ընդունելի հարաբերությունը կիրառված միջոցների և այն նպատակի միջև, որը փորձում են իրագործել» (1985թ. նայիսի 25-ի որոշումը, Սերիա Ա, No.94, կետ 72):

65. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերաբերմունքի ցանկացած տարբերություն չէ, որ խտրականություն է հանդիսանում, ինչպես նաև խտրականության բացառման սկզբունքի ընդհանուր բնույթը, անհրաժեշտ կամ նպատակահարմար չհամարվեց սույն կոնվենցիայում սահմանափակող դրույթ ընդգրկել: Օրինակ, Եվրոպայի Խորհրդի անդամ պետությունների մեծ մասի, եթե ոչ բոլորի, օրենսդրություններում նախատեսվում են ազգային հիմքով որոշակի տարբերություններ՝ կապված որոշ իրավունքների կամ նպաստներ ստանալու իրավունքի հետ: Այն իրավիճակները, երբ նման տարբերությունները միանգամայն ընդունելի են, բավարար չափով նախատեսված են հենց «խտրականություն» բառի նախորդ պարբերությունում նկարագրված իմաստով, քանի որ այն տարբերությունները, որոնց համար գոյություն ունի օբյեկտիվ և հիմնավոր արդարացում, խտրականություն չեն հանդիսանում: Ի լրումն դրա, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպի իրավունքի շրջանակներում ազգային իշխանություններին գործողությունների որոշ ազատություն է տրվում գնահատելու, թե արդյո՞ք այլ առումներով համանման իրավիճակների միջև եղած տարբերությունները արդարացնում են օրենքով նախատեսված տարբեր մոտեցումները, և եթե այո, ապա որքանով: Գործողությունների ազատության շրջանակը կարող է տարբեր լինել՝ կախված հանգամանքներից, գործի առարկայից և դրա նախադրյալներից (տե՛ս, օրինակ, *Rasmussen v. Denmark* գործով 1984թ. նոյեմբերի 26-ի որոշումը, Սերիա Ա, No.87, կետ 40):

66. Հոդված 3-ում թվարկված խտրականության բացառման հիմքերը նույնն են, ինչ որ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի Յոթերորդ 14-ում և դրան կից Արձանագրություն No.12-ում պարունակվող հիմքերը: Այս լուծումը նախընտրելի համարվեց մյուսների նկատմամբ, օրինակ նրանց, որոնք հստակ պարունակում էին խտրականության բացառման որոշ լրացուցիչ հիմքեր (օրինակ՝ առողջական վիճակը, ֆիզիկական կամ հոգեկան անգործունակությունը, սեռական կողմնորոշումը և տարիքը): Դրա պատճառը ոչ թե անտեղյակությունն էր, որ նման հիմքերը կարող են որոշակի կարևորություն ներկայացնել դժվարին կացության մեջ գտնվող թրաֆիքինգի զոհերի համար, այլ այն, որ դրանց ընդգրկումը իրավական առումով անհրաժեշտություն չի ներկայացնում, քանի որ խտրականության բացառման հիմքերի ցուցակը սպառիչ չէ, և որևէ լրացուցիչ հիմքի ընդգրկումը կարող է տեղիք տալ խտրականությանը վերաբերող չարդարացված *a contrario* (հակադարձը ապացուցող) մեկնաբանությունների՝ հիմնված նման ձևով չընդգրկված հիմքերի վրա: Հարկ է նշել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Հոդված 14-ը կիրառել է այդ դրույթում հստակ չնշված խտրականության հիմքերի նկատմամբ (սեռական կողմնորոշման հիմքի վերաբերյալ տե՛ս, օրինակ, *Salgueiro da Silva Mouta v. Portugal* գործով 1999թ. դեկտեմբերի 21-ի որոշումը):

67. Հոդված 3-ը վերաբերում է «Կողմերի կողմից սույն Կոնվենցիայի դրույթների իրականացմանը»: Այս խոսքերով նպատակ է հետապնդվում սահմանել խտրականության արգելման աստիճանը: Մասնավորապես, Հոդված 3-ով արգելվում է զոհերի նկատմամբ խտրականությունը նրանց իրավունքների պաշտպանության ու ապահովման՝ Կոնվենցիայի Գլուխ III-ով նախատեսված միջոցների կիրառման ժամանակ:

68. Անհրաժեշտ է նշել, որ Կոնվենցիան հիմնականում հստակ պարտավորություններ է դնում Կողմերի վրա: Այսպես, Հոդված 12-ով Կողմերից պահանջվում է որոշակի օժանդակություն ցուցաբերել թրաֆիքինգի զոհերին, օրինակ ապահովել գոյատևման համար անհրաժեշտ կենսապայմաններ, մասնավորապես պատշաճ և ապահով կացարան, հոգեբանական ու նյութական օգնություն, շտապ բուժ. օգնություն ստանալու հնարավորություն: Համանման ձևով, Հոդված 14-ով նախատեսվում է զոհերին տրամադրել երկարաձգվող կացության կարգավիճակ: Հոդված 3-ի համաձայն, այդ միջոցառումները պետք է կիրառվեն առանց խտրականության, այն է՝ առանց չարդարացված տարբերություններ դնելու:

69. Ուստի, Կոնվենցիայի Հոդված 3-ի խախտում կարող է առաջանալ անգամ այն դեպքում, երբ Կոնվենցիայի այլ դրույթների ոչ մի խախտում տեղի չի ունեցել, եթե այդ հոդվածներով նախատեսված միջոցառումները տարբեր ձևերով են կիրառվել մարդկանց որոշակի կատեգորիաների նկատմամբ (օրինակ՝ կախված սեռից, տարիքից կամ ազգությունից), և վերաբերումների տարբերությունը չի կարող հիմնավոր կերպով արդարացվել:

Հոդված 4 – Սահմանումներ

Հոդված 4-ի սահմանումներին վերաբերող ներածություն

70. Կոնվենցիան մշակողները համաձայնության են եկել, որ Կոնվենցիայի շրջանակներում Կողմերը պարտավորված չեն լինի Հոդված 4-ում սահմանված հասկացությունները բառացիորեն ներմուծել իրենց ազգային օրենսդրություններում, պայմանով, որ նշված հասկացությունները դրանցում ընդգրկվեն Կոնվենցիայի սկզբունքներին չհակասող ձևով, և այդ օրենսդրություններն ապահովեն Կոնվենցիայի կենսագործման համարժեք դաշտ:

Մարդկանց թրաֆիքինգի սահմանումը

71. Հոդված 4-ում պարունակվող մարդկանց թրաֆիքինգի սահմանումը այդ երևույթի առաջին միջազգային իրավական սահմանումը չէ: Օրինակ, Նախարարների Կոմիտեի կողմից Եվրոպայի Խորհրդի անդամ պետություններին տրված *Սեռական շահագործման նպատակով մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին No. R(2000)11 Հանձնարարականում* տրվում է թրաֆիքինգի սահմանումը, սակայն դրա գործողության ոլորտը, ի տարբերություն սույն Կոնվենցիայի, սահմանափակվում է սեռական շահագործման նպատակով մարդկանց թրաֆիքինգով:

72. Թրաֆիքինգի դեմ առավել արդյունավետ պայքարելու և դրա զոհերին օժանդակելու համար արմատական նշանակություն թրաֆիքինգի այնպիսի սահմանման օգտագործումը, որի շուրջ գոյություն ունի միջազգային համաձայնություն: Մարդկանց թրաֆիքինգի՝ Կոնվենցիայի Հոդված 4-ի (ա) կետում շարադրված սահմանումը նույնական է Պալերմոյի արձանագրության

Հոդված 3(ա)-ում պարունակվող սահմանման հետ: Կոնվենցիայի Հոդված 4-ի (բ)-ից (դ) կետերը նույնական են Պալերմոյի արձանագրության Հոդված 3-ի (բ)-ից (դ) կետերի հետ: Արձանագրության Հոդված 3-ը միասնական ամբողջություն է կազմում, և անհրաժեշտ էր այն իր ողջ բովանդակությամբ լիովին ընդգրկել սույն Կոնվենցիայում:

73. Մարդկանց թրաֆիքինգի սահմանումը էական է այն առումով, որ այն վճռորոշ ներգործություն ունի Գլուխ II-ից մինչև Գլուխ VI-ի դրույթների իրականացման վրա:

74. Ըստ սահմանման, մարդկանց թրաֆիքինգը բաղկացած է երեք հիմնական բաղադրիչներից, որոնցից յուրաքանչյուրը ներկայացված է սահմանման մեջ նշված ցուցակում.

- «մարդկանց հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ընդունելը»,
- «սպառնալիք կամ ուժ գործադրելու կամ հարկադրանքի որևէ այլ ձև կիրառելու, առևանգման, խարդախության, խաբեության, իշխանությունը կամ վիճակի խոցելիությունը չարաշահելու, կամ այլ անձնավորության նկատմամբ որոշակի վերահսկողություն իրականացնող որևէ անձի համաձայնությունը ձեռք բերելու նպատակով դրամական միջոցներ կամ այլ օգուտներ տրամադրելու կամ ստանալու եղանակով»,
- շահագործման նպատակով, որը ներառում է «առնվազն այլ անձանց մարմնավաճառության կամ սեքսուալ այլ շահագործումը, հարկադիր աշխատանքները կամ ծառայությունները, ստրկությունը կամ ստրկությանը հավասարազոր վիճակը, տաժանակիր աշխատանքները կամ օրգանների հեռացումը»:

75. Մարդկանց թրաֆիքինգը իրենից ներկայացնում է այս երեք բաղադրիչների համադրությունը, այլ ոչ թե դրանցից որևէ մեկը՝ մյուսներից առանձին: Օրինակ, մարդկանց «թաքցնելը» (գործողություն), որը ներառում է «սպառնալիք կամ ուժի գործադրում» (եղանակ)՝ «հարկադիր աշխատանքի» համար (նպատակ), այնպիսի վարքագիծ է, որը պետք է որակվի որպես մարդկանց թրաֆիքինգ: Նմանապես, անձանց հավաքագրումը (գործողություն) խաբեության միջոցով (եղանակ) մարմնավաճառության շահագործման համար (նպատակ), նույնպես պետք է դիտվի որպես մարդկանց թրաֆիքինգ:

76. Հետևաբար, մարդկանց թրաֆիքինգի դեպքում պետք է համատեղ առկա լինի երեք կատեգորիաներից յուրաքանչյուրի բաղադրիչներից որևէ մեկը (գործողություն, եղանակ, նպատակ): Սակայն երեխաների դեպքում գոյություն ունի մի բացառություն. Հոդված 4-ի (գ) կետով սահմանված հավաքագրումը, տեղափոխումը, փոխանցումը, թաքցնելը կամ ընդունելը պետք է դիտվի որպես մարդկանց թրաֆիքինգ, եթե անգամ այդ գործողությունը չի կատարվել Հոդված 4-ի (ա) կետում թվարկված եղանակներից որևէ մեկի օգտագործմամբ: Հոդված 4-ի (դ) կետի շրջանակներում «երեխա» նշանակում է 18 տարին չլրացած ցանկացած անձ:

77. Ուստի, թրաֆիքինգը ենթադրում է շատ ավելին, քան սոսկ մարդկանց կազմակերպված տեղաշարժը շահույթ ստանալու նպատակով: Թրաֆիքինգը ներգաղթողների ապօրինի փոխադրումներից զանազանող լրացուցիչ էական գործոններն են վերը թվարկված եղանակներից որևէ մեկի (ուժի, խաբեության, վիճակի խոցելիության չարաշահման և այլն) օգտագործումը ամբողջ գործընթացի ժամանակ կամ դրա որևէ փուլում, ինչպես նաև այդ եղանակի օգտագործումը շահագործման նպատակով:

78. Կոնվենցիայի քննարկման առարկա հանդիսացող գործողություններն են «մարդկանց հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ընդունելը»: Սահմանումը փորձում է ներառել զոհի շահագործմանը հանգեցնող գործողությունների ամբողջական շղթան:

79. Կոնվենցիան մշակողները քննության են առել մարդկանց թրաֆիքինգի գործում նոր տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը: Նրանք որոշել են, որ Կոնվենցիայում շարադրված «մարդկանց թրաֆիքինգի» սահմանումը ներառում է նաև թրաֆիքինգի իրականացումը նոր տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործմամբ: Օրինակ, սահմանման մեջ նշված «հավաքագրումը» վերաբերում է այդ գործողության իրականացմանը ցանկացած միջոցի (բանավոր, մամուլի կամ ինտերնետի) օգտագործմամբ: Հետևաբար, Կոնվենցիայում ևս մի լրացուցիչ դրույթի ընդգրկումն անհրաժեշտ չի համարվել, իսկ մարդկանց թրաֆիքինգի նկատմամբ կիրառելի են դարձել *Ինտերնետային հանցագործության մասին կոնվենցիայով* [Եվրոպական պայմանագրերի ժողովածու No.185] սահմանված միջազգային համագործակցության միջոցառումները:

80. Ինչ վերաբերում է «տեղափոխմանը», ապա հարկ է նշել, որ Կոնվենցիայի շրջանակներում պարտադիր չէ, որ տեղափոխումը կատարվի որևէ երկրի սահմաններից դուրս, որպեսզի այն համարվի մարդկանց թրաֆիքինգ: Իսկ անդրազգային թրաֆիքինգի դեպքում, Կոնվենցիայով չի պահանջվում, որ զոհերն անպայմանորեն ապօրինի ճանապարհով մուտք գործած լինեն երկիր կամ անօրինականորեն գտնվեն դրա տարածքում: Մարդկանց թրաֆիքինգի երևույթը կարող է առկա լինել նաև այն դեպքում, երբ զոհերը սահմանն անցել են օրինական ճանապարհով կամ երկրի տարածքում գտնվում են օրինականորեն:

81. Թրաֆիքինգի իրականացման եղանակներն են սպառնալիքը, ուժ գործադրելը կամ հարկադրանքի որևէ այլ ձև կիրառելը, առևանգումը, խարդախությունը, խաբեությունը, իշխանության կամ վիճակի խոցելիության չարաշահումը, կամ այլ անձնավորության նկատմամբ որոշակի վերահսկողություն իրականացնող որևէ անձի համաձայնությունը ձեռք բերելու նպատակով դրամական միջոցներ կամ այլ օգուտներ տրամադրելը կամ ստանալը:

82. Խարդախությունն ու խաբեությունը թրաֆիքինգով զբաղվողների կողմից հաճախ օգտագործվող միջոցներից են, երբ զոհերին հավատացնում են, որ նրանց սպասվում է գրավիչ աշխատանք, այլ ոչ թե նախապես ծրագրված շահագործում:

83. Վիճակի խոցելիության չարաշահումը ենթադրում է այնպիսի իրավիճակի չարաշահում, երբ խնդրո առարկա անձը չունի որևէ իրական և ընդունելի այլընտրանք, քան շահագործման ենթարկվելը: Խոցելիությունը կարող է լինել ցանկացած բնույթի՝ ֆիզիկական, հոգեբանական, զգացմունքային, ընտանեկան, սոցիալական կամ տնտեսական: Վերոհիշյալ իրավիճակներից կարող է լինել զոհի վարչական կարգավիճակի անապահովությունը կամ անօրինականությունը, տնտեսական կախվածությունը կամ թույլ առողջական վիճակը: Այլ կերպ ասած, մնան իրավիճակ կարող է լինել ցանկացած դժվարին դրությունը, որում գտնվելով անձը դրդված է լինում համաձայնվել շահագործման ենթարկվելուն: Նման իրավիճակները չարաշահող անձինք կոպիտ խախտում են մարդու իրավունքները և ոտնահարում մարդու արժանապատվությունն ու անձեռնմխելիությունը:

84. Հետևաբար, պետք է քննության առնվի թրաֆիքինգով զբաղվողների կողմից օգտագործվող եղանակների լայն շրջանակ. սեռական շահագործման

նպատակով կանանց առևանգումը, երեխաներին գայթակղելը հանցավոր խմբերի կողմից մանկամոլության (պեդոֆիլիայի) և մարմնավաճառության նպատակով օգտագործվելու համար, կավատների կողմից գործադրվող բռնությունը՝ մարմնավաճառներին իրենց ենթակայության տակ պահելու համար, դեռահասի կամ չափահասի խոցելի դրությունից օգտվելը, անկախ այն բանից, արդյոք դա սեքսուալ հանցագործությամբ ավարտվում է, թե՞ ոչ, կամ իր սեփական կամ իր ընտանիքի վիճակը բարելավելու հույս ունեցող չափահաս անձի տնտեսական անապահովությունը կամ աղքատությունը չարաշահելը: Այնուհանդերձ, վերոհիշյալ բազմաթիվ դեպքերն ավելի շատ արտացոլում են երևույթի տարբեր աստիճանները, քան դրանց բնույթի տարբերությունը, որը թվարկված դեպքերից յուրաքանչյուրում կարող է դասակարգվել որպես թրաֆիքինգ և հիմնված լինել նշված եղանակների օգտագործման վրա:

85. Նպատակը պետք է լինի անձի շահագործումը: Կոնվենցիան սահմանում է. «Շահագործումը առնվազն ներառում է այլ անձանց մարմնավաճառության կամ սեքսուալ այլ շահագործումը, հարկադիր աշխատանքները կամ ծառայությունները, ստրկությունը կամ ստրկությանը հավասարագոր վիճակը, տաժանակիր աշխատանքները կամ օրգանների հեռացումը: Ուստի, ազգային օրենսդրությունը կարող է նպատակաուղղված լինել շահագործման նաև այլ ձևերին, բայց առնվազն պետք է ընդգրկի շահագործման այն տեսակները, որոնք սահմանված են որպես մարդկանց թրաֆիքինգի բաղկացուցիչ տարրեր:

86. Սահմանման մեջ նշված շահագործման ձևերը ներառում են սեռական շահագործումը, հարկադիր աշխատանքը և օրգանների հեռացումը, քանի որ հանցավոր գործունեությունը զնալով ավելի բազմազան ձևեր է ստանում, որպեսզի շահագործման նպատակով մարդկանցով մատակարարի ցանկացած սեկտորի, որտեղ նման պահանջարկ է առաջանում:

87. Սահմանման համաձայն, մարդկանց թրաֆիքինգի երևույթի առկայության համար պարտադիր չէ, որ անձը անպայմանորեն շահագործված լինի: Բավական է, որ անձը շահագործման «նպատակով» ենթարկված լինի սահմանման մեջ նշված գործողություններից որևէ մեկին՝ սահմանված եղանակներից ցանկացածի օգտագործմամբ: Հետևաբար, մարդկանց թրաֆիքինգն առկա է նախքան զոհի փաստացի շահագործումը:

88. Ինչ վերաբերում է «այլ անձանց մարմնավաճառության կամ սեքսուալ շահագործման այլ ձևերին», ապա հարկ է նշել, որ Կոնվենցիան այդ հարցերը քննարկում է միայն մարդկանց թրաֆիքինգի համատեքստում: Կոնվենցիայում «այլ անձանց մարմնավաճառություն» և «սեքսուալ շահագործման այլ ձևեր» տերմինները սահմանված չեն, ինչը, հետևաբար, չի սահմանափակում Կողմերի ազգային օրենսդրություններում մարմնավաճառության սահմանման ձևը:

89. Կոնվենցիայով չի սահմանվում նաև «հարկադիր աշխատանք» տերմինը: Այնուհանդերձ, կան այդ հարցին վերաբերող մի քանի միջազգային փաստաթղթեր, ինչպիսիք են *Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը* (Հոդված 4), *Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը* (Հոդված 8), *ԱՄԿ Հարկադիր աշխատանքի մասին կոնվենցիան* (Կոնվենցիա No.29) և 1957թ. *ԱՄԿ Հարկադիր աշխատանքի վերացման մասին կոնվենցիան* (Կոնվենցիա No.105):

90. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի Հոդված 4-ը արգելում է հարկադիր աշխատանքը՝ առանց այն սահմանելու: Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների

պաշտպանության մասին կոնվենցիայի մշակողները իրենց համար որպես օրինակ ընտրել են 1930թ. հունիսի 29-ի ԱՄԿ Հարկադիր աշխատանքի մասին կոնվենցիան (Կոնվենցիա No.29), որտեղ որպես հարկադիր աշխատանք նկարագրվում է «այն աշխատանքը կամ ծառայությունը, որը պահանջվում է որևէ անձից ինչ-որ պատժի սպառնալիքի տակ և որի համար տվյալ անձն ինքն իրեն հոժարական չի առաջարկել»: *Van der Missele v. Belgium* գործի առնչությամբ (1983թ. նոյեմբերի 29-ի որոշումը, Սերիա Ա, No.70, կետ 37) Դատարանը որոշեց, որ «հարաբերական կշիռ» պետք է հաղորդվի նախնական համաձայնության չափանիշին, և ընտրեց մի մոտեցում, որը հաշվի էր առնում գործի բոլոր հանգամանքները: Մասնավորապես, Դատարանը եզրակացրեց, որ որոշակի հանգամանքներում չի կարող համարվել, որ «ծառայությունը նախապես հոժարական ընդունվել է»: Հետևաբար այն որոշեց, որ խնդրո առարկա անձի համաձայնությունը բավարար չէ հարկադիր աշխատանքի փաստը բացառելու համար: Ուստի, համաձայնության իսկությունը պետք է գնահատվի գործի բոլոր հանգամանքների լույսի ներքո:

91. Սույն Կոնվենցիայի Հոդված 4-ի (բ) կետը հետևում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի նախադեպի իրավունքին՝ այն առումով, որ նշում է, որ Հոդված 4-ի (ա) կետում նախատեսված շահագործման այս կամ այն ձևի կիրառման վերաբերյալ թրաֆիքինգից տուժած անձի համաձայնությունը որևէ նշանակություն չունի այն դեպքում, երբ օգտագործվել է այդ կետում նկարագրված եղանակներից որևէ մեկը:

92. «Հարկադիր ծառայություններ» հասկացության առնչությամբ Դատարանը *Van der Missele v. Belgium* գործով պարզել է, որ «հարկադիր աշխատանք» տերմինին, ինչպես որ այն օգտագործվել է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի Հոդված 4-ում, պետք է տրվի ավելի լայն նշանակություն, և դրանում պետք է ներառվեն հարկադիր ծառայությունները (1983թ. նոյեմբերի 23-ի որոշումը, Սերիա Ա, No.70, կետ 33): Հետևաբար, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի տեսանկյունից, այդ երկու հասկացությունների միջև որևէ տարբերություն չպետք է դրվի:

93. Ստրկությունը Կոնվենցիայում սահմանված չէ, սակայն միջազգային փաստաթղթերից շատերը, ինչպես նաև շատ երկրների ազգային օրենսդրությունները սահմանում կամ քննության են առնում ստրկությունը և ստրկությանը հավասարազոր վիճակը (օրինակ՝ 1926թ. սեպտեմբերի 25-ի Ստրկության մասին ժնևի կոնվենցիան՝ խմբագրված 1953թ. դեկտեմբերի 7-ի Նյու Յորքի արձանագրությամբ, 1956թ. սեպտեմբերի 7-ի Ստրկության, ստրուկների առևտրի և ստրկությանը հավասարազոր ինստիտուտների ու պրակտիկաների վերացման մասին լրացուցիչ կոնվենցիան, ԱՄԿ-ի Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի մասին կոնվենցիան (Կոնվենցիա No.182)):

94. Մարդկանց թրաֆիքինգի սահմանումը չի ընդգրկում անօրինական որդեգրումը: Այնուամենայնիվ, երբ անօրինական որդեգրումը իրենից ներկայացնում է *Ստրկության, ստրուկների առևտրի և ստրկությանը հավասարազոր ինստիտուտների ու պրակտիկաների վերացման մասին լրացուցիչ կոնվենցիայի* Հոդված 1(դ)-ում սահմանված ստրկությանը հավասարազոր վիճակ, ապա այլ նույնպես ընկնում է Կոնվենցիայի գործողության ներքո:

95. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի մարմինները սահմանել են «տաժանակիր աշխատանքը»: Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի կողմից տաժանակիր

աշխատանք է համարվել ուրիշ անձանց սեփականության տարածքում ապրելն ու աշխատելը և նրանց համար ինչ-որ վճարման դիմաց կամ առանց վճարման որոշակի ծառայություններ կատարելը՝ ի վիճակի չլինելով փոխել իր դրությունը (Դիմում No.7906/77, D.R.17, էջ 59; տես նաև Հանձնաժողովի հաշվետվությունը 1980թ. հուլիսի 9-ի *Van Droogenbroeck-ի* գործում, Սերիա F, հատ. 44, էջ 30, կետեր 78-80): Այդպիսով, տաժանակիր աշխատանքը պետք է դիտվի որպես ստրկության որոշակի ձև՝ վերջինիցս տարբերվելով ավելի շատ իր աստիճանով, քան բնութսով: Չնայած այն իրենից ներկայացնում է այնպիսի վիճակ կամ դրություն, որում առկա է «ազատությունից զրկելու որոշակի լուրջ ձև» (*Van Droogenbroeck-ի* գործը, 1984թ. հունիսի 24-ի որոշումը, Սերիա Ա, No.50, էջ 32, կետ 58), սակայն այն չունի ստրկությանը բնորոշ սեփականության հատկանիշը:

96. Շահագործումը ներառում է նաև «օրգանների հեռացումը»: Այն սկզբունքը, որ մարդու մարմնի և դրա մասերի օգտագործումը ֆինանսական շահույթ առաջացնելու նպատակով անբույլատրելի է, սահմանվել է Եվրոպայի հորհրդի օրենսդրության մեջ: Այդ սկզբունքը շարադրվեց Նախարարների կոմիտեի (78) 29 Որոշման մեջ և հաստատվեց Եվրոպական երկրների Առողջապահության նախարարների 3-րդ կոնֆերանսի (Փարիզ, 1987թ.) եզրափակիչ հայտարարությամբ՝ նախքան *Մարդու իրավունքների և կենսաբժշկության մասին կոնվենցիայի* [Եվրոպական պայմանագրերի ժողովածու No.164] Հոդված 21-ում հստակ ամրագրվելը: Այնուհետև այդ սկզբունքը վերահաստատվեց նշված կոնվենցիային կից *Մարդկային օրգանների և հյուսվածքների փոխպատվաստման վերաբերյալ* արձանագրության մեջ [Եվրոպական պայմանագրերի ժողովածու No.186], որը բաց էր ստորագրման համար 2002թ. հունվար ամսին: Արձանագրության Հոդված 22-ը հստակ արգելում է օրգանների և հյուսվածքների առևտուրը: Անհրաժեշտ է հիշատակել, որ Եվրոպայի հորհրդի հորհրդարանական Ասամբլեան ընդունել է նաև «Եվրոպայում օրգանների առևտրի մասին» զեկույցը (Փաստ. 9822, 3 հունիսի, 2003թ., Սոցիալական, առողջապահական և ընտանեկան գործերի հարցերով կոմիտե, Ջեկուցող տիկ. Ռութ-Գարի Վերմոտ-Սանգոլդ, Շվեյցարիա, SOC) և *Եվրոպայում օրգանների առևտրի մասին 1611 (2003) Հանձնարարականը*:

97. Հոդված 4-ի (բ) կետում նշված է. «Սույն հոդվածի «ա» կետում նշված շահագործման վերաբերյալ «մարդկանց թրաֆիքինգից» տուժած անձի համաձայնությունը որևէ նշանակություն չունի այն դեպքում, երբ կիրառվել է այդ կետում նախատեսված եղանակներից որևէ մեկը»: Համաձայնության որոշման հարցը այնքան էլ դյուրին չէ: Հեշտ չէ որոշելը, թե որտեղ է վերջանում ազատ կամքը և որտեղ է սկսվում հարկադրանքը: Թրաֆիքինգի ենթարկվող մարդկանցից ոմանք տեղյակ չեն, թե իրենց ինչ է սպասվում, մինչդեռ մյուսներից քաջ հայտնի է, որ իրենք, օրինակ, պետք է զբաղվեն մարմնավաճառությամբ: Այնուամենայնիվ, եթե ինչ-որ մեկը ցանկանում է աշխատանք գտնել և թերևս կանոլին համաձայնվում է զբաղվել մարմնավաճառությամբ, դա չի նշանակում, որ նա համաձայնվում է նաև ենթարկվել չարաշահման բոլոր ձևերին: Այդ պատճառով Հոդված 4-ի (բ) կետը սահմանում է, որ այդ երևույթը հանդիսանում է մարդկանց թրաֆիքինգ՝ անկախ այն բանից, արդյոք թրաֆիքինգից տուժած անձը համաձայնվել է շահագործման ենթարկվելուն, թե՞ ոչ:

98. Հոդված 4-ի բ. և գ. ենթակետերի համաձայն, շահագործման նպատակով երեխային հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ընդունելը համարվում է մարդկանց թրաֆիքինգ, անկախ այն բանից, արդյոք ա. ենթակետում նշված միջոցներն օգտագործվել են, թե՞ ոչ, կամ արդյո՞ք երեխան համաձայնվել է շահագործման ենթարկվելուն:

«Զոհի» սահմանումը

99. Կոնվենցիայում հաճախ վկայակոչվում են թրաֆիքինգի զոհերը, հետևաբար Կոնվենցիայի մշակողներն էական են համարել այդ հասկացության սահմանումը: Մասնավորապես, Գլուխ III-ում նշված միջոցները նախատեսված են այն անձանց նկատմամբ կիրառվելու համար, որոնք հանդիսանում են զոհեր՝ Կոնվենցիայով սահմանված իմաստով:

100. Կոնվենցիայով «զոհը» սահմանվում է որպես «ցանկացած ֆիզիկական անձ, որը ենթարկվել է մարդկանց թրաֆիքինգին՝ սույն Հոդվածում նկարագրված իմաստով»: Ինչպես վերևում պարզաբանվել է, զոհ է հանդիսանում ցանկացած անձ, որը ենթարկվել է Կոնվենցիայի Հոդված 4-ի (ա) կետում թվարկված տարրերի համադրությանը (գործողություն - եղանակ – նպատակ): Այնուամենայնիվ, համաձայն Հոդված 4-ի (զ) կետի, եթե այդ անձը երեխա է, ապա նա պետք է համարվի զոհ անգամ այն դեպքում, եթե Հոդված 4-ի (ա) կետում սահմանված եղանակներից ոչ մեկը չի օգտագործվել:

Գլուխ II. Կանխարգելում, համագործակցություն և այլ միջոցներ

101. Գլուխ II-ը պարունակում է մի շարք դրույթներ, որոնք ընդգրկված են «Կանխարգելում» վերնագրի տակ՝ այդ տերմինի լայն իմաստով: Որոշ դրույթներ վերաբերում են հատկապես կանխարգելման միջոցներին՝ բառիս բուն իմաստով (Հոդվածներ 5 և 6), մինչդեռ մյուսները քննության են առնում մարդկանց թրաֆիքինգի կանխարգելմանն ու պայքարին ուղղված վերահսկողության, անվտանգության ու համագործակցության հատուկ միջոցները (Հոդվածներ 7, 8 և 9):

Հոդված 5. Մարդկանց թրաֆիքինգի կանխարգելումը

102. Մարդկանց թրաֆիքինգը դրսևորվում է տարբեր ձևերով, ներթափանցում է բազմազան բնագավառներ և հետևանքներ է առաջացնում հասարակության տարբեր շերտերի համար: Կանխարգելման միջոցների արդյունավետության ապահովման համար, ինչպես նաև նկատի ունենալով խնդրո առարկա երևույթի բնույթը, թրաֆիքինգի կանխարգելմանն ուղղված միջոցները պետք է համաձայնեցվեն: Ուստի, Հոդված 5-ի առաջին կետը խրախուսում է բազմապրոֆիլային համագործակցության մոտեցումը՝ Կողմերից պահանջելով միջոցներ ձեռնարկել մարդկանց թրաֆիքինգի կանխարգելման ու դրա դեմ պայքարի համար պատասխանատու տարբեր մարմինների միջև պետական մակարդակով համագործակցություն հաստատելու և ամրապնդելու ուղղությամբ: Այդ կետով պահանջվում է կոորդինացնել բոլոր սեկտորները, որոնց գործողությունները էական նշանակություն ունեն թրաֆիքինգի կանխարգելման ու դրա դեմ պայքարի համար, ինչպիսիք են սոցիալական, ոստիկանական, միգրացիոն, մաքսային, դատական կամ վարչական պատասխանատվություն ունեցող գործկալությունները, հասարակական կազմակերպությունները, համապատասխան պատասխանատվություն ունեցող այլ կազմակերպությունները և քաղաքացիական հասարակության այլ տարրերը:

103. Հոդված 5-ի (2) կետում ներկայացված է կանխարգելման քաղաքականության և ծրագրերի՝ որպես նմուշ ծառայող ցուցակը, որոնք Կողմերը պետք է մշակեն կամ զարգացնեն թրաֆիքինգի մեջ ներքաշվելու տեսակետից առավել խոցելի անձանց կատեգորիաների և մարդկանց թրաֆիքինգի խնդիրներով զբաղվող մասնագետների համար: Կոնվենցիան մշակողները համարել են, որ մասն քաղաքականության ու ծրագրերի շահառուների շարքում

կարևոր է ընդգրկել *«թրաֆիքինգի խնդիրներով զբաղվող մասնագետներին»*, մասնավորապես նրանց, ովքեր իրենց աշխատանքի ընթացքում շփվում են թրաֆիքինգից տուժած մարդկանց հետ (ուստիկանություն, սոցիալական ոլորտի աշխատողներ, բժիշկներ և այլն): Այդ միջոցները տարբեր բնույթ են կրում և կարող են ունենալ կարճաժամկետ, միջին ժամկետի կամ երկարաժամկետ հետևանքներ: Օրինակ, թրաֆիքինգի դեմ պայքարի *հետազոտությունները* կարևոր են կանխարգելման արդյունավետ եղանակներ մշակելու համար, *տեղեկատվությունը, իրազեկության մակարդակի բարձրացումը և կրթական միջոցառումները* կանխարգելման կարևոր կարճաժամկետ միջոցառումնեպ են, հատկապես ծագման երկրներում: Սոցիալ-տնտեսական նախաձեռնությունները, որոնք ուղղված են թրաֆիքինգի հիմքում ընկած և կառուցվածքային պատճառների դեմ, պահանջում են երկարաժամկետ ջանքեր: Լայնորեն ճանաչվել է, որ թրաֆիքինգի ծագման երկրներում սոցիալ-տնտեսական պայմանների բարելավումը և ծայրահեղ աղքատության դեմ պայքարի միջոցառումների իրականացումը թրաֆիքինգի կանխարգելման ամենարդյունավետ միջոցները կլինեն: Սոցիալ-տնտեսական միջոցառումներից, անտարակույս, մարդկանց թրաֆիքինգի կանխարգելմանը կնպաստեր թրաֆիքինգով զբաղվողների հիմնական թիրախը դառնալու հավանականություն ունեցող անձանց ուսուցման բարելավումը և նրանց աշխատանքային հնարավորություններով ապահովելը: Յուրաքանչյուր կողմ (2) կետում նշված քաղաքականությունը և ծրագրերը մշակելիս, իրագործելիս և գնահատելիս պետք է հանդես գա մարդու իրավունքների ապահովման, գենդերային խնդիրների առաջնայնության և երեխաների շահերի պաշտպանության դիրքերից:

104. Հոդված 5-ի (3) կետի համաձայն, Կողմերը պետք է ընդունեն մարդու իրավունքների ապահովման դիրքերից ելնող մոտեցում: Այստեղ Կոնվենցիան մշակողները ելել են այն տեսանկյունից, որ էական է, որպեսզի (2) կետում նշված քաղաքականության ու ծրագրերի հիմքում ընկած լինեն գենդերային խնդիրների առաջնայնությունը և երեխաների իրավունքների պաշտպանությունը: Կանանց և տղամարդկանց միջև պատշաճ հավասարության ապահովման հիմնական ռազմավարություններից մեկը գենդերային խնդիրների առաջնայնությունն է, ինչպես որ նկարագրված է Նախարարների Կոմիտեի կողմից Եվրոպայի հտորիրդի անդամ պետություններին տրված՝ *Գենդերային խնդիրների առաջնայնության մասին No. R (98) 14 Հանձնարարականում*: «*Գենդերային խնդիրների առաջնայնությունը*» հասկացությունը, նախքան 1996թ. Եվրոպական հանձնաժողովի կողմից ընդունվելը (1996թ. փետրվարի 21-ի Հանձնաժողովի հաղորդումը, «Կանանց և տղամարդկանց համար հավասար հնարավորությունների ընդգրկումը Համայնքի բոլոր քաղաքականություններում և գործունեություններում», COM (96) 67 վերջնական), հիմնականում հանդես է եկել միջազգային փաստաթղթերում, մասնավորապես Միավորված Ազգերի Կազմակերպության Կանանց հարցերով համաշխարհային կոնֆերանսի փաստաթղթերում, ինչպես նաև Եվրոպական փաստաթղթերում: Այնուհետև այդ հասկացությունն ընդգրկվել է Համայնքի Գենդերային հավասարության վերաբերյալ շրջանակային ռազմավարության մեջ: Նշված առարկայի գծով Եվրոպայի հտորիրդի մասնագետների խումբը այդ մոտեցումը սահմանել է որպես «քաղաքականության գործընթացների (վերա)կազմակերպում, բարելավում, զարգացում և գնահատում՝ այնպես, որպեսզի քաղաքականության մշակման մեջ սովորաբար ներգրավված գործիչների կողմից գենդերային հավասարության տեսանկյունն ընդգրկվի բոլոր քաղաքականություններում, բոլոր մակարդակներով և բոլոր փուլերում»: Յուրաքանչյուր Կողմից պահանջվում է այդ մոտեցումները կիրառել իր կանխարգելման քաղաքականության ու ծրագրերի բոլոր փուլերում, այսինքն դրանց մշակման, կիրառման ու գնահատման ժամանակ:

105. Կետ 4-ը Կողմերին պարտավորեցնում է համապատասխան միջոցներ ձեռնարկել՝ մարդկանց իրենց տարածք օրինականորեն մուտք գործելու և իրենց տարածքից օրինականորեն դուրս գալու հնարավորություն ապահովելու համար: Էական է, որ հավանական ներգաղթողները հավաստի տեղեկություններ ունենան միգրացիայի օրինական հնարավորությունների, աշխատանքային պայմանների և իրենց իրավունքների ու պարտականությունների մասին: Այս դրույթով նպատակ է հետապնդվում հակազդել թրաֆիքինգով զբաղվողների կողմից ապակողմնորոշիչ տեղեկությունների տրամադրմանը, որպեսզի մարդիկ, ունենալով հավաստի տեղեկություններ, ճանաչեն թրաֆիքինգով զբաղվողների առաջարկությունները և հրաժարվեն դրանք ընդունելուց: Յուրաքանչյուր Կողմ, իր ներքին կառուցվածքին համապատասխան, ինքը պետք է որոշի, թե որոնք են իր «համապատասխան մարմինները»: Կոնվենցիան մշակողները հիմնականում, բայց ոչ բացառապես, նկատի են ունեցել վիզաների և ներգաղթի ծառայությունները:

106. Կետ 5-ով Կողմերից պահանջվում է հատուկ միջոցներ ձեռնարկել երեխաների թրաֆիքինգը նվազեցնելու ուղղությամբ: Այս դրույթը մասնավորապես վերաբերում է երեխաների համար «պաշտպանություն ապահովող միջավայր ստեղծելուն»՝ թրաֆիքինգի մեջ ներքաշվելու տեսակետից նրանց խոցելիությունը նվազեցնելու, ինչպես նաև նրանց անվնաս մեծանալու ու արժանավայել կյանք վարելու հնարավորություն ընձեռելու համար: UNICEF-ի կողմից առաջադրված «պաշտպանություն ապահովող միջավայր» հասկացությունը ներառում է ութ բաղկացուցիչ տարր.

- երեխաների իրավունքների պաշտպանություն բացասական վերաբերմունքից, սովորույթներից, ավանդույթներից, վարքից և պրակտիկաներից.
- պետության՝ երեխաների իրավունքներն ապահովելու պարտավորություն, երեխաների իրավունքների պաշտպանություն ու իրականացում.
- հրապարակային քննարկումներ և ներգրավվածություն երեխայի պաշտպանության հարցերում.
- պաշտպանություն ապահովող օրենսդրության մշակում և կիրառում.
- երեխաների հետ գործ ունեցողների և շփվողների, ընտանիքների և համայնքների՝ երեխաներին պաշտպանելու ունակություն.
- երեխաների՝ հասարակական կյանքի հետ կապված հմտություններ, գիտելիքներ և մասնակցություն հասարակական կյանքին.
- չարաշահման դեպքերի մոնիտորինգի և զեկուցման համակարգի ստեղծում.
- թրաֆիքինգից տուժած երեխաների վերականգնման ու վերաինտեգրման ծրագրեր և ծառայություններ:

107. Վերջապես, կետ 6-ում ճանաչվում է հասարակական կազմակերպությունների, այլ համապատասխան կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության այլ տարրերի կարևոր դերը մարդկանց թրաֆիքինգի կանխարգելման, զոհերի պաշտպանության և նրանց օժանդակության ցուցաբերման գործում: Այդ պատճառով Կողմերը, Հոդած 5-ով ամրագրված իրենց պարտավորությունները կատարելիս, անհրաժեշտության դեպքում նման մարմիններին պետք է ներգրավեն կանխարգելիչ միջոցառումների իրականացման գործում:

Հոդված 6. Թրաֆիքինգի պահանջարկի նվազեցմանն ուղղված միջոցներ

108. Այս Հոդվածը Կողմերի համար հստակ պարտավորություն է ամրագրում ձեռնարկել և զարգացնել այնպիսի միջոցներ, որոնք նպաստում են սեքսուալ

չահագործման, հարկադիր աշխատանքի կամ ծառայությունների, ստրկության կամ ստրկությանը հավասարազոր վիճակի, տաժանակիր աշխատանքի կամ օրգանների հեռացման հետ կապված թրաֆիքինգի պահանջարկի նվազեցմանը: Այս հարցին առանձին ու ինքնուրույն հոդված նվիրելով, Կոնվենցիան մշակողները փորձել են ընդգծել պահանջարկի նվազեցման կարևորությունը թրաֆիքինգի կանխարգելման ու դրա դեմ պայքարի գործընթացում:

109. Այդ միջոցների նպատակը տարհանողումն է: Նշված միջոցները կարող են կրել օրենսդրական, վարչական, կրթական, սոցիալական, մշակութային կամ այլ բնույթ:

110. Հոդվածում ներկայացված է նման նվազագույն միջոցների ցուցակը: Կարևորագույն միջոցներից մեկը հետազոտությունների անցկացումն է լավագույն փորձի, մեթոդների ու ռազմավարությունների բնագավառում՝ հաճախորդների պահանջարկն արդյունավետորեն նվազեցնելու նպատակով: Ջանգվածային լրատվամիջոցները և քաղաքացիական հասարակությունը եղել են այն հիմնական ուժը, որոնք պահանջարկը տարբերակել են որպես թրաֆիքինգի արմատական պատճառներից մեկը, հետևաբար վերոհիշյալ միջոցները նպատակաուղղված են զանգվածային լրատվամիջոցների ու քաղաքացիական հասարակության պատասխանատվության և կարևոր դերի վերաբերյալ իրազեկության առավելագույն մակարդակի ապահովմանը: Կարող են անցկացվել նաև համապատասխան խմբերին ուղղված նպատակային տեղեկատվական արշավներ՝ անհրաժեշտության դեպքում ներգրավելով պետական մարմիններին և քաղաքականություն մշակողներին: Վերջապես, պահանջարկի նվազեցման գործում կարևոր դեր են խաղում կրթական ծրագրերը: Օրինակ, դպրոցական տարիքի երեխաների համար նախատեսված ծրագրերը ոչ միայն կարող են նրանց արդյունավետորեն ծանոթացնել թրաֆիքինգի երևույթին, այլ նաև նրանց իրազեկել գենդերային հարցերի, մարդու արժանապատվության ու անձեռնմխելիության և գենդերային հիմքով խտրականության հետևանքների մասին:

Հոդված 7 – Սահմանային միջոցառումներ

111. Պալերմոյի արձանագրության Հոդված 11-ի հիման վրա մշակված՝ Կոնվենցիայի Հոդված 7-ը ներառում է մի շարք միջոցառումներ մարդկանց թրաֆիքինգի կանխարգելման ու սահմանային բացահայտման համար: Կոնվենցիան մշակողները համաձայնվել են, որ սահմանային վերահսկողության ու համագործակցության ավելի լավ կառավարումը մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցները կդարձնի առավել արդյունավետ:

112. Կետ 1-ի համաձայն, Կողմերը պետք է հնարավորինս ուժեղացնեն սահմանային վերահսկողությունը՝ հավաստիանալու համար, որ մարդիկ ունեն իրենց տարածք մուտք գործելու կամ այդ տարածքից դուրս գալու թույլտվություն: Այդ միջոցները պետք է իրականացվեն առանց խախտելու ազատ տեղաշարժման իրավունքի ապահովման հարցում ստանձնած միջազգային պարտավորությունները, քանի որ այս պահանջը գործում է մասնավորապես Եվրոպական Համայնքի շրջանակներում, որի անդամ պետությունները մշակել են արտաքին սահմանների հսկողության ու վերահսկողության վերաբերյալ կանոնների համախումբ (Ոստիկանության և մաքսային մարմինների համագործակցության մասին ԵՄ օրենքը):

113. Կետ 2-ի համաձայն, Կողմերը պետք է ձեռնարկեն օրենսդրական կամ այլ անհրաժեշտ միջոցներ Կոնվենցիայի Գլուխ IV-ում նախատեսված հանցավոր

արարքների կատարման ժամանակ առևտրային փոխադրումներ իրականացնող ընկերությունների տրանսպորտային միջոցների օգտագործումը կանխելու ուղղությամբ:

114. Միջոցների տեսակի ընտրությունը թողնվում է Կողմերի հայեցողությանը: Օրինակ, կետ 3-ով պահանջվում է, որ առևտրային փոխադրումներ իրականացնող ընկերությունները ստուգեն ուղևորների մոտ ընդունող պետություն մուտք գործելու համար պահանջվող բոլոր ճամփորդական փաստաթղթերի առկայությունը: Ուղևորների մոտ նման փաստաթղթերի բացակայության դեպքում պետք է կիրառվեն համապատասխան սանկցիաներ (կետ 4): Այնուհանդերձ, հարկ է նշել, որ առևտրային փոխադրումներ իրականացնող ընկերությունների, այդ թվում՝ ցանկացած տրանսպորտային ընկերության, տրանսպորտային միջոց շահագործողի կամ դրա սեփականատիրոջ պարտավորությունը սահմանափակվում է սոսկ այդ փաստաթղթերի առկայության ստուգումով և չի ներառում դրանց վավերականության կամ իսկության ստուգում: Կետ 3-ով ամրագրված պարտավորության խախտման դեպքում կիրառվող սանկցիաներ չեն սահմանվում Կողմերի հայեցողությանը թողնելով անհրաժեշտ միջոցների ընտրությունը իրենց ներքին օրենսդրություններին համապատասխան:

115. Կետ 5-ը վերաբերում է Գլուխ IV-ով սահմանված հանցավոր արարքների կատարմանը մասնակցած անձանց նկատմամբ կիրառվող պատժին: Յուրաքանչյուր Կողմից պահանջվում է ձեռնարկել այնպիսի օրենսդրական կամ այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ են այդ անձանց մուտքն իրենց տարածք արգելելու կամ մուտքի վիզաները չեղյալ հայտարարելու համար:

116. Կետ 6-ով Կոնվենցիան մշակողները փորձել են ամրապնդել համագործակցությունը սահմանային վերահսկողության մարմինների միջև: Նոր տեսակի օպերատիվ գործողությունների ներմուծումը (ինչպես օրինակ՝ սահմանային զննումն ու հետապնդումը և ծառայությունների միջև տեղեկատվության անմիջական փոխանակման պաշտոնական մեխանիզմի ներմուծումը) միջազգային համագործակցության ոլորտում կարևոր տեղ է գրավում իրավակարգի և անվտանգության ապահովման կանխարգելիչ միջոցառումների մշակման գործում: Գործողության նոր եղանակները և միջամտության նոր մեթոդները սահմանային ծառայություններին կարևոր դեր են վերապահում մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի գործընթացում: Համապատասխանաբար, Հոդված 6-ը Կողմերից պահանջում է ամրապնդել համագործակցությունը սահմանային վերահսկողության ծառայությունների միջև, այդ թվում նաև նրանց միջև ուղիղ կապ հաստատելու և պահպանելու միջոցով:

Հոդված 8. Փաստաթղթերի անվտանգությունն ու հսկումը

117. Պալերմոյի արձանագրության Հոդված 12-ի հիման վրա մշակված՝ Կոնվենցիայի Հոդված 8-ի համաձայն, յուրաքանչյուր Կողմ պետք է ձեռնարկի անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու համար ճամփորդական կամ անձը հաստատող փաստաթղթերի որակը և դրանց ամբողջականությունն ու անվտանգությունը: «ճամփորդական կամ անձը հաստատող փաստաթղթեր»-ով Կոնվենցիան մշակողները նկատի ունեն ցանկացած տեսակի փաստաթղթերը, որոնք պահանջվում են ներքին օրենսդրությանը համապատասխան որևէ երկրի տարածք մուտք գործելու կամ այդ տարածքից դուրս գալու համար, ինչպես նաև որևէ անձի ինքնության հաստատման համար այդ երկրում սովորաբար օգտագործվող փաստաթղթերը:

118. Հարկ է նշել, որ Կոնվենցիան մշակողները նկատի են ունեցել ոչ միայն փաստաթղթերի կեղծման, ապօրինի փոփոխման, կրկնօրինակման կամ տրամադրման դեպքերը, այլ նաև այն դեպքերը, երբ կեղծվել, փոփոխվել կամ ապօրինի օգտագործվել են օրինականորեն պատրաստված կամ տրամադրված փաստաթղթերը:

119. Այդ միջոցները կարող են ընդգրկել, օրինակ, անձնագրերի և ճանփորդական այլ փաստաթղթերի անվտանգության բարձրացման համար նվազագույն ստանդարտների, այդ թվում ավելի խիստ տեխնիկական պայմանների և անվտանգության լրացուցիչ պահանջների սահմանումը, ինչպես, օրինակ, փաստաթղթերի կեղծումն ու կրկնօրինակումը դժվարացնող առավել կատարելագործված պաշտպանիչ տարրերի, օգտագործման պահանջը: Դրանք ներառում են նաև փաստաթղթերի ապօրինի տրամադրումը, տիրապետումը և օգտագործումը կանխարգելիչ, ինչպես նաև կեղծված, ապօրինի փոփոխված, կրկնօրինակված, տրամադրված կամ օգտագործված փաստաթղթերի բացահայտմանը նպաստող վարչական ու հսկողության միջոցներ:

Յոդված 9. Փաստաթղթերի օրինականությունը և վավերությունը

120. Ճանփորդական և անձը հաստատող փաստաթղթերը կարևոր գործիք են թրաֆիքինգի, հատկապես անդրազգային թրաֆիքինգի համար: Ուստի, ճանփորդական կամ անձը հաստատող փաստաթղթերի օրինականության և վավերության ստուգման գործում Կողմերի միջև համագործակցությունը կարևոր կանխարգելիչ միջոց է հանդիսանում:

121. Պալերմոյի արձանագրության Յոդված 13-ի հիման վրա մշակված Կոնվենցիայի Յոդված 9-ով յուրաքանչյուր Կողմից պահանջվում է ստուգել այն ճանփորդական կամ անձը հաստատող փաստաթղթերի օրինականությունը և վավերությունը, որոնք տրվել կամ իբրև թե տրվել են իր մարմինների կողմից, եթե մյուս Կողմը նման պահանջ է ներկայացնում և եթե կասկածներ են առաջանում, որ դրանք օգտագործվում են մարդկանց թրաֆիքինգի նպատակով: Ստուգումն անցկացվում է այն Կողմի ներքին օրենսդրությանը համապատասխան, որին ստուգման պահանջ է ներկայացվել:

122. Այն կողմը, որին ստուգման պահանջ է ներկայացվել, պարտավոր է ստուգել ճանփորդական և անձը հաստատող փաստաթղթերի «օրինականությունն ու վավերությունը», որոնք տրվել կամ իբրև թե տրվել են իր մարմինների կողմից: Դա ենթադրում է, որ այն կողմը, որին ստուգման պահանջ է ներկայացվել, պետք է ստուգի փաստաթղթերի օրինականությունը ինչպես ֆորմալ, այնպես էլ բովանդակային առումով: Մարդկանց թրաֆիքինգի համար օգտագործվող փաստաթղթերը կարող են ակնհայտորեն կեղծված լինել, ուստի և տրամադրված չլինել ստուգման պահանջ ստացած Կողմի կողմից: Դրանք կարող են նաև տրամադրված լինել վերջինիս կողմից, սակայն հետագայում ապօրինի փոփոխված և կրկնօրինակված լինել: Նման դեպքերում փաստաթղթերը ֆորմալ առումով անօրինական են: Այնուամենայնիվ, թրաֆիքինգի համար կարող են օգտագործվել նաև այն փաստաթղթերը, որոնք ո՛չ ապօրինի փոփոխվել և ո՛չ էլ կրկնօրինակվել են: Օրինակ, փաստաթղթերը կարող են կազմված լինել ոչ հավաստի կամ կեղծ տեղեկությունների հիման վրա, կամ դրանք կարող են լիովին վավեր լինել, սակայն օգտագործվել դրանց օրինական տերեր չհանդիսացող այլ անձանց կողմից: Նման դեպքերում փաստաթղթերն անօրինական են բովանդակային առումով: Յոդված 9-ը Կողմերին պարտավորեցնում է համագործակցել բոլոր վերոհիշյալ իրավիճակների բացահայտման ուղղությամբ:

123. Հարկ է նշել, որ Կողմերը պարտավոր են գործել անհապաղ, իսկ ստուգման պահանջ ստացած Կողմը պետք է պահանջ ներկայացրած Կողմին պատասխանի որոշակի ողջամիտ ժամկետի ընթացքում, որի տևողությունը, անշուշտ, կարող է տարբեր լինել՝ կախված պահանջում նշված ստուգման բարդությունից: Այնուամենայնիվ, էական է, որ պատասխանն ուղարկվի ժամանակին, որպեսզի ստուգման պահանջ ներկայացրած կողմը հնարավորություն ունենա անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել:

Գլուխ III. Միջոցներ ուղղված զոհերի իրավունքների պաշտպանությանը և ապահովմանը՝ երաշխավորելով զենդերային հավասարությունը

124. Գլուխ II-ը պարունակում է մարդկանց թրաֆիքինգի զոհերի պաշտպանության ու օգնության վերաբերյալ դրույթներ: Այս գլխում ընդգրկված դրույթներից մի քանիսը վերաբերում են թրաֆիքինգից տուժած բոլոր անձանց (Հոդվածներ 10, 11, 12, 15 և 16): Մյուսները կիրառվում են Կողմի տարածքում անօրինականորեն գտնվող տուժած անձանց (Հոդվածներ 13 և 14) կամ օրինականորեն գտնվող, բայց կարճաժամկետ կացության կարգավիճակ ունեցող տուժած անձանց նկատմամբ: Ի լրումն դրանց, դրույթներից մի քանիսը կիրառվում են այն անձանց նկատմամբ, որոնք դեռևս պաշտոնապես չեն ճանաչվել որպես զոհեր, սակայն ողջամիտ հիմքեր կան նրանց թրաֆիքինգից տուժած անձինք համարելու համար (Հոդված 10 (2), Հոդված 12 (1) և (2) և Հոդված 13):

125. Այս գլխի կազմում է Կոմպենցիայի կարևորագույն մասերից մեկը: Դրա հիմքում ընկած է թրաֆիքինգից տուժած անձանց իրավունքների պաշտպանությունը՝ ելնելով միևնույն դիրքերից, որոնք շարադրված են *Մարդու իրավունքների և մարդկանց թրաֆիքինգի վերաբերյալ Միավորված Ազգերի Կազմակերպության առաջարկված սկզբունքներում և ուղեմիջոցներում*: «Թրաֆիքինգի ենթարկված անձանց մարդու իրավունքները պետք է գտնվեն թրաֆիքինգի կանխարգելման ու դրա դեմ պայքարի, ինչպես նաև թրաֆիքինգի զոհերին պաշտպանություն, օգնություն ու փոխհատուցում ապահովելուն ուղղված բոլոր նախաձեռնությունների կենտրոնում»:¹⁵

126. Գլուխ III-ը կազմված է ութ հոդվածից: Հոդված 10-ում քննության է առնվում թրաֆիքինգից տուժածների բացահայտումը՝ որպես էական գործոն նրանց սույն Կոմպենցիայում շարադրված իրավունքներից օգտվելու հնարավորություն ընձեռելու համար: Հոդված 11-ը վերաբերում է նրանց մասնավոր կյանքի պաշտպանությանը: Հոդված 12-ը սահմանում է թրաֆիքինգից տուժած անձանց օժանդակության միջոցները: Հոդված 13-ով և 14-ով սահմանվում է վերականգնման և խորհրդածության ժամկետ Կողմերի տարածքում անօրինականորեն գտնվող թրաֆիքինգից տուժած անձանց համար, և նախատեսվում է կացության կարգավիճակի թույլտվության տրամադրում: Հոդված 15-ը նախատեսում է թրաֆիքինգի զոհերին փոխհատուցման տրամադրում նրանց կողմից կրած վնասի դիմաց: Հոդված 16-ը վերաբերում է տուժածների հայրենադարձությանն ու վերադարձին, իսկ Հոդված 17-ը՝ զենդերային հավասարությանը:

Հոդված 10. Տուժածների բացահայտումը

127. Թրաֆիքինգի զոհերի պաշտպանության ու նրանց օգնության ցուցաբերման համար առաջնակարգ նշանակություն ունի զոհերի ճիշտ բացահայտումը: Հոդված 10-ով նախատեսվում է զոհերի բացահայտում

¹⁵ Սկզբունքներ, կետ 1

տուժածներին Գլուխ III-ում սահմանված միջոցներից օգտվելու իրավունք չնորհելու համար: Ձոռների բացահայտումը ժայռահեղ կարևոր, հաճախ բարդ և մանրամասն հետազոտություն պահանջող գործընթաց է: Ձոռների ճիշտ բացահայտման ձայնողումը թերևս կհանգեցնի այն բանին, որ զոհերին կշարունակի մերժվել իրենց հիմնարար իրավունքներից օգտվելու հնարավորությունը, իսկ մարդկանց թրաֆիքինգի մեջ մեղավոր անձանց դատապարտման համար անցկացվող քրեական դատավարության ժամանակ մեղադրող կողմը կզրկվի անհրաժեշտ վկայից: Բացահայտման գործընթացի միջոցով իրավասու մարմինները հայտնաբերում ու գնահատում են այնպիսի հանգամանքներ, որոնց հիման վրա նրանք որևէ անձի ճանաչում են որպես թրաֆիքինգի զոհ:

128. Կետ 1-ը Կողմերին պարտավորեցնում է բացահայտել թրաֆիքինգից տուժած անձանց և, անհրաժեշտության դեպքում, Կոնվենցիայի 3ոդված 14-ում սահմանված կարգով նրանց տրամադրել կացության կարգավիճակ: Կետ 1-ը ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ ազգային մարմինների իրազեկվածությունը մարդկանց թրաֆիքինգի խնդրին հաճախ անբավարար է: Թրաֆիքինգով զբաղվողները զոհերից հաճախ թաքցնում են նրանց անձնագրերը կամ անձը հաստատող փաստաթղթերը կամ ոչնչացնում դրանք: Նման դեպքերում առկա է այն սպառնալիքը, որ զոհերին հիմնականում կվերաբերվեն որպես ապօրինի ներգաղթողների, մարմնավաճառների կամ անօրինականորեն աշխատողների և նրանց կպատժեն կամ ետ կուղարկեն իրենց երկրները՝ առանց օգնություն տրամադրելու: Նման իրավիճակից խուսափելու համար 3ոդված 10-ի (1) կետով Կողմերից պահանջվում է իրենց իրավասու մարմինները համալրել մարդկանց թրաֆիքինգի կանխարգելման ու դրա դեմ պայքարի, ինչպես նաև զոհերի, այդ թվում երեխաների բացահայտման ու նրանց օգնության ցուցաբերման բնագավառների վերապատրաստված և որակյալ մասնագետներով, և ապահովել, որ այդ մարմինները համագործակցեն ինչպես միմյանց, այնպես էլ աջակցություն ցուցաբերող համապատասխան կազմակերպությունների հետ:

129. «Իրավասու մարմիններ» են համարվում այն մարմինները, որոնք կարող են գործ ունենալ թրաֆիքինգից տուժած անձանց հետ, ինչպիսիք են ոստիկանությունը, աշխատանքի նկատմամբ հսկողություն իրականացնող տեսչությունները, մաքսային մարմինները, ներգաղթի հարցերով զբաղվող մարմինները, դեսպանատներն ու հյուպատոսարանները: Խիստ կարևոր է, որ այդ մարմինները համալրված լինեն այնպիսի անձանցով, որոնք կարող են բացահայտել զոհերին և նրանց ուղղություն ցույց տալ դեպի օժանդակություն ցուցաբերող կազմակերպություններն ու ծառայությունները:

130. Կոնվենցիայով չի պահանջվում, որ իրավասու մարմիններն ունենան մարդկանց թրաֆիքինգի հարցերում մասնագիտացված անձանց, սակայն պարտավորեցնում է, որ դրանք համալրված լինեն զոհերի բացահայտման համար անհրաժեշտ վերապատրաստված ու որակավորված անձանցով: Նմանապես, Կոնվենցիայով պահանջվում է, որ վերոհիշյալ մարմինները համագործակցեն միմյանց և աջակցություն ապահովող կազմակերպություններ հետ: Աջակցություն ապահովող կազմակերպությունները կարող են լինել զոհերին օգնություն և աջակցություն ապահովելու խնդիր իրականացնող հասարակական կազմակերպություններ:

131. Անգամ այն դեպքում, երբ զոհի բացահայտման գործընթացը չի ավարտվել, սակայն իրավասու մարմինները հիմքեր ունեն ենթադրելու, որ այս կամ այն անձը թրաֆիքինգից տուժած է, նրանք չպետք է տվյալ անձին վտարեն այդ երկրի տարածքից: Տուժած անձի բացահայտումը ժամանակ պահանջող գործընթաց է:

Դրա համար կարող է պահանջվել այլ երկրների, Կողմերի կամ զոհերին աջակցող կազմակերպությունների հետ տեղեկությունների փոխանակում, ինչը կարող է երկարաձգել բացահայտման գործընթացը: Այնուամենայնիվ, թրաֆիքինգից տուժած անձանցից շատերն անօրինականորեն են գտնվում այն երկրում, որտեղ նրանք հետազոտվում են: Կետ 2-ով պահանջվում է, որ այդ անձինք անմիջապես չվտարվեն տվյալ երկրից, քանի դեռ իրենց՝ որպես զոհի բացահայտման գործընթացը չի ավարտվել: Կոնվենցիայի Գլուխ III-ը բազմաթիվ իրավունքներ է նախատեսում մարդկանց թրաֆիքինգից տուժած անձանց համար: Այդ իրավունքները սոսկ տեսական ու խաբուսիկ բնույթ կկրեն, եթե վերոհիշյալ անձինք երկրից վտարվեն նախքան իրենց՝ որպես զոհի բացահայտման գործընթացի ավարտը:

132. Կոնվենցիայով չի պահանջվում բացարձակ համոզվածություն՝ խնդրո առարկա անձին տվյալ երկրի տարածքից չվտարելու համար (քանի որ լիարժեք համոզվածության ձեռքբերումն անհնարին է նախքան բացահայտման գործընթացի ավարտը): Կոնվենցիայի համաձայն, եթե «ողջամիտ» հիմքեր կան ենթադրելու, որ այս կամ այն անձը թրաֆիքինգից տուժած է, ապա դա բավարար պատճառ է հանդիսանում տվյալ անձին երկրից չվտարելու համար, քանի դեռ բացահայտման գործընթացի ավարտման արդյունքում վերջնականապես չի պարզվել տվյալ անձի՝ թրաֆիքինգի զոհ լինելու կամ չլինելու փաստը:

133. «Իր տարածքից վտարում» արտահայտությունը ենթադրում է վտարում ինչպես ծագման երկիրը, այնպես էլ երրորդ երկիր:

134. Հոդված 10-ով նախատեսված բացահայտման գործընթացը կախված չէ թրաֆիքինգի համար պատասխանատու անձանց դեմ իրականացվող քրեական դատավարությունից: Ուստի, տուժածի բացահայտման գործընթացի սկսման կամ ավարտման համար քրեական դատապարտման փաստի առկայություն չի պահանջվում:

135. Եթե անգամ տուժածի բացահայտման գործընթացն ավելի արագ է ընթանում, քան քրեական դատավարությունը (եթե այդպիսին իրականացվում է), տուժած անձն օգնության կարիք կունենա նույնիսկ նախքան իր՝ որպես թրաֆիքինգի զոհ լինելու փաստի հաստատումը: Այդ պատճառով, Կոնվենցիայով նախատեսվում է, որ եթե իրավասու մարմինները «ողջամիտ հիմքեր ունեն ենթադրելու», որ այս կամ այն անձը թրաֆիքինգից տուժած է, ապա վերջինս պետք է հնարավորություն ունենա բացահայտման գործընթացի ժամանակ օգտվելու Հոդվածի 12-ի (1) և (2) կետերով նախատեսված օժանդակության միջոցներից:

136. Կետ 3-ը քննության է առնում այն հարցը, որ չնայած երեխաները հատուկ պաշտպանության միջոցների կարիք ունեն, սակայն հաճախ դժվար է լինում որոշելը, արդյոք տվյալ անձի 18 տարին լրացե՞լ է, թե՞ ոչ: Հետևաբար կետ 3-ով Կողմերից պահանջվում է համարել, որ զոհը երեխա է, եթե հիմքեր կան այդպես ենթադրելու և եթե տուժածի տարիքի հետ կապված անորոշություն կա: Նախքան տուժածի տարիքը որոշելը նրան պետք է տրամադրվեն պաշտպանության հատուկ միջոցներ՝ մասնավորապես *Երեխայի իրավունքների մասին Միավորված Ազգերի Կազմակերպության կոնվենցիայով* սահմանված նրանց իրավունքներին համապատասխան:

137. Կետ 4-ով նախատեսվում են այնպիսի միջոցառումներ, որոնք Կողմերը պետք է ձեռնարկեն թրաֆիքինգից տուժած չուղեկցվող երեխաների հետ գործ ունենալիս: Այսպես, Կողմերը պետք է ապահովեն երեխայի շահերի

ներկայացուցչությունը օրինական խնամակալի, այլ կազմակերպության կամ մարմնի կողմից, որը պարտավորված է գործել՝ ելնելով այդ երեխայի լավագույն շահերից. (ա) անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել նրա անձը և ազգությունը հաստատելու ուղղությամբ և (բ) բոլոր ջանքերը գործադրել նրա ընտանիքը հայտնաբերելու ուղղությամբ, եթե դա բխում է երեխայի լավագույն շահերից: Երեխայի ընտանիքը պետք է հայտնաբերվի միայն այն դեպքում, երբ դա բխում է երեխայի լավագույն շահերից, հաշվի առնելով այն հանգամանքը, որ երբեմն հենց երեխայի ընտանիքն է լինում նրա թրաֆիքինգի աղբյուրը:

Հոդված 11. Մասնավոր կյանքի պաշտպանությունը

138. Հոդված 11-ով ամրագրվում է թրաֆիքինգից տուժածների մասնավոր կյանքի պաշտպանության պահանջը: Պաշտպանությունը էական է ինչպես զոհերի ֆիզիկական ապահովության (հաշվի առնելով նրանց թրաֆիքինգի մեջ ներքաշած անձանցից սպառնացող վտանգը), այնպես էլ նրանց ծագման կամ գտնվելու երկրում սոցիալական վերաինտեգրման հնարավորությունների պահպանման համար (նկատի ունենալով թրաֆիքինգի մեջ ներքաշված լինելու արդյունքում ինչպես զոհի, այնպես էլ նրա ընտանիքի ամոթի զգացումը և անարգանքի ենթարկվելու սպառնալիքը):

139. Կետ 1-ի առաջին նախադասությունում սահմանված է ամբողջ հոդվածի նպատակը՝ զոհերի անձի և մասնավոր կյանքի պաշտպանությունը: Հոդված 11-ի մնացած մասում շարադրվում են այդ նպատակի իրագործմանն ուղղված հատուկ միջոցները: Հարկ է նշել, որ այդ հարցը քննարկվում է նաև Կոնվենցիայի Հոդված 30-ում, որը վերաբերում է զոհերի մասնավոր կյանքի և անձի պաշտպանությանը դատական քննության հատուկ իրավիճակներում:

140. Կետ 1-ը քննության է առնում նաև թրաֆիքինգից տուժած անձանց անձնական տվյալների պահպանության հարցը: Ձոհերին սպառնացող հավանական վտանգի պատճառով, եթե նրանց վերաբերող տվյալները տարածվում են առանց անվտանգության միջոցների կիրառման և ստուգումների անցկացման, Կոնվենցիայով պահանջվում է, որ այդ տվյալները մշակվեն ու պահպանվեն *Անձնական բնույթի տվյալների ավտոմատացված մշակման առնչությամբ անհատ անձանց պաշտպանության մասին կոնվենցիայում* [Եվրոպական պայմանագրերի ժողովածու No. 108] սահմանված կարգով:

141. Մասնավորապես, No.108 Կոնվենցիայով նախատեսվում է, որ անձնական տվյալները պահպանվեն միայն հատուկ օրինական նպատակներով և չօգտագործվեն այդ նպատակներին որևէ ձևով հակասող եղանակով: Բացի դրանից, Կոնվենցիայով պահանջվում է, որ նման տվյալները չպահպանվեն այնպիսի ձևով, որը թույլ կտա բացահայտելու դրանց առարկան, ինչպես նաև չպահպանվեն ավելի երկար, քան դա անհրաժեշտ է այդ տվյալների գրանցման ու պահպանման կոնկրետ նպատակի համար: No.108 Կոնվենցիան նաև պարտադրում է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել տվյալների չլիազորված օգտագործումը, դրանց փոփոխումը կամ հրապարակումը կանխելու ուղղությամբ: Հոդված 11(1)-ում նշվում է, որ թրաֆիքինգից տուժած անձանց անձնական տվյալների պահպանության և օգտագործման հարցում Կողմերը պետք է գործեն *Անձնական բնույթի տվյալների ավտոմատացված մշակման առնչությամբ անհատ անձանց պաշտպանության մասին կոնվենցիայի* [Եվրոպական պայմանագրերի ժողովածու No. 108] դրույթներին համապատասխան:

142. Կետ 2-ով նախատեսվում են երեխաների պաշտպանության հատուկ միջոցներ, քանի որ հատկապես վտանգավոր է նրանց անձի կամ անձնական

տվյալների հրապարակումը զանգվածային լրատվության կամ այլ միջոցներով: Այս դրույթը նմանապես կիրառվում է «բացահայտման հնարավորություն տվող մանրամասների» նկատմամբ, քանի որ զանգվածային լրատվության միջոցները, առանց տուժած երեխայի անունը նշելու, կարող են հրապարակել այնպիսի մանրամասներ, ինչպես օրինակ՝ տեղեկություն նրա գտվելու կամ աշխատանքի վայրի մասին, որը հնարավորություն կտա հայտնաբերելու այդ երեխային:

143. Կողմերն ինքնուրույն կարող են որոշել, թե ինչ միջոցներ պետք է ձեռնարկվեն երեխաների թրաֆիքինգի զոհերի անձի կամ նրանց հայտնաբերելու հնարավորություն տվող մանրամասների հրապարակումը կանխելու ուղղությամբ: Այդ նպատակով, որոշ երկրների օրենսդրությամբ քրեական պատժամիջոցներ են նախատեսվում որոշակի իրավազանցությունների զոհերին հայտնաբերելու հնարավորություն տվող տեղեկությունների հրապարակման համար:

144. Այնուհանդերձ, կետ 2-ով թույլատրվում է տուժած երեխաներին վերաբերող տեղեկությունները հրապարակել բացառիկ հանգամանքներում, երբ նման հրապարակումն արդարացված է երեխայի ընտանիքի անդամներին հայտնաբերելու կամ երեխայի բարեկեցությունը և պաշտպանությունը այլ կերպ ապահովելու անհրաժեշտությամբ:

145. Ի վերջո, կետ 3-ով Կողմերին առաջարկվում է ձեռնարկել այնպիսի միջոցներ, որոնք զանգվածային լրատվության միջոցներին կխրախուսեն պաշտպանել զոհերի անձը և մասնավոր կյանքը: Չանգվածային լրատվամիջոցների արտահայտման ազատությանը անհարկի միջամտելուց խուսափելու համար, վերոհիշյալ կետում նշվում է, որ այդ միջոցառումները պետք է ձեռնարկվեն Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 3-րդ 10-ի պահանջներին համապատասխան և բացառապես հետապնդեն զոհերի անձի ու մասնավոր կյանքի պաշտպանության նպատակ: «Ինքնակարգավորումը» մասնավոր սեկտորի կողմից կատարվող կարգավորումն է, «համակարգավորումը»՝ մասնավոր սեկտորի և պետական մարմինների միջև տեղի ունեցող կարգավորումը, իսկ «կարգավորումը» կիրառվում է միայն պետական մարմինների կողմից ինքնուրույն սահմանված ստանդարտների նկատմամբ:

Յոթերորդ 12. Օժանդակությունը թրաֆիքինգի զոհերին

146. Թրաֆիքինգով զբաղվողների հսկողությունից ազատված զոհերը սովորաբար հայտնվում են խիստ անապահով ու խոցելի դրության մեջ: Յոթերորդ 12-ի (1) կետում սահմանվում են Կողմերի կողմից թրաֆիքինգի զոհերին ցուցաբերվող օժանդակության միջոցները: Անհրաժեշտ է նշել, որ Յոթերորդ 12-ի դրույթները կիրառվում են բոլոր զոհերի նկատմամբ, լինեն նրանք ազգային, թե անդրազգային թրաֆիքինգից տուժած անձինք: Դրանք վերաբերում են նաև այն զոհերին, որոնց Յոթերորդ 10-ի (2) կետի և Յոթերորդ 13-ի (2) կետի պայմաններով նախատեսված կացության կարգավիճակի թույլտվություն չի տրվել:

147. Օժանդակության միջոցներից օգտվելու իրավունք ունեն այն բոլոր անձինք, որոնք Յոթերորդ 10-ով նախատեսված՝ տուժածի բացահայտման գործընթացի ավարտից հետո ճանաչվել են որպես զոհեր: Այդ անձինք իրավունք ունեն օգտվելու Յոթերորդ 12-ում սահմանված օժանդակության բոլոր միջոցներից: Տուժածի բացահայտման գործընթացի փաստացի իրականացման ընթացքում, եթե իրավասու մարմինները «ողջամիտ հիմքեր ունեն ենթադրելու», որ որևէ անձ թրաֆիքինգի զոհ է հանդիսանում, այդ անձն իրավունք ունի օգտվելու Յոթերորդ 12-ի միայն (1) և (2) կետերում նշված, այլ ոչ թե Յոթերորդ 12-ով նախատեսված բոլոր

միջոցներից: Վերականգնման և խորհրդածության ժամանակաշրջանում (Հոդված 13) այդ անձը նմանապես իրավունք ունի օգտվելու Հոդված 12-ի (1) և (2) կետերով նախատեսված միջոցներից:

148. Կետ 1-ով պահանջվում է, որ համապատասխան միջոցները ձեռնարկվեն «յուրաքանչյուր Կողմի» կողմից: Դա չի նշանակում, որ Կոնվենցիայի բոլոր Կողմերը պարտավոր են օժանդակություն ցուցաբերել յուրաքանչյուր և բոլոր զոհերին. դա նշանակում է, որ այն Կողմը, որի տարածքում գտնվում է թրաֆիքինգից տուժած անձը, պետք է ապահովի, որ տվյալ անձին տրամադրվեն ա.-ից գ. ենթակետերում նշված օժանդակության միջոցները: Կողմի տարածքից դուրս գալուց հետո տուժած անձի նկատմամբ Հոդված 12-ի միջոցներն այլևս չեն կիրառվում, քանի որ Կողմերը պատասխանատու են միայն իրենց իրավասության տարածքում գտնվող անձանց համար:

149. Կետ 5-ի համաձայն, օժանդակությունը կարող է ապահովվել զոհերին աջակցության ցուցաբերման խնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունների, այլ համապատասխան կառույցների և քաղաքացիական հասարակության մյուս տարրերի հետ համագործակցությամբ: Այնուհանդերձ, Կոնվենցիայի պարտավորությունների կատարման համար պատասխանատվությունը կրում են Կոնվենցիայի կողմերը: Հետևաբար, Կողմերն են, որ պարտավոր են անհրաժեշտ քայլեր ձեռնարկել՝ ապահովելու համար, որ զոհերը ստանան իրենց համար նախատեսված օժանդակությունը, մասնավորապես հավաստիանալ, որ պաշտպանության և օգնության ծառայությունները ժամանակին անհրաժեշտ ֆինանսավորում են ստացել:

150. ա.-ից գ. ենթակետերով նախատեսված օժանդակության նպատակը «զոհերին ֆիզիկական, հոգեբանական և սոցիալական վերականգնման հարցում օժանդակելն է»: Ուստի, համապատասխան մարմինները պետք է կազմակերպեն օժանդակության նման միջոցների ձեռնարկումը՝ ելնելով այդ նպատակի հատուկ բնույթից:

151. Չնայած իրավական անհրաժեշտության բացակայությանը, քանի որ Կողմերը միշտ ազատ են ձեռնարկելու առավել բարենպաստ միջոցառումներ՝ համեմատած Կոնվենցիայի ցանկացած դրույթով սահմանվածների հետ, Կոնվենցիան մշակողները ցանկացել են հստակ ընդգծել, որ Կոնվենցիայով սահմանված են օժանդակության միայն նվազագույն միջոցներ: Այդպիսով, Կողմերը կարող են իրենց հայեցողությամբ տրամադրել օժանդակության լրացուցիչ միջոցներ:

152. Համաձայն ա) կետի, զոհերի համար պետք է ապահովվեն «գոյատևման համար անհրաժեշտ կենսապայմաններ, մասնավորապես, պատշաճ և ապահով կացարան, հոգեբանական ու նյութական օգնություն»: Կողմերի պարտավորությունն է զոհերին ապահովել գոյատևման համար անհրաժեշտ կենսապայմաններով, սակայն Կոնվենցիան մշակողները անհրաժեշտ են համարել որպես օրինակ նշել պատշաճ և ապահով կացարանի, հոգեբանական ու նյութական օգնության տրամադրումը՝ որպես թրաֆիքինգից տուժածների համար հատկապես անհրաժեշտ օգնության միջոցների:

153. Հարկ է նշել, որ չնայած *Եվրոպական սոցիալական խարտիայի (վերանայված տարբերակ)* [Եվրոպական պայմանագրերի ժողովածու No.163] Հոդված 31-ով ճանաչվում է յուրաքանչյուր անձի՝ կացարան ունենալու իրավունքը, սակայն այն իրավիճակի առանձնահատկությունները, որի մեջ զոհերը հայտնվել են, թելադրում են նրանց հոգեբանական ու սոցիալական

վերականգնման համար օժանդակության առանձնահատուկ միջոցների տրամադրման անհրաժեշտությունը: Համապատասխանաբար, կետ ա)-ով պահանջվում է, որ կացարանը լինի «պատշաճ և ապահով», քանի որ զոհերը կարիք ունեն հարմարեցված ու պաշտպանված կացարանի, որտեղ նրանք կարող են իրենց ապահով զգալ թրաֆիքինգով զբաղվողներից:

154. Պատշաճ կացարանի տեսակը կախված է զոհի անձնական հանգամանքներից (օրինակ, զոհը կարող ապրել փողոցում կամ արդեն ունենալ ինչ-որ կացարան, որի դեպքում անհրաժեշտ է հավաստիանալ, որ կացարանը անվտանգության առումով խնդիր չի ներկայացնում): Մարդկանց թրաֆիքինգի դեպքում հատկապես հարմար են հատուկ պաշտպանված օբևանները, որոնք արդեն կիրառվում են տարբեր երկրներում: Նման ապաստանները, որտեղ աշխատում են թրաֆիքինգի զոհերին օժանդակության ցուցաբերման հարցերում որակավորված անձինք, ապահովում են զոհերի շուրջօրյա ընդունելություն և ի վիճակի են արձագանքել արտակարգ իրավիճակներին: Նման ապաստաններ օգտագործելու նպատակը զոհերի համար անվտանգ միջավայր ստեղծելն է և նրանց օգնությամբ ու կայունությամբ ապահովելը: Որպես զոհերի անվտանգության երաշխիք, խիստ կարևոր է այնպիսի նախագգուշական միջոցների ձեռնարկումը, ինչպիսիք են նրանց հասցեները գաղտնի պահելը և այցելությունների նկատմամբ խիստ կանոններ կիրառելը, քանի որ առաջին հերթին առկա է այն վտանգը, որ թրաֆիքինգով զբաղվողները կփորձեն վերականգնել զոհի նկատմամբ իրենց հսկողությունը: Ապաստանների միջոցով ապահովվող պաշտպանությունն ու օգնությունը նպատակ են հետապնդում զոհերին իրենց կյանքը կրկին ինքնուրույն տնօրինելու հնարավորություն ընձեռել:

155. Երեխաների դեպքում, անհրաժեշտ է ապահովել, որ կացարանը համապատասխանի նրանց հատուկ կարիքներին: Թրաֆիքինգի զոհ դարձած երեխաներին երբեմն տեղավորում են հսկվող հաստատություններում: Երբեմն դա տեղի է ունենում երեխաների սոցիալական ապահովման մասնագիտացված հաստատություններում տեղերի բացակայության պատճառով: Երեխաներին հսկվող հաստատություններում տեղավորելը երբեք չպետք է համարվի որպես նրանց պատշաճ կացարանով ապահովում:

156. Հոգեբանական օժանդակությունը զոհերին կօգնի հաղթահարել այն ծանր հոգեկան հարվածները, որոնց նրանք ենթարկվել են, և վերաինտեգրվել հասարակության մեջ: Կոնվենցիայով նախատեսվում է նյութական օգնության ցուցաբերում, քանի որ թրաֆիքինգով զբաղվողների ազդեցությունից ազատվելուց հետո զոհերից շատերը մնում են բացարձակապես առանց որևէ նյութական միջոցների: ա) ենթակետով սահմանված նյութական օգնությունը նախատեսված է նրանց գոյատևման համար անհրաժեշտ միջոցներով ապահովելու համար: Նյութական օգնությունը ֆինանսական օգնությունից տարբերվում է նրանով, որ այն կարող է տրամադրվել նաև բնեղեն տեսքով (օրինակ՝ սնունդ և հագուստ), այլ ոչ թե անպայմանորեն դրամական միջոցներով:

157. բ) ենթակետով նախատեսվում է զոհերին շտապ բուժ. օգնություն ստանալու հնարավորության ընձեռում: *Եվրոպական սոցիալական խարտիայի (վերանայված տարբերակ)* [Եվրոպական պայմանագրերի ժողովածու No.163] Հոդված 13-ով ճանաչվում է նաև բավարար միջոցներ չունեցող ցանկացած անձի՝ սոցիալական և բժշկական օգնություն ստանալու իրավունքը: Բժշկական օգնությունը հաճախ անհրաժեշտ է լինում թրաֆիքինգի այն զոհերին, որոնք շահագործման կամ բռնության են ենթարկվել: Նման օգնությունը թույլ է տալիս նաև բռնության մասին վկայություններ գրանցել, որպեսզի զոհերը, ցանկության դեպքում, կարողանան իրավական գործընթաց ձեռնարկել: Լրիվ բժշկական

օգնությունը նախատեսված է միայն Յոդված 12-ի (3) կետի համաձայն Կողմի տարածքում օրինականորեն գտնվող զոհերի համար:

158. գ) ենթակետի համաձայն, անհրաժեշտության դեպքում զոհերին պետք է տրամադրվեն թարգմանչական ծառայություններ, քանի որ զոհերից շատերը չեն խոսում կամ շատ վատ են խոսում այն երկրի լեզվով, ուր նրանց տեղափոխել են շահագործման նպատակով: Լեզվի չինացությունը էլ ավելի է խորացնում նրանց մեկուսացվածությունը և հանդիսանում է իրենց իրավունքների ապահովման պահանջ ներկայացնելուն խոչընդոտող գործոններից մեկը: Նման դեպքերում լեզվական օգնությունն անհրաժեշտ է պաշտոնական ձևակերպումների հարցում նրանց օժանդակելու համար: Սա իրավունքներից օգտվելու հնարավորությունն ապահովող էական միջոցներից է, ինչը նախադրյալներ է ստեղծում արդարադատությանը դիմելու համար: Այս դրույթը չի սահմանափակվում դատական քննությունների ժամանակ թարգմանչի ծառայություններից օգտվելու իրավունքի շնորհմամբ:

159. դ) և ե) ենթակետերը ավելի կոնկրետ են քննարկում տեղեկությունների տրամադրման ձևով զոհերին օժանդակելու հարցը. զոհերի վիճակի երկու ընդհանուր առանձնահատկություններից են անօգնականությունը և հնազանդությունը թրաֆիքինգով զբաղվողներին՝ վախի և իրենց վիճակից ազատվելու հնարավորությունների վերաբերյալ տեղեկությունների բացակայության պատճառով:

160. դ) ենթակետով նախատեսվում է զոհերին իրենց հասկանալի լեզվով խորհրատվության և տեղեկատվության տրամադրում, մասնավորապես իրենց իրավունքների ու այն ծառայությունների վերաբերյալ, որոնցից կարող են օգտվել: Տեղեկատվությունը վերաբերում է այնպիսի հարցերին, ինչպիսիք են պաշտպանության և օժանդակության միջոցների մատչելիությունը, զոհերի համար մատչելի հնարավոր տարբերակները, այն ռիսկը, որին նրանք ենթարկվում են, Կողմի տարածքում նրանց ներկայությունն օրինականացնելու պահանջները, իրավական օգնության տարբեր հնարավոր ձևերը, այն, թե ինչպես է գործում քրեական իրավունքի համակարգը (ներառյալ քննության կամ դատավարության հետևանքները, դատավարության տևողությունը, վկաների պարտականությունները, հանցագործությունների կատարման մեջ մեղավոր ճանաչված անձից կամ այլ անձանցից կամ կազմակերպություններից փոխհատուցում ստանալու հնարավորությունները և ընդունված որոշումները կատարման ենթակետի հնարավորությունները): Խորհրատվությունն ու տեղեկատվությունը զոհերին պետք է հնարավորություն տան գնահատելու իրենց դրությունը և իրազեկ ընտրություն կատարելու իրենց համար մատչելի տարբեր հնարավորություններից:

161. Չնայած խորհրդատվությունն ու տեղեկատվությունը պետք է վերաբերի «մասնավորապես նրանց իրավունքներին», սակայն այն պետք է զանազանվի փոխհատուցման հետ կապված վարույթների ժամանակ նշանակված փաստաբանի կողմից տրամադրվող անվճար իրավաբանական օգնությունից, որը կոնկրետ քննարկվում է Յոդված 15-ի (2) կետում:

162. ե) ենթակետում քննարկվում է զոհերին ընդհանուր օժանդակության ցուցաբերումը՝ ապահովելու համար, որ նրանց իրավունքներն ու շահերը հաշվի առնվեն քրեական դատավարությունների ընթացքում: Զոհի՝ պաշտպան ունենալու իրավունքը ավելի կոնկրետ քննարկվում է Յոդված 15-ի (2) կետում:

163. գ) կետով ճանաչվում է երեխաների՝ կրթություն ստանալու իրավունքը:

164. Հոդված 12-ի (2) կետի համաձայն, յուրաքանչյուր կողմ պետք է պատշաճ ուշադրություն դարձնի տուժածի անվտանգության և պաշտպանության կարիքներին: Ձոհերի կարիքները կարող են խիստ տարբերվել՝ կախված նրանց անձնական հանգամանքներից: Այդ կարիքները կարող են բխել տարիքային կամ սեռային գործոններից, կամ այնպիսի հանգամանքներից, ինչպիսիք են շահագործման տեսակը, որին զոհը ենթարկվել է, զոհի ծագման երկիրը, նրա նկատմամբ կիրառված բռնության տեսակներն ու աստիճանը, մեկուսացվածությունն իր ընտանիքից կամ մշակույթից, տեղական լեզվի իմացությունը և զոհի նյութական կամ ֆինանսական միջոցները: Ուստի էական է այնպիսի միջոցների ձեռնարկումը, որոնցով լիովին հաշվի է առնվում զոհերի անվտանգությունը: Օրինակ, կացարանի հասցեն պետք է գաղտնի պահվի, իսկ կացարանը պետք է պաշտպանված լինի թրաֆիքինգով զբաղվողների՝ զոհերին վերահավաքագրելու ցանկացած ջանքերից:

165. Կետ 3-ի համաձայն, յուրաքանչյուր կողմ պետք է անհրաժեշտ բժշկական կամ այլ օգնություն տրամադրի իր տարածքում օրինական հիմքով բնակվող այն զոհերին, որոնք այդպիսի օգնության կարիք ունեն, սակայն չունեն դրա համար բավարար միջոցներ: Օրինական հիմքով բնակվող զոհերը հիմնականում քաղաքացիներն են և Հոդված 14-ում նշված կացության կարգավիճակ ունեցող անձինք: Ի լրումն դրա, *Եվրոպական սոցիալական խարտիայի (վերանայված տարբերակ)* [Եվրոպական պայմանագրերի ժողովածու No.163] Հոդված 13-ը, որի համաձայն ցանկացած անձին, որը չունի միջոցներ և ի վիճակի չէ նման միջոցներ հայթայթել իր սեփական ջանքերով կամ այլ աղբյուրներից, պետք է ցուցաբերվի համապատասխան օգնություն, իսկ հիվանդության դեպքում՝ նրա վիճակով պայմանավորված խնամք, կիրառվում է քաղաքացիների և պետության տարածքում օրինական հիմքով գտնվող անձանց նկատմամբ: Բժշկական օգնության ցուցաբերումը չի ենթադրում միայն շտապ բուժօգնության մատչելիություն, ինչպես նշված է 1(բ) կետում: Բժշկական օգնությունը կարող է ներառել, օրինակ, հղի կանանց կամ ՄԻՎ/ՁԻԱՅ ունեցող հիվանդներին օգնության ցուցաբերումը:

166. Կետ 4-ով յուրաքանչյուր կողմից պահանջվում է սահմանել կանոններ, որոնց համապատասխան իր տարածքում օրինական հիմքով բնակվող զոհերին կընձեռվի աշխատուժի շուկայից օգտվելու, ինչպես նաև մասնագիտական պատրաստման ու կրթության հնարավորություն: Կոնվենցիան մշակողների տասանկյունից, այդ միջոցների ձեռնարկումը կնպաստի հասարակության մեջ զոհերի վերահիմնադրմանը և իրենց սեփական կյանքը առավել ինքնուրույն տնօրինելուն: Այնուհանդերձ, Կոնվենցիայով չի սահմանվում աշխատուժի շուկայից օգտվելու, մասնագիտական պատրաստման ու կրթության փաստացի իրավունք: Կողմերն իրենց հայեցողությամբ պետք է որոշեն այդ հնարավորությունները ղեկավարող պայմանները: Այնպես, ինչպես կետ 3-ում, «օրինական հիմքով բնակվող» արտահայտությունը վերաբերում է, օրինակ, Հոդված 14-ում նշված կացության կարգավիճակ ունեցող կամ Կողմի քաղաքացի հանդիսացող անձանց: Պարտադիր չէ, որ հիշատակված թույլտվությունը խնդրո առարկա անձին տրվի աշխատանքի իրավունք տվող վարչական փաստաթղթի տրամադրման միջոցով:

167. Ինչպես արդեն նշվել է, հասարակական կազմակերպությունները ծայրահեղ կարևոր դեր են խաղում զոհերին օժանդակելու գործում: Այդ իսկ պատճառով կետ 5-ով սահմանվում է, որ յուրաքանչյուր Կողմ, անհրաժեշտության դեպքում և իր ներքին օրենսդրությամբ սահմանված կարգով, պետք է միջոցներ ձեռնարկի զոհերին օժանդակության խնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունների, այլ համապատասխան կառույցների և քաղաքացիական հասարակության մյուս տարրերի հետ համագործակցության ուղղությամբ:

168. Կոնվենցիան մշակողները ցանկացել են հստակեցնել, որ Հոդված 12-ի (6) կետով սահմանված օժանդակության ցուցաբերումը պայմանավորված չէ քննության և քրեական դատավարության ընթացքում իրավասու մարմինների հետ համագործակցելու՝ զոհի համաձայնությունից:

169. Որոշ Կողմեր կարող են որոշել, որ Հոդված 14-ով թուլատրված կացության կարգավիճակը շնորհվի միայն իրավասու մարմինների հետ համագործակցող զոհերին: Այնուհանդերձ, Հոդված 12-ի կետ 6-ով պահանջվում է, որ յուրաքանչյուր կողմ ձեռնարկի օրենսդրական կամ այլ անհրաժեշտ միջոցներ, որոնք կբացառեն որպես վկա հանդես գալու պատրաստակամության պայմանով տուժածին օգնություն տրամադրելու հնարավորությունը:

170. Հարկ է նշել նաև այն, որ շատ երկրների օրենսդրություններում անհրաժեշտության դեպքում վկայություն տալը սահմանված է որպես պարտադիր պահանջ: Կետ 6-ով ամրագրված պայմանի կատարումը չպետք է խոչընդոտի ազգային օրենսդրությամբ սահմանված ընթացակարգի որևէ փուլում իրավասու մարմինների կողմից իրականացվող գործունեությանը, մասնավորապես, հանցագործությունների քննության և հետապնդման ընթացքում: Ուստի, ոչ մի անձ չպետք է որպես վկա հանդես գալուց հրաժարվելու դեպքում վկայակոչի կետ 6-ով սահմանված դրույթը, եթե վկայություն տալը նրանից պահանջվում է օրենքով:

171. Կետ 7-ում մատնանշվում է, որ զոհերին մատուցվող ծառայություններն իրականացվեն նրանց համաձայնության և իրազեկության պայմաններում: Անշուշտ, շատ կարևոր է զոհերի համաձայնությունը իրենց տրամադրվող ծառայություններին: Օրինակ, զոհը պետք է հնարավորություն ունենա համաձայնվելու, որ բացահայտվի այնպիսի հիվանդություն ունենալու փաստը, ինչպիսին է ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ը: Բացի դրանից, զոհերին ծառայություններ տրամադրելիս պետք է հաշվի առնվեն խոցելի իրավիճակում հայտնված անձանց հատուկ կարիքները և երեխաների՝ կացարանի, կրթության ու առողջապահության հետ կապված իրավունքները:

Հոդված 13. Վերականգնման և խորհրդածության կշռադատման ժամանակահատված

172. Հոդված 13-ը նախատեսված է մարդկանց թրաֆիքինգից տուժած այն անձանց նկատմամբ կիրառվելու համար, որոնք անօրինականորեն են գտնվում Կողմի տարածքում կամ այնտեղ բնակվում են օրինական հիմքով՝ կացության կարճաժամկետ կարգավիճակով: Բացահայտվելուց հետո նման զոհերը, այնպես ինչպես թրաֆիքինգից տուժած այլ անձինք, ծայրահեղ խոցելի դրության մեջ են գտնվում իրենց ստացած բոլոր հարվածներից հետո: Ի լրումն դրա, նրանց սպառնում է նաև այդ երկրի տարածքից վտարվելու վտանգը:

173. Այդ իսկ պատճառով Հոդված 13-ի (1) կետով նախատեսվում է վերականգնման և խորհրդածության ժամկետ երկրի տարածքում անօրինականորեն գտնվող զոհերի համար, որի ընթացքում նրանք չպետք է վտարվեն Կողմի տարածքից: Կոնվենցիայի դրույթով Կողմերից պահանջվում է իրենց ներքին օրենսդրությամբ այդ ժամկետի տևողությունը սահմանել 30 օրվանից ոչ պակաս: Նշված նվազագույն ժամկետը կարևոր երաշխիք է զոհերի համար և ծառայում է մի շարք նպատակների: Այդ ժամկետի նպատակներից մեկը զոհերին վերականգնվելու և թրաֆիքինգով զբաղվողների ազդեցությունից ազատվելու հնարավորության ընձեռումն է: Զոհերի վերականգնումը ենթադրում է,

օրինակ, վերքերի ապաքինում և վերականգնում այն ֆիզիկական բռնություններից, որոնց նրանք ենթարկվել են: Դա նաև ենթադրում է, որ զոհերի մոտ վերականգնվի առնվազն նվազագույն հոգեբեմական կայունություն: Հոդված 13-ի կետ 3-ով Կողմերին թույլատրվում է չպահպանել այդ ժամկետը, եթե դա կարող է հանգեցնել հասարակական կարգի խախտման կամ եթե պարզվի, որ տուժածի կարգավիճակ ստանալու վերաբերյալ պահանջն անհիմն է:

174. Վերոհիշյալ ժամկետի նպատակներից մյուսը զոհերին «իրավասու մարմինների հետ համագործակցության վերաբերյալ իրազեկ որոշում կայացնելու» հնարավորություն ընձեռելն է: Դա նշանակում է, որ զոհերը պետք է որոշեն, թե արդյո՞ք թրաֆիքինգով զբաղվողների հետապնդման ընթացքում իրենք կհամագործակցեն իրավապահ մարմինների հետ: Այդ տեսանկյունից, սահմանված ժամկետը կնպաստի զոհի՝ որպես ավելի հուսալի վկա հանդես գալուն: Իրավապահ մարմիններին վկայություն տալու ցանկություն ունեցող զոհերի հայտարարությունները կարող են անհուսալի լինել, եթե նշված անձինք դեռևս շուկի մեջ են գտնվում իրենց կրած դաժան փորձություններից: «Իրազեկ որոշում» նշանակում է, որ այն ընդունելիս զոհը պետք է լինի բավարար չափով ողջամիտ վիճակում և տեղակ լինի իրեն մատչելի պաշտպանության ու օժանդակության միջոցների, ինչպես նաև թրաֆիքինգով զբաղվողների նկատմամբ դատական ընթացակարգերի նախաձեռնման հնարավորության մասին: Այդպիսի որոշման ընդունումը պահանջում է, որ զոհը ազատված լինի թրաֆիքինգով զբաղվողների ազդեցությունից:

175. Հոդված 13-ի (1) կետով նախատեսված վերականգնման ու խորհրդածության ժամկետը չպետք է շփոթել Հոդված 14-ի (1) կետով սահմանված կացության կարգավիճակի տրամադրման ժամկետի հետ: Վերականգնման ու խորհրդածության ժամկետը, որի նպատակը զոհերին վերականգնվելու և թրաֆիքինգով զբաղվողների ազդեցությունից ազատվելու և/կամ իրավասու մարմինների հետ համագործակցության վերաբերյալ իրազեկ որոշում կայացնելու հնարավորության ընձեռումն է, ինքնին պայմանավորված չէ քննչական և քրեական հետապնդման մարմինների հետ զոհերի համագործակցությամբ:

176. Իրավապահ մարմինների հետ համագործակցելու կամ չհամագործակցելու վերաբերյալ որոշում կայացնելը չի բացառում ցուցմունքներ տալու պարտավորությունը, եթե դա պահանջվում է դատավորի կողմից: Ուստի ոչ մի անձ, որից օրենքով պահանջվում է ցուցմունքներ տալ, չի կարող Հոդված 13-ի (1) կետով սահմանված դրույթն օգտագործել որպես ցուցմունքներ տալուց հրաժարվելու հիմք: Այդ պատճառով Հոդված 13-ի (1) կետում նշվում է, որ դրանում սահմանված դրույթը «չպետք է խոչընդոտի իրավասու մարմինների գործունեությանը ազգային օրենսդրությամբ սահմանված ընթացակարգի որևէ փուլում և, մասնավորապես, հանցագործությունների քննության և հետապնդման ընթացքում»:

177. Կոնվենցիայով պահանջվում է, որ վերականգնման և խորհրդածության ժամկետը սահմանվի առնվազն 30 օր տևողությամբ: Այդ ժամկետը պետք է լինի առնվազն 30 օր և համատեղելի լինի Հոդված 13-ի նպատակների հետ: Ներկայումս իրենց ազգային օրենսդրություններում նման ժամկետ նախատեսող երկրները այն սահմանել են մեկ ամիս, 45 օր, երկու ամիս, երեք ամիս տևողությամբ, կամ այդ ժամկետի կոնկրետ տևողություն չեն սահմանել: Եռամսյա ժամկետի մասին նշվել է «Հարավարևելյան Եվրոպայի կայունության պակտի» 3-րդ Տարածաշրջանային նախարարական ֆորումի հռչակագրում (Տիրանա, 11 դեկտեմբերի, 2002թ.): 2003թ. մարտի 25-ի որոշմամբ Եվրոպայի խորհրդի կողմից ստեղծված Մարդկանց թրաֆիքինգի հարցերով փորձագետների խումբը իր 2004թ.

ապրիլի 16-ի Կարծիքի մեջ առաջարկել է առնվազն 3 ամիս տևողությամբ ժամանակաշրջան:

178. «Ձոռի նկատմամբ չի կարող կիրառվել վտարման մասին որևէ որոշում» արտահայտությունը նշանակում է, որ վերականգնման ու խորհրդածության ժամկետի ընթացքում զոհը չպետք է վտարվի Կողմի տարածքից: Չնայած Կողմերն ազատ են ընտրելու իրենց կողմից կիրառվող եղանակը, սակայն Կողմերից պահանջվում է ստեղծել իրավական դաշտ, որը զոհերին կթույլատրի նշված ժամանակահատվածի ընթացքում գտնվել իրենց տարածքում: Այդ նպատակի իրականացման համար Կողմերից յուրաքանչյուրը, իր ներքին օրենսդրությանը համապատասխան, պետք է զոհերին անհապաղ հատկացնի վերականգնման ու խորհրդածության ժամկետի ընթացքում իր տարածքում գտնվելու թույլատվություն տվող համապատասխան փաստաթղթեր:

179. Վերոհիշյալ ժամանակաշրջանի ընթացքում վերականգնվելու և թրաֆիքինգով զբաղվողների ազդեցությունից ազատվելու հարցում զոհերին օգնելու համար շատ կարևոր է համապատասխան օժանդակության ու պաշտպանության ապահովումը: Հետևաբար Հոդված 13-ի (2) կետով սահմանվում է, որ զոհերի վրա պետք է տարածվեն Հոդված 12-ի 1-ին և 2-րդ կետերում նախատեսված միջոցները:

Հոդված 14. Կացության կարգավիճակի թույլտվություն

180. Հոդված 14-ի (1) կետով նախատեսվում է մարդկանց թրաֆիքինգի զոհերին երկարաձգվող կացության կարգավիճակի տրամադրում: Կացության կարգավիճակի տրամադրումը ծառայում է ինչպես զոհերի կարիքների բավարարմանը, այնպես էլ թրաֆիքինգի դեմ պայքարի պահանջների կատարմանը:

181. Ձոռիներին անհապաղ իրենց երկրները վերադարձնելը ձեռնտու չէ ո՛չ զոհերին, և ո՛չ էլ թրաֆիքինգի դեմ պայքարող իրավապահ մարմիններին: Ձոռիներին համար դա նշանակում է ամեն ինչ սկսել սկզբից՝ մի անհաջողություն, որի մասին նրանք մեծ մասամբ կլռեն, ինչի արդյունքը կլինի այն, որ ոչինչ չի արվի մյուս զոհերին միևնույն ծուղակն ընկնելուց պաշտպանելու համար: Մեկ այլ բացասական գործոն է վախը թրաֆիքինգով զբաղվողների ճնշամիջոցներից, որոնք կարող են կիրառվել ինչպես հենց զոհերի, այնպես էլ նրանց ընտանիքների և ընկերների նկատմամբ: Ինչ վերաբերում է իրավապահ մարմիններին, ապա եթե զոհերը շարունակեն գաղտնի ապրել այդ երկրում կամ անմիջապես ետ ուղարկվեն իրենց համապատասխան երկրները, նրանք չեն կարող տալ թրաֆիքինգի դեմ արդյունավետ պայքարի համար անհրաժեշտ տեղեկություններ: Որքան մեծ է զոհերի վստահությունը, որ իրենց իրավունքներն ու շահերը պաշտպանվում են, այնքան ավելի հավաստի են նրանց տված տեղեկությունները: Կացության կարգավիճակի տրամադրումը նրանց համագործակցության խրախուսող մի միջոց է:

182. Կացության կարգավիճակ շնորհելու համար Հոդված 14-ի (1) կետով սահմանված երկու պահանջները հետևյալն են. զոհերի գտնվելը տվյալ պետության տարածքում
«անհրաժեշտ է՝ կապված նրանց անձնական բնույթի հանգամանքների հետ» կամ անհրաժեշտ է «հանցագործությունների քննության ընթացքում իրավասու մարմինների հետ նրանց համագործակցության նպատակով»: Այդ պահանջները նպատակաուղղված են այն բանին, որ Կողմերը հնարավորություն ունենան իրենց ընտրությամբ կացության կարգավիճակ շնորհել՝ մի դեպքում իրավասու

մարմինների հետ զոհերի համագործակցության դիմաց, իսկ մյուս դեպքում՝ ելնելով զոհի կարիքներից, կամ թե՛ մեկի, և թե՛ մյուս դեպքում:

183. Այսպիսով, զոհին կացության կարգավիճակ շնորհելու համար, ինչպես նաև կախված այդ հարցում Կողմի ընդունած մոտեցումից, մի դեպքում զոհի անձնական հանգամանքները պետք է լինեն այնպիսին, որ ողջամիտ չլինի նրան ստիպելը հեռանալու տվյալ երկրի տարածքից, իսկ մյուս դեպքում պետք է իրականացվի քննություն կամ հետապնդում՝ իրավասու մարմինների հետ զոհի համագործակցությամբ: Կողմերը հնարավորություն ունեն կացության կարգավիճակը տրամադրել նաև այդ երկու իրավիճակների համատեղ առկայության դեպքում:

184. Անձնական հանգամանքների պահանջը կիրառվում է մի շարք իրավիճակներում՝ կախված այն բանից, թե ո՞ր գործոնը պետք է հաշվի առնվի՝ զոհի անվտանգությունը, առողջական վիճակը, ընտանեկան վիճակը, թե՞ որևէ այլ գործոն:

185. Իրավասու մարմինների հետ համագործակցության պահանջը սահմանվել է այն հանգամանքից ելնելով, որ զոհերը խուսափում են տվյալ երկրի պետական մարմինների հետ շփվելուց՝ վախենալով, որ իրենց, որպես շահագործման երկիր անօրինականորեն մուտք գործած անձանց, անմիջապես ետ կուղարկեն իրենց համապատասխան երկրները:

186. Երեխաների դեպքում, վերը նշված երկու պահանջների նկատմամբ գերակայում են երեխայի լավագույն շահերը: Կոնվենցիայով պահանջվում է, որ թրաֆիքինգից տուժած երեխաների կացության կարգավիճակը «տրամադրվի՝ ելնելով երեխայի լավագույն շահերից, իսկ անհրաժեշտության դեպքում՝ երկարաձգվի» (Հոդված 14(2)): «Երբ դա իրավաբանորեն անհրաժեշտ է» արտահայտության ընդգրկման համար նկատի է առնվել այն հանգամանքը, որ որոշ պետություններում երեխաների համար կացության կարգավիճակ չի պահանջվում:

187. Կոնվենցիայով կացության կարգավիճակի տևողությունը թողնվում է Կողմերի հայեցողությանը, չնայած Կողմերը պետք է սահմանեն այդ դրույթի նպատակի հետ համատեղելի ժամկետ: Որպես օրինակ նշենք, որ Եվրամիության Խորհրդի 2004թ. ապրիլի 29-ի դիրեկտիվը երրորդ պետության այն քաղաքացիներին կացության թույլտվություն տալու մասին, ովքեր հանդիսանում են թրաֆիքինգի զոհեր կամ ովքեր ենթարկվել են ապօրինի ներգաղթին նպաստող գործողությունների և համագործակցում են իրավասու մարմինների հետ, որպես նվազագույն ժամկետ սահմանում է 6 ամիս:

188. Չնայած Կոնվենցիան կացության կարգավիճակի ժամկետ չի սահմանում, սակայն նախատեսում է, որ այն ենթակա է երկարաձգման: Կետ 3-ում նշվում է, որ կացության կարգավիճակի երկարաձգման մերժումը կամ դրանից զրկելու հետ կապված հարցերը կարգավորվում են տվյալ Կողմի ներքին օրենսդրությամբ:

189. Հոդված 14-ի (4) կետի նպատակն է ապահովել, որ կետ 1-ին համապատասխան կացության կարգավիճակ տվող Կողմը հաշվի առնի այդ հանգամանքը, երբ զոհը դիմում ներկայացնի այլ կացության կարգավիճակ ստանալու համար: Կետ 2-ը Կողմերին խրախուսում է, որ տուժածի կողմից այլ կացության կարգավիճակ ստանալու վերաբերյալ դիմում ներկայացվելու դեպքում տվյալ Կողմը հաշվի առնի, որ դիմողը հանդիսանում է թրաֆիքինգից տուժած անձ: Սակայն նշված կետով Կողմերի վրա պարտավորություն չի դրվում

այլ կացության կարգավիճակ տրամադրելու այն անձանց, որոնք կացության կարգավիճակ են ստացել կետ 1-ի համաձայն:

190. Կետ 5-ը վերաբերում է Կոնվենցիայի Յոդված 40-ի կետ 4-ով ամրագրված սկզբունքի մասնավոր կիրառմանը:

Յոդված 15. Փոխհատուցում և իրավական վերականգնում

191. Այս հոդվածի նպատակն է ապահովել, որ մարդկանց թրաֆիքինգից տուժած անձինք փոխհատուցվեն իրենց կրած վնասների դիմաց: Այն կազմված է չորս կետից: Առաջինը վերաբերում է զոհերին տեղեկատվության տրամադրմանը: Երկրորդում սահմանվում են զոհի՝ իրավական օգնություն ստանալու իրավունքները: Երրորդում սահմանվում է զոհի՝ փոխհատուցում ստանալու իրավունքը, իսկ չորրորդ կետը վերաբերում է փոխհատուցման երաշխիքներին:

192. Մարդիկ չեն կարող պահանջել իրենց իրավունքների իրականացում, եթե նրանք այդ իրավունքներին անտեղյակ են: Յետևաբար, կետ 1-ով Կոդեքսից պահանջվում է ապահովել, որ իրավասու մարմինների հետ առաջին իսկ շփումից հետո զոհերի համար հասկանալի լեզվով նրանց մատչելի դարձվեն դատական և վարչական ընթացակարգերի վերաբերյալ տեղեկությունները: Խիստ կարևոր նշանակություն ունի զոհերին այնպիսի ընթացակարգերի մասին տեղեկացնելը, որոնց միջոցով նրանք կկարողանան փոխհատուցում ստանալ իրենց կրած վնասների դիմաց: Էական նշանակություն ունի նաև որևէ երկրի տարածքում անօրինականորեն գտնվող զոհերին տեղեկացնելը Կոնվենցիայի Յոդված 14-ի համաձայն կացության կարգավիճակ ստանալու իրենց իրավունքի մասին, քանի որ նրանց համար շատ դժվար կլինի փոխհատուցում ստանալը, եթե նրանք չչարունակեն մնալ այն երկրում, որտեղ տեղի է ունենում իրավական ընթացակարգը:

193. Յոդվածում խոսվում է «դատական և վարչական ընթացակարգերի» մասին հաշվի առնելով տարբեր երկրների ներքին համակարգերի տարբերությունները: Օրինակ, զոհերի փոխհատուցումը կարող է լինել ինչպես դատարանների (քաղաքացիական կամ քրեական գործերով) իրավասությանը, այնպես էլ հանցագործություններից տուժածներին փոխհատուցելու հատուկ պատասխանատվությամբ օժտված վարչական մարմինների իրավասությանը պատկանող հարց: Նույնքան կարևոր է կացության կարգավիճակ ստանալու ընթացակարգի վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը նաև Յոդված 14-ի համաձայն կացության կարգավիճակ ստանալու իրավունք ունեցող՝ տվյալ երկրում անօրինականորեն գտնվող զոհերին: Որպես կանոն, կացության կարգավիճակի տրամադրումը վարչական բնույթի հարց է, սակայն այն կարող է քննարկվել նաև դատական կարգով՝ դատարաններին գանգատներ ներկայացնելու միջոցով: Կարևոր է, որ զոհերը տեղեկացված լինեն բոլոր համապատասխան ընթացակարգերի մասին:

194. Չոհերին պետք է համապատասխան ընթացակարգերի մասին տեղեկացվի իրավասու մարմինների հետ նրանց առաջին իսկ շփման ժամանակ: «Իրավասու մարմիններ» են համարվում այն բազմաթիվ պետական մարմինները, որտեղ զոհերն առաջին անգամ շփվում են պետական ծառայողների հետ. այդպիսիք են ոստիկանությունը, դատախազությունը, աշխատանքի նկատմամբ հսկողություն իրականացնող տեսչությունները, մաքսային մարմինները կամ ներգաղթի հարցերով զբաղվող մարմինները: Այդ ծառայությունները չեն, որ զոհերին պետք է համապատասխան տեղեկատվություն տրամադրեն: Սակայն նշված ծառայությունների հետ առաջին իսկ շփումից հետո զոհերին պետք է ուղղություն

տրվի դեպի այն անձինք, ծառայությունները կամ կազմակերպությունները, որոնք կարող են տրամադրել վերոհիշյալ անհրաժեշտ տեղեկությունները:

195. Կետ 2-ի համաձայն, յուրաքանչյուր Կողմ իր ներքին օրենսդրության մեջ պետք է ամրագրի իրավաբանական օգնություն ստանալու, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ անվճար իրավաբանական օգնություն ստանալու զոհերի իրավունքը: Դատական ու վարչական ընթացակարգերի բարդության շնորհիվ զոհերը, իրենց իրավունքների իրականացում պահանջելու համար, կարիք ունեն իրավաբանական օգնության:

196. Այս դրույթը զոհերին ինքնըստինքյան չի տալիս անվճար իրավաբանական օգնությունից օգտվելու իրավունք: Յուրաքանչյուր Կողմ ինքնուրույն պետք է սահմանի նման օգնություն ստանալու պահանջները: Կողմերը պետք է հաշվի առնեն ոչ միայն Կոնվենցիայի 3-րդ 15-ի (2) կետի, այլ նաև Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 3-րդ 15-ի 6-ի պահանջները: Չնայած Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 3-րդ 15-ի (3)(գ) ենթակետի համաձայն, պաշտոնապես նշանակված իրավաբանի անվճար օգնությունը նախատեսվում է միայն քրեական դատավարությունների ժամանակ, սակայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպի իրավունքը (*Airey v. Ireland* գործով որոշումը, 9 հոկտեմբերի, 1979թ.) ճանաչում է նաև որոշակի հանգամանքներում քաղաքացիական հարցերով անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 3-րդ 15-ի 6(1)-ի հիման վրա, որը մեկնաբանվում է որպես քաղաքացիական իրավունքների և պարտականությունների որոշման համար դատարան դիմելու իրավունքի ամրագրում (տես *Goldar v. the United Kingdom* գործով որոշումը, 21 փետրվարի, 1975թ.): Եվրոպական դատարանի տեսանկյունից, դատարան դիմելու իրավունքը կարող է անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու անհրաժեշտություն առաջացնել: Դատարանը ելնում է այն դիրքերից, որ պետք է պարզվի, թե արդյո՞ք առանց իրավաբանի օգնության դատարանի առջև հանդես գալը խնդրո առարկա անձի համար արդյունավետ կլինի այն առումով, որ նա ի վիճակի կլինի պատշաճ ու բավարար կերպով ներկայացնելու իր գործը: Այստեղ Դատարանը նկատի է ունեցել ընթացակարգի բարդությունը և հուզումնալից իրավիճակը (որը հազիվ թե համատեղելի լինի դատարանում պաշտպանության կողմից պահանջվող օբյեկտիվության աստիճանի հետ): այն հարցը որոշելիս, թե արդյո՞ք անձն ի վիճակի է եղել արդյունավետորեն ներկայացնելու իր գործը: Եթե ոչ, ապա տվյալ անձին պետք է անվճար իրավաբանական օգնություն տրամադրվի: Այսպիսով, նույնիսկ քաղաքացիական հարցերում անվճար իրավաբանական օգնության տրամադրում նախատեսող օրենսդրության բացակայության պարագայում, դատարաններն իրենք պետք է որոշեն, թե արդյո՞ք, հանուն արդարադատության, ֆինանսական միջոցներ չունեցող դիմողին պետք է անվճար իրավաբանական օգնություն տրամադրվի, եթե նա միջոցներ չունի իրավաբանի ծառայություններից օգտվելու համար:

197. Կետ 3-ով ճանաչվում է զոհերի փոխհատուցում ստանալու իրավունքը: Փոխհատուցումը տրամադրվում է դրամական միջոցներով՝ ինչպես նյութական վնասի (ինչպիսիք են, օրինակ, բուժման ծախսերը), այնպես էլ ոչ նյութական վնասի (կրած տառապանքների) դիմաց: Այս կետի նպատակներով, փոխհատուցում ստանալու զոհի իրավունքը կայանում է թրաֆիքինգի հանցանգործների դեմ հայց ներկայացնելու մեջ. թրաֆիքինգի մեջ մեղավոր անձինք են, որ կրում են զոհերին փոխհատուցում վճարելու բեռը: Եթե թրաֆիքինգով զբաղվողների նկատմամբ նախաձեռնված դատավարությունների

Ժամանակ քրեական գործերով դատարաններն իրավասու չեն որոշելու զոհերի նկատմամբ քաղաքացիական պատասխանատվության աստիճանը, զոհերին պետք է հնարավորություն տրվի իրենց հայցերը ներկայացնելու վնասների դիմաց փոխհատուցում տալու հարցերով որոշումներ կայացնելու իրավասություն ունեցող քաղաքացիական գործերով դատարաններին:

198. Այնուամենայնիվ, չնայած զոհերին փոխհատուցելու պատասխանատվությունը կրում են թրաֆիքինգի մեջ մեղավոր անձինք (քաղաքացիական գործերով դատարանի կամ, որոշ երկրներում, քրեական գործերով դատարանի որոշման, զոհի և թրաֆիքինգով զբաղվողների միջև ձեռք բերված դատական կամ արտադատական համաձայնության հիման վրա), սակայն գործնականում հազվադեպ է լիարժեք փոխհատուցում տրամադրվում՝ թրաֆիքինգով զբաղվող անձին չգտնելու, նրա անհետանալու կամ իրեն սնանկ հայտարարելու պատճառով: Ուստի, կետ 4-ով պահանջվում է, որ Կողմերը քայլեր ձեռնարկեն զոհերի փոխհատուցումը երաշխավորելու համար: Փոխհատուցում երաշխավորող միջոցների որոշումը թողնվում է Կողմերի հայեցողությանը, որոնք պատասխանատու են փոխհատուցման իրավական հիմքեր, փոխհատուցման ծրագրերի համար վարչական դաշտ ստեղծելու ու գործնական միջոցառումներ ձեռնարկելու համար: Այդ կապակցությամբ կետ 4-ով առաջարկվում է ստեղծել փոխհատուցման հիմնադրամ կամ իրականացնել այնպիսի միջոցառումներ կամ ծրագրեր, որոնք նպատակաուղղված են զոհերի սոցիալական օգնությանը և սոցիալական ինտեգրացիային և կարող են ֆինանսավորվել հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցների հաշվին:

199. Փոխհատուցման միջոցառումները որոշելիս Կողմերը կարող են առաջնորդվել *Բռնությամբ կատարված հանցագործությունների զոհերի փոխհատուցման մասին Եվրոպական կոնվենցիայում* [Եվրոպական պայմանագրերի ժողովածու No. 116] պարունակվող սկզբունքներով, որը վերաբերում է բռնությամբ կատարված հանցագործությունների զոհերի փոխհատուցման ղեկավարող սկզբունքները Եվրոպական մակարդակով համաձայնեցնելուն և դրանց պարտադիր իրավաբանական ուժ տալուն: Եվրոպական Միության անդամ պետությունները պետք է նաև հաշվի առնեն *Եվրամիության Խորհրդի 2004 թ. ապրիլի 29-ի դիրեկտիվը հանցագործությունների զոհերին փոխհատուցելու մասին*:

Հոդված 16. Տուժածների հայրենադարձությունը և վերադարձը

200. Հոդված 16-ը մասամբ հիմնվում է Պալերմոյի արձանագրության Հոդված 8-ի վրա: Այն միաժամակ վերաբերում է մարդկանց թրաֆիքինգից տուժած անձանց ինչպես կամավոր, այնպես էլ ոչ կամավոր վերադարձին, չնայած Կոնվենցիան մշակողները նշել են, որ նախընտրելի է, որ վերադարձը կամավոր լինի:

201. Հոդված 16-ի կետ 1-ը պարտավորեցնում է այն Կողմին, որի քաղաքացին է տուժածը կամ որի տարածքում տուժածը մշտական բնակության իրավունք ունի, օժանդակել նրա վերադարձին առանց անհարկի և անընդունելի ձգձգումների: Այս համատեքստում հարկ է հիշել *Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի* Հոդված 13-ի կետ 2-ը, որը նախատեսում է իր սեփական երկիր վերադառնալու իրավունքը, ինչպես նաև *Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիային* կից թիվ 4 Արձանագրության Հոդված 3(2)-ը, որով ամրագրվում է որ «ոչ ոք չպետք է զրկվի այն երկրի տարածք մուտք գործելու իրավունքից, որի քաղաքացին է»: *Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի* Հոդված 12(4)-ում նույնպես սահմանվում է, որ «ոչ ոք չպետք է կամայականորեն զրկվի իր սեփական երկիր

մուտք գործելու իրավունքից», որը ներառում է նաև այդ երկրի քաղաքացի չհանդիսացող, բայց այնտեղ բնակություն հաստատած անձի վերադառնելու իրավունքը:

202. Միշտ չէ, որ թրաֆիքինգի զոհերի վերադարձը ռիսկ չի պարունակում: Ուստի, Կոնվենցիան մշակողները ցանկացել են Կոնվենցիայի տեքստում հստակեցնել, որ տուժած անձի վերադարձը պետք է իրականացվի «պատշաճ կերպով հաշվի առնելով այդ անձի իրավունքները, անվտանգությունն ու արժանապատվությունը»: Սա կիրառվում է զոհի վերադարձին օժանդակող ու նրան ընդունող Կողմի, ինչպես նաև այն Կողմի նկատմամբ, որը կետ 2-ի համաձայն տուժածին վերադարձնում է մեկ այլ պետության: Վերոհիշյալ իրավունքները մասնավորապես ներառում են անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի չենթարկվելու, մասնավոր և ընտանեկան կյանքի պաշտպանության և անձի պաշտպանության իրավունքները: Չոհին վերադարձնելիս պետք է նաև հաշվի առնվեն տվյալ անձի տուժած լինելու փաստի հետ կապված իրավաբանական ընթացակարգերը՝ այդ ընթացակարգերի ժամանակ տուժած անձի կողմից իրականացվելիք իրավունքներին, ինչպես նաև հենց տվյալ ընթացակարգին վնաս չպատճառելու համար:

203. Կոնվենցիան մշակողները համարել են, որ այս առումով անհրաժեշտ է հաշվի առնել Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի՝ Յոզված 3-ի հետ կապված դատական պրակտիկան: Այսպես, *Soering v United Kingdom* գործում (7 հուլիսի, 1989թ., Սերիա Ա, No. 161) Դատարանը հանձնման առնչությամբ պարզել է, որ «նման որոշման արդյունքում կարող է ծագել Յոզված 3-ից բխող հարց և տվյալ պետության համար առաջացնել Կոնվենցիայով սահմանված պատասխանատվությունը, որտեղ մշված են էական հիմքեր՝ համարելու համար, որ խնդրո առարկա անձը, արտաքսվելու դեպքում, բախվում է խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի այլ ձևերի ենթարկվելու իրական սպառնալիքին»: *Cruz Varaz and others v Sweden* գործով (20 մարտի, 1991թ., Սերիա Ա, No. 201) դատարանը որոշել է, որ այս սկզբունքները կիրառվեն նաև արտաքսման նկատմամբ: *D. v United Kingdom* գործում (2 մայիսի, 1997թ., վճիռների և որոշումների ժողովածու, 1997-III) Դատարանը հստակ որոշել է, որ կողմ հանդիսացող պետությունների պատասխանատվությունն առկա է նաև այն դեպքում, երբ վատ վերաբերմունքը ուղղակիորեն կամ անուղղակիորեն չի բխել նպատակային երկրի պետական մարմիններից:

204. Յոզվածի 3 և 4 կետերում քննարկվում են միջազգային համագործակցության հատուկ միջոցները ընդունող Կողմի և այն Կողմի միջև, որի քաղաքացին էր տուժած անձը կամ որի տարածքում մշտական բնակության իրավունք ուներ ընդունող Կողմի տարածք մուտք գործելու ժամանակ: Այսպես, ընդունող Կողմի պահանջով, այն Կողմը, որին նման պահանջ է ներկայացվել, պարտավոր է տուժած անձի վերադարձին օժանդակել ստուգումներ անցկացնելու միջոցով՝ պարզելու համար, արդյո՞ք տուժած անձը հանդիսանում է իր քաղաքացին կամ իր տարածքում մշտական բնակության իրավունք է ունեցել, իսկ այն դեպքում, երբ այդ ստուգումների արդյունքները դրական են, և տուժած անձն այլևս չունի անհրաժեշտ փաստաթղթեր, տրամադրել համապատասխան ճանփորդական փաստաթղթեր կամ այլ թույլտվություն՝ նրան իր տարածք կրկին մուտք գործելու հնարավորություն ընձեռելու համար:

205. Կետ 5-ը Կողմերից յուրաքանչյուրին պարտավորեցնում է օրենսդրական կամ այլ միջոցների ձեռնարկման միջոցով մշակել հայրենադարձության ծրագրեր՝

ուղղված կրկնակի զոհականացման (վիկտիմիզացիայի) կանխմանը: Այս դրույթը տարածվում է յուրաքանչյուր Կողմի վրա, որը պատասխանատու է նախատեսված միջոցառումների ձեռնարկման համար: Միաժամանակ, յուրաքանչյուր Կողմ պետք է բոլոր հնարավոր միջոցներով նպաստի վերադարձնող պետության հասարակության մեջ զոհերի վերաինտեգրմանը: Երեխաների համար այդ ծրագրերը պետք է նախատեսեն կրթության իրավունքից օգտվելու հնարավորություն, ինչպես նաև անհրաժեշտ խնամքի ապահովմանը, ընտանիքների կամ համապատասխան հաստատությունների կողմից նրանց ընդունմանն ուղղված միջոցներ:

206. Կետ 6-ում սահմանվում է, որ յուրաքանչյուր Կողմ պետք է ձեռնարկի այնպիսի օրենսդրական կամ այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ են զոհերին այն ծառայությունների կամ կազմակերպությունների վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու համար, որոնք կարող են նրանց օգնություն ցույց տալ նրանց վերադարձի դեպքում: Այդ ծառայությունների ցուցակը կազմված է որպես լուսաբանող օրինակ, քանի որ յուրաքանչյուր Կողմի համար դրանք կարող են տարբեր լինել:

207. Հոդված 16-ի կետ 7-ում հայրենադարձության ու վերադարձի համատեքստում ընդգրկված է *Երեխաների իրավունքների մասին Միավորված Ազգերի կազմակերպության կոնվենցիայում* ամրագրված սկզբունքը: Տուժած երեխայի հայրենադարձության մասին որոշում ընդունելիս պետական մարմինները պետք է գլխավորապես հաշվի առնեն երեխայի լավագույն շահերը: Այդ դրույթի համաձայն, Կողմերը պետք է նախքան հայրենադարձության որևէ միջոց ձեռնարկելը զննհատեն այն ռիսկերը և անվտանգության խնդիրները, որոնք կարող են առաջանալ երեխայի վերադարձով որևէ պետություն:

Հոդված 17 – Գեներալին հավասարություն

208. Երբ մարդկանց թրաֆիքինգն իրականացվում է սեռական շահագործման նպատակով, այն հիմնականում ներգործում է կանանց վրա, չնայած կանայք կարող են թրաֆիքինգի ենթարկվել նաև այլ նպատակներով: Այս առումով հարկ է հիշել 1902թ. և 1910թ. Փարիզում անցկացված երկու միջազգային կոնֆերանսները՝ «սպիտակ ստրկություն» անվամբ հայտնի երևույթին վերջ դնելու նպատակով: Այդ նախաձեռնությունն ավարտվեց *Սպիտակ ստրուկների առևտրի կանխման մասին միջազգային կոնվենցիայի* ստորագրմամբ (Փարիզ, 4 մայիսի, 1910թ.), որը հետագայում լրացվեց *Կանանց և երեխաների առևտրի կանխման մասին միջազգային կոնվենցիայով* (30 սեպտեմբերի, 1921թ.) և *Չափահաս կանանց առևտրի կանխման մասին միջազգային կոնվենցիայով* (Ժնև, 11 հոկտեմբերի, 1933թ.): *Մարդկանց թրաֆիքինգի և այլ անձանց մարմնավաճառության շահագործման կանխման մասին կոնվենցիան* (Նյու Յորք, 2 դեկտեմբերի, 1949թ.) մասամբ չեղյալ դարձրեց և փոխարինեց նախկինում ընդունված վերոհիշյալ միջազգային փաստաթղթերի որոշ դրույթների:

209. Աշխարհում հաղորդակցության զարգացման և տնտեսական անկայունության շնորհիվ կանանց թրաֆիքինգը, հատկապես սեռական շահագործման նպատակով, միջազգային մասշտաբով առավել լայնատարած է դարձել: Սկզբում տարածված էր «սպիտակ ստրուկների առևտուրը»¹⁶, այնուհետև թրաֆիքինգը Հարավից դեպի Հուսիս, իսկ այժմ՝ մարդկանց թրաֆիքինգը առավել անապահով տարածաշրջաններից դեպի ավելի բարենպաստները, անկախ դրանց աշխարհագրական դիրքից (բայց հատկապես դեպի արևմտյան Եվրոպա):

¹⁶ 1904թ. մայիսի 18-ի Կանանց և երեխաների թրաֆիքինգի կանխման մասին համաձայնագիրը:

210. Հոդված 17-ի նպատակը չէ կանխել գենդերային հիմքով խտրականությունը զոհերի իրավունքների պաշտպանության և ապահովման միջոցների ձեռնարկման ժամանակ, որն արդեն ամրագրված է Կոնվենցիայի Հոդված 3-ում: Հոդված 17-ի հիմնական նպատակը այն փաստի վրա ուշադրություն հրավիրելն է, որ առկա տվյալների համաձայն, կանայք հանդիսանում են մարդկանց թրաֆիքինգի հիմնական նպատակային խումբը, և որ կանայք, որոնք զոհեր դառնալու ավելի մեծ հավանականություն ունեն, հաճախ դուրս են մղվում սոցիալական միջավայրից (մարժինալիզացիա) նույնիսկ նախքան թրաֆիքինգի զոհ դառնալը և ավելի հաճախ, քան տղամարդիկ, դառնում աղքատության ու գործազրկության զոհեր: Ուստի, տրաֆիքինգից տուժած կանանց իրավունքների պաշտպանության ու ապահովման միջոցառումներում պետք է հաշվի առնվի այդ կրկնակի մարժինալիզացիան (թե՛ որպես կանայք, և թե՛ որպես զոհեր): Կարճ ասած, նշված միջոցառումներում պետք է հաշվի առնվի այն սոցիալական իրականությունը, որի նկատմամբ դրանք կիրառվում են, մասնավորապես այն հանգամանքը, որ հասարակությունը կազմված է կանանցից և տղամարդկանցից, որոնց կարիքները միշտ չէ, որ նույնն են:

211. Ինչպես արդեն նշվել է Հոդված 1-ում, կանանց և տղամարդկանց հավասարությունը նշանակում է ոչ միայն գենդերային հիմքով նրանց նկատմամբ խտրականության բացառում, այլ նաև կանանց և տղամարդկանց միջև հավասարության ապահովմանն ուղղված դրական միջոցառումների ձեռնարկումը: Հավասարությունը պետք է խթանվի այն կանանց կողմնորոշված հատուկ քաղաքականություններին աջակցելու միջոցով, որոնք առավել հավանականություն ունեն ենթարկվելու որպես «խոշտանգում» կամ «անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք» որակվող պրակտիկաներին (ֆիզիկական բռնություն, բռնաբարություն, սեռական օրգանների հեռացում կամ սեռական խոշտանգում, սեռական շահագործման նպատակով թրաֆիքինգ): Ինչպես նշվել է Մարդու իրավունքների հարցերով համաշխարհային կոմիտեանսի (Վիեննա, 14-25 հունիսի, 1993թ.) կողմից ընդունված *Վիեննայի Գործողությունների ծրագրում* և Գլխավոր Ասամբլեայի կողմից ընդունված *Կանանց նկատմամբ բռնության վերացման մասին հռչակագրում* (դեկտեմբեր, 1993թ.) «անդամ պետություններն անհանգստացած էին, որ իրավական, սոցիալական, քաղաքական և տնտեսական հավասարություն ձեռք բերելու կանանց հնարավորությունները սահմանափակված են, ի թիվս այլ բաների, կանանց նկատմամբ շարունակվող և տվյալ վայրին բնորոշ բռնությամբ (...)»:

212. Եվրոպայում գենդերային հավասարությունը երկար ժամանակ սահմանվում էր որպես կանանց և տղամարդկանց իրավաբանորեն հավասար իրավունքների շնորհում: Ներկայումս ճանաչվել է, որ *դե յուրե* հավասարությունը ինքնըստիմքյան չի հանգեցնում *դե ֆակտո* հավասարության: Անշուշտ, վերջին 30 տարիների ընթացքում կանանց իրավական կարգավիճակը Եվրոպայում բարելավվել է, սակայն փաստացի հավասարությունը դեռևս հեռու է իրականություն լինելուց: Կանանց և տղամարդկանց միջև անհավասարակշռությունը շարունակում է ներգործել կյանքի բոլոր ոլորտների վրա, և գնալով ավելի պարզորոշ է դառնում գենդերային հավասարություն նվաճելուն ուղղված նոր մոտեցումների, ռազմավարությունների ու եղանակների անհրաժեշտությունը: Այդ ռազմավարություններից մեկը գենդերային խնդիրների առաջնայնությունն է:

213. *Եվրոպայի խորհրդի Կանանց և տղամարդկանց հավասարության հարցերով ղեկավար կոմիտեն* իր 1998թ. «*Գենդերային խնդիրների առաջնայնություն. Հայեցակարգային շրջանակները, մեթոդաբանությունը և*

դրական փորձի ներկայացումը» հաշվետվության մեջ համաձայնվել է հետևյալ սահմանմանը.

«Գեներային խնդիրների առաջնայնությունը իրենից ներկայացնում է քաղաքականության գործընթացների (վերա)կազմակերպում, բարելավում, զարգացում և գնահատում՝ այնպես, որ քաղաքականության մշակման մեջ սովորաբար ներգրավված գործիչների կողմից գեներային հավասարության տեսանկյունը ընդգրկվի բոլոր քաղաքականություններում, բոլոր մակարդակներով և բոլոր փուլերում»:

214. Կանանց և տղամարդկանց հավասարության հարցերով ղեկավար կոմիտեի կողմից վերոհիշյալ հաշվետվության ընդունումից հետո Նախարարների խորհուրդն ընդունեց անդամ պետություններին ուղղված՝ *Գեներային խնդիրների առաջնայնության մասին No. R (98) 14 Հանձնարարականը*, որով անդամ պետություններին առաջարկվում էր հետևել *Կանանց և տղամարդկանց հավասարության հարցերով ղեկավար կոմիտեի* հաշվետվությանը և դրանում արտացոլված ռազմավարությունն իրականացնել ազգային մակարդակում: Նախարարների կոմիտեն պատրաստեց նաև Եվրոպայի Խորհրդի Ղեկավար կոմիտեներին ուղղված գեներային խնդիրների առաջնայնության վերաբերյալ ուղերձ՝ նրանց խրախուսելով այդ ռազմավարությունն օգտագործել իրենց գործունեության ծրագրերում:

215. Առաջնորդվելով Նախարարների կոմիտեի վերոհիշյալ հանձնարարականներով, Հոդված 14-ում նշվում է, որ Գլուխ III-ում նախատեսված միջոցառումների զարգացման, իրագործման և գնահատման ժամանակ Կոնվենցիայի Կողմերը պետք է կիրառեն գեներային խնդիրների առաջնայնության այս ռազմավարությունը, որը, ինչպես արդեն նշվել է, հանդիսանում է գեներային հավասարության մպատակի իրագործմանը ծառայող ռազմավարություն:

Գլուխ IV Քրեական իրավունք

216. Գլուխ IV-ը կազմված է ինը հոդվածից: 18, 19 և 20 հոդվածները վերաբերում են որոշակի արարքները քրեորեն պատժելի դարձնելուն: Այդպիսի համապատասխանեցումը մի շարք պատճառներով նպաստում է ազգային և միջազգային մակարդակներով հանցագործությունների դեմ պայքարին: Նախ և առաջ, երկրների ներքին օրենսդրությունները համապատասխանության բերելը թույլ է տալիս վերացնել նախկինում ավելի մեղմ կանոններ ունեցող Կողմի տարածքում հանցագործություն կատարելու քրեական նախընտրությունը: Երկրորդը, դա խթանում է ընդհանուր օգտակար տվյալների և փորձի փոխանակումը: Ընդհանուր սահմանումների օգտագործումը նույնպես կարող է օժանդակել հետազոտություններին և նպաստել ազգային ու տարածաշրջանային մակարդակներում տվյալների համադրելիությանը, ինչը թույլ կտա ավելի հեշտությամբ ստանալու հանցագործության ընդհանուր պատկերը: Վերջապես դա նպաստում է միջազգային համագործակցությանը (մասնավորապես հանձնման և փոխադարձ իրավական օգնության ոլորտներում), օրինակ, երբ հարցը վերաբերում է կրկնակի քրեական պատասխանատվության մասին կանոններին:

217. Այս հոդվածներում նշված արարքները կազմում են Կողմերի միջև համաձայնեցված՝ քրեականացվող արարքների նվազագույն ցուցակը, ինչը չի բացառում դրանց համալրումը կողմերի ներքին օրենսդրություններում:

218. Կոնվենցիան մշակողները քննության են առել նաև մարդկանց թրաֆիքինգից ստացված եկամուտների լվացման՝ որպես քրեականացվող արարքի վերաբերյալ դրույթի ընդգրկումը: Մարդկանց թրաֆիքինգը ծայրահեղ

շահութաբեր հանցավոր գործունեություն է, և Կոնվենցիան մշակողները գիտակցել են այդ հարցի կարևորությունը: *Հանցավոր գործունեությունից ստացված եկամուտների լվացման, բացահայտման, առգրավման և բռնագանձման մասին կոնվենցիայի* [Եվրոպական պայմանագրերի ժողովածու No 141] Յոթերորդ 6-րդ Կողմերից պահանջում է եկամուտների լվացումը ճանաչել որպես քրեական հանցագործություն: Սակայն այդ կոնվենցիայի Յոթերորդ 6(4)-րդ Կողմերին թույլ է տալիս հանցանքը սահմանափակել հիմքում ընկած որոշակի հանցավոր արարքներից ստացված եկամուտների լվացմամբ: Քանի որ սույն Կոնվենցիայի մշակման ժամանակ Եվրոպայի Խորհրդի փորձագետների հանձնաժողովը մշակում էր No.141 կոնվենցիային կից արձանագրությունը, որով պահանջվում էր, որ մարդկանց թրաֆիքինգը դիտվեր որպես եկամուտների լվացման հիմքում ընկած հանցավոր արարք, ապա սույն Կոնվենցիան մշակողները որոշեցին հրաժարվել նման դրույթ ընդգրկելուց: Նրանք եկան այն եզրակացության, որ եկամուտների լվացումը ավելի հանգամանորեն քննարկվում է հանցավորության տարբեր ոլորտներում համագործակցությանը վերաբերող միջազգային փաստաթղթում, ինչպիսին է, օրինակ, No.141 կոնվենցիան, քան ավելի կոնկրետ փաստաթղթում, այն է՝ սույն Կոնվենցիայում:

219. *Յարկ է նշել, որ Փողերի լվացման և հանցավոր գործունեությունից ստացված գործիքներն ու եկամուտները բացահայտելու, դրանց հետևելու, սառեցնելու, առգրավելու և բռնագանձելու մասին Եվրամիության Խորհրդի շրջանակային որոշման* Յոթերորդ 1-ով նախատեսվում է, որ անդամ պետություններն անհրաժեշտ քայլեր ձեռնարկեն 1990թ. Կոնվենցիայի Յոթերորդ 6-ի հետ կապված վերապահումներ կատարելու կամ դրանք պահպանելու ուղղությամբ, երբ հարցը վերաբերում է լուրջ հանցագործություններին:¹⁷

220. Այս գլխում նույնպես պարունակվում են Յոթերորդ 18-ում և 19-ում քննարկվող արարքների քրեականացման առնչվող հետագա դրույթներ: Այդ դրույթները վերաբերում են հանցափորձին, օժանդակմանը կամ դրդմանը, (Յոթերորդ 21), իրավաբանական անձանց պատասխանատվությանը (Յոթերորդ 22), սանկցիաներին և միջոցներին (Յոթերորդ 23), ծանրացնող հանգամանքներին (Յոթերորդ 24) և նախկին դատվածություններին (Յոթերորդ 25):

221. Յոթերորդ 26-ում քննարկվում է թրաֆիքինգի զոհերի նկատմամբ պատիժ չկիրառելու հնարավորությունը:

Յոթերորդ 18. Մարդկանց թրաֆիքինգի քրեականացումը

222. Յոթերորդ 18-ով նպատակ է հետապնդվում մարդկանց թրաֆիքինգը ճանաչել որպես քրեական հանցագործություն: Յոթերորդ 18-ով սահմանված պարտավորությունը նույնն է, ինչ որ Պալերմոյի արձանագրության Յոթերորդ 5-ով սահմանվածը և շատ նման է Եվրամիության Խորհրդի 2002թ. հուլիսի 19-ի *Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի շրջանակային որոշման* Յոթերորդ 1-ով սահմանված պարտավորությանը:

223. Յոթերորդ 18-ով Կողմերից պահանջվում է քրեորեն պատժելի դարձնել Կոնվենցիայի Յոթերորդ 4-ով սահմանված մարդկանց թրաֆիքինգը՝ լինի դա միայն մեկ քրեական հանցագործության ձևով, թե որպես մի քանի հանցանքների համադրություն, որոնք առնվազն ներառում են տվյալ սահմանման տակ ընկնող

¹⁷ Նման հանցագործությունները, ցանկացած դեպքում, ներառում են նրանք, որոնք պատժվում են ազատազրկմամբ՝ առնվազն մեկ տարի առավելագույն ժամկետով, իսկ ինչ վերաբերում է այն երկրներին, որոնք իրավական համակարգերում նախատեսվում է հանցագործությունների պատժի նվազագույն սահման, այն հանցագործությունները, որոնք պատժվում են ազատազրկմամբ առնվազն վեց ամիս առավելագույն ժամկետով:

բոլոր արարքները: Ուստի, անհրաժեշտ է օգտագործել Չոդված 4-ի սահմանումը՝ որոշելու համար այն հանցավոր արարքի կամ արարքների բոլոր բաղկացուցիչ մասերը, որոնք Կոնվենցիայի Չոդված 18-ով Կողմերից պահանջվում է հաստատել որպես քրեորեն պատժելի արարքներ:

224. Ինչպես վերևում պարզաբանվել է, մարդկանց թրաֆիքինգի բաղկացուցիչ մասերի համադրությունն է, որ պետք է ճանաչվի որպես քրեական հանցագործություն, այլ ոչ թե դրա առանձին բաղադրիչները: Այսպես, օրինակ, Կոնվենցիան քրեական պարտավորություն չի նախատեսում առևանգման, խաբեության, սպառնալիքների, հարկադիր աշխատանքի, ստրկության կամ այլ անձանց մարմնավաճառության շահագործման համար՝ առանձին-առանձին վերցրած:

225. Սահմանման համաձայն, Չոդված 18-ում նշված հանցավոր արարքն առաջանում է վաղ փուլում. պարտադիր չէ, որ անձը փաստացիորեն շահագործման ենթարկվի, որպեսզի արարքը համարվի մարդկանց թրաֆիքինգ: Բավական է, որ նա շահագործման նպատակով ենթարկվի սահմանման մեջ նշված գործողություններից մեկին՝ դրանում նախատեսված եղանակներից որևէ մեկի օգտագործմամբ: Ուստի, մարդկանց թրաֆիքինգն առկա է նախքան որևէ անձի փաստացի շահագործումը:

226. Չոդված 4-ի (բ) կետի համաձայն, երբ տեղի է ունեցել առևանգում, խարդախություն, խաբեություն, իշխանության կամ վիճակի խոցելիության չարաշահում, կամ այլ անձնավորության նկատմամբ որոշակի վերահսկողություն իրականացնող որևէ անձի համաձայնությունը ձեռք բերելու նպատակով դրամական միջոցների կամ այլ օգուտների տրամադրում կամ ստացում, ապա զոհի համաձայնությունը չի փոխում հանցանք կատարած անձի քրեական պատասխանատվությունը:

227. Չոդված 4-ի (գ) և (դ) կետերի համաձայն, այդ եղանակներից որևէ մեկի օգտագործման փաստի առկայություն չի պահանջվում այն դեպքում, երբ զոհ է հանդիսանում տասնութ տարին չլրացած որևէ անձ: Չեռևաբար, մարդկանց թրաֆիքինգի փաստի հաստատման համար մեղադրանք ներկայացնող մարմիններն ընդամենը պետք է ապացուցեն, որ տեղի է ունեցել այնպիսի գործողություն, ինչպիսին է երեխայի հավաքագրումը կամ տեղափոխումը՝ շահագործման նպատակով:

228. Քրեական պատասխանատվություն առաջացնելու համար հանցագործությունը պետք է կատարված լինի դիտավորությամբ: «Դիտավորություն» բառի մեկնաբանությունը թողնվում է Կողմերին՝ իրենց ներքին օրենսդրություններում ընդգրկելու համար: Այնուհանդերձ, անհրաժեշտ է չնոռանալ, որ Չոդված 4-ի (ա) կետում նախատեսվում է դիտավորության կոնկրետ տարր, այն է՝ հողվածում թվարկված արարքները պետք է կատարված լինեն «շահագործման նպատակով»: Չեռևաբար, ելնելով Կոնվենցիայի նպատակից, մարդկանց թրաֆիքինգ է հանդիսանում այն արարքը, որը կատարվել է վերոհիշյալ կոնկրետ դիտավորությամբ:

Չոդված 19. Տուժածի ծառայություններից օգտվելու քրեականացումը

229. Այս դրույթի համաձայն, յուրաքանչյուր Կողմ պետք է թրաֆիքինգից տուժած անձի ծառայություններից գիտակցաբար օգտվելը դարձնի քրեորեն պատժելի արարք:

230. Կոնվենցիան մշակողներն այս դրույթն ընդգրկելիս առաջնորդվել են մի քանի նկատառումներով: Առաջինը մարդկանց թրաֆիքինգին հանգեցնող շահագործվող մարդկանց պահանջարկի նվազեցումն է:

231. Այս դրույթն ուղղված է թրաֆիքինգի զոհերի պատվիրատուների դեմ, անկախ այն բանից, արդյոք նրանք հանդիսանում են շահագործման, հարկադիր աշխատանքի կամ ծառայությունների, ստրկության կամ ստրկությանը հավասարազոր վիճակի, տաժանակիր աշխատանքի թե օրգանների հեռացման նպատակով թրաֆիքինգի ենթարկված զոհեր:

232. Այս դրույթի համաձայն քրեորեն պատժելի արարք կարող է դարձվել, օրինակ, որևէ ձեռնարկության սեփականատիրոջ կողմից թրաֆիքինգի ենթարկված այն անձանց աշխատանքի գիտակցաբար օգտագործումը, որոնք մատակարարվել են թրաֆիքինգով զբաղվողների կողմից: Նման դեպքում ձեռնարկության սեփականատիրոջ քրեական պատասխանատվությունն առաջանում է ոչ Յոդված 18-ի հիման վրա, քանի որ նա անձամբ չի հավաքագրել թրաֆիքինգի զոհերին (հանցագործը թրաֆիքինգով զբաղվող անձն է) և անձամբ չի օգտագործել թրաֆիքինգի սահմանման մեջ նշված եղանակներից որևէ մեկը, սակայն նա մեղավոր է Յոդված 19-ով նախատեսված քրեորեն պատժելի հանցանք գործելու մեջ: Մարմնավաճառի պատվիրատուն, որը քաջատեղյակ է եղել այդ անձի՝ թրաֆիքինգի ենթարկված լինելու մասին, նույնպես կարող է դիտվել որպես Յոդված 19-ով նախատեսված քրեորեն պատժելի հանցանք գործած անձ, ճիշտ այնպես ինչպես այն անձը, որը գիտակցաբար օգտագործել է թրաֆիքինգի ենթարկված զոհի ծառայությունը՝ օրգան ձեռք բերելու համար:

233. Կարևոր հարցերից մեկն այն է, որ Յոդված 19-ը ուղղված է Յոդված 4-ի (ա) կետում քննարկված շահագործման առարկա հանդիսացող ծառայությունների օգտագործման դեմ: Յոդված 19-ը նախատեսված է ոչ թե թրաֆիքինգի զոհերի կողմից որևէ աշխատանքով զբաղվելը կանխելու կամ նրանց սոցիալական վերականգնմանը խոչընդոտելու համար, այլ պատժելու համար նրանց, ովքեր, գնելով շահագործվողի ծառայությունները, իրենց դերն են խաղում զոհի շահագործման գործընթացում: Նմանապես, այդ դրույթի մտահոգության առարկան պարզապես մարմնավաճառի ծառայությունների օգտագործումը չէ: Նշված արարքը ենթարկվում է հոդված 19-ի դրույթներին միայն այն դեպքում, երբ մարմնավաճառը շահագործվում է մարդկանց թրաֆիքինգի կապակցությամբ, այսինքն, երբ համատեղ առկա են Յոդված 4-ի սահմանման մեջ նշված բաղկացուցիչ տարրերը: Ինչպես արդեն պարզաբանվել է, Կոնվենցիան այլ անձանց մարմնավաճառության շահագործումը և սեքսուալ շահագործման այլ ձևերը քննության է առնում միայն մարդկանց թրաֆիքինգի համատեքստում: Կոնվենցիան չի սահմանում ոչ «այլ անձանց մարմնավաճառության շահագործումը», ոչ էլ «սեքսուալ շահագործման այլ ձևերը»: Յետևաբար, Կոնվենցիան որևէ ձևով չի ներգործում այն բանի վրա, թե Կողմերը մարմնավաճառության խնդիրն ինչպես են արտացոլում իրենց ներքին օրենսդրություններում:

234. Որպեսզի թրաֆիքինգի զոհի ծառայություններն օգտագործող անձը ենթակա լինի Յոդված 19-ով նախատեսված պատժին, նա պետք է այդ ծառայություններն օգտագործի՝ «գիտե՞նալով, որ տվյալ անձը հանդիսանում է մարդկանց թրաֆիքինգի զոհ»: Այլ կերպ ասած, այդ ծառայություններն օգտագործողը պետք է տեղյակ լինի նշված անձի՝ թրաֆիքինգի զոհ լինելու հանգամանքին, և չի կարող պատժվել, եթե դրան անտեղյակ է: Տեղյակ լինելու փաստի ապացուցումը կարող է բարդ լինել դատական հետապնդման մարմինների համար: Համանման դժվարություններ են առաջանում նաև քրեական իրավունքի՝

հանցանքի որևէ ոչ-նութական բաղկացուցիչ տարրի ապացույց պահանջող բազմաթիվ այլ դրույթների առնչությամբ: Այնուամենայնիվ, ապացույց գտնելու բարդությունը անպայմանորեն չի հանդիսանում վերջնական փաստարկ տվյալ տեսակի գործելակերպը որպես քրեորեն պատժելի արարք չհամարելու համար:

235. Զխախտելով անմեղության կանխավարկածի սկզբունքները, ապացույց գտնելու խնդիրը երբեմն կարող է լուծվել հանցանք գործած անձի դիտավորության մասին փաստացի հանգամանքներից եզրակացնելու միջոցով: Այդ մոտեցումը հստակ առաջարկվել է այլ միջազգային կոնվենցիաներում: Օրինակ, *Հանցավոր գործունեությունից ստացված եկամուտների լվացման, բացահայտման, ազդարարման և բռնագանձման մասին կոնվենցիայի* [Եվրոպական պայմանագրերի ժողովածու No 141]. Հոդված 6-ի (2)(գ) ենթակետում նշվում է, որ «տեղեկացվածության, դիտավորության կամ նպատակի մասին, որը պահանջվում է որպես այդ կետում նախատեսված հանցանքի տարր, կարելի է հետևության հանգել օբյեկտիվ, փաստացի հանգամանքներից»: Նմանապես, *Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ Միավորված Ազգերի Կազմակերպության կոնվենցիայի* Հոդված 6-ի (2)(գ) ենթակետում, որը վերաբերում է հանցավոր գործունեությունից ստացված եկամուտների լվացման քրեականացմանը, նշվում է. «Տեղեկացվածության, դիտավորության կամ նպատակի մասին, որը պահանջվում է որպես սույն հոդվածի կետ 1-ում սահմանված հանցանքի տարր, կարելի է հետևության հանգել օբյեկտիվ, փաստացի հանգամանքներից»:

236. Ընթացնելով Հոդված 19-ում նախատեսված միջոցի արժեքը, միևնույն ժամանակ գիտակցելով ապացույց հավաքելու հետ կապված բարդությունները, համարվեց, որ այս դրույթի ընդգրկումը որպես ոչ պարտադիր դրույթ Կողմերին կխրախուսի ընդունելու դրանում սահմանված միջոցը:

Հոդված 20. Ճամփորդական կամ անձր հաստատող փաստաթղթերի հետ կապված արարքների քրեականացումը

237. Հոդված 2-ի նպատակն է քրեորեն պատժելի դարձնել ճամփորդական կամ անձր հաստատող փաստաթղթերի հետ կապված որոշ արարքները, երբ դրանք կատարվում են մարդկանց թրաֆիքինգի նպատակով: Նման փաստաթղթերը անդրազգային թրաֆիքինգի կարևոր գործիք են հանդիսանում: Կեղծ փաստաթղթերը հաճախ օգտագործվում են թրաֆիքինգի զոհերին տարանցիկ երկրներով և դեպի այն երկրները տեղափոխելու համար, որտեղ նրանք շահագործվելու են: Ուստի, այն ուղիների բացահայտումը, որոնցով անցնում են կեղծ փաստաթղթերը, կարող են երևան բերել մարդկանց թրաֆիքինգում ներգրավված հանցավոր ցանցը:

238. Հոդված 20-ի (ա) և (բ) կետերը մշակված են *Անդրազգային հանցավորության դեմ Միավորված Ազգերի Կազմակերպության Կոնվենցիային* կից *Վերգետնյա, ծովային և օդային տրանսպորտով ներգաղթողների ապօրինի փոխադրման դեմ արձանագրության* Հոդված 6-ի կետ 1-ի հիման վրա: Նշված երկու ենթակետերը քննարկում են ճամփորդական կամ անձր հաստատող փաստաթղթերի կեղծման և դրանց ձեռքբերման կամ տրամադրման հարցերը: Սակայն, ի տարբերություն ՄԱԿ-ի արձանագրության Հոդված 6-ի (1)(բ)(ii) ենթակետի, Կոնվենցիան չի շոշափում կեղծ փաստաթղթերի տիրապետման հարցը:

239. Հոդված 20-ում նշված ճամփորդական կամ անձր հաստատող փաստաթղթերը հանդիսանում են պաշտոնական փաստաթղթեր, ինչպիսիք են անձնագիրը կամ անձր հաստատող վկայականը: *Անդրազգային հանցավորության*

դեմ Միավորված Ազգերի Կազմակերպության Կոնվենցիային կից Վերգետնյա, Ժովային և օդային տրանսպորտով ներգաղթողների ապօրինի փոխադրման դեմ արձանագրության 3-ի կետ (գ) կետով «ճամփորդական կամ անձը հաստատող կեղծ փաստաթղթերը» սահմանվում են որպես «...ցանկացած ճամփորդական կամ անձը հաստատող փաստաթուղթ»:

- (i) որը կեղծ պատրաստվել կամ էականորեն փոփոխվել է որևէ մեկի կողմից, որը չի հանդիսանում պետության անունից ճամփորդական կամ անձը հաստատող փաստաթուղթ պատրաստելու կամ տրամադրելու համար օրինականորեն լիազորված անձ կամ գործակալություն:
- (ii) որը անպատշաճ ձևով տրամադրվել կամ ձեռք է բերվել սխալ ներկայացման, կոռուպցիայի, հարկադրման կամ որևէ այլ ապօրինի եղանակով, կամ
- (iii) օգտագործվում է այդ փաստաթղթի օրինական տերը չհանդիսացող որևէ անձի կողմից»:

240. Ակնհայտ է, որ թրաֆիքինգի զոհերին կարող են նրանց թրաֆիքինգի ենթարկած անձանց կողմից տրամադրվել կեղծ փաստաթղթեր: *Ինչպես Վերգետնյա, Ժովային և օդային տրանսպորտով ներգաղթողների ապօրինի փոխադրման դեմ արձանագրությունում* (Յոթերորդ 5), սույն Կոնվենցիայում նույնպես չի պահանջվում, որ վերոհիշյալ անձինք ենթակա լինեն քրեական հետապնդման՝ դրանում նշված արաքներին ենթարկված լինելու պատճառով:

241. Գլխավոր 20-ի (գ) կետում հաշվի է առնվում այն հանգամանքը, որ թրաֆիքինգով զբաղվողները, որպես զոհերի վրա ճնշում գործադրելու միջոց, նրանցից հաճախ թաքցնում են ճամփորդական և անձը հաստատող փաստաթղթերը: Կոնվենցիան մշակողները համարել են, որ դա քրեորեն պատժելի արարք դարձնելը կարող է օգտակար լինել այն առումով, որ այն համեմատաբար հեշտ կլինի ապացուցելը, դրանով իսկ իրավապահ մարմինների համար կծառայի որպես թրաֆիքինգով զբաղվող անձանց դեմ օգտագործվող կարևոր գործիք:

242. Ի տարբերություն (ա) և (բ) ենթակետերի, (գ) ենթակետում փաստաթղթերի կեղծ լինելը չի հիշատակվում: Պատճառն այն է, որ որոշ երկրների օրենսդրություններով ճամփորդական կամ անձը հաստատող փաստաթղթերի կեղծման դեպքում պաշտպանության միջոցներ չեն նախատեսվում, ուստի դրանք թաքցնելը կամ ոչնչացնելը հանցանք չի համարվում: Այնուամենայնիվ, Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների հարցերով Հատուկ կոմիտեի որոշ անդամներ գտնում էին, որ անկախ այն բանից, արդյոք զոհերից պահված փաստաթղթերը իսկական են, թե կեղծ, դրա հետևանքները՝ զոհի վրա ճնշում գործադրելու կամ նրան վախեցնելու առումով, բացարձակապես նույնն են: Հետևաբար Կոնվենցիան մշակողները որոշեցին այս ենթակետում չհիշատակել փաստաթղթերի կեղծ լինելու փաստը՝ Կողմերի ազատ ընտրությանը թողնելով այն հարցի որոշումը, թե արդյո՞ք ճամփորդական կամ անձը հաստատող կեղծ փաստաթուղթը պահելը, տեղափոխելը, թաքցնելը, վնասելը կամ ոչնչացնելը պետք է համարվի որպես քրեորեն պատժելի արարք:

Գլխավոր 21. Հանցավոր ձևով օժանդակում կամ դրդում

243. Սույն Գլխավորի նպատակն է քրեորեն պատժելի դարձնել Կոնվենցիայով նախատեսված որոշակի հանցավոր արարքների կատարման փորձը և որոշակի արարքների կատարման օժանդակելը կամ դրդելը:

244. Կետ 1-ով Կողմերից պահանջվում է քրեորեն պատժելի դարձնել սույն Կոնվենցիայի 18 և 20 հոդվածներում նախատեսված հանցավոր արարքների կատարմանն օժանդակելը կամ դրդելը: Օժանդակման կամ դրդման համար պատասխանատվությունն առաջանում է այն դեպքում, երբ Կոնվենցիայով նախատեսված հանցանքը գործող անձին օժանդակում է մեկ այլ անձ, որը նույնպես շահագրգռված է հանցանքի կատարման մեջ: Հոդված 19-ով նախատեսված արարքը (զոհի ծառայություններն օգտագործելը) որպես օժանդակության կամ դրդման ձև ճանաչելը բացառվել է՝ որպես կոնցեպտուալ առումով անհնարին:

245. Կետ 2-ի առնչությամբ նույնպես համարվել է, որ Հոդված 19-ով նախատեսված արարքը որպես հանցանք կատարելու փորձ դիտելը նույնպիսի կոնցեպտուալ դժվարություններ է առաջացնում: Համանման ձևով, Հոդված 20-ում նշված որոշ արարքների կատարման փորձը չափազանց թույլ է համարվել՝ որպես հանցանք դիտելու համար: Բացի դրանից, որոշ օրենսդրություններ սահմանափակում են այն հանցանքների թիվը, որոնց կատարման փորձը պատժելի է: Հետևաբար, Կողմերից պահանջվում է հանցանք կատարելու փորձը որպես քրեորեն պատժելի արարք ճանաչել միայն Հոդված 18-ում և Հոդված 20-ի (ա) կետում սահմանված հանցանքների առնչությամբ:

246. Կոնվենցիայով նախատեսված բոլոր հանցավոր արարքների կատարման փորձը, դրանց օժանդակումը կամ դրդումը քրեորեն պատժելի դարձնելու համար նշված գործողությունները պետք է կատարված լինեն դիտավորությամբ:

Հոդված 22 – Իրավաբանական անձանց պատասխանատվությունը

247. Հոդված 22-ը համահունչ է իրավաբանական անձանց պատասխանատվության ճանաչմանն ուղղված ընթացիկ իրավական միտումին: Հոդվածի նպատակն է ճանաչել առևտրային ընկերությունների, միությունների և համանման իրավաբանական մարմինների («իրավաբանական անձինք») պատասխանատվությունը այն հանցավոր արարքների համար, որոնք իրենց անունից կատարվել են իրենց մոտ ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց կողմից: Հոդված 22-ով պատասխանատվություն է սահմանվում նաև այն դեպքում, երբ ղեկավար պաշտոն զբաղեցնող անձի կողմից տվյալ կազմակերպության որևէ աշխատակցի կամ գործակալի պատշաճ վերահսկողություն կամ ստուգում չի իրականացվում, դրանով իսկ նրան հնարավորություն տալով կատարել Կոնվենցիայով նախատեսված հանցավոր արարքներից որևէ մեկը:

248. Կետ 1-ի համաձայն, պատասխանատվության առաջացման համար պետք է բավարարված լինի չորս պայման: Առաջինն այն է, որ պետք է կատարված լինի Կոնվենցիայում նկարագրված հանցավոր արարքներից որևէ մեկը: Երկրորդը, հանցավոր արարքը պետք է կատարված լինի տվյալ իրավաբանական անձի օգտին: Երրորդը, հանցավոր արարքը (այդ թվում՝ օժանդակությունն ու դրդումը) պետք է կատարված լինի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձի կողմից: «Ղեկավար պաշտոն զբաղեցնող անձ» նշանակում է կազմակերպչական կառուցվածքում վերադաս դիրք գրավող անձ, օրինակ՝ տնօրեն: Չորրորդը, իրավաբանական անձի պատասխանատվության առաջացման համար դրանում ղեկավար պաշտոն զբաղեցնող անձը պետք է գործած լինի իր իրավասություններից որևէ մեկի (իրավաբանական անձը ներկայացնելու, նրա անունից որոշումներ կայացնելու կամ նրա ներսում վերահսկողություն իրականացնելու) հիման վրա: Կարճ ասած, կետ 1-ով Կողմերից պահանջվում է պատասխանատվություն դնել իրավաբանական անձանց վրա՝ նրանցում

ղեկավար պաշտոններ զբաղեցնող անձանց կողմից կատարված հանցավոր արարքների համար:

249. Ի լրումն վերը նշվածի, կետ 2-ով Կողմերից պահանջվում է իրավաբանական անձանց վրա պատասխանատվություն դնել նաև այն դեպքում, երբ հանցավոր արարքը կատարվել է ոչ թե կետ 1-ում նշված ղեկավար պաշտոն զբաղեցնող անձի, այլ իրավաբանական անձի օգտին իր լիազորությունների շրջանակներում գործող մեկ այլ անձի, օրինակ՝ նրա աշխատակիցներից կամ գործակալներից որևէ մեկի կողմից: Այն պայմանները, որոնք պետք է բավարարված լինեն նախքան պատասխանատվության առաջացումը, հետևյալ են. 1) հանցավոր արարքը պետք է կատարված լինի իրավաբանական անձի աշխատակցի կամ գործակալի կողմից, 2) հանցավոր արարքը պետք է կատարված լինի իրավաբանական անձի օգտին, 3) հանցավոր արարքի կատարումը հնարավոր է դարձել ղեկավար անձի՝ աշխատակցին կամ գործակալին չվերահսկելու հետևանքով: Այս համատեքստում «չվերահսկել» նշանակում է չձեռնարկել անհրաժեշտ կամ ողջամիտ քայլեր՝ ուղղված աշխատակցի կամ գործակալի կողմից իրավաբանական անձի անունից հանցավոր գործունեության մեջ ներգրավվելու կանխմանը: Նման անհրաժեշտ կամ ողջամիտ քայլերը կարող են որոշվել տարբեր գործոններով, ինչպիսիք են, օրինակ, գործունեության տեսակը, չափը և գործող կանոններն ու կիրառվող պրակտիկաները:

250. Այս հոդվածով սահմանված պատասխանատվությունը կարող է լինել քրեական, քաղաքացիական կամ վարչական: Յուրաքանչյուր Կողմ կարող է իր իրավական սկզբունքներին համապատասխան ինքնուրույն նախատեսել պատասխանատվության վերոհիշյալ ձևերից ցանկացածը կամ բոլորը, եթե բավարարվել են Հոդված 23-ի (2) կետով սահմանված պահանջները, մասնավորապես այն, որ պատիժը կամ միջոցը «արդյունավետ է, համաձայնական և ունի տարիանոգիչ նշանակություն» և ներառում է դրամական սանկցիաներ:

251. Կետ 4-ով հստակեցվում է, որ իրավաբանական անձի պատասխանատվությունը չի բացառում անհատ անձի պատասխանատվությունը: Որոշակի դեպքերում պատասխանատվությունը կարող է առաջանալ միաժամանակ մի քանի մակարդակներում, օրինակ՝ իրավաբանական անձի մարմիններից որևէ մեկի պատասխանատվությունը, իրավաբանական անձի՝ որպես ամբողջական մարմնի պատասխանատվությունը և անհատ անձի պատասխանատվությունը՝ կապված մեկի կամ մյուսի հետ:

Հոդված 23. Սանկցիաներ և միջոցներ

252. Այս Հոդվածը սերտորեն կապված է 18 և 21 հոդվածների հետ, որոնք սահմանում են քրեական իրավունքի շրջանակներում պատժելի տարբեր հանցավոր արարքները: Այդ հոդվածներով սահմանված պարտավորություններին համապատասխան, Հոդված 23-ը Կողմերից պահանջում է իրենց պատժի միջոցները համադրել հանցավոր արարքների ծանրության հետ և սահմանել «արդյունավետ, համաձայնական և տարիանոգիչ նշանակություն ունեցող» քրեական պատժամիջոցներ: Այն դեպքում, երբ Հոդված 18-ով նախատեսված հանցավոր արարքը կատարվում է անհատ անձի («ֆիզիկական անձ») կողմից, Կողմերը պետք է նախատեսեն ազատագրվում, որը կարող է առաջացնել հանձնում: Հարկ է նշել, որ *Հանձնման մասին Եվրոպական կոնվենցիայի* [Եվրոպական պայմանագրերի ժողովածու No.24] Հոդված 2-ի համաձայն, հանձնումը պետք է նախատեսվի այնպիսի հանցավոր արարքների համար, որոնք պահանջ ներկայացրած և պահանջը ստացած երկրների օրենսդրություններով

պատժվում են ազատագրվածներ՝ առնվազն մեկ տարի առավելագույն ժամկետով կամ ավելի խիստ պատժամիջոցով:

253. Իրավաբանական անձինք, որոնց պատասխանատվությունը սահմանվում է Յոթերորդ 22-ով, նույնպես ենթակա են «արդյունավետ, համամասնական և տարահանդիչ նշանակություն ունեցող» պատժամիջոցների, որոնք կարող են լինել քրեական, քաղաքացիական կամ վարչական բնույթի: Կետ 2-ը Կողմերից պահանջում է նախատեսել իրավաբանական անձանց համար դրամական սանկցիաներ սահմանելու հնարավորությունը:

254. Կետ 3-ը Կողմերի վրա ընդհանուր պարտավորություն է դնում նշակել այնպիսի անհրաժեշտ իրավական փաստաթղթեր, որոնք նրանց հնարավորություն կտան բռնագրավել Կոնվենցիայի Յոթերորդ 18-ում և Յոթերորդ 20-ի «ա» կետում նախատեսված հանցավոր արարքների կատարման գործիքները և հանցավոր ճանապարհով ձեռք բերված եկամուտները, կամ հանցանք գործած անձանց որևէ այլ ձևով զրկել դրանցից (օրինակ՝ այսպես կոչված «քաղաքացիական առգրավման» միջոցով): Կետ 3-ը պետք է ընթերցվի *Հանցավոր գործունեությունից ստացված եկամուտների լվացման, բացահայտման, առգրավման և բռնագանձման մասին կոնվենցիայի* [Եվրոպական պայմանագրերի ժողովածու No 141] լույսի ներքո: Այդ կոնվենցիայի հիմքում ընկած է այն գաղափարը, որ հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների բռնագրավումը հանցավորության դեմ ուղղված արդյունավետ զենք է: Քանի որ մարդկանց թրաֆիքինգը գրեթե միշտ իրականացվում է ֆինանսական շահույթ ստանալու նպատակով, ապա այս ոլորտում վստահաբար անհրաժեշտ են նաև հանցավոր արարքի արդյունքում առաջացած կամ դրա հետ կապված եկամուտներից կամ գույքից հանցանք գործած անձանց զրկելու միջոցներ: Քանի որ դժվար է պատկերացնել Յոթերորդ 19-ում և Յոթերորդ 20-ի (բ) և (գ) կետերում նշված արարքների այնպիսի տեսակներ, որոնք կարող են նշանակալի եկամուտներ առաջացնել կամ որոշակի գործիքներ պահանջել, ապա կետ 3-ը վերաբերում է միայն Յոթերորդ 18-ին և Յոթերորդ 20-ի (ա) կետին:

255. Եկամուտների լվացման մասին կոնվենցիայի Յոթերորդ 1-ում սահմանվում են դրանում օգտագործված «բռնագրավում», «գործիքներ», «եկամուտներ» և «գույք» բառերի նշանակությունները: «Բռնագրավումը» ենթադրում է քրեական հանցագործության կամ հանցագործությունների առնչությամբ անցկացված դատավարության արդյունքում ընդունված դատական որոշմամբ սահմանված այնպիսի տույժ կամ միջոց, որը հանգեցնում է գույքից զրկելուն: «Գործիքներն» ընդգրկում են այն բոլոր միջոցների համախումբը, որոնք ցանկացած եղանակով լիովին կամ մասամբ օգտագործվում են կամ նախատեսվում են օգտագործվել Յոթերորդ 18-ում և Յոթերորդ 20-ի (ա) կետում սահմանված հանցավոր արարքների կատարման համար: «Եկամուտներ» նշանակում է հանցավոր արարքի արդյունքում ստացված ցանկացած տնտեսական օգուտ կամ ֆինանսական խնայողություն: Այն կարող է կազմված լինել ցանկացած «գույքից» (այդ տերմինի սահմանումը տե՛ս ստորև): Նշված կետի սահմանման մեջ հաշվի է առնվել այն, որ ներքին օրենսդրություններում կարող են լինել հանցավոր արարքից հետո բռնագրավման ենթակա գույքի տեսակների հետ կապված տարբերություններ: Դրանցով կարող է թույլատրվել բռնագրավել հանցավոր արարքի (ուղղակի) եկամուտներ հանդիսացող իրերը կամ հանցանք գործած անձի մեկ այլ գույք, որը, չնայած ուղղակիորեն ձեռք չի բերվել այդ հանցանքի արդյունքում, սակայն համարժեք է դրանից ուղղակիորեն ստացված եկամուտներին («փոխարինող գույք»): Ուստի այս համատեքստում «գույք» տերմինը պետք է մեկնաբանվի որպես ցանկացած նյութական կամ ոչ նյութական, շարժական կամ անշարժ գույք, կամ այդ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի կամ դրանում ունեցած

Formatted: Bullets and Numbering

բաժնեմասնակցության մասին վկայող ցանկացած իրավաբանական փաստաթուղթ կամ գործիք: Հարկ է նշել, որ Կողմերը պարտավոր չեն նախատեսել քրեական իրավունքի շրջանակներում փոխարինող գույքի բռնագրավում, քանի որ «կամ այլ կերպ գրկել» արտահայտությունը ենթադրում է նաև «քաղաքացիական» առգրավում:

256. Հոդված 23-ի կետ 4-ով նախատեսվում է դադարեցնել մարդկանց թրաֆիքինգի իրականացման համար օգտագործվող ցանկացած հաստատության գործունեությունը: Այս միջոցը նախատեսված է նաև *Նախարարների Կոմիտեի կողմից Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին տրված՝ Սեռական շահագործման նպատակով մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին No. R(2000)11 Հանձնարարականի* կետ 45-ում, իսկ երեխաների սեռական շահագործման առնչությամբ՝ *Նախարարների Կոմիտեի կողմից Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին տրված՝ Սեռական շահագործումից երեխաների պաշտպանության մասին No. Rec(2001)16 Հանձնարարականի* կետ 42-ում: Կետ 4-ը թույլ է տալիս նաև հանցավորին ժամանակավորապես կամ մշտապես արգելել այնպիսի գործունեությամբ զբաղվելը, որը նպաստել է այդ հանցավոր արարքի կատարմանը:

257. Կոնվենցիայով նախատեսված նման միջոցները հնարավորություն կտան գործողություններ ձեռնարկել այնպիսի հաստատությունների դեմ, որոնք կարող են մարդկանց թրաֆիքինգով զբաղվողների համար օգտագործվել որպես «ծածկ», ինչպիսիք են, օրինակ, ամուսնական գործակալությունները, որդեգրման գործակալությունները, ճամփորդական գործակալությունները, հյուրանոցները և ուղեկցման ծառայությունները: Այդ միջոցները նախատեսված են նաև հետագա զոհերի ռիսկը նվազեցնելու համար՝ այն հաստատությունները փակելու միջոցով, որտեղ, ինչպես հայտնի է դարձել, հավաքագրվել կամ շահագործվել են թրաֆիքինգի զոհերը (օրինակ, բարեր, հյուրանոցներ, ռեստորաններ կամ տեքստիլ արտադրամասեր), ինչպես նաև մարդկանց արգելելու համար այնպիսի գործունեությամբ զբաղվելը, որը նրանք օգտագործել են թրաֆիքինգի մեջ ներգրավվելու համար:

258. Այս դրույթով Կողմերից չի պահանջվում վերոհիշյալ հաստատությունների փակումը նախատեսել որպես քրեական պատժամիջոց: Կողմերը կարող են օգտագործել, օրինակ, հաստատությունների փակման վարչական միջոցներ: «Հաստատություն» նշանակում է ցանկացած վայր, որտեղ առկա է մարդկանց թրաֆիքինգ երևույթի որևէ տարր: Այս դրույթը կիրառվում է հաստատության նկատմամբ սեփականության իրավունք ունեցող ցանկացած անձի հանդեպ, լինի նա ֆիզիկական, թե իրավաբանական անձ:

259. Խուսափելու համար մարդկանց թրաֆիքինգի մեջ չներգրավված անձանց նկատմամբ պատժամիջոցներ կիրառելուց (օրինակ, այն հաստատության սեփականատիրոջ, որտեղ, առանց նրա գիտության, կատարվել է մարդկանց թրաֆիքինգ), դրույթի մեջ նշվում է, որ հաստատությունների գործունեության դադարեցումը պետք է իրականացվի «առանց բարեխիղճ երրորդ անձանց իրավունքները խախտելու»:

Հոդված 24 – Ծանրացնող հանգամանքներ

260. Հոդված 24-ով Կողմերից պահանջվում է, որ սույն Կոնվենցիայի Հոդված 18-ում նախատեսված հանցավոր արարքների կատարման համար պատիժները որոշելիս որոշ հանգամանքներ (որոնք նշված են ա., բ., գ. և դ. ենթակետերում) համարվեն որպես ծանրացնող:

261. Առաջին ծանրացնող հանգամանքն այն է, որ դիտավորությամբ կամ մեծ անփութությամբ կատարված թրաֆիքինգը սպառնալիք է ստեղծել տուժածի կյանքի համար: Այս ծանրացնող հանգամանքը սահմանված է նաև *Եվրամիության խորհրդի 2002թ. հունիսի 19-ի Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի շրջանակային որոշման* Յոթված 3-ի կետ 2-ում: Նշված հանգամանքը ծագում է, օրինակ, այն դեպքում, երբ այն պայմանները, ուր տեղափոխվել են թրաֆիքինգի գոհերը, չափազանց վատն են և սպառնալիք են ստեղծում նրանց կյանքի համար:

262. Երկրորդ ծանրացնող հանգամանքն այն է, որ հանցավոր արարքը կատարվում է երեխայի, այսինքն, ինչպես սահմանված է սույն Կոնվենցիայով, 18 տարին չլրացած անձի նկատմամբ:

263. Երրորդ ծանրացնող հանգամանքն այն է, որ հանցավոր արարքը կատարվում է պետական պաշտոնյայի կողմից՝ իր պաշտոնական պարտականությունները կատարելու ժամանակ:

264. Չորրորդ ծանրացնող հանգամանքն այն է, որ հանցավոր արարքը կատարվում է հանցավոր կազմակերպության շրջանակներում: Կոնվենցիան չի սահմանում «հանցավոր կազմակերպություն» հասկացության նշանակությունը: Սակայն նշված դրույթը կիրառելիս Կողմերը կարող են առաջնորդվել այդ հասկացությունը սահմանող միջազգային փաստաթղթերով: Օրինակ, *Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ Միավորված Ազգերի Կազմակերպության կոնվենցիայի* Յոթված 2-ի (ա) կետում «կազմակերպված հանցավոր խումբը» սահմանվում է որպես «երեք կամ ավելի անձանցից բաղկացած խումբ, որը գոյություն ունի որոշակի ժամանակահատվածում և գործում է փոխադարձ համագործակցությամբ՝ ուղղակիորեն կամ անուղղակիորեն ֆինանսական կամ այլ նյութական օգուտ ստանալու նպատակով սույն Կոնվենցիայով սահմանված մեկ կամ մի քանի հանցանքների կամ հանցավոր արարքների կատարման համար»: *Նախարարների Կոմիտեի կողմից Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին տրված՝ կազմակերպված հանցավորության դեմ պայքարի ղեկավարող սկզբունքների վերաբերյալ Rec(2001)11* Հանձնարարականը և *Եվրոպական Միության մասին պայմանագրի Յոթված K.3-ի (Եվրոպական Միության երկրներում հանցավոր կազմակերպությանը մասնակցելը քրեորեն պատժելի արարք դարձնելու մասին) հիման վրա Եվրամիության խորհրդի կողմից 1998թ. դեկտեմբերի 21-ին ընդունված Համատեղ գործողության ծրագիրը* պարունակում են «կազմակերպված հանցավոր խումբ» և «հանցավոր կազմակերպություն» հասկացությունների՝ վերը շարադրվածին շատ նման սահմանումներ:

Յոթված 25. Նախկին դատվածություններ

265. Մարդկանց թրաֆիքինգը հաճախ իրականացվում է անդրազգային մակարդակով՝ այնպիսի հանցավոր կազմակերպությունների կողմից, որի անդամները կարող են դատվածություն ունենալ ավելի քան մեկ երկրում: Ներքին օրենսդրություններից շատերը ավելի խիստ պատիժ են նախատեսում նախկինում դատվածություն ունեցող անձանց նկատմամբ: Ընդհանրապես, միայն ազգային դատարանի դատավճռի հիման վրա եղած դատվածությունն է համարվում ավելի խիստ պատժի հանգեցնող նախկին դատվածություն: Սովորաբար, օտարերկրյա դատարանների դատավճռի հիման վրա եղած նախկին դատվածությունները հաշվի չեն առնվում այն հիմքով, որ քրեական իրավունքը համարվում է ներքին հարց, ազգային օրենսդրություններում կարող են լինել տարբերություններ, և

օտարերկրյա դատարանների կողմից ընդունված որոշումները որոշ չափով կասկածահարույց են:

266. Նման փաստարկներն այժմ կորցրել են իրենց նախկին ուժը այն առումով, որ քրեական իրավունքի չափանիշների միջազգայնացումը, որը հանդիսանում է հանցավորության միջազգայնացմանը նախորդող քայլ, միտված է տարբեր երկրների օրենսդրությունները միմյանց հետ համապատասխանեցնելուն: Ի լրումն դրա, մի քանի տասնամյակների ընթացքում երկրների կողմից ընդունվել են այնպիսի փաստաթղթեր, ինչպիսին է, օրինակ, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան, որի կենսագործումը նպաստել է ընդհանուր երաշխիքների կայուն հիմքի կառուցմանը, ինչն առավել մեծ վստահություն է ներշնչում բոլոր մասնակից պետությունների արդարադատության համակարգերի նկատմամբ:

267. Միջազգային կրկնահանցագործության սկզբունքը սահմանված է մի շարք միջազգային իրավական փաստաթղթերում: Օրինակ, *1961թ. մարտի 30-ի Թմրադեղերի մասին Նյու Յորքի կոնվենցիայի Յոդված 36-ի (2)(iii)* ենթակետի համաձայն, օտար երկրներում դատվածություն ունենալու հանգամանքը պետք է հաշվի առնվի կրկնահանցագործության հաստատման նպատակով՝ չխախտելով յուրաքանչյուր Կողմի սահմանադրական դրույթները, իրավական համակարգը և ներքին օրենսդրությունը: *Եվրոյի ներմուծման հետ կապված դրամանենգության դեմ ուղղված քրեական պատժամիջոցների և այլ սանկցիաների միջոցով պաշտպանության ուժեղացման մասին Եվրամիության խորհրդի 2000/383/JHA շրջանակային որոշումը* լրամշակող *Եվրամիության խորհրդի 2001թ. դեկտեմբերի 6-ի շրջանակային որոշման* Յոդված 1-ի համաձայն, Եվրոպական Միության անդամ պետությունները պետք է մեկ այլ անդամ պետությունում պաշտոնապես հայտարարված՝ դրամանենգության մասին վերջնական որոշումները ճանաչեն որպես սովորույթ դարձած հանցավորության /habitual criminality/ հաստատում:

268. Փաստը մնում է այն, որ միջազգային մակարդակում գոյություն չունի կրկնահանցագործության ստանդարտ հասկացություն, իսկ որոշ երկրների օրենսդրություններում այդ հասկացությունն ընդհանրապես սահմանված չէ: Այն փաստը, որ օտար երկրներում դատվածություն ունենալու հանգամանքը միշտ չէ, որ դատապարտման նպատակներով հայտնի է դարձվում դատարաններին, գործնականում լրացուցիչ դժվարություններ է ստեղծում:

269. Նշված դժվարությունների հաղթահարման նպատակով Յոդված 25-ը նախատեսում է պատիժների որոշման ժամանակ մեկ այլ կողմի դատարանների կայացրած դատավճիռները հաշվի առնելու հնարավորությունը: Այդ դրույթի պահանջները կատարելու համար Կողմերը կարող են իրենց ներքին օրենսդրություններում նախատեսել, որ օտարերկրյա դատարանների դատավճիռների վրա հիմնված նախկին դատվածությունները, այնպես ինչպես ազգային դատարանների դատավճիռների վրա հիմնվածները, հանգեցնեն ավելի խիստ պատժի կիրառման: Նրանք կարող են նաև նախատեսել, որ դատարանները, դատավճիռի կայացման ժամանակ անձի հետ կապված հանգամանքները գնահատելու իրենց ընդհանուր իրավասությունների շրջանակներում, հաշվի առնեն նաև նախկինում եղած դատվածությունները:

270. Այս դրույթը դատարաններին և քրեական հետապնդման ծառայություններին չի պարտավորեցնում քայլել ձեռնարկել՝ հայտնաբերելու համար, արդյոք մեղադրվող անձի նկատմամբ մեկ այլ Կողմի դատարանների կողմից վերջնական դատավճիռներ կայացվել են, թե՞ ոչ: Այնուհանդերձ, հարկ է նշել, որ *Քրեական հարցերում փոխադարձ օգնության մասին եվրոպական կոնվենցիայի*

[Եվրոպական պայմանագրերի ժողովածու No.30] Հոդված 13-ի համաձայն, որևէ Կողմի դատական մարմինները, անհրաժեշտության դեպքում, կարող են մյուս Կողմից հայցել որևէ քրեական գործի դատական գրանցումներից քաղվածքներ և առնչվող տեղեկություններ:

271. Սույն Կոնվենցիայի շրջանակներից դուրս չգալու համար, Հոդված 25-ը մշակողները նկատի են ունեցել միայն այն նախկին դատավաճառությունները, որոնք բխում են Հոդված 18-ի և Հոդված 20-ի (ա) կետի դրույթները ազգային մակարդակով կիրառելուց: Հոդված 19-ում և Հոդված 20-ի մնացած մասում նկարագրված հանցավոր արարքների երկկողմանի քրեականացման դեպքում, կարող են հաշվի առնվել այս դրույթների վրա հիմնված նախկին դատավաճառությունները:

Հոդված 26. Պատիժ չկիրառելու հնարավորությունը

272. Հոդված 26-ը Կողմերին պարտավորեցնում է ձեռնարկել և/կամ իրականացնել այնպիսի օրենսդրական միջոցառումներ, որոնք հնարավորություն են տալիս զոհերի նկատմամբ պատիժ չկիրառել՝ նույն հոդվածում նշված հիմքերով:

273. Մասնավորապես, այն պահանջը, որ զոհերին հարկադրվել է ներգրավվել անօրինական գործունեության մեջ, պետք է ըմբռնվի որպես առնվազն այն զոհերին ներառող պահանջ, որոնք ենթարկվել են Հոդված 4-ում նշված ապօրինի միջոցներից որևէ մեկին, երբ նման անօրինական գործունեության մեջ ներգրավվելը եղել է հարկադրանքի արդյունք:

274. Ի կատարումն Հոդված 26-ով սահմանված պարտավորության, յուրաքանչյուր Կողմ, ելնելով իր իրավական համակարգի հիմնական սկզբունքներից, պետք է իր քրեական իրավունքում կամ քրեական դատավարության իրավունքում նախատեսի այնպիսի դրույթներ կամ միջոցներ, որոնք թույլ են տալիս զոհերի նկատմամբ նրանց ապօրինի գործողությունների համար պատիժ չկիրառելու հնարավորություն, եթե բավարարվել են վերը նշված իրավական պահանջները:

Գլուխ V Քննություն, քրեական հետապնդում և դատավարական իրավունք

275. Այս գլխի դրույթները միտված են Կողմերի քրեական ընթացակարգերի համաձայնեցմանը՝ հետևյալ երկու նպատակներով. թրաֆիքինգի զոհերի պաշտպանություն և օժանդակություն թրաֆիքինգով զբաղվողների քրեական հետապնդմանը:

276. Կոնվենցիան մշակողները քննության են առել այն հարցը, թե արդյո՞ք այս գլխում անհրաժեշտ է ընդգրկել հատուկ քննչական մեթոդներով ապացույցներ հավաքելուն և հանցավոր գործունեությունից ստացված եկամուտների բռնագրավմանը վերաբերող հոդված: Քանի որ նշված հարցն արդեն քննարկված է *Հանցավոր գործունեությունից ստացված եկամուտների լվացման, բացահայտման, առգրավման և բռնագանձման մասին կոնվենցիայի* [Եվրոպական պայմանագրերի ժողովածու No 141] Հոդված 4-ում, անհրաժեշտ չի համարվել սույն Կոնվենցիայում համանման դրույթ ընդգրկել: Կոնվենցիան մշակողները ելել են այն տեսանկյունից, որ No.141 կոնվենցիայի դրույթների ցանկացած փոփոխությունը կարող է սույն Կոնվենցիայի հետ անհամապատասխանությունների հանգեցնել: Հետևաբար, նրանք նախընտրել են գործողության ավելի մեղ ուղիղ ունեցող սույն Կոնվենցիայում չընդգրկել որևէ

դրույթ No.141 կոնվենցիայից, որը նախատեսված է հանցագործությունների ավելի լայն շրջանակի, այլ ոչ թե հանցավոր գործունեության մի որոշակի ոլորտի նկատմամբ կիրառվելու համար:

Յոդված 27. Շահագրգիռ կողմից (Ex parte) և իրավասու մարմնի պաշտոնյայի կողմից (ex officio) դիմումներ

277. Յոդված 27-ի կետ (1)-ը նախատեսված է այն բանի համար, որ իրավասու մարմիններին հնարավորություն տրվի Կոնվենցիայով սահմանված հանցավոր արարքների քրեական հետապնդումն իրականացնել առանց զոհի կողմից գանգատ ներկայացնելու անհրաժեշտության: Նպատակն այն է, որ կանխվեն զոհերի նկատմամբ ճնշում և սպառնալիք գործադրող թրաֆիքինգով զբաղվող անձանց կողմից զոհերին իրավասու մարմիններին գանգատ ներկայացնելուց ետ պահելու ջանքերը: Որոշ պետությունների կողմից պահանջվում է, որ իրենց տարածքից դուրս կատարված հանցանքների առնչությամբ դատական գործ հարուցելու համար այդ հանցանքները դառնան զոհի կողմից ներկայացվող հայցի կամ այլ երկրի մարմնի կողմից ներկայացվող մեղադրանքի առարկա: «Համեմայն դեպս այն ժամանակ, երբ հանցավոր արարքն ամբողջովին կամ մասամբ կատարվել է իր տարածքում» արտահայտությունը այդ պետություններին հնարավորություն է տալիս նշված հարցի հետ կապված փոփոխություն չկատարել իրենց օրենսդրության մեջ:

278. Յոդված 27-ի կետ (2)-ը նշակված է *Եվրամիության Խորհրդի 2001 թ. մարտի 15-ի քրեական դատավարությունում տուժողների կարգավիճակի մասին շրջանակային որոշման* Յոդված 11-ի կետ (2)-ի հիման վրա: Այն նպատակ է հետապնդում ավելի ոլորտին դարձնել զոհերի կողմից գանգատների ներկայացումը նրանց հնարավորություն տալով այդ գանգատները ներկայացնելու այն պետության իրավասու մարմիններին, որտեղ նրանք բնակվում են: Եթե այն մարմինը, որին ներկայացվել է գանգատը, տվյալ հարցում իրավասություն չունի, նա պետք է անհապաղ գանգատը փոխանցի այն կողմի իրավասու մարմնին, որի տարածքում կատարվել է հանցանքը: Յոդված 27-ի կետ (2)-ը սահմանում է միայն տվյալ իրավասու մարմնին գանգատը փոխանցելու պարտավորություն, սակայն դատական քննություն կամ դատական գործ սկսելու պարտավորություն չի դնում այն պետության վրա, որտեղ զոհը բնակվում է:

279. Կետ 3-ի համաձայն, յուրաքանչյուր Կողմ պետք է մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի կամ մարդու իրավունքների պաշտպանության հարցերով զբաղվող հասարակական կազմակերպություններին և այլ միություններին հնարավորություն ապահովի տուժածի համաձայնությամբ օգնելու և/կամ աջակցելու նրան մարդկանց թրաֆիքինգին առնչվող գործերի դատական քննության ընթացքում:

Յոդված 28. Տուժածների, վկաների և քննությանը օգնություն ցույց տվող անձանց պաշտպանությունը դատական մարմինների կողմից

280. Ի լրումն վկաների, այլ անձինք նույնպես կարող են թրաֆիքինգի դեմ պայքարի գործընթացում հանդես գալ որպես վկաներ կամ տեղեկատվության աղբյուրներ: Սակայն որպես վկաներ ցուցմունքներ տալու կամ տեղեկություններ փոխանակելու դեպքում նրանց համար իրական սպառնալիքներ են առաջանում:

281. Յոդված 28-ի համաձայն, Կողմերը պետք է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկեն տուժածների, վկաների, քննությանը օգնություն ցույց տվող անձանց և նրանց ընտանիքների անդամների արդյունավետ և պատշաճ պաշտպանություն

ապահովելու ուղղությամբ: Ընտանիքների անդամների պաշտպանությունը նախատեսվում է միայն «անհրաժեշտության դեպքում», քանի որ երբեմն հենց ընտանիքներն են ներգրավված լինում թրաֆիքինգի գործում: Նմանապես, քննությանը օգնություն ցույց տվող անձանց պաշտպանությունը նույնպես նախատեսվում է միայն «անհրաժեշտության դեպքում»:

282. Վկաների և քննությանն օգնություն ցույց տվող անձանց պաշտպանության հարցը Եվրամիության Խորհրդի կողմից համակողմանիորեն քննության է առնվել *Նախարարների Կոնստեի կողմից Եվրոպայի Խորհրդի անդամ պետություններին տրված՝ 1997թ. սեպտեմբերի 10-ի Վկաների ահաբեկման և պաշտպանության իրավունքների մասին No. R(97)13 Հանձնարարականում*: Հանձնարարականում սահմանվում են պետությունների՝ վկաների ահաբեկմանը վերաբերող ներքին օրենսդրության (լինի դա քրեական դատավարության օրենսգիրք, թե արտադատական պաշտպանության միջոցներ) համար որպես ուղեմիջ ծառայող մի խումբ սկզբունքներ: Հանձնարարականում անդամ պետություններին առաջարկվում է ինչպես վկաների, այնպես էլ քրեական դատավարության համակարգի շահերի արդյունավետ պաշտպանությանն օժանդակող միջոցառումների ցուցակ, որոնք միաժամանակ պաշտպանությանը երաշխավորում են քրեական դատավարությունների ընթացքում իր իրավունքների իրականացման պատշաճ հնարավորություններ: Այդ միջոցներից մի քանիսը նշված են Հոդված 28-ի (2) կետում:

283. Կոնվենցիան մշակողները, գլխավորապես հիմնվելով *No. R(97)13 հանձնարարականի* վրա, մեկնաբանել են, որ «նրանք, ովքեր հայտնել են սույն Կոնվենցիայի 18 հոդվածում նախատեսված հանցավոր արարքների մասին կամ որևէ այլ կերպ համագործակցել են քննությունը վարող կամ քրեական հետապնդման մարմինների հետ» արտահայտությունը վերաբերում է Կոնվենցիայի Հոդված 18-ով նախատեսված հանցագործությունների կատարման մեջ մեղադրված կամ դատապարտված անձանց, որոնք համաձայնվել են համագործակցել քննությունը վարող կամ քրեական հետապնդման մարմինների հետ, մասնավորապես նրանց տեղեկություններ տրամադրել իրենց մասնակցությամբ կատարված թրաֆիքինգի հանցանքների մասին, որպեսզի դրանց հետ կապված քննություն անցկացվի և հայց հարուցվի:

284. «Վկաներ» բառը վերաբերում է Կոնվենցիայի Հոդված 18-ով նախատեսված՝ մարդկանց թրաֆիքինգի հետ կապված դատական գործերին առնչվող տեղեկություններ ունեցող անձանց, այդ թվում՝ սեփական նախաձեռնությամբ հանցավոր արարքի մասին հայտնող անձանց և իրազեկողներին:

285. Վկաների ահաբեկումը, լինի դա ուղղակիորեն թե անուղղակիորեն, կարող է իրականացվել տարբեր ձևերով, բայց դրա նպատակը գրեթե միշտ ամբաստանյալի դեմ եղած ապացույցներից ազատվելն է, որպեսզի վերջինս կարողանա արդարացվել:

286. Հոդված 23-ի (2) կետում նշված պաշտպանության միջոցները ընդամենը օրինակներ են: Հոդված 28-ի (1) կետում օգտագործված «արդյունավետ և համապատասխան պաշտպանություն» արտահայտությունը ենթադրում է պաշտպանության մակարդակը զոհերի, քննությանն օգնություն ցույց տվող անձանց, վկաների, իրազեկողների և, անհրաժեշտության դեպքում, նշված անձանց ընտանիքների անդամների նկատմամբ առկա սպառնալիքներին համապատասխանեցնելու անհրաժեշտություն: Պահանջվող միջոցները կախված են այն վտանգների գնահատումից, որոնց տվյալ անձինք ենթարկվում են: Օրինակ, որոշ դեպքերում բավարար կլինի նախազուլակա տեխնիկական

սարքերի տեղադրումը, ազդանշանային ընթացակարգի համաձայնեցումը, ստացվող և դուրս եկող հեռախոսազանգերի գրանցումը, գաղտնի հեռախոսահամար, մեքենայի պաշտպանված գրանցման համար հատկացնելը կամ շտապ զանգերի համար բջջային հեռախոս տրամադրելը: Այլ դեպքերում կարող են պահանջվել թիկնապահներ կամ, ծայրահեղ հանգամանքներում, վկաների պաշտպանության այնպիսի միջոցներ, ինչպիսին է, օրինակ, անձնական, աշխատանքի և բնակության վայրի տվյալների փոփոխությունը: Ի լրումն դրա, կետ 3-ով նախատեսվում է, որ տուժած երեխայի համար, նրա շահերից ելնելով, ապահովվեն հատուկ պաշտպանության միջոցներ:

287. Պաշտպանության միջոցների արդյունավետության համար հաճախ անհրաժեշտ կլինի ապահովել, որ թրաֆիքինգով զբաղվողներն անտեղյակ լինեն դրանցից: Ուստի Կողմերը պետք է ապահովեն, որ պաշտպանության միջոցների մասին տեղեկությունները պաշտպանված լինեն չլիազորված օգտագործումից:

288. Ինչ վերաբերում է պաշտպանության միջոցների տրամադրման ժամանակաշրջանին, ապա Կոնվենցիայով ոչ սպառիչ ձևով նախատեսվում է քննության և քրեական հետապնդման կամ դրանց հետևող ժամանակահատվածը: Պաշտպանության միջոցների տրամադրման ժամանակահատվածը կախված է անձի նկատմամբ առկա սպառնալիքներից:

289. Պաշտպանության միջոցները պետք է տրամադրվեն միայն շահառու անձի համաձայնության առկայության դեպքում: Չնայած պաշտպանության միջոցների տրամադրման վերաբերյալ անձանց համաձայնությունը սկզբունքորեն անհրաժեշտ է (անձանց նկատմամբ հարգանքի դրսևորման, ինչպես նաև այդ միջոցների արդյունավետության ապահովման նպատակով), սակայն որոշ իրավիճակներում (օրինակ՝ այնպիսի արտակարգ իրավիճակներում, երբ անձը շոկի մեջ է գտնվում) պաշտպանության միջոցները պետք է ձեռնարկվեն անգամ առանց պաշտպանության ենթակա անձի համաձայնությունը ստանալու:

290. Ձոռները, վկաները, քննությանն օգնություն ցույց տվող անձինք և նրանց ընտանիքների անդամները թրաֆիքինգով զբաղվողների սպառնալիքներին ենթակա միակ մարդիկ չեն: Թրաֆիքինգով զբաղվողները հաճախ սպառնում են նաև հասարակական կազմակերպությունների և թրաֆիքինգի զոհերին աջակցող այլ խմբերի անդամներին: Այդ պատճառով, կետ 4-ով Կողմերից պահանջվում է նրանց համար ապահովել համապատասխան պաշտպանություն, իսկ անհրաժեշտության դեպքում, օրինակ լուրջ սպառնալիքների ժամանակ, ֆիզիկական պաշտպանություն:

291. Քանի որ մարդկանց թրաֆիքինգը հաճախ միջազգային բնույթ է կրում, իսկ որոշ երկրներ փոքր են, կետ 5-ով Կողմերին խրախուսվում է Չողված 28-ի կիրառումն ապահովելու նպատակով այլ պետությունների հետ համաձայնագրեր կնքել կամ պայմանավորվածություններ ձեռք բերել: Դրանք, թերևս, հնարավորություն կտան բարելավել Չողված 28-ով նախատեսված պաշտպանությունը: Այսպես, օրինակ, վտանգի ենթարկված անձին նոր բնակության վայրով ապահովելու անհրաժեշտություն կարող է առաջանալ: Շատ փոքր երկրում, կամ այն դեպքում, երբ առկա է սպառնացողների կողմից վերոհիշյալ անձին հեշտությամբ հայտնաբերելու ռիսկ, արդյունավետ պաշտպանություն ապահովելու միակ ելքը նրա համար նոր բնակության վայրի կազմակերպումն է մեկ այլ երկրում: Ի լրումն դրա, որոշ դեպքերում զոհերը խուսափում են ընդունող երկրում դատական գործ հարուցելուց՝ վախենալով իրենց սեփական երկրներում մնացած իրենց ընտանիքի անդամների նկատմամբ թրաֆիքինգով զբաղվողների կողմից ճնշամիջոցների գործադրումից: Ձոռների

ընտանիքների արդյունավետ պաշտպանությունը թելադրում է ծագման երկրի և ընդունող երկրի միջև սերտ համագործակցության անհրաժեշտություն, որը կարող է հաստատվել նաև Հոդված 28-ի կետ (5)-ում նշված երկկողմ կամ բազմակողմանի համաձայնագրերի կնքման միջոցով: Այս կապակցությամբ անհրաժեշտ է հիշատակել *Նախարարների Կոմիտեի կողմից Եվրոպայի Խորհրդի անդամ պետություններին տրված՝ Վկաների ահաբեկման և պաշտպանության իրավունքների մասին No. R(97)13 Հանձնարարականը:*

Հոդված 29. Մասնագիտացված մարմիններ և համակարգող կառույցներ

292. Կետ 1-ի համաձայն, Կողմերը պետք է ձեռնարկեն այնպիսի միջոցներ, որոնք անհրաժեշտ են թրաֆիքինգի դեմ պայքարի և զոհերի պաշտպանության ոլորտում մասնագիտացած անձանց պատրաստման կամ կառույցների ստեղծման համար: Յուրաքանչյուր երկիր պետք է ունենա թրաֆիքինգի դեմ պայքարի գծով բավարար թվով մասնագետներ և նրանց ապահովի անհրաժեշտ միջոցներով: Մասնագիտացված մարմինների և համակարգող կառույցների անձնակազմը, որքանով որ հնարավոր է, պետք է կազմված լինի կանանցից և տղամարդկանցից: Այնուհանդերձ, մասնագիտացման պահանջը չի ենթադրում, որ այն պետք է իրականանա օրենսդրության կիրառման բոլոր ոլորտներում: Մասնավորապես, դա չի նշանակում, որ յուրաքանչյուր քրեական հետապնդման ծառայություն կամ ոստիկանության բաժին պետք է ունենա մարդկանց թրաֆիքինգով զբաղվող մասնագիտացված ստորաբաժանում կամ փորձագետ: Այդ դրույթը ենթադրում է, որ թրաֆիքինգին արդյունավետորեն հակազդելու և զոհերին պաշտպանելու անհրաժեշտություն ունեցող ոլորտներում պետք է լինեն համապատասխան միջոցների կիրառման պատասխանատվությամբ օժտված ստորաբաժանումներ և պատշաճ կերպով պատրաստված աշխատակազմ:

293. Մասնագիտացումը կարող է իրականացվել տարբեր ձևերով. իրենց ընտրությամբ, երկրները կարող են ունենալ մի շարք մասնագետ ոստիկաններ, դատավորներ, դատախազներ և վարչական պաշտոնյաներ, կամ հակաթրաֆիքինգային պայքարի տարբեր ոլորտներում հատուկ պատասխանատվությամբ օժտված գործակալություններ կամ ստորաբաժանումներ: Նման գործակալությունները կամ ստորաբաժանումները կարող են ստեղծվել որպես հակաթրաֆիքինգային գործունեության նկատմամբ հսկողություն իրականացնող հատուկ ծառայություններ, կամ դրանք կարող են լինել արդեն գոյություն ունեցող մարմինների կազմում գործող մասնագիտացված ստորաբաժանումներ: Նման ստորաբաժանումները պետք է առնվազն օժտված լինեն թրաֆիքինգի կանխարգելման և բացահայտման համար անհրաժեշտ բոլոր տեղեկությունների ձեռքբերման և կենտրոնացման համար պահանջվող ունակություններով և իրավաբանական ու նյութական միջոցներով: Ի լրումն դրա, և անկախ միջազգային համագործակցության հարցերով զբաղվող այլ ազգային մարմինների դերից, նման մասնագիտացված մարմինները կկարողանան գործել նաև որպես օտարերկրյա հակաթրաֆիքինգային մարմինների գործընկերներ:

294. Իրենց գործառնությունների արդյունավետ իրականացման համար վերը նկարագրված անձինք կամ մարմինները պետք է ունենան անհրաժեշտ ինքնուրույնություն: Հարկ է նշել, որ հակաթրաֆիքինգային գործունեության ոլորտում մասնագիտացած մարմինների ինքնուրույնությունը չպետք է բացարձակ լինի. ոստիկանությունը, վարչական մարմինները և քրեական հետապնդման ծառայությունները պետք է հնարավորինս միավորեն ու համակարգեն իրենց գործունեությունը: Մասնագիտացված ծառայությունների ինքնուրույնության աստիճանը պետք է լինի այնքան, որքան որ անհրաժեշտ է նրանց կողմից իրենց գործառնությունները բավարար չափով իրականացնելու համար:

295. Մարդկանց թրաֆիքինգը հաճախ դրսևորվում է որպես կազմակերպված ցանցերի միջոցով իրականացվող անդրազգային հանցավոր գուրծունեություն: Այդ ցանցերը սովորաբար ձևում են և շատ արագ հարմարվում են փոփոխություններին (օրինակ, երկրի օրենսդրության փոփոխություններին) տեղափոխումների միջոցով: Օրինակ պարզվել է, որ թրաֆիքինգով զբաղվող որոշ կազմակերպություններ ունեն իրենց կողմից շահագործվող կանանց հերթագայության համակարգ, և նրանց մի վայրից մյուսն են տեղափոխում հսկողությունից խուսափելու համար: Արդյունավետ լինելու համար, նման կազմակերպությունների դեմ պայքարը պետք է համակարգվի: Հոդված 29-ի (2) կետում շեշտվում է մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի համար պատասխանատու պետական հաստատությունների քաղաքականության ու գործողությունների համակարգման անհրաժեշտությունը: Նման համակարգումը կարող է իրականացվել հատուկ ստեղծված համակարգող կառույցների միջոցով:

296. Թրաֆիքինգի դեմ պայքարի և զոհերի պաշտպանության արդյունավետության ապահովման համար էական նշանակություն ունի պետական հաստատություններում պատշաճ ուսուցման իրականացումը: Կետ 3-ով սահմանվում է, որ այդ ուսուցումը պետք է վերաբերի թրաֆիքինգի կանխարգելման, թրաֆիքինգով զբաղվող անձանց քրեորեն հետապնդելու և թրաֆիքինգի զոհերի պաշտպանության մեթոդներին: Հաստատություններին թրաֆիքինգի զոհերի խնդիրների հատուկ առանձնահատկություններին ծանոթացնելու համար նախատեսվում է ուսուցման ծրագրում ընդգրկել նաև մարդու իրավունքների պաշտպանության հարցերը: Ուսուցման ժամանակ պետք է նաև ընդգծվեն զոհերի կարիքները և քրեական արդարադատության համակարգի կողմից զոհերի ընդունման ու նրանց հետ պատշաճ վերաբերմունքի հարցերը:

297. Ուսուցումը պետք է անցկացվի մարդկանց թրաֆիքինգի կանխարգելման և դրա դեմ պայքարի ոլորտում ներգրավված համապատասխան պաշտոնյաների համար: «Համապատասխան պաշտոնյաներն» են թրաֆիքինգի զոհերի հետ շփվող անձինք կամ ծառայությունները, ինչպիսիք են իրավապահ մարմինների պաշտոնյաները, ներգաղթի ու սոցիալական ծառայությունները, դեսպանատների կամ հյուպատոսարանների անձնակազմը, սահմանային ստուգման կետերը և միջազգային խաղաղապահ առաքելությունների զինվորները կամ ոստիկանությունը: Կոնվենցիան փորձում է ապահովել մարդկանց թրաֆիքինգի զոհերի հետ անմիջականորեն շփվելու ամենամեծ հավանականություն ունեցող անձանց ընդգրկումը ուսուցման գործընթացում, քանի որ ծայրաստիճան կարևոր է, որ խնդրո առարկա ծառայության անձնակազմը բավարար պատրաստվածություն ունենա թրաֆիքինգին բնորոշ առանձնահատկությունները ճանաչելու և հակաթրաֆիքինգային գործունեությանն առնչվող տեղեկությունները հավաքագրելու ու փոխանցելու համար, ինչպես նաև լիովին ըմբռնի դրանց կարևորությունը թրաֆիքինգի զոհերին բացահայտելու ու օժանդակելու գործում:

298. Կետ 4-ով նախատեսվում է, որ Կողմերը քննարկեն ազգային զեկուցողներ նշանակելու կամ այլ մեխանիզմներ ստեղծելու հնարավորությունը՝ պետական հաստատությունների հակաթրաֆիքինգային գործունեությունը վերահսկելու և ազգային օրենսդրության պահանջները կատարելու համար: Ազգային զեկուցողի ինստիտուտը հիմնադրվել է Նիդեռլանդներում՝ որպես իր առանձին անձնակազմն ունեցող անկախ հաստատություն, որի առաքելությունն է ապահովել հակաթրաֆիքինգային գործունեության վերահսկումը: Այն օժտված է հետազոտություններ իրականացնելու և համապատասխան անձանց ու հաստատություններին առաջարկություններ կատարելու իրավասությամբ, և

պարտավոր է Խորհրդարանին ներկայացնել իր հետազոտության արդյունքների և առաջարկությունների վերաբերյալ տարեկան հաշվետվություն:

Յոդված 30. Ղատական քննություն

299. Մարդկանց թրաֆիքինգի հետ կապված գործերի ղատական քննությունը, ճիշտ այնպես, ինչպես հանցագործության ցանկացած ծանր ձևի քննության դեպքում, կարող է դժբախտ հետևանքներ ունենալ զոհերի համար: Թրաֆիքինգով զբաղվողների դեմ ցուցմունք տվող կամ նրանցից կրած վնասների դիմաց փոխհատուցում պահանջող զոհը հավանականություն ունի ենթարկվելու հանցավոր տարրերի ճնշմանը կամ սպառնալիքներին: Խնդրի վատթարացմանը կարող է հանգեցնել լրատվամիջոցների կողմից թրաֆիքինգի հետ կապված գործերի լուսաբանումը, որը, հանդիսանալով լուրջ միջամտություն զոհերի մասնավոր կյանքին, կարող է էլ ավելի դժվարացնել հասարակության մեջ նրանց վերախնդրումը:

300. Ուստի, Յոդված 30-ով Կողմերից պահանջվում է իրենց ղատական ընթացակարգերը հարմարեցնել այնպիսի ձևով, որը թույլ կտա պաշտպանել զոհերի մասնավոր կյանքն ու ապահովել նրանց անվտանգությունը: Այս դրույթի շրջանակներում ձեռնարկվելիք միջոցները տարբերվում են Յոդված 28-ով նախատեսվածներից: Յոդված 28-ով նախատեսված միջոցները գործ ունեն արտադատական պաշտպանության հետ, մինչդեռ Յոդված 30-ով նախատեսվածները վերաբերում են ղատավարական միջոցների ձեռնարկմանը:

301. Քրեական ղատավարության ժամանակ կան արժեքներ (օրինակ, պաշտպանության իրավունքները՝ մի կողմից և զոհի ու վկայի մասնավոր կյանքն ու անվտանգությունը՝ մյուս կողմից), որոնք համատեղվում, իսկ երբեմն էլ բախվում են: Ի լրումն դրա, տարբեր երկրներում ղատական ընթացակարգերը խիստ տարբերվում են. մի համակարգում կիրառվող զոհի և վկայի պաշտպանության եղանակը կարող է անհամատեղելի լինել մյուսի հիմնական սկզբունքների հետ:

302. Հետևաբար, Կոնվենցիան մշակողները ընդունեցին այն տեսակետը, որ միակ ելքը Կոնվենցիայում ղատական քննության ընթացակարգին վերաբերող այնպիսի դրույթի ընդգրկումն է, որը պարտադիր կլինի նպատակի առումով (զոհերի մասնավոր կյանքի և, անհրաժեշտության դեպքում, անձի պաշտպանությունը, անվտանգության ապահովումը և պաշտպանությունը միջամտությունից), սակայն Կողմերի ընտրությանը կթողնի այդ նպատակի իրագործման եղանակները:

303. «Համաձայն ներքին օրենսդրությամբ սահմանված պայմանների» արտահայտությունն ընդգծում է, որ Կողմերն ազատ են կիրառելու ցանկացած միջոց, որը, նրանց կարծիքով, լավագույնս կնպաստի Կոնվենցիայով սահմանված նպատակների (զոհերի մասնավոր կյանքի և, անհրաժեշտության դեպքում, անձի պաշտպանությունը, անվտանգության ապահովումը և պաշտպանությունը միջամտությունից) իրականացմանը: Այն դեպքում, երբ զոհերը երեխաներ են, Կոնվենցիայով նախատեսվում է, որ Կողմերն առանձնահատուկ հոգան նրանց կարիքները և ապահովեն հատուկ պաշտպանության միջոցներից օգտվելու նրանց իրավունքը, քանի որ երեխաները, սովորաբար, ավելի խոցելի են, քան չափահասները, և առավել բարձր է նրանց կյանքին միջամտելու հավանականությունը:

304. Որոշ երկրների օրենսդրություններում նախատեսվում է երեխաների լսումների աուդիովիզուալ ձայնագրում, ինչպես նաև այդ լսումների պաշտպանություն այնպիսի եղանակներով, ինչպիսիք են, օրինակ, լսմանը ներկա գտնվելու և տեսաժապավենը դիտելու թույլտվություն ունեցող մարդկանց քանակի սահմանափակումը, երեխային թույլատրելը ձայնագրման ընթացքում ցանկացած ժամանակ ընդմիջում խնդրել և, պահանջի դեպքում, լսման ամբողջական, բառացի վերածայնագրում կատարելը: Նման ձայնագրումներն ու գրավոր արձանագրությունները կարող են օգտագործվել դատարանում՝ առանց երեխայի կողմից դատարանի առջև անձամբ ներկայանալու անհրաժեշտության:

305. Համանման ձևով, որոշ օրենսդրություններ երեխաներին թույլատրում են դատարանների առջև հայտնվել վիդեոկոնֆերանսների միջոցով: Երեխային լսում են առանձին սենյակում, հավանորեն փորձագետի և տեխնիկների ներկայությամբ: Երեխայի վրա մեղադրյալի հետ մույն սենյակում գտնվելու կամ վիդեոկոնֆերանսի միջոցով նրան տեսնելու հոգեբանական ազդեցությունը հնարավորինս նվազեցնելու համար երկուսի տեսանելիությունն էլ կարելի է սահմանափակել այնպես, որ երեխան չտեսնի մեղադրյալին կամ ընդհակառակը: Եթե, օրինակ, պահանջվում է, երեխան ներկայանա լսմանը, ապա նա կարող է ցուցմունքներ տալ էկրանի ետևից:

306. Հոդված 30-ում նշվում է, որ միջոցները պետք է համապատասխանեն Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի Հոդված 6-ի պահանջներին. պետք է հոգ տարվի, որ կիրառվող միջոցներն ապահովեն պաշտպանության իրավունքների և զոհերի ու վկաների շահերի միջև հավասարակշռության պահպանումը: *Doorson v. the Netherlands* գործով 1996թ. մարտի 26-ի որոշման մեջ (Վճիռների և որոշումների մասին հաշվետվություններ, 1996-II, կետ 70), Ղատարանը նշել է.

«Ճիշտ է, որ Հոդված 6-ը հստակ չի պահանջում, որ հաշվի առնվեն վկաների շահերն ընդհանրապես և վկայություն տալու համար կանչված զոհերի շահերը՝ մասնավորապես: Այնուհանդերձ, բախտախաղի կարող են դրված լինել նրանց կյանքը, ազատությունը կամ անվտանգությունը, այնպես, ինչպես Կոնվենցիայի Հոդված 8-ով նախատեսված շահերն ընդհանրապես: Վկաների և զոհերի նման շահերը սկզբունքորեն պաշտպանված են Կոնվենցիայի այլ դրույթներով, որոնք ենթադրում են, որ Պայմանավորվող պետություններն իրենց քրեական դատավարությունները պետք է կազմակերպեն այնպես, որ այդ շահերը չարդարացված կերպով չվտանգվեն: Այդ նախադրյալների հիման վրա, արդարացի դատավարության սկզբունքները մույնպես պահանջում են, որ համապատասխան դեպքերում՝ պաշտպանության շահերը համակշռվեն ցուցմունքներ տալու համար կանչված վկաների և զոհերի շահերի հետ»:

307. Վկաների պաշտպանության հարցը քննարկվել է *Նախարարների Կոմիտեի կողմից Եվրոպայի Խորհրդի անդամ պետություններին տրված՝ Վկաների ահաբեկման և պաշտպանության իրավունքների մասին No. R(97)13 Հանձնարարականում*: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպի իրավունքը մույնպես պետք է կիրառվի որպես վկաների մասնավոր կյանքի պաշտպանության ու նրանց անվտանգության ապահովման համար օգտագործվող բազմաթիվ մեթոդների ուղեցույց: Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի և Ղատարանի նախադեպի իրավունքի համաձայն, Հոդված 30-ով սահմանված նպատակների իրականացման համար կարող են օգտագործվել ստորև նկարագրված մեթոդները:

- *Փակ լսումներ*

308. Ըստ Դատարանի նախադեպի իրավունքի, բաց քննարկումները կազմում են 308-րդ կետի (1) կետի հիմնարար սկզբունքներից մեկը (*United Axen v. the FRG* գործով որոշումը, 8 դեկտեմբերի, 1983թ., Սերիա Ա, No.72, կետ 25)։ Այնուամենայնիվ, Սարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայով դա չի սահմանվում որպես բացարձակ սկզբունք։ 308-րդ կետի (1) կետում նշված է, որ «մամուլին ու հանրությանը կարող է չթույլատրվել մասնակցելու դատավարության որևէ մասին կամ ամբողջ դատավարությանը՝ ելնելով բարոյականության նկատառումներից ... եթե այդպես են պահանջում երեխաների շահերը կամ դա անհրաժեշտ է կողմերի մասնավոր կյանքի պաշտպանության համար, կամ եթե, դատարանի կարծիքով, դա պահանջվում է այնպիսի հատուկ հանգամանքներում, երբ հրապարակայնությունը կարող է վնասել արդարադատությանը»։

- *Աուդիովիզուալ տեխնոլոգիա*

309. Ցուցմունքներ վերցնելու և լսումներ անցկացնելու համար աուդիո և վիդեո տեխնոլոգիաների օգտագործումը թույլ է տալիս հնարավորինս խուսափել լսումների կրկնությունից և որոշ առերես շփումներից, դրանով իսկ դատավարությունը դարձնելով նրանց համար պակաս ցավալի։ Վերջին տարիներին մի շարք երկրներ զարգացրել են դատավարությունների ժամանակ վերոհիշյալ տեխնոլոգիայի օգտագործման մեթոդը՝ անհրաժեշտության դեպքում հարմարեցնելով ցուցմունքներ վերցնելու և զոհերին լսելու դատավարական կանոնները։ Դա հատկապես կիրառվում է սեքսուալ հանցագործությունների զոհերի դեպքում։ Այնուամենայնիվ, նշված քայլին դիմել են Եվրոպայի խորհրդի ոչ բոլոր անդամ երկրները, և թրաֆիքինգի զոհերը, փաստորեն, դեռևս հեռու են մնան պաշտպանական միջոցներից օգտվելու հնարավորությունից՝ անգամ այն երկրներում, որոնց դատական համակարգը ճանաչել է նշված մեթոդների արդարացվածությունը։

310. Ի լրումն տրավմատիկ կամ կրկնակի ցուցմունքներից խուսափելու համար աուդիո և վիդեո տեխնոլոգիաների օգտագործմանը, պետք է նշել, որ զոհերի վրա կարող է բացասական ներգործություն ունենալ նաև դատարանի դահլիճում մեղադրյալի հետ երես առ երես հանդիպելու հոգեբանական ճնշումը։ Ջոհի համար անհրաժեշտ պաշտպանություն ապահովելու նպատակով երբեմն կարելի է նրան հնարավորություն ընձեռել խուսափելու մեղադրյալի հետ միաժամանակ դատարանի դահլիճում գտնվելուց և նրան թույլատրել ցուցմունքներ տալու ուրիշ սենյակում։ Անկախ այն բանից, թե ով է հեռացվում դատարանի դահլիճից՝ մեղադրյալը, թե՞ զոհը, կարող են օգտագործվել վիդեո կապեր կամ այլ վիդեո տեխնոլոգիաներ՝ կողմերին դատավարությանը հետևելու հնարավորություն տալու համար։ Նման միջոցներն անհրաժեշտ են ցուցմունքներ տալու ժամանակ զոհերին անցանկալի սթրեսից կամ անհանգստությունից զերծ պահելու համար։ Դեռևս բարդ դատավարությունը պետք է կազմակերպվի այնպիսի ձևով, որը թույլ կտա հնարավորինս խուսափել ճշմարտությունը պարզելուն և զոհերին ու վկաներին ցուցմունքներ տալուց ետ պահելուն խոչընդոտող անցանկալի ազդեցությունից։

311. Վերը նկարագրված մեթոդներն առաջարկվում են *Նախարարների կոմիտեի կողմից Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին տրված՝ Վկաների ահաբեկման և պաշտպանության իրավունքների մասին No. R(97)13 Հանձնարարականում, Միջազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի ժամանակ վկաների պաշտպանության մասին Եվրամիության խորհրդի*

1995թ. նոյեմբերի 23-ի որոշման Չոդված 8-ում և Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ Միավորված Ազգերի Կազմակերպության Կոնվենցիայի Չոդված 24-ում:

- Ցուցմունքների արձանագրումը

312. Ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպի իրավունքի, ապացույցների թույլատրելիությունը հանդիսանում է գլխավորապես ներքին օրենսդրությամբ կարգավորվող հարց (տե՛ս որոշումները *Schenk v. Switzerland* գործով, 12 հուլիսի, 1988թ., Սերիա Ա, No.140, և *Doorson v. the Netherlands* գործով, 26 մարտի, 1996թ., Հաշվետվություններ 1996-II, ի թիվս այլ որոշումների) և, որպես կանոն, ազգային դատարաններն են գնահատում իրենց առջև տրված ցուցմունքները (տե՛ս *Barberà, Messegué and Jabardo v. Spain* գործով որոշումը, 6 դեկտեմբերի, 1988թ., Սերիա Ա, No.146): Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի համաձայն, Դատարանի խնդիրը ոչ թե որոշել է, թե վկաների հայտարարությունները պատշաճ ձևով ընդունվե՞լ են որպես ապացույց, այլ պարզելը, թե արդյո՞ք ամբողջ դատավարությունը, ներառյալ ցուցմունքներ վերցնելու ձևը, արդարացի է եղել (տե՛ս, ի թիվս այլ որոշումների, *վերոհիշյալ Doorson*-ի գործով որոշումը):

313. Դատարանը որոշում է կայացրել, որ ոստիկանական հետաքննության և դատաքննության փուլերի ընթացքում ձեռք բերված վկայությունների օգտագործումը ինքնին չի հակասում Չոդված 6-ի 3(դ) ենթակետի և կետ 1-ի պահանջներին, պայմանով, որ չեն խախտվում պաշտպանության իրավունքները: Որպես կանոն, այդ իրավունքներով պահանջվում է, որ ամբաստանյալին բավարար ու պատշաճ հնարավորություն ընձեռնվի հերքելու վկայի տված ցուցմունքները կամ հարցեր տալու իր դեմ հանդես եկող վկային՝ վերջինիս կողմից ցուցմունքներ տալու ժամանակ կամ դատավարության ավելի ուշ փուլում: Առերեսման բացակայությունը ամբաստանյալին զրկում է արդարացի դատավարության հնարավորությունից, եթե դատավարությունից առաջ ստացված ցուցմունքները հանդիսանում են նրան դատապարտելու միակ հիմքը՝ պաշտպանության իրավունքների պատշաճ իրականացման վրա դրված անթույլատրելի սահմանափակման պատճառով (*Saoudi v. France* գործով որոշումը, 20 սեպտեմբերի, 1993թ., Սերիա Ա, No.261-C, կետ 44): Բացի դրանից, Չոդված 6-ը ամբաստանյալին չի տալիս վկաներ կանչելու բացարձակ իրավունք: Սովորաբար, ազգային դատարաններն իրենք են որոշում վկա կանչելու անհրաժեշտությունը կամ նպատակահարմարությունը (*Bricmont v. Belgium* գործով որոշումը, 7 հուլիսի, 1989թ., Սերիա Ա, No.158):

314. Սեռական բռնությանը վերաբերող քրեական գործերում Դատարանը թույլ է տալիս զոհերի պաշտպանությանն ուղղված որոշակի միջոցների ձեռնարկում, պայմանով, որ դրանք չհակասեն պաշտպանության իրավունքների պատշաճ իրականացմանը: Այդ նպատակով դատական մարմինները կարող են պահանջել, որպեսզի ձեռնարկվեն պաշտպանությանը խոչընդոտելու դիմաց փոխհատուցման միջոցներ (*Doorson v. the Netherlands* գործը, նույն տեղում, և *P.S. v. Germany*, 20 դեկտեմբերի, 2001թ.):

315. *S.N. v. Sweden* գործով (2002թ. հուլիսի 2-ի որոշումը, Հաշվետվություններ 2002-V) Դատարանը եզրակացրել է, որ չի կարելի համարել, որ դիմողին մերժվել են Չոդված 6-ի 3(դ) ենթակետով նախատեսված նրա իրավունքները՝ այն հիմքով, որ նա դատավարության կամ զանգատարկման վարույթների ժամանակ ի վիճակի չի եղել հարցեր տալու վկաներին: «Հաշվի առնելով սեքսուալ հանցագործություններին վերաբերող քրեական դատավարությունների

առանձնահատկությունները ... այս դրույթը չի կարող մեկնաբանվել այնպես, իբրև այն բոլոր դեպքերում պահանջում է, որ ուղղակիորեն հարցեր տրվեն մեղադրյալի կամ նրա պաշտպանի կողմից խաչաձև հարցաքննության միջոցով կամ այլ եղանակով»:

316. Դատարանն ավելացրել է. «Դատարանը նշում է, որ ոստիկանության առաջին հարցազրույցի տեսաժապավենը ցուցադրվել է առաջին դատաքննության և գանգատարկման լուսնների ժամանակ, երկրորդ հարցազրույցի արձանագրությունը ընթերցվել է օկրուգային դատարանի առջև, իսկ ծայնագրության ժապավենը լսվել է Վերաքննիչ դատարանի առջև: Հաշվի առնելով գործի հանգամանքները, այս միջոցառումները պետք է համարվեն բավարարող հիմնովին հնարավորություն տալու համար քրեական դատավարության ընթացքում կասկածի ենթարկելու պրն./տիկ._____ի ցուցմունքները և նրա հուսալիությունը»:

317. Այնուամենայնիվ, Դատարանը խիստ կարևոր համարեց այդ որոշման մեջ կրկնելը, որ վկայից այնպիսի պայմաններում վերցված ցուցմունքներին, որոնց ժամանակ պաշտպանության իրավունքները չէին կարող ապահովված լինել Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայով պահանջվող չափով, պետք է վերաբերվել ծայրահեղ զգուշությամբ:

- *Ցուցմունքներ առանց անձի բացահայտման*

318. Առանց անձի բացահայտման ցուցմունքներ վերցնելը հատկապես բարդ խնդիր է այն առումով, որ սպառնալիքի տակ գտնվող անձանց պաշտպանությունը զուգորդվում է պաշտպանության իրավունքներն ապահովելու անհրաժեշտության հետ: Այսպես, *Միավորված Ազգերի Կազմակերպության Մարդու իրավունքների և մարդկանց թրաֆիքինգի վերաբերյալ առաջարկվող սկզբունքների* Ուղեցուցիչ 6-ում նշված է, որ «Թրաֆիքինգի գոհերի անձը չպետք է բացահայտվի, և նրանց մասնավոր կյանքը պետք է հարգվի ու հնարավորինս պաշտպանվի, միաժամանակ հաշվի առնելով ցանկացած մեղադրվող անձի՝ արդարացի դատավարության իրավունքը»:

319. Նախաքննության փուլերի առնչությամբ Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովը նշել է. «Իրենց պարտականությունների կատարման ընթացքում ոստիկանները կարող են առիթ ունենալ գաղտնի տեղեկություններ ստանալու անձանցից, որոնց օրինական շահը պահանջում է, որ իրենց անձը չբացահայտվի. եթե նրանց մերժվեր անձի գաղտնիության պահպանումը և նրանցից պահանջվեր հայտնվել դատարան, ապա հանցագործներին պատժելու համար անհրաժեշտ տեղեկություններից շատերը երբեք հայտնի չէին դառնա քրեական հետապնդման մարմիններին» (Դիմում No.8718/78, 1979թ. մարտի 4-ի որոշում, D.R.16, էջ 200): Նմանապես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բազմիցս նշել է, որ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան չի խոչընդոտում քրեական գործերի նախաքննության փուլում այնպիսի աղբյուրների վրա հիմնվելուն, ինչպիսիք են անանուն իրազեկողները, սակայն առանց անձի բացահայտման տրված ցուցմունքների հետագա օգտագործումը որպես մեղադրանք առաջադրելու հիմք բոլորովին այլ հարց է և կարող է կոնվենցիայի հետ առնչվող խնդիրների տեղիք տալ (տես *Kostovski v. the Netherlands* գործով 1989թ. նոյեմբերի 20-ի որոշումը, Սերիա Ա, No.166, կետ 44 և *Doorson v. the Netherlands* գործով 26թ. մարտի 26-ի որոշումը, Հաշվետվություններ 1996-II, կետ69): Ուստի, նախաքննության փուլում վկայի անձի չբացահայտումը թույլատրելի է նպատակահարմարության պատճառով՝ այնքանով, որքանով որ

նման ձևով ձեռք բերված տեղեկությունը կարող է օգտագործվել ոչ թե որպես ապացույց, այլ ապացույց գտնելու հնարավորություն:

320. Ապացույցների թույլատրելիությունը դեկավարող սկզբունքը նմանապես կիրառվում է նաև դատաքննության փուլի նկատմամբ: Չնայած բոլոր ապացույցները սովորաբար պետք է ներկայացվեն բաց դատական նիստում, մեղադրյալի ներկայությամբ՝ հակառակ կողմին փաստարկների ներկայացման հնարավորություն ընձեռելու համար, սակայն նշված սկզբունքից կան բացառություններ, որոնք, այնուհանդերձ, չպետք է խախտեն պաշտպանության իրավունքները: Որպես ընդհանուր կանոն, Հոդված 6-ի 3(դ) ենթակետով և 1 կետով պահանջվում է, որ ամբաստանյալին բավարար ու պատշաճ հնարավորություն ընձեռնվի հերքելու վկայի տված ցուցմունքները կամ հարցեր տալու իր դեմ հանդես եկող վկային վերջինիս կողմից ցուցմունքներ տալու ժամանակ կամ ավելի ուշ փուլում (*ut in Ludi v. Switzerland* գործով որոշումը, 15 հունիսի, 1992թ., Սերիա Ա, No.238, կետ 47): Դատարանը այն կարծիքին է, որ առանց անձի բացահայտման տրված ցուցմունքների օգտագործումը որպես մեղադրանք առաջադրելու հիմք միշտ չէ, որ անհամատեղելի է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի պահանջների հետ (տե՛ս, օրինակ, *Doorson v. the Netherlands* գործով որոշումը, 26 մարտի, 1996թ., Հաշվետվություններ 1996-II, կետ 69 և *Van Mechelen and Others v. the Netherlands* գործով որոշումը, 23 ապրիլի, 1997թ., Հաշվետվություններ 1997-III, կետ 52):

321. Որպեսզի առանց անձի բացահայտման տրված ցուցմունքների օգտագործումը թույլատրելի լինի, այն պետք է արդարացված լինի գործի հանգամանքներով (*Kok v. the Netherlands* գործով որոշումը, 4 հուլիսի, 2000թ., Հաշվետվություններ 2000-VI, էջ 655): *Doorson v. the Netherlands* գործով Դատարանը եզրակացրել է. «... արդարացի դատավարության սկզբունքները նաև պահանջում են, որ համապատասխան դեպքերում պաշտպանության շահերը համակշռվեն ցուցմունքներ տալու համար կանչված վկաների կամ զոհերի շահերի հետ»: Կյանքին, ազատությանն ու անվտանգությանը սպառնացող վտանգները պոտենցիալ կերպով արդարացնում են անձի գաղտնիության պահպանումը: Ազգային դատարանների գործն է կոնկրետ դեպքում ուսումնասիրելը վկայի անձը չբացահայտելու պատճառների լրջությունն ու հիմնավորվածությունը (see *Visser v. the Netherlands* գործով որոշումը, 14 փետրվարի, 2002թ., կետ 47): Սակայն *Doorson*-ի գործով որոշման մեջ (կետ 71) Դատարանն ընդունելի համարել առանց անձի բացահայտման տրված ցուցմունքների օգտագործումը՝ անգամ մեղադրյալի կողմից կոնկրետ սպառնալիքների բացակայության դեպքում: Դատարանը նշել է. «...[վկայի] անձի գաղտնիությունը պահելու որոշումը չի կարող ինքնին անհիմն համարվել: Հաշվի պետք է առնվի ազգային դատարանների կողմից հաստատված և դիմողի [պրն. Դուրսոնի] կողմից չհերքված այն փաստը, որ թմրադեղերի առևտրով զբաղվողները հաճախ սպառնալիքներ կամ իրական բռնություններ են գործադրել իրենց դեմ վկայություն տված անձանց նկատմամբ»:

322. Բացի դրանից, պաշտպանության իրավունքն ապահովելու համար, դատական մարմինների կողմից իրականացվող ընթացակարգերը պետք է բավարար չափով հակակշռեն գաղտնիության պահպանման հետևանքով պաշտպանության համար առաջացող խոչընդոտները: Ինչպես Դատարանը դիտարկել է. «Եթե պաշտպանությանը հայտնի չէ այն անձի ինքնությունը, որին նա ցանկանում է հարցաքննել, ապա պաշտպանությունը զրկվում է այնպիսի մանրամասներից, որոնք նրան հնարավորություն կտային ապացուցելու, որ այդ անձը դրսևորում է կանխակալ մոտեցում, թշնամաբար է տրամադրված կամ անհուսալի է: Մեղադրյալին մերկացնող ցուցմունքները կամ այլ

հայտարարությունները կարող են միտումնավոր կերպով անհավաստի կամ պարզապես սխալ լինել, ինչը պաշտպանությունը հազիվ թե կարողանա բացահայտել, եթե այն չունի անձի հուսալիությունը ստուգելու կամ նրա վստահարժանությունը կասկածի ենթարկելու համար անհրաժեշտ տեղեկություններ»։ (*Kostovski v. the Netherlands* գործով որոշումը, 20 նոյեմբերի, 1989թ., Սերիա Ա, No.166, կետեր 42 և 43): No.43149/98 դիմումի (*Kok v. the Netherlands* գործով որոշումը, 4 հուլիսի, 2000թ., Հաշվետվություններ 2000-VI, էջ 657) թույլատրելիության վերաբերյալ իր որոշման մեջ Դատարանը նշել է, որ որոշելու համար, թե արդյո՞ք առանց վկայի անձի բացահայտման նրան լսելու միջոցառումները տվել են պաշտպանության համար ստեղծված ռիսկերը բավարար չափով հակակշռող երաշխիքներ, հարկ եղավ պարզել, թե այդ ցուցմունքները որքանով են կարևոր եղել մեղադրանք առաջադրելու համար: Եթե ցուցմունքները մեղադրանք առաջադրելու համար էական չեն եղել, ապա դրանք պաշտպանությանը զգալիորեն քիչ են խոչընդոտել:

323. *Doorson v. the Netherlands* գործում Դատարանը եզրակացրել է, որ պաշտպանության իրավունքների հետ համատեղելի է եղել այն հանգամանքը, որ վկայի հարցաքննությունը առանց նրա անձի բացահայտման կատարվել է դատաքննությունը վարող դատավորի կողմից, որին վկայի ինքնությունը հայտնի է եղել՝ ամբաստանյալի պաշտպանի (բայց ոչ ամբաստանյալի) ներկայությամբ, քանի որ պաշտպանը հնարավորություն է ունեցել վկային տալու իր կարծիքով պաշտպանության շահերին ծառայող բոլոր հարցերը, բացի նրանցից, որոնք կարող էին հանգեցնել վկայի ինքնության բացահայտմանը (1996թ. մարտի 26-ի որոշումը, Հաշվետվություններ 1996-II, կետ 73): Սակայն հարցաքննության միևնույն մոտեցումը՝ այն միակ բացառությամբ, որ պաշտպանը չի գտնվել դատաքննությունը վարող դատավորի սենյակում, և հաղորդակցությունն իրականացվել է ծայրային կապի միջոցով, անբավարար է համարվել մեկ այլ գործի հանգամանքներում, քանի որ դա պաշտպանությանը խոչընդոտել է ուսումնասիրելու վկայի վարքը: Դատարանը նշել է. «Դատարանին գոհացնող բացատրություն չի տրվել այն մասին, թե ինչու՞ է անհրաժեշտ եղել դիմելու ամբաստանյալի իրավունքների նման ծայրահեղ սահմանափակմանը՝ հնարավորություն չտալով, որ նրա դեմ ցուցմունքները տրվեն նրա ներկայությամբ, կամ թե ինչու՞ հաշվի չի առնվել պակաս լուրջ միջոցների կիրառման հնարավորությունը» (*Van Mechelen and Others v. the Netherlands*, 1997թ. ապրիլի 23-ի որոշումը, Հաշվետվություններ 1997-III, կետ 60): Այդ կապակցությամբ Դատարանը հիշատակել է դիմահարդարման, քողարկող հագուստի կամ տեսողական շփմանը խոչընդոտող միջոցների կիրառման հնարավորությունները: Ինչևէ, այդ գործից հետո անթույլատրելի է համարվել Նիդեռլանդների դեմ հետագա դիմումների ներկայացումը այնպիսի գործով, որի ժամանակ վկայի հարցաքննությունը՝ առանց անձի բացահայտման, կատարվել է ճիշտ նույն ձևով, ինչ որ *Van Mechelen*-ի գործում: Հետևաբար, այլևս չի կարելի ասել, որ Հոդված 6-ը, ըստ Դատարանի մեկնաբանության, պարտադիր պահանջում է (անկախ մեղադրանք առաջադրելու մասին որոշման ընդունման համար առանց անձի բացահայտման տրված ցուցմունքների վճռորոշ նշանակությունից), որ պաշտպանությանը հնարավորություն տրվի առերես հանդիպելու առանց անձի բացահայտման ցուցմունքներ տվող վկայի հետ՝ իր անմիջական հարցերին վերջինիս ռեակցիան գնելու նպատակով (*Kok v. the Netherlands*, 2000թ. հուլիսի 4-ի որոշումը, Հաշվետվություններ 2000-VI):

324. Հետագա պահանջն այն է, որ առաջին ատյանի և վճռաբեկ դատարանները բավարար տեղեկություններ ունենան անձը չբացահայտված վկայի վստահելիության վերաբերյալ կարծիք կազմելու համար: Նշված տեղեկությունները պետք է մատնանշեն վկայի վստահելիության աստիճանը և

անձը չբացահայտելու նրա ցանկության պատճառը (*unt' u Van Mechelen and Others v. the Netherlands* գործով որոշումը, 23 ապրիլի, 1997թ.,
Հաշվետվություններ 1997-III, կետ 62 և *Doorson v. the Netherlands* գործով
որոշումը, 26 մարտի, 1996թ., Հաշվետվություններ 1996-II, կետ 73):

325. Վերջապես, եթե անգամ պարզվում է, որ ընթացակարգերը բավարար
չափով հակակշռում են պաշտպանության համար դժվարություններ առաջացնող
խոչընդոտները, մեղադրանքը չպետք է բացառապես կամ վճռորոշ չափով
հիմնված լինի անձը չբացահայտված վկայի ցուցմունքների վրա (*unt' u Doorson v.
the Netherlands* գործով որոշումը, 26 մարտի, 1996թ., Հաշվետվություններ 1996-II,
կետ 76):

326. Հետևաբար, ըստ Դատարանի նախադեպի իրավունքի, դիրքորոշումն
այնպիսին է, որ Դատարանի խնդիրը ոչ թե որոշելն է, թե վկայի ցուցմունքները
պատշաճ կերպով ընդունվե՞լ են որպես ապացույց, այլ պարզելը, թե արդյո՞ք
ամբողջ դատավարությունը, ներառյալ ցուցմունքներ վերցնելու ձևը, արդարացի է
եղել (տե՛ս, ի թիվս այլ որոշումների, վերոհիշյալ *Doorson*-ի գործով որոշումը): Ի
լրումն դրա, չնայած բոլոր ապացույցները սովորաբար պետք է ներկայացվեն բաց
դատական միստում, մեղադրյալի ներկայությամբ՝ հակառակ կողմին
փաստարկների ներկայացման հնարավորություն ընձեռելու համար, սակայն
նշված սկզբունքից կան որոշ բացառություններ, պայմանով, որ պետք է
ծեռնարկվեն պաշտպանության համար առաջացած խոչընդոտների հակակշռման
միջոցներ:

Հոդված 31. Իրավագորությունը

327. Այս Հոդվածով ամրագրվում են տարբեր պահանջներ՝ սույն Կոնվենցիայում
նախատեսված հանցավոր արարքների վրա Կողմերի իրավագորությունը
տարածելու համար:

328. 1(ա) ենթակետը հիմնվում է տարածքային սկզբունքի վրա: Յուրաքանչյուր
Կողմից պահանջվում է պատժել Կոնվենցիայով նախատեսված հանցավոր
արարքները, եթե դրանք կատարվել են նրա տարածքում: Օրինակ, այն Կողմը,
որի տարածքում տեղի է ունեցել անձի հավաքագրում Հոդված 4-ի (ա) կետում
նշված ցանկացած եղանակով և այդտեղ սահմանված շահագործման
նպատակներից որևէ մեկի համար, իրավագոր է անցկացնելու Հոդված 18-ով
նախատեսված՝ մարդկանց թրաֆիքինգի հետ կապված հանցավոր արարքի
քննություն:

329. 1(բ) և (գ) ենթակետերը հիմնված են տարածքային սկզբունքի մի տարբերակի
վրա: Այդ ենթակետերով յուրաքանչյուր Կողմից պահանջվում է իրավագորություն
հաստատել իր դրոշի ներքո նավարկող նավի վրա կամ իր օրենսդրությանը
համապատասխան գրանցված օդանավում: Այս պարտավորությունն արդեն
ամրագրվել է շատ երկրների օրենսդրություններում, քանի որ նավերն ու
օդանավերը հաճախ համարվում են որևէ երկրի տարածքի շարունակությունը:
Այսպիսի իրավագորությունը ծայրահեղ օգտակար է այն դեպքում, երբ
հանցագործության կատարման ժամանակ նավը կամ օդանավը չի գտնվում այդ
երկրի տարածքում, ինչի արդյունքում 1(ա) ենթակետը չէր կարող կիրառվել որպես
իրավագորության հաստատման հիմք: Առանց այս կանոնի ոչ մի երկիր ի վիճակի
չէր լինի իրականացնելու իր իրավագորությունը, եթե հանցանքը կատարվեր նավի
կամ օդանավի վրա՝ այն երկրի տարածքից դուրս, որի դրոշի ներքո նավը
նավարկվում է կամ որի օրենսդրությանը համապատասխան օդանավը գրանցված
է: Բացի դրանից, եթե հանցագործությունը կատարվում է նավի կամ օդանավի

վրա, որը միայն անցնում է մեկ այլ պետության ջրերով կամ օդային տարածքով, վերջինիս համար կարող են գործնականում զգալի խոչընդոտներ առաջանալ իր իրավագործությունն իրականացնելու առումով, ուստի օգտակար է նաև գրանցող երկրի իրավագործության առկայությունը:

330. 1(դ) ենթակետը հիմնված է քաղաքացիության սկզբունքի վրա: Քաղաքացիության սկզբունքը ավելի հաճախ կիրառվում է քաղաքացիական իրավունքի ավանդույթ ունեցող երկրների կողմից: Ըստ այդ սկզբունքի, որևէ երկրի քաղաքացիները պարտավոր են պահպանել այդ երկրի օրենսդրության պահանջները, անգամ եթե նրանք գտնվում են երկրի տարածքից դուրս: (դ) ենթակետի համաձայն, եթե որևէ Կողմի քաղաքացիներից մեկը հանցագործություն է կատարում այլ պետության տարածքում, ապա այդ Կողմը պետք է ի վիճակի լինի քրեական հետապնդում իրականացնելու, եթե տվյալ արարքը քրեորեն պատժելի է նաև այն պետության քրեական օրենսդրության համաձայն, որտեղ կատարվել է, կամ եթե այն կատարվել է որևէ պետության տարածքային իրավագործությունից դուրս: 1(դ) ենթակետը կիրառվում է նաև քաղաքացիություն չունեցող այն անձանց նկատմամբ, որոնց կանոնավոր բնակության վայրը գտնվում է Կողմի տարածքում:

331. Կետ 1-ի (ե) ենթակետը հիմնված է պասիվ անհատականության սկզբունքի վրա: Այն կապվում է զոհի քաղաքացիության հետ և քաղաքացի հանդիսացող զոհերի մասնավոր շահերը որոշում է՝ համադրելով Պետության ընդհանուր շահերի հետ: Ուստի, համաձայն (ե) ենթակետի, եթե Պետության քաղաքացի հանդիսանում է այլ երկրում կատարված հանցագործության զոհ, ապա Կողմը պետք է հնարավորություն ունենա նախաձեռնելու դրա հետ առնչվող քննություն:

332. Կետ 2-ով Կողմերին թույլատրվում է վերապահումներ կատարել 1-ին կետի «դ» և «ե» ենթակետերում սահմանված իրավագործության հիմքերի առնչությամբ: Այնուամենայնիվ, ոչ մի վերապահում չի թույլատրվում կատարել ա), բ) կամ դ) ենթակետերի համաձայն իրավագործության հաստատման, կամ *aut dedere aut judicare* (հանձնում կամ հետապնդում) սկզբունքին ենթարկվող դեպքերում կետ 3-ի համաձայն իրավագործության հաստատման պարտավորության առնչությամբ, այսինքն երբ Կողմը հրաժարվել է հանձնել հանցանք կատարած անձին՝ վերջինիս քաղաքացիության հիմքով, և հանցանք կատարած անձը գտնվում է նրա տարածքում: Կետ 3-ի հիման վրա հաստատված իրավագործությունն անհրաժեշտ է հավաստիանալու համար, որ քաղաքացուն հանձնելուց հրաժարված Կողմն ունի իր տարածքում քննություններ և դատավարական գործողություններ անցկացնելու իրավունակություն, եթե համապատասխան միջազգային փաստաթղթերով սահմանված պայմանների համաձայն նրան նման խնդրանք ներկայացնի հանցագործի հանձնում պահանջած Կողմը:

333. Մարդկանց թրաֆիքինգի դեպքում, հանցանքի բոլոր մասնակիցների կամ նրանցից մի քանիսի նկատմամբ երբեմն կարող է իրավագործություն ունենալ ավելի քան մեկ Կողմ: Օրինակ, զոհը կարող է հավաքագրվել մի երկրում, այնուհետև շահագործման համար տեղափոխվել մեկ այլ երկիր: Ջանքերի կրկնողությունից, վկաներին անհարկի անհանգստություն պատճառելուց և խնդրո առարկա երկրների իրավապահ մարմինների մրցակցությունից խուսափելու, ինչպես նաև դատավարական գործողությունների արդյունավետությանը կամ արդարացիությանը այլ կերպ օժանդակելու համար Կողմերից պահանջվում է խորհրդակցել միմյանց հետ՝ քրեական հետապնդման համար ընդդատության տարածքը ճիշտ որոշելու նպատակով: Որոշ դեպքերում նրանց համար ամենաարդյունավետը կլինի ընտրել ընդդատության միայն մեկ տարածք, այլ դեպքերում նպատակահարմար կլինի, որ երկրներից մեկն իրականացնի հանցագործության մասնակիցներից մի քանիսի, մինչդեռ մեկ կամ ավելի ուրիշ

երկրներ՝ այլ մասնակիցների քրեական հետապնդումը: Այս կետի համաձայն երկու եղանակներն էլ թույլատրելի են: Վերջապես, խորհրդակցելու պարտավորությունը անվերապահ չէ. այն պետք է կատարվի «անհրաժեշտության դեպքում»: Այսպես, օրինակ, եթե Կողմերից մեկին հայտնի է, որ խորհրդակցելու անհրաժեշտություն չկա (օրինակ, նա ստացել է մյուս Կողմի հաստատումն այն մասին, որ վերջինս չի պատրաստվում միջոցներ ձեռնարկել) կամ, նրա կարծիքով, խորհրդակցելը կարող է վնաս պատճառել իր կողմից իրականացվող քննությանը կամ դատավարությանը, նա կարող է հետաձգել խորհրդակցությունը կամ մերժել այն:

334. Կետ 1-ով նախատեսված իրավագործության հիմքերը սպառնիչ չեն: Կետ 5-ով Կողմերին թույլատրվում է իրենց ներքին օրենսդրությանը համապատասխան սահմանել քրեական իրավագործության այլ տեսակներ: Այսպես, մարդկանց թրաֆիքինգի հետ կապված հարցերում որոշ երկրներ իրականացնում են քրեական իրավագործություն՝ անկախ հանցագործության կատարման վայրից կամ հանցանք գործած անձի քաղաքացիությունից:

Գլուխ VI. Միջազգային համագործակցություն և համագործակցություն քաղաքացիական հասարակության հետ

335. Գլուխ VI-ը պարունակում է Կոնվենցիայի Կողմերի միջև միջազգային համագործակցության վերաբերյալ դրույթներ: Այդ դրույթները սահմանափակված չեն միայն քրեական գործերի առնչությամբ դատական համագործակցությամբ: Դրանք վերաբերում են նաև թրաֆիքինգի կանխարգելման և զոհերի պաշտպանության ու օժանդակության ոլորտներում համագործակցության իրականացմանը:

336. Ինչ վերաբերում է քրեական ոլորտում համագործակցությանը, Եվրոպայի Խորհուրդն արդեն ունի ստանդարտներ սահմանող զգալի քանակությամբ փաստաթղթեր: Դրանցից կարելի է նշել *Յանձնման մասին Եվրոպական կոնվենցիան [Եվրոպական պայմանագրերի ժողովածու No.24]*, *Քրեական գործերում փոխադարձ օգնության մասին եվրոպական կոնվենցիան [Եվրոպական պայմանագրերի ժողովածու No.30]*, *դրանց կից արձանագրությունները [Եվրոպական պայմանագրերի ժողովածու No.86, 98, 99 և 182]* և *Յանցավոր գործունեությունից ստացված եկամուտների լվացման, բացահայտման, առգրավման և բռնագանձման մասին կոնվենցիան [Եվրոպական պայմանագրերի ժողովածու No 141]*: Նշված փաստաթղթերը հանդիսանում են բազմաոլորտ կիրառություն ունեցող փաստաթղթեր և տարածվում են հանցավոր արարքների մեծ շրջանակի, այլ ոչ թե դրանց որոշակի տեսակների վրա:

337. Սույն Կոնվենցիան մշակողները որոշել են Կոնվենցիայում չընդգրկել այնպիսի դրույթներ, որոնք նույնական են բազմաոլորտ կիրառություն ունեցող փաստաթղթերի վերոհիշյալ դրույթների հետ: Նրանց կարծիքով, վերջիններս ավելի լավ են մշակված ստանդարտների համաձայնեցման առումով և կարող են փոփոխությունների ենթարկվել՝ Կողմերի միջև ավելի արդյունավետ համագործակցության հաստատման նպատակով: Նրանք չեն ցանկացել ստեղծել փոխադարձ օգնության մի առանձին ընդհանուր համակարգ, որը կփոխարիներ այլ համապատասխան փաստաթղթերին կամ միջոցառումներին: Նրանք ելել են այն տեսակետից, որ ավելի նպատակահարմար կլինի դիմել փոխադարձ օգնության և հանձնման մասին արդեն ուժի մեջ գտնվող պայմանագրերով նախատեսված միջոցներին՝ փոխադարձ օգնության և հանձնման ոլորտի մասնագետներին հնարավորություն ընձեռելով օգտագործել իրենց արդեն ծանոթ փաստաթղթերն ու միջոցները և խուսափել ցանկացած խառնաշփոթություններից, որոնք կարող են առաջանալ մրցակցող համակարգերի ստեղծման արդյունքում:

Ուստի, այս գլուխը պարունակում է միայն այնպիսի դրույթներ, որոնք որոշակի արժեք են ավելացնում արդեն գոյություն ունեցող փաստաթղթերին:
Այնուհանդերձ, Կոնվենցիայի Յոթերորդ 32-րդ Կողմերից պահանջվում է համագործակցել գործող փաստաթղթերով նախատեսված առավելագույն չափով լայնորեն կիրառելով դրանց պահանջները: Քանի որ Կոնվենցիայով նախատեսվում է մոնիտորինգի մեխանիզմի ստեղծում (Գլուխ VII), որը, այլ բաների հետ մեկտեղ, պետք է պատասխանատու լինի Յոթերորդ 32-ի կատարման մոնիտորինգի համար, ապա մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի գործում բազմաոլորտ կիրառություն ունեցող փաստաթղթերի օգտագործման կարգը նույնպես պետք է մոնիտորինգի ենթարկվի:

Յոթերորդ 32. Միջազգային համագործակցության ընդհանուր սկզբունքները և եղանակները

338. Յոթերորդ 32-ը սահմանում է միջազգային համագործակցությունը ղեկավարող ընդհանուր սկզբունքները:

339. Նախ և առաջ, Կողմերը պետք է համագործակցեն «հնարավորինս առավելագույն չափով»: Այս սկզբունքով նրանցից պահանջվում է լայնորեն համագործակցել միմյանց հետ և նվազեցնել միջազգային մակարդակով տեղեկատվության ու վկայությունների սահուն ու արագ հոսքին խոչընդոտող հանգամանքները:

340. Յոթերորդ 32-ը պարունակում է համագործակցելու ապրտավորության ընդհանուր մասը. համագործակցությունը պետք է ընդգրկի մարդկանց թրաֆիքինգի կանխարգելումը և դրա դեմ պայքարը (առաջին ենթակետ), զոհերին պաշտպանության և օգնության տրամադրումը (երկրորդ ենթակետ) և սույն Կոնվենցիայով նախատեսված հանցավոր արարքների վերաբերյալ գործերի քննությունն ու դատավարությունը (երրորդ ենթակետ), այսինքն այն հանցավոր արարքների, որոնք նախատեսված են Կոնվենցիայի 18, 20 և 21 հոդվածներով: Յոթերորդ 32-ի առնչված կրկնակի հանցավորության սկզբունքը, Յոթերորդ 19-ով սահմանված հանցավոր արարքների առնչությամբ համագործակցությունը կարող է իրականացվել միայն այն Կողմերի միջև, որոնք իրենց ներքին օրենսդրություններում քրեականացնում են այդ հոդվածում նշված արարքները: Կրկնակի հանցավորության սկզբունքի կիրառման դեպքում, Յոթերորդ 19-ով սահմանված հանցավոր արարքների առնչությամբ համագործակցությունը կսահմանափակվի միայն այն կողմերի միջև, որոնք այդ արարքները քրեականացնում են իրենց ներքին օրենսդրություններում:

341. Վերջապես, Կողմերի միջև համագործակցությունը պետք է իրականացվի համապատասխան միջազգային ու տարածաշրջանային փաստաթղթերին, միասնական կամ փոխադարձաբար պարտավորեցնող օրենսդրության հիման վրա ձեռք բերված պայմանավորվածություններին և ներքին օրենսդրությանը համապատասխան: Ուստի, ընդհանուր սկզբունքն այն է, որ Գլուխ VI-ի դրույթները ո՛չ չէրալ են դարձնում, և ո՛չ էլ փոխարինում են համապատասխան միջազգային փաստաթղթերի դրույթներին: Նշված փաստաթղթերին և պայմանավորվածություններին կատարված հղումները վերաբերում են ոչ միայն նրանց, որոնք գործում էին սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելու պահին, այլ նաև հետագայում ընդունված ցանկացած փաստաթղթերի: Դատական համագործակցության հարցերում սույն Կոնվենցիայի նկատմամբ առաջնությունը պետք է տրվի համապատասխան ընդհանուր պայմանավորվածություններին և փաստաթղթերին:

342. Բացի դրանից, Կողմերը պետք է միմյանց հետ համագործակցեն սույն Կոնվենցիայի դրույթներին համապատասխան: Այսպես, զոհերի պաշտպանության և նրանց օժանդակության ցուցաբերման ոլորտում համագործակցության կապակցությամբ Հոդված 33-ով նախատեսվում են վտանգի ենթարկված անձանց նկատմամբ ձեռնարկվելիք միջոցներ: Հոդված 34-ի (4) կետով նախատեսվում է ցանկացած տեղեկատվության տրամադրում, որն անհրաժեշտ է Կոնվենցիայի 13, 14 և 16 հոդվածներով սահմանված իրավունքներն ապահովելու համար:

343. Ինչ վերաբերում է քրեական գործերով միջազգային համագործակցությանը՝ քննության կամ դատավարության նպատակներով, ապա ընդհանուր սկզբունքն այն է, որ Գլուխ VI-ի դրույթները ո՛չ չեղյալ են դարձնում, և ո՛չ էլ փոխարինում են համապատասխան միջազգային փաստաթղթերի այն դրույթներին, որոնք վերաբերում են փոխադարձ իրավական օգնությանը և հանձնմանը, ինչպես նաև այդ փաստաթղթերի և ներքին օրենսդրության համապատասխան դրույթների առնչությամբ Կողմերին փոխադարձաբար պարտավորեցնող պայմանավորվածություններին: Այս ոլորտում կիրառվող համապատասխան միջազգային փաստաթղթերից են *Հանձնման մասին Եվրոպական կոնվենցիան [Եվրոպական պայմանագրերի ժողովածու No.24]*, *Քրեական գործերում փոխադարձ օգնության մասին Եվրոպական կոնվենցիան [Եվրոպական պայմանագրերի ժողովածու No.30]* և *դրանց կից արձանագրությունները [Եվրոպական պայմանագրերի ժողովածու No.86, 98, 99 և 182]*: Եվրոպական Միության անդամ պետությունների դեպքում հարցին վերաբերում է նաև *Եվրամիության Խորհրդի 2002թ. հունիսի 13-ի Եվրոպական ձեռքարկվման հրամանագրի և անդամ պետությունների միջև հանձնման ընթացակարգերի վերաբերյալ շրջանակային որոշումը*, որով նախատեսվում է Եվրոպական ձեռքարկվման հրամանագրի կիրառումը: Ինչ վերաբերում է թրաֆիքինգից ստացված եկամուտների բռնագանձման, մասնավորապես մարդկանց թրաֆիքինգի և դրա արդյունքը հանդիսացող շահագործման հետ կապված գույքի բացահայտման, տեղի որոշման, սառեցման և առգրավման բնագավառում իրականացվող համագործակցությանը, այստեղ կիրառելի է *Հանցավոր գործունեությունից ստացված եկամուտների լվացման, բացահայտման, առգրավման և բռնագանձման մասին կոնվենցիան [Եվրոպական պայմանագրերի ժողովածու No 141]*:

344. Այստեղից հետևում է, որ քրեական գործերով միջազգային համագործակցությունը կշարունակի կարգավորվել վերոհիշյալ փաստաթղթերի, ինչպես նաև քրեական գործերի նկատմամբ կիրառվող՝ հանձնման վերաբերյալ երկկողմ կամ բազմակողմանի այլ պայմանագրերին համապատասխան:

345. Փոխադարձ օգնությունը կարող է բխել նաև միասնական կամ փոխադարձաբար պարտավորեցնող օրենսդրության հիման վրա ձեռք բերված պայմանավորվածություններից: Այս հասկացությունն առկա է նաև Եվրոպական Միության այլ կոնվենցիաներում, մասնավորապես *Հանձնման մասին Եվրոպական կոնվենցիայում [Եվրոպական պայմանագրերի ժողովածու No.24]*, որն այն օգտագործել է «միասնական օրենսդրության» վրա հիմնված հանձնման համակարգ ունեցող Կողմերին, այսինքն՝ Սկանդինավյան երկրներին, կամ փոխադարձ պարտավորվածության վրա հիմնված համակարգ ունեցող երկրներին, այսինքն՝ Իռլանդիային և Միացյալ Թագավորությանը, թույլատրելու համար իրենց հարաբերությունները կարգավորել բացառապես այդ համակարգերի հիման վրա: Նշված դրույթի ընդունումը պայմանավորված էր այն հանգամանքով, որ այդ երկրները հանձնման հարցերում իրենց հարաբերությունները կարգավորում են ոչ թե միջազգային պայմանագրերի, այլ

միասնական կամ փոխադարձաբար պարտավորեցնող օրենսդրություն ընդունելու պայմանավորվածության հիման վրա:

Յոդված 33. Վտանգի ենթարկված կամ անհայտ կորած անձանց վերաբերյալ ձեռնարկվող միջոցներ

346. Այս դրույթով պահանջվում է, որ երբ կողմերից որևէ մեկն իր տրամադրության տակ եղած տեղեկատվության հիման վրա ողջամիտ հիմքեր ունի ենթադրելու, որ 28 հոդվածի 1-ին կետում նշված անձին (զոհ, վկա, քննություն անցկացնող մարմինների հետ համագործակցող անձ կամ նրանց որևէ ազգական) մեկ այլ կողմի տարածքում անմիջական վտանգ է սպառնում, նա պետք է այդ մասին զգուշացնի մյուս կողմին: Նման տեղեկություն կարող է ստացվել, օրինակ, թրաֆիքինգից տուժած անձից, որը հայտնում է իր երկրում իր ընտանիքի անդամների նկատմամբ թրաֆիքինգով զբաղվողների կողմից գործադրվող ճնշման կամ սպառնալիքների մասին: Նման տեղեկություն ստացած Կողմից պահանջվում է ձեռնարկել Յոդված 28-ում նախատեսված պաշտպանության միջոցները:

Յոդված 34. Տեղեկատվությունը

347. Յոդված 34-ում քննության է առնվում տեղեկությունների տրամադրման հարցը: Դա պետք է վերաբերի Գլուխ VI-ում քննարկված համագործակցության բոլոր տեսակներին, այսինքն միջազգային համագործակցությանը ոչ թե սոսկ քրեական գործերում, այլ նաև մարդկանց թրաֆիքինգի կանխարգելման ու դրա դեմ պայքարի, ինչպես նաև զոհերի պաշտպանության ու նրանց օժանդակության ցուցաբերման ոլորտներում:

348. Յոդված 34-ի (1) կետը պահանջ ստացած Կողմին պարտավորեցնում է պահանջ ներկայացրած Կողմին տեղեկացնել այն միջոցների վերջնական արդյունքի մասին, որոնք ձեռնարկվել են միջազգային համագործակցության մասին պահանջը ստանալուց հետո: Այս կետով նաև պարտավորեցվում է, որ տվյալ Կողմը պահանջ ներկայացրած Կողմին անհապաղ տեղեկացնի նաև այն հանգամանքների մասին, որոնք անհնարին են դարձնում կամ զգալիորեն հետաձգում են համապատասխան միջոցների ձեռնարկումը:

349. 2 և 3 կետերը վերաբերում են քրեական գործերում համագործակցության նպատակներով տրամադրվող տեղեկություններին: Այս հոդվածը բխում է Եվրոպայի Խորհրդի ավելի վաղ փաստաթղթերից, ինչպես օրինակ՝ *Հանցավոր գործունեությունից ստացված եկամուտների լվացման, բացահայտման, առգրավման և բռնագանձման մասին կոնվենցիայի* [Եվրոպական պայմանագրերի ժողովածու No. 141] Յոդված 10-ից, *Կոռուպցիայի համար քրեական պատասխանատվության մասին կոնվենցիայի* [Եվրոպական պայմանագրերի ժողովածու No.173] Յոդված 28-ից և *Ինտերնետային հանցագործությունների մասին կոնվենցիայի* [Եվրոպական պայմանագրերի ժողովածու No.185] Յոդված 26-ից: Գնալով ավելի հաճախ են տեղի ունենում այնպիսի դեպքեր, երբ Կողմերից որևէ մեկը տիրապետում է արժեքավոր տեղեկությունների, որոնք, նրա կարծիքով, կարող են օգնել մեկ այլ Կողմին քրեական հանցագործության քննության կամ դատավարության գործընթացում, և որի գոյության մասին քննություն կամ դատավարություն անցկացնող Կողմին հայտնի չէ: Նման դեպքում փոխադարձ օգնության մասին որևէ պահանջի անհրաժեշտություն չկա: Այս դրույթը նման տեղեկության տիրապետող Կողմին իրավասություն է տալիս առանց նախնական պահանջի այն տրամադրել մյուս երկրին՝ իր ներքին օրենսդրությամբ սահմանված պահանջների շրջանակներում: Այս դրույթը օգտակար է համարվել այն

պատճառով, որ իրավաբանական լիազորության նման հստակ տրամադրումը թույլ է տալիս օժանդակություն ցուցաբերել անգամ այդ մասին պահանջի բացակայության դեպքում: Կողմը պարտավորված չէ տեղեկությունն ինքնակամ փոխանցել մյուս Կողմին, սակայն նա կարող է տեղեկությունը փոխանցել իր լիարժեք հայեցողությանը՝ հաշվի առնելով կոնկրետ դեպքի հանգամանքները: Բացի դրանից, տեղեկության ինքնակամ հրապարակման փաստը հրապարակող Կողմին չի արգելում հրապարակված փաստերի հետ առնչվող քննություն անցկացնել կամ դատական գործ նախաձեռնել, եթե նա նման իրավազորություն ունի:

350. Կետ 3-ում շոշափվում է այն հարցը, որ որոշ հանգամանքներում Կողմը կարող է տեղեկությունն ինքնակամ փոխանցել միայն այն պայմանով, որ հրապարակման ոչ ենթակա տեղեկությունները գաղտնի պահվեն կամ օգտագործվեն որոշակի պայմանների պահպանմամբ: Գաղտնիության պահպանման պահանջը հատկապես էական է այն դեպքերում, երբ դրա հրապարակմամբ կարող են վտանգի ենթարկվել տրամադրող պետության կարևոր շահերը, օրինակ, երբ անհրաժեշտ է չբացահայտել, թե տեղեկությունն ինչպես է ձեռք բերվել կամ այն փաստը, որ որևէ հանցավոր խմբի քննություն է անցկացվում: Եթե նախնական հարցմամբ պարզվել է, որ տեղեկությունն ստացող Կողմը չի կարող պահպանել տրամադրող Կողմի պայմանը (օրինակ, չի կարող կատարել գաղտնիության պահպանման պահանջը, քանի որ տեղեկությունն անհրաժեշտ է բաց դատավարության ժամանակ որպես ապացույց օգտագործելու համար), ապա ստացող Կողմը պետք է այդ մասին հայտնի տրամադրող Կողմին, որն այդ դեպքում ունի տեղեկությունը չտրամադրելու ընտրություն: Իսկ եթե ստացող Կողմը համաձայնվում է ներկայացված պայմանին, նա պարտավոր է պահպանել այն: Նախատեսվում է, որ սույն հոդվածի համաձայն դրված պայմանները պետք է համատեղելի լինեն այն պայմանների հետ, որ տեղեկությունն տրամադրող Կողմը կարող էր սահմանել ստացող Կողմի կողմից փոխադարձ օգնության վերաբերյալ պահանջ ներկայացվելուց հետո:

351. Կոնվենցիայի 13, 14 և 16 հոդվածներով սահմանված իրավունքների արդյունավետության ապահովման նպատակով, կետ 4-ով Կողմերից պահանջվում է առանց հետաձգելու տրամադրել պահանջված տեղեկատվությունը, որն անհրաժեշտ է այդ հոդվածներով նախատեսված իրավունքների ապահովման համար:

Հոդված 35. Համագործակցությունը քաղաքացիական հասարակության հետ

352. Այս հոդվածում նշված ռազմավարական գործընկերությունը պետական մարմինների ու պաշտոնատար անձանց և քաղաքացիական հասարակության միջև նշանակում է համագործակցության այնպիսի դաշտի ստեղծում, որի միջոցով Պետական գործիչները կկատարեն Կոնվենցիայով ստանձնած իրենց պարտավորությունները՝ իրենց նախաձեռնությունները համաձայնեցնելով քաղաքացիական հասարակության հետ:

353. Նման ռազմավարական գործընկերությունը կարող է հաստատվել բոլոր գործիչներին ներգրավող՝ կլոր սեղանի շուրջ անցկացվող կանոնավոր քննարկումների ու բանակցությունների միջոցով: Կոնվենցիայի նպատակների գործնական կիրառումը կարող է ձևակերպվել, օրինակ, պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների միջև թրաֆիքինգի զոհերին պաշտպանություն և օժանդակություն ապահովելու վերաբերյալ փոխըմբռնման հուշագրի ստորագրման միջոցով:

Գլուխ VII Մոնիտորինգի մեխանիզմ

354. Կոնվենցիայի Գլուխ VII-ը պարունակում է դրույթներ, որոնք նպատակ են հետապնդում ապահովել Կողմերի կողմից Կոնվենցիայի արդյունավետ կիրառումը: Կոնվենցիայով նախատեսված մոնիտորինգի համակարգը, որը, անտարակույս, դրա հիմնական առավելություններից մեկն է, ունի երկու հիմնասյուն. մեկը Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի հարցերով փորձագետների խումբն է (ՄԹՊՓԽ). այն հանդիսանում է մարդու իրավունքների, մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի և զոհերի պաշտպանության ու օժանդակության բնագավառի անկախ և բարձր որակավորում ունեցող փորձագետներից կազմված տեխնիկական մարմին, որի խնդիրն է պատրաստել զեկույց և եզրակացություն յուրաքանչյուր Կողմի կողմից Կոնվենցիայի իրականացման վերաբերյալ. մյուսը ավելի քաղաքական բնույթ ունեցող Կողմերի կոմիտեն է. այն կազմված է Նախարարների կոմիտեում սույն Կոնվենցիայի կողմ հանդիսացող Եվրոպայի Խորհրդի անդամ պետությունների և սույն Կոնվենցիայի Եվրոպայի Խորհրդի անդամ չհանդիսացող կողմերի ներկայացուցիչներից, որոնք կարող են ՄԹՊՓԽ-ի զեկույցի ու եզրակացությունների հիման վրա մշակել որևէ Կողմին ուղղված հանձնարարականներ՝ ՄԹՊՓԽ-ի եզրակացություններին հետևելու համար ձեռնարկվելիք միջոցառումների վերաբերյալ:

Յոդված 36. Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի հարցերով փորձագետների խումբ

355. Ինչպես վերը նշվել է, ՄԹՊՓԽ-ն պատասխանատու է Կողմերի կողմից սույն Կոնվենցիայի կատարման մոնիտորինգ իրականացնելու համար: Այն պետք է կազմված լինի նվազագույնը 10 և առավելագույնը 15 անդամներից:

356. Այս Յոդված կետ 2-ում ընդգծվում է գեներալային և աշխարհագրական հավասար ներկայացուցչության ապահովման, ինչպես նաև բազմապրոֆիլ փորձաքննության անհրաժեշտությունը ՄԹՊՓԽ-ի անդամների ընտրության ժամանակ, որոնք պետք է լինեն Կոնվենցիայի կողմեր հանդիսացող պետությունների քաղաքացիներ:

357. Կետ 3-ում ընդգծվում են ՄԹՊՓԽ-ի փորձագետների հիմնական ունակությունները, ինչպես նաև նրանց ընտրության հիմնական չափանիշները, որոնք կարող են ամփոփվել հետևյալ ձևով. «անկախություն և մասնագիտական փորձառություն»:

358. Կետ 4-ում նշվում է, որ ՄԹՊՓԽ-ի անդամների ընտրության ընթացակարգը (բայց ոչ թե անդամների ընտրությունը) պետք է սահմանվի Նախարարների կոմիտեի կողմից: Դա հասկանալի է, քանի որ ընտրության ընթացակարգը կարևոր դեր է խաղում Կոնվենցիայի կիրառման գործում: Կոնվենցիան մշակողները համարել են, որ քանի որ սույն Կոնվենցիան հանդիսանում է Եվրոպայի Խորհրդի կոնվենցիա, ապա նման գործառույթը պետք է շարունակի իրականացվել Նախարարների կոմիտեի կողմից, իսկ ՄԹՊՓԽ-ի անդամների ընտրության համար պատասխանատու կլինեն Կողմերը: Նախքան ընտրության ընթացակարգը սահմանելը Նախարարների կոմիտեն պետք է խորհրդակցի Կոնվենցիայի կողմերի հետ և ստանա նրանց միաձայն համաձայնությունը: Նման պահանջով ճանաչվում է, որ Կոնվենցիայի բոլոր Կողմերը պետք է ի վիճակի լինեն մասնակցելու այդ ընթացակարգի սահմանմանը և գտնվում են հավասար դիրքերում:

Յոդված 37. Կողմերի կոմիտեն

359. Հոդված 37-ով նախատեսվում է մոնիտորինգի համակարգի մյուս հիմնասյան՝ ավելի քաղաքական կողմնորոշում ունեցող «Կողմերի կոմիտեի» ստեղծումը, որի կազմությունը նկարագրված է ստորև:

360. Կողմերի կոմիտեի առաջին նիստը հրավիրվում է Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարի կողմից, սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուն հաջորդող մեկ տարվա ընթացքում՝ ՄԹՊՓԽ-ի անդամներին ընտրելու նպատակով: Հաջորդ նիստերը գումարվում են կողմերի 1/3-ի, Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարի կամ ՄԹՊՓԽ-ի նախագահի պահանջով:

361. Այս մարմնի հիմնադրումը կապահովի բոլոր Կողմերի հավասար մասնակցությունը թե՛ որոշումների կայացման գործընթացին, և թե՛ Կոնվենցիայի մոնիտորինգի ընթացակարգին: Դրա հետ մեկտեղ, այն կամրապնդի նաև համագործակցությունը ինչպես Կողմերի միջև, այնպես էլ Կողմերի և ՄԹՊՓԽ-ի միջև՝ Կոնվենցիայի պատշաճ և արդյունավետ կիրառումն ապահովելու նպատակով:

362. Կողմերի կոմիտեի կանոնակարգում անհրաժեշտ է պատշաճորեն հաշվի առնել Եվրոպական Համայնքի կողմից իր իրավասությանը պատկանող հարցերի վերաբերյալ տրված ծայրերի քանակի հետ կապված առանձնահատկությունները: Ենթադրվում է նաև, որ Կողմերի կոմիտեի կանոնակարգը պետք է մշակվի այնպես, որպեսզի ապահովվի սույն Կոնվենցիայի Կողմերի, այդ թվում Եվրոպական Համայնքի այրոյունավետ մոնիտորինգը Հոդված 38-ի §7-ին համապատասխան:

Հոդված 38. Ընթացակարգ

363. Հոդված 38-ում մանրամասն նկարագրվում է, թե ինչպես է գործում մոնիտորինգի ընթացակարգը, ինչպես նաև ՄԹՊՓԽ-ի և Կողմերի կոմիտեի փոխգործողությունը:

364. Կետ 1-ում հստակեցվում է, որ գնահատման ընթացակարգը բաժանվում է փուլերի, և ՄԹՊՓԽ-ն ընտրում է այն կոնկրետ դրույթները, որոնց շուրջ պետք է իրականացվի գնահատման ընթացակարգը: Գաղափարն այն է, որ յուրաքանչյուր փուլի սկզբում ՄԹՊՓԽ-ն ինքնուրույն սահմանի այն դրույթները, որոնց շուրջ տվյալ փուլում պետք է իրականացվի գնահատման ընթացակարգը:

365. Կետ 2-ում նշվում է, որ ՄԹՊՓԽ-ն պետք է որոշի գնահատումն անցկացնելու համար ամենահարմար միջոցները: Դա կարող է ներառել հարցաչարի կամ տեղեկատվական այլ հարցումների մշակումը: Այս կետում պարզորոշ պահանջվում է, որ խնդրո առարկա Կողմը պատասխանի ՄԹՊՓԽ-ի հարցումներին:

366. Կետ 3-ում նշվում է, որ ՄԹՊՓԽ-ն կարող է տեղեկատվություն պահանջել նաև քաղաքացիական հասարակությունից:

367. Կետ 4-ում ընդգծվում է, որ ՄԹՊՓԽ-ն կարող է այցեր կազմակերպել առանձին պետություններ՝ խնդրո առարկա Կողմից ավելի շատ տեղեկություններ ստանալու նպատակով: Կոնվենցիան մշակողները շեշտել են, որ երկրներ կատարվող այցերը պետք է կիրառվեն որպես օժանդակ միջոց և իրականացվեն միայն ըստ անհրաժեշտության: Պետություններ կատարվող այցերը պետք է կազմակերպվեն տվյալ Կողմի պետական մարմինների և Կողմի նշանակած «պատասխանատու անձի» հետ՝ համագործակցությամբ:

368. 5 և 6 կետերում նկարագրվում է ՄԹՊՓԽ-ի զեկույցի և եզրակացությունների պատրաստման փուլը: Այդ դրույթներից պարզ է դառնում, որ զեկույցի ու եզրակացությունների պատրաստման ընթացքում ՄԹՊՓԽ-ն պետք է քննարկումներ անցկացնի խնդրո առարկա Կողմի հետ: Այդպիսի քննարկումներն են, որ կնպաստեն Կոնվենցիայի դրույթների արդյունավետ կենսագործմանը: ՄԹՊՓԽ-ն պետք է հրատարակի իր զեկույցը՝ խնդրո առարկա Կողմի մեկնաբանությունների հետ միասին: Ձեկույցը և եզրակացությունները միաժամանակ ուղարկվում են խնդրո առարկա Կողմին և Կողմերի կոմիտեին: Սրանով ավարտվում է տվյալ Կողմի և համապատասխան դրույթների հետ կապված ՄԹՊՓԽ-ի առաջադրանքը: ՄԹՊՓԽ-ի զեկույցը, որը պետք է դրա ընդունումից հետո հրապարակվի, չի կարող փոփոխությունների ենթարկվել Կողմերի կոմիտեի կողմից:

369. Կետ 7-ում քննարկվում է Կողմերի կոմիտեի դերը մոնիտորինգի ընթացակարգում: Դրանում ասվում է, որ Կողմերի կոմիտեն կարող է ընդունել հանձնարարականներ, որտեղ պետք է նշվեն խնդրո առարկա Կողմի կողմից ձեռնարկվելիք միջոցառումները՝ ի կատարումն ՄԹՊՓԽ-ի եզրակացությունների, իսկ անհրաժեշտության դեպքում պետք է սահմանվի դրանց կատարման վերաբերյալ տեղեկությունների ներկայացման ամսաթիվը, ինչպես նաև պետք է խրախուսվի համագործակցությունը՝ Կոնվենցիայի պատշաճ իրականացումն ապահովելու նպատակով: Այս մեխանիզմն ապահովում է ՄԹՊՓԽ-ի անկախությունը մոնիտորինգի իր գործառույթի իրականացման ժամանակ՝ միաժամանակ Կողմերի միջև անցկացվող քննարկումներում ներմուծելով «քաղաքական» տեսանկյուն:

Գլուխ VIII Կապը այլ միջազգային փաստաթղթերի հետ

Յոդված 39. Կապը Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ Միավորված Ազգերի Կազմակերպության Կոնվենցիային կից Մարդկանց, հատկապես կանանց ու երեխաների թրաֆիքինգի կանխարգելման, կանխման և դրա համար պատժի մասին Արձանագրության հետ

370. Յոդված 39-ի նպատակն է պարզաբանել Կոնվենցիայի և *Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ Միավորված Ազգերի Կազմակերպության Կոնվենցիային կից Մարդկանց, հատկապես կանանց ու երեխաների թրաֆիքինգի կանխարգելման, կանխման և դրա համար պատժի մասին Արձանագրության* միջև եղած կապը:

371. Յոդված 39-ը ունի երկու հիմնական խնդիր. (i) ապահովել, որ Կոնվենցիան չներգործի Պալերմոյի արձանագրությունից բխող իրավունքների ու պարտականությունների վրա և (ii) պարզաբանել, որ Կոնվենցիան, ինչպես պահանջվում է Նախարարների Կոմիտեի կողմից՝ Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների հարցերով Չատուկ կոմիտեին տրված իրավասությունների շրջանակները սահմանող փաստաթղթում, ամրապնդում է Միավորված Ազգերի Կազմակերպության փաստաթղթով նախատեսված պաշտպանության մեխանիզմը և զարգացնում դրանում սահմանված չափանիշները:

Յոդված 40. Կապը այլ միջազգային փաստաթղթերի հետ

372. Յոդված 40-ում ներկայացվում է Կոնվենցիայի կապը այլ միջազգային փաստաթղթերի հետ:

373. Միջազգային պայմանագրային իրավունքի մասին 1969թ. Վիեննայի կոնվենցիային համապատասխան, Յոդված 40-ը հավաստիացնում է, որ

Կոնվենցիան ներդաշնակ համագոյակցում է երկկողմ կամ բազմակողմանի այլ պայմանագրերի կամ Կոնվենցիայում շոշափված հարցերը քննարկող այլ փաստաթղթերի հետ: Դա հատկապես կարևոր է այնպիսի միջազգային փաստաթղթերի համար, որոնք ավելի մեծ պաշտպանություն ու օժանդակություն են ապահովում թրաֆիքինգից տուժած անձանց: Կոնվենցիան, անշուշտ, նպատակաուղղված է տուժած անձանց պաշտպանության ու օժանդակության ուժեղացմանը, այդ պատճառով Զոդված 40-ի կետ 1-ը նպատակ է հետապնդում հավաստիացնել, որ Կոնվենցիան չի ազդում այլ միջազգային փաստաթղթերից բխող իրավունքների ու պարտականությունների վրա, որոնց մասնակցում են կամ կարող են մասնակցել սույն Կոնվենցիայի կողմերը և որոնք պարունակում են սույն Կոնվենցիայով կարգավորվող հարցերին վերաբերող դրույթներ, կամ որոնք թրաֆիքինգի զոհերի համար նախատեսում են ավելի լայն պաշտպանություն և օժանդակություն: Այս դրույթը մեկ անգամ ևս հստակ մատնանշում է Կոնվենցիայի ընդհանուր նպատակը, այն է՝ պաշտպանել ու ապահովել թրաֆիքինգի զոհերի մարդու իրավունքները և նրանց համար երաշխավորել պաշտպանության ամենաբարձր մակարդակ:

374. Կետ 2-ը պարզորոշ սահմանում է, որ Կողմերը կարող են Կոնվենցիայով կարգավորվող հարցերի վերաբերյալ միմյանց հետ կնքել երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրեր կամ ցանկացած այլ միջազգային փաստաթղթեր: Այնուամենայնիվ, դրույթի տեքստից պարզ է դառնում, որ Կողմերին չի թույլատրվում կնքել Կոնվենցիայի արժեքը նսեմացնող որևէ պայմանագիր:

375. Ինչ վերաբերում է Զոդված 40-ի կետ 3-ին, ապա Կոնվենցիան ընդունելիս Եվրոպական Զամայնքը և Եվրոպական Միության անդամ պետությունները կատարել են հետևյալ հայտարարությունները.

«Եվրոպական Զամայնքը/ Եվրոպական Միությունը և նրա անդամ պետությունները վերահաստատում են, որ «առանձնացման մասին դրույթ» ընդգրկելու վերաբերյալ նրանց պահանջի նպատակն այն է, որ հաշվի առնվի Միության ինստիտուցիոնալ կառուցվածքը միջազգային կոնվենցիաներին միանալու ժամանակ, հատկապես սուվերենության իրավունքները Անդամ պետություններից Զամայնքին փոխանցելու դեպքում:

Այս դրույթը նպատակ չունի նվազեցնելու Եվրամիության անդամ չհանդիսացող կողմի իրավունքները կամ ավելացնելու նրա պարտականությունները Եվրոպական Զամայնքի/Եվրոպական Միության և նրա Անդամ պետությունների համեմատությամբ, քանի որ վերջիններս մույնպես հանդիսանում են Կոնվենցիայի կողմեր:

«Առանձնացման մասին դրույթն անհրաժեշտ է Կոնվենցիայի այն մասերի համար, որոնք գտնվում են Զամայնքի/Միության իրավասության շրջանակներում՝ մատնանշելու համար, որ Եվրոպական Միության Անդամ պետություններ չեն կարող Կոնվենցիայից բխող իրավունքներն ու պարտականությունները իրականացնել և կիրառել ուղղակիորեն իրենց միջև (կամ իրենց և Եվրոպական Զամայնքի/Միության միջև): Սա չի նսեմացնում այն հանգամանքը, որ Կոնվենցիան լիարժեք կիրառվում է մի կողմից Եվրոպական Զամայնքի/Եվրոպական Միության և նրա Անդամ պետությունների, իսկ մյուս կողմից՝ Կոնվենցիայի մյուս Կողմերի միջև. Կոնվենցիան պարտադիր կլինի Զամայնքի և Եվրոպական Միության Անդամ պետությունների համար, որոնք այն կկիրառեն միևնույն ձևով, անհրաժեշտության դեպքում Զամայնքի/Միության օրենսդրության

միջոցով, ինչպես որ Կոնվենցիայի ցանկացած այլ կողմ: Այդպիսով նրանք կերաշխավորեն Կոնվենցիայի դրույթների լիարժեք պահպանումը Եվրամիության անդամ չհանդիսացող կողմերի հանդեպ»:

Որպես փաստաթուղթ, որը մշակվել է պայմանագրերի կնքման կապակցությամբ՝ Միջազգային պայմանագրային իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիայի Հոդված 31-ի 2(բ) կետով սահմանված իմաստով, այս հայտարարությունը կազմում է սույն Կոնվենցիայի «համատեքստի» մի մասը:

376. Եվրոպական Համայնքը, բացառապես թափանցիկության ապահովման նպատակով, պետք է տրամադրի սույն Կոնվենցիայում արտացոլված ոլորտում Համայնքի և նրա անդամ պետությունների միջև իրավասությունների բաշխման վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություններ, այնքանով, որքանով որ դա չի հանգեցնում Համայնքի համար մոնիտորինգի հետ կապված լրացուցիչ պարտականությունների առաջացմանը:

377. Կետ 3-ի համաձայն, Կոնվենցիայի դրույթները չեն ազդում պետությունների ու անհատների իրավունքների ու պարտականությունների վրա, որոնք սահմանված են միջազգային իրավունքով, ներառյալ միջազգային մարդասիրական իրավունքը և մարդու իրավունքների միջազգային իրավունքը: Այսպես, հիմնարար իրավունքների իրականացումը չպետք է խոչընդոտվի մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների ձեռնարկման պատրվակով: Այս կետը մասնավորապես վերաբերում է *Փախստականների կարգավիճակի մասին 1951 թ. կոնվենցիային* և դրան կից 1967 թ. Արձանագրությանը: Մարդկանց թրաֆիքինգի զոհ լինելու փաստը չի բացառում ապաստան փնտրելու և ստանալու իրավունքը, և Կողմերը պետք է ապահովեն, որ թրաֆիքինգի զոհերը կարողանան պատշաճորեն օգտվել ապաստան ստանալու արդարացի և արդյունավետ ընթացակարգերից: Կողմերը պետք է նաև ձեռնարկեն բոլոր միջոցները, որոնք անհրաժեշտ են ետ չվերադարձնելու (non-refoulement) սկզբունքի լիարժեք կիրառման համար:

Գլուխ IX Փոփոխություններ Կոնվենցիայի տեքստում

Հոդված 41. Փոփոխություններ

378. Կողմերը կարող են առաջարկություններ կատարել Կոնվենցիայի դրույթներում փոփոխություններ կատարելու վերաբերյալ: Դրանք պետք է ներկայացվեն Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետություններին, բոլոր ստորագրող կողմերին, բոլոր մասնակից պետություններին, Եվրոպական Համայնքին և բոլոր այն պետություններին, որոնք իրավիրված են միանալու սույն Կոնվենցիային:

379. Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի հարցերով փորձագետների խումբը (ՄԹՊՓԽ) պետք է կարծիք կազմի յուրաքանչյուր առաջարկված փոփոխության վերաբերյալ, որը պետք է ներկայացվի Նախարարների կոմիտեին: Առաջարկված փոփոխությունը և ՄԹՊՓԽ-ի կարծիքը քննարկելուց հետո Նախարարների կոմիտեն կարող է ընդունել այդ փոփոխությունը: Նախարարների կոմիտեի կողմից ընդունված փոփոխությունները պետք է ներկայացվեն Կողմերի ընդունմանը: Նախքան առաջարկված փոփոխության հետ կապված որոշում ընդունելը Նախարարների կոմիտեն պետք է խորհրդակցի սույն Կոնվենցիայի Կողմերի հետ և ստանա նրանց միաձայն համաձայնությունը: Նման պահանջով ճանաչվում է, որ Կոնվենցիայի բոլոր Կողմերը պետք է ի վիճակի լինեն մասնակցելու որոշումների կայացման գործընթացին և գտնվում են հավասար դիրքերում:

Գլուխ X Եզրափակիչ դրույթներ

380. Այս գլխի դրույթները, որոշ բացառություններով, գլխավորապես հիմնված են Եվրոպայի Խորհրդի շրջանակներում կնքված՝ Կոնվենցիաների և պայմանագրերի համար ստանդարտ եզրափակիչ դրույթների վրա, որոնք Նախարարների կոմիտեի կողմից հաստատվել են 1980թ. փետրվարին կայացած Փոխնախարարների 315-րդ նիստի ժամանակ: 42-ից 47 հոդվածները կամ օգտագործում են ստանդարտ դրույթների ձևակերպումները, կամ հիմնված են Եվրոպայի Խորհրդի պայմանագրերի կնքման երկարատև պրակտիկայի վրա: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ ստանդարտ դրույթներն ընդունվել են որպես ոչ պարտադիր դրույթների համախումբ: Ինչպես նշված է ստանդարտ դրույթների ներածության մեջ, «այս ստանդարտ դրույթները նախատեսված են միայն փորձագետների կոմիտեի առաջադրանքին օժանդակելու և տեքստային անհամաձայնություններից խուսափելու համար, որը ոչ մի իրական արդարացում չէր ունենա: Ստանդարտ դրույթները ոչ մի դեպքում պարտադիր բնույթ չեն կրում, և տարբեր դրույթները կարող են հարմարեցվել կոնկրետ դեպքերին համապատասխանեցնելու համար»:

Յոթված 42. Ստորագրումը և ուժի մեջ մտնելը

381. Կոնվենցիան բաց է ստորագրման համար ոչ միայն Եվրոպայի Խորհրդի անդամ պետությունների կողմից, այլ նաև Եվրոպական Համայնքի և այն պետությունների կողմից, որոնք, չլինելով Եվրոպայի Խորհրդի անդամ, մասնակցել են դրա մշակմանը (Կանադա, Վատիկան, Ճապոնիա, Մեքսիկա և Միացյալ Նահանգներ): Կետ 3-ին համապատասխան Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո, սույն դրույթում չընդգրկված Եվրոպայի Խորհրդի անդամ չհանդիսացող այլ պետություններին կարող է առաջարկվել միանալ Կոնվենցիային՝ Յոթված 43-ի կետ(1)-ում նշված կարգով:

382. Յոթված 42-ի կետ(3)-ում սահմանվում է վավերագրերի, ընդունման կամ հաստատման փաստաթղթերի անհրաժեշտ թիվը, որը պահանջվում է Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու համար, այն է՝ 10: Այդ թիվն արտացոլում է այն հանգումունքը, որ մարդկանց թրաֆիքինգի խնդիրների արդյունավետ հաղթահարման համար անհրաժեշտ է զգալի թվով պետությունների մասնակցությունը: Մինչև ժամանակ, այդ թիվն այնքան էլ մեծ չէ, որպեսզի անհարկի հետաձգի Կոնվենցիայի ուժի մեջ մտնելը: Կազմակերպության պայմանագրերի կնքման պրակտիկայի համաձայն, տաս սկզբնական պետություններից առնվազն ութը պետք է լինեն Եվրոպայի Խորհրդի անդամներ:

Յոթված 43. Կոնվենցիային միանալը

383. Եվրոպայի Խորհրդի Նախարարների կոմիտեն, Կոնվենցիայի կողմերի հետ խորհրդակցելուց և նրանց միաձայն համաձայնությունը ստանալուց հետո, կարող է Եվրոպայի Խորհրդի անդամ չհանդիսացող ցանկացած պետությանը, որը չի մասնակցել Կոնվենցիայի մշակմանը, առաջարկել միանալ դրան: Այս որոշումն ընդունվում է Եվրոպայի Խորհրդի Կանոնադրության 20 դ. հոդվածում սահմանված ձայների մեծամասնությամբ և Կոնվենցիայի Կողմերի միաձայն քվեարկությամբ:

Յոթված 44. Տարածքային կիրառելիություն

384. Յոթված 44-ի (1) կետում նշվում են այն տարածքները, որտեղ սույն Կոնվենցիան գործում է: Այստեղ հարկ է նշել, որ Կոնվենցիայի խնդրի ու նպատակի հետ անհամատեղելի կլինեն այն, որ Կոնվենցիայի Կողմ հանդիսացող պետությունները իրենց տարածքները չընդգրկեն Կոնվենցիայի գործողության

չրջանակներում՝ առանց հիմնավոր պատճառի (ինչպես, օրինակ, Կոնվենցիայում քննարկված հարցերի նկատմամբ կիրառելի տարբեր իրավական համակարգերի առկայությունը):

385. Հոդված 44-ի (2) կետում քննարկվում է այն տարածքների նկատմամբ Կոնվենցիայի գործողության տարածման հարցը, որոնց միջազգային հարաբերությունների համար Կողմերը պատասխանատու են կամ որոնց անունից նրանք իրավասու են հանդես գալու:

Հոդված 45. Վերապահումներ

386. Հոդված 45-ում նշվում է որ Կողմերը կարող են կատարել Հոդված 31-ի կետ 2-ում սահմանված վերապահումները: Կողմերը որևէ այլ վերապահումներ կատարելու իրավունք չունեն:

Հոդված 46. Չեղյալ հայտարարելը

387. Միջազգային պայմանագրային իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիային համապատասխան, Կոնվենցիայով Կողմերին թույլատրվում է չեղյալ հայտարարել սույն Կոնվենցիան:

Հոդված 47. Ծանուցում

388. Հոդված 47-ում թվարկվում են այն ծանուցումները, որոնք Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարը՝ որպես Կոնվենցիայի ավանդապահ, պարտավոր է ուղարկել, ինչպես նաև նշվում են այդ ծանուցումները ստանելու իրավունք ունեցող սուբյեկտները (պետությունները և Եվրոպական Համայնքը):